


ՀՀ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՉԻՆԱՍՏԱՆԻ



ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱՊՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԴՐԱ ՆԵՇԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐԱՍԻԱՅՈՒՄ

ԱԶԱՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ազատ Մարտիրոսյան, Հայկ Մարտիրոսյան

Չինաստանի էներգետիկ անվտանգության
ռազմավարությունը և դրա նշանակությունը
Կենտրոնական Եվրասիայում

96824



Ազատ Մարտիրոսյան - Ծնվել է 1955թ.: 1978թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1978-1987թթ. աշխատել է ՀՀ ԱԳՍ Մեխանիկայի ինստիտուտում: 1987-1993 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում: 1990-1991թթ. գործուղվել է ԶՃ ԶԵՆԵՐ քաղաքի Միջուանի համալսարան: 1993-1996 թթ. աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում: 1996-1997թթ. եղել է ԶՃ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատարը: 1997-2001թթ. ԶՃ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Ֆիզիկա-մաթեմաթիկական գիտությունների թեկնածու: ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Դայկ Մարտիրոսյան - Ծնվել է 1981թ.: 1998-2003թթ. սովորել և ավարտել է Պեկինի Ժողովրդական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 2003-2006 թթ. սովորել է Պեկինի Սանկավարժական համալսարանի միջազգային հարաբերություններ և օրենք ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 2006-2009 թթ. ավարտել է Նոյն համալսարանի դոկտորանտուրան՝ ստանալով արդի միջազգային հարաբերությունների դոկտորի (PHD) գիտական աստիճան (քաղաքագիտական գիտությունների թեկնածու): 2009 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ-ի Արևելագիտական ինստիտուտում:

**Զինաստանի էներգետիկ անվտանգության ռազմավարությունը և դրա
նշանակությունը Կենտրոնական Եվրասիայում**

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ 5

Գլուխ 1. ԶՃ էներգետիկ անվտանգության ռազմավարությունը

1.1-ԶՃ տնտեսական զարգացումը և էներգետիկ պահանջարկի աճը.....	9
1.1.1.-Զինաստանի տնտեսության հիմնական բնութագրիչները և ներկա գլորայ դիրքը.....	10
1.1.2.- ԶՃ էներգետիկ պահանջարկի աճը.....	14
1.2- ԶՃ առաջնային էներգիայի կառուցվածքը. էներգետիկ համակարգի ներկա իրավիճակը և զարգացման հիմնական տեսնենցները, բարեփոխումները, քաղաքականությունն ու էներգոանվտանգության ռազմավարությունը.....	20
1.3.-Արտաքին վերահսկողության տակ գտնվող ռեսուրսների ներմուծումից ԶՃ խորացող կախվածությունը - էներգոռեսուրսներ.....	27

**Գլուխ 2. Զինաստանի արտաքին ներդրումներն ու էներգետիկ
անվտանգությունը: Էներգետիկ ոլորտում արտաքին ներդրումների
առանձնահատկություններն ու ռազմավարությունը**

2.1.- ԶՃ «Գնայ դուրս»-(zou chu qu) ռազմավարությունը.....	35
2.2.1.- ԶՃ արտաքին ներդրումները.....	42
2.2.- Տրանս-ազգային ընկերությունների (ՏԱՀ) ձևավորումը ԶՃ-ու և դրանց կողմից արտաքին ներդրումների իրականացման մեխանիզմները: Զինաստանի ազգային նավթային ընկերությունները (ԱՆՀ).	49
2.2.1.- ԶՃ նավթային ընկերությունների ներդրումային աշխարհագրությու- նը և քաղաքականությունը.....	52
2.3. Արտերկրյա Ներդրումները և Ընկերությունների Միաձուլումն ու Ձեռքբերումը (ՁԲ) Զինաստանի ՏԱՀ-ի կողմից.....	56
2.3.1.- Էներգիայի ոլորտում Զինաստանի արտերկրյա Ներդրումներն ու ՍՀ գործառնությունները.....	60
2.4.-Էներգակիրների ԶՃ դիվանագիտությունն ու քաղաքականությունը, էներգակիրների ներմուծման անվտանգության ապահովման հիմնախնդիր- ները.....	67

**Գլուխ 3. Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների
նշանակությունը և առկա իրավիճակը**

3.1.- Կասպյան էներգակիրների պաշարները և դրանց նշանակությունը միջազգային էներգետիկ անվտանգության առումով.....	75
---	----

3.2.- Կենտրոնական Եվրասիայի էներգոհեսուրսների գիշավոր ռերը սպառման հիմնական շուկաների համար.....	86
3.3.- Կենտրոնական Եվրասիայի էներգակիրներ արդյունահանող երկրների էներգուաղաքականությունն ու դրա որոշ առանձնահատկություններն արդի փոլում.....	95
Գլուխ 4. ԶՃ՝ էներգետիկ դիվանագիտությունը և քաղաքականությունը Կենտրոնական Եվրասիայում	
4.1.- Չինաստանի էներգետիկ դիվանագիտությունը և ընդգրկվածությունը Կենտրոնական Եվրասիայի երկրների էներգակիրների արտադրության ոլորտում.....	107
4.2.- Տրանս-Ասիա Գազատարի* դերը Չինաստանի էներգուանվտան- գության ապահովման առումով և դրա տարածաշրջանային -աշխարհաքա- ղաքական նշանակությունը	118
4.3.- Միջին Ասիայի էներգակիրների ռազմավարական նշանակությունը ԶՃ՝ էներգուանվտանգության ապահովման առումով.....	125
Գլուխ 5. Չինաստանի էներգետիկ անվտանգության քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում: Էներգետիկ անվտանգության աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հեռանկար	
5.1.- Շետ սառը-պատերազմյան շրջանի հիմնական աշխարհաքաղաքական - տարածաշրջանային զարգացումները և ԶՃ՝ արտաքին քաղաքականու- թյան ու ռազմավարության առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում.....	136
5.2.- Չինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրները Կենտրոնական Եվրասիայում, դրանց լուծման ԶՃ՝ քաղաքականությունը և դրա նշանակությունը տարածաշրջանում.....	147
5.3.- Խողովակաշարային աշխարհաքաղաքական մրցակցությունը Կասպյան ավազանում և Կենտրոնական Եվրասիայից ԶՃ՝ էներգուանվտաների արտահանումների հեռանկարի ներկայացման փորձ՝ եզրակացությունների փոխարեն	158
Հավելված-1.	164
Հավելված-2.	171
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	175
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	176

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումների և բացության քաղաքականության իրականացման՝ ԶՃՀ Կողմից կատարված ռազմավարական ընտրությունից հետո, անցած 30 տարիների ընթացքում Չինաստանի տնտեսական տպավորիչ աճի հետևանքով, էկոնոմիկական փոխանակումների նոր՝ Ասիական ծանրության կենտրոնի ձևավորումը, թերևս կարող է դասվել 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի գլոբալաշխանչերով կատարված կարևորագույն տեղաշրջերի թվին։ Գոյություն ունեն բազմաթիվ՝ այդ թվում իրարամերժ, հակասական, ինչպես նաև ընսառատական կարծիքներ Չինաստանի տնտեսական արագընթաց զարգացման պատճառների և հետևանքների վերաբերյալ։

Սակայն անվիճելիորեն ընդունվում են՝ երկրի լայնամասշտար տնտեսության զարգացման աննախադեպ տեմպերի, ինչպես նաև՝ գլոբալ չափանիշներով Չինաստանի տեղի և դերի ամրապնդման և ազդեցության չարունակական աճի տեսնենցի առկայությունը*։ Անցած 30 տարիների ընթացքում Չինաստանում գրանցվել է տարեկան միջինը ավելի քան 10% տնտեսական աճ՝ լինելով ամենաարագ աշխարհում և չունենալով նմանօրինակ նախադեպ համաշխարհային էկոնոմիկական զարգացման պատմությունում։ 2007թ-ին Չինաստանը շրջանցեց Գերմանիային՝ դառնալով մեծությամբ 3-րդ տնտեսությունն աշխարհում։ 2009 թ-ին Չինաստանը դարձել է՝ ամենամեծ արտահանությունն ունեցող երկրը, ինչպես նաև՝ աշխարհի միակ գերիգոր երկրի՝ ԱՄՆ-ի ամենախոշոր վարկատուն՝ ծեղը թթվելով ավելի քան 800 մլրդ. դոլարի պետական պարտասումներ։ 2009 թ-ին ԶՃՀ Դամախառն Ներքին Արտադրանքը (ՉՆԱ) ընդուապ մուտքավ ճապոնիայի ՉՆԱ-ին, իսկ հետագա կես տարվա ընթացքում Չինաստանի տնտեսությունը դարձավ մեծությամբ 2-րդ աշխարհում։

Չնայած երկրի տնտեսական բարեփոխումներն առաջին հերթին ներքին ռեսուրսների միջոցով պապակովելու ԶՃՀ ռազմավարությունը, այսուամենային՝ 80-ական թվականներից սկսված ԶՃՀ տնտեսության աճի բարձր տեմպերն՝ արդեն իսկ 90-ականների սկզբներին բնականորեն ձևավորեցին էներգիայի և անհրաժեշտ այլ բնական ռեսուրսների արտերկրից մատակարարումների անհրաժեշտություն։ Արտաքին աղյուններից ԶՃՀ էներգոապահումնա խնդիրն առաջին անգամ առաջացել է 1993թ.-ին, երբ նավելի օգտագործման պահանջարկը 1.2%-ով գերազանցեց՝ երկրում արդյունահանվող և վերամշակվող նավելի ծավալները։ Նետագա տարիներին նավելի ներմուծման պահանջարկի աճի արագությունը հանգեցրեց Չինաստանի նավելի ներքին պահանջարկի բավարարման հիմնարար կախվածության արտաքին ներկրումներից։ Իրավիճակի թելադրանքով՝ հենց

* 一切决定于我们自己的事情干得好不好。我们在国际事务中起的作用的大小。要看我们自己经济建设成就的大小。如果我们国家发展了，更加兴旺发达了。我们在国际事务中的作用就会大。-Եթե ունեցած դերը միջազգային գործերում պայմանավորված է մեր տնտեսական զարգացման աստիճանով։ Եթե մեր երկիրը դառնա ավելի զարգացած և ծաղկող, մենք ի վիճակի կյինենք ունենալ մեծ ներակատարություն միջազգային գործերում։ - Դես Սյառափին- 16.01.1980թ.։

նավերի խնդրի առաջացումը հանդիսացավ այն սկզբնակետը, որից հետո Զինաստանում սկսվեց ծևավորվել, իսկ հետագա տարիներին ամրապնդվել արտերկրութ ռեսուրսների լայնածավալ հայթայթման անհրաժեշտությունը:

Ի հավելում բարեփոխուների և քացության հիմնադրույթների 1997թ. վերջում ԶԺ-ում սկզբնավորվեց «Գնալ դուրս» ազգային ռազմավարությունը, որով կառավարման համակարգի ու ֆինանսական ռեժիմի ազատականացման շնորհիվ շինական ծեռնարկություններին տրվեց արտերկրութ ծեռնարկատիրական գործունեության զարգացման և ընդարձակման իրավասություն ու հանձնարական:

21-րդ դարասկիզբ ԶԺ-ն թևակոխել է տնտեսական զարգացման, ինչպես նաև երկրի միջազգային ազդեցության և դերի աճի որակապես նոր փուլ: Երեսունամյարագընթացներում զարգացումից հետո, երկրում ծևավորված հսկայածավալ տնտեսությունը և աճի բարձր տեմպերը բնականորեն առաջացնում են իրացման և ներմուծման արտաքին շուկաների, ինչպես նաև՝ անհրաժեշտ բնական ռեսուրսների արտերկրյա մատակարարության ծավալների ընդարձակման անհրաժեշտությունը: «Գնալ դուրս» ռազմավարությունը, որն իր մեջ ներառում է ինչպես Տրանս-Ազգային ընկերությունների ծևավորման, այնպես էլ դրանց կողմից արտերկրութ ներդրումների իրականացումը խրախուսելու անհրաժեշտության ըմբռումը, զարգանալով ծեռնարկությունների կառավարման համակարգի կատարելագործման ու ազատականացման ուղղությամբ, հետազոտությունների մեջ զարգացման գորակ տնտեսական ինտեգրման հիմնական մեխանիզմի:

Այն հանգամանքը, որ վերջին տարիներին աշխարհում որոշ ռեսուրսների ընդհանուր պահանջարկի աճի հիմնական մասնաբաժինը պայմանավորված է Զինաստանի տնտեսությունում դրանց պահանջների մեծացման հետ, ինչպես նաև «Գնալ դուրս» ռազմավարության կիրառման շրջանակներում՝ շինական ընկերությունների կողմից արտերկրութ կատարվող ուղղակի ներդրումների շոշափելի ակտիվացումն ու դրանց աշխարհագրության ու ծավալների ընդարձակումը. ԶԺ տնտեսական գլոբալ ներգրավվածության և դրա հեռանկարային զարգացման խնդիրները վերածել են առանձնակի հետաքրքրություն ներկայացնող թեմայի: Հիմնականում հենց այս համատեքստում է դիտարկվում Զինաստանի «Մեծ ռազմավարության» և դրա հետևանքով՝ «շինական սպառնալիքի» հետագա առաջացման հնարավորությունը: Դա առանձնապես ցայտունորեն արտացոլվում է էներգոռեսուրսների ոլորտում:

Բնական ռեսուրսների և հումքի պահանջարկի առանձնահատուկ շոշափելի աճ Զինաստանի տնտեսությունում առաջացավ վերջին տասնամյակում: Զնայած պահանջվող ռեսուրսների տեսակների լայն սպեկտրուին, բնականորեն գերակա առաջնայնությունը էներգոռեսուրսների արտաքին ներկրումներից հարածուն կախվածությունն է, ինչը հիմնարար նշանակություն ունի երկրի տնտեսության հետագա զարգացման այս իմաստով նաև՝ այլ ռեսուրսներից կախվածության աստիճանի հետագա

ամի որոշման առումով:

Էներգակիրների՝ հատկապես նավթի անվտանգության հիմնախնդիրը, որի առաջնային ազդեցությունն ավանդաբար քաջածանոր է ԱՄՆ-ի (Եվրոպայի) համար, քնականորեն վճռական նշանակություն է ծեղոք բերում նաև Չինաստանի հետագա զարգացման և տնտեսական անվտանգության առումով, և կարող է վերածվել ԶԺԴ դիվանագիտական և պաշտպանական վերափոխումների հիմնական շարժիչ ուժի: Խնդրի խորությունն ըմբռնելու համար պետք է նշել, որ էներգոապահովման հարցում Չինաստանը կանգնած է ոչ միայն արտաքին ավանդական հիմնախնդիրների լուծումների փոնտրման, այլև՝ սոցիալական զարգացմամբ և յուրահատուկ ժողովրդագրական իրավիճակի հետևանքով առաջացող էներգաօգուագործման պահանջարկի ամի՝ մեծությամբ աննախադեպ՝ ներքին ծնշմամբ պայմանավորված խնդիրների դիմակայման անհրաժեշտության առջև: Էներգիան հիմնային և առաջնային նշանակություն ունի աշխարհի ամենամեծ քնականությունն ունեցող Չինաստանի էկոնոմիկական առաջընթացի, սոցիալական կայունության և երկրի ազգային անվտանգության առումով: Արտաքին վերահսկողության տակ գտնվող էներգոռեսուրսների ներմուծումից խորացող կախվածությունն ուղղակիրորեն առնչվում է երկրի ազգային անվտանգությանը և ենթադրում է Չինաստանի կողմից համարժեք ներգրավածության դրսւորում:

Էներգոանվտանգությունը ներկայումս արդեն երկողմ և տարածաշրջանային տնտեսական անվտանգության ապահովման կարևորագուն է և գնայով էներգիայի հիմնախնդիրն ավելի ու ավելի է վերածվում ընդհանրապես միջազգային հարաբերությունների անվտանգության օրակարգի կարևորագույն հիմնահարցի: Էներգոանվտանգության ապահովման ԶԺԴ լուծումները կարող են հանգեցնել տնտեսական և անվտանգության հարաբերությունների համակարգային նոր վերադասվորումների քազմաթիվ տարածաշրջաններում, ինչպես նաև նշանակայի ազդեցություն կոնսենսան էներգակիրների մյուս խոշոր սպառող և արտադրող երկրների և ԶԺԴ միջև փոխհարաբերությունների հեռանկարային զարգացման առումով:

Աշխատանքի հինգ գլուխներում փորձ է արվում համակողմանիորեն ներկայացնել Չինաստանի գլորայ տնտեսական ինտեգրման ու արտաքին ներդրումների առանձնահատկությունները, էներգետիկ անվտանգության ապահովման ռազմավարական մոտեցումները, էներգետիկ ոլորտում արտաքին ներդրումների առանձնահատկություններն ու ռազմավարությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվել ԶԺԴ էներգոանվտանգության ապահովման առումով Կենտրոնական Եվրասիայի* էներգակիրների նշանակությանը դրանց ունեցած միջազգային դերի և կարևորության համատեքստում, տարածաշրջանում Չինաստանի կողմից կենսագործվող էներգետիկ դիվանագիտությանն ու քաղաքականությանը: Այլ ազդեցիկ գլորայ ուժերի հետ հարաբերությունների

* - Կենտրոնական Եվրասիա- Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա:

համատեքստում, վերլուծվել են Չինաստանի քաղաքականության, ռազմավարության և էներգետիկ անվտանգության ապահովման հիմնական առանձնահատկությունները Կենտրոնական Սսիհայում*։ Ներկայացվել է Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների արտահանումների և ԶՃ՝ էներգետիկ անվտանգության ապահովման աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների հեռանկարի վերլուծության փորձ։ Չնայած թեմատիկ ընդհանրությանը՝ աշխատանքի յուրաքանչյուր գիյում ներկայացված խնդիրներն ունեն նաև ընդգծված բովանդակային առանձնահատկություններ։ Այդ իսկ պատճառով հիմնական եզրակացությունները թերվում են յուրաքանչյուր գիյում և նույնիսկ պարագրաֆում։ Առանձնացված են նաև օգտագործվող գրականության ցանկերը, որոնք ոչ մեծ ընդհանրություններով հանդերձ հիմնականում տարբեր են յուրաքանչյուր գիյուի համար։

*- Օգտագործվում է ինչպես Կենտրոնական Սսիհա այնպես էլ համարժեք՝ Միջին Սսիհա անվանումները։

ԳԼՈՒԽ-1- ԶԺԴ էներգետիկ անվտանգության ռազմավարությունը 1.1.ԶԺԴ տնտեսական զարգացումը և էներգետիկ պահանջարկի աճը

Չինաստանում տնտեսական վերափոխումների իրականացումը սկզբանավորվեց 1978թ-ի դեկտեմբերին, երբ ԶԺԴ ԿԿ 3-րդ պիտույքը հանդիս եկավ «քարեփիխումների քացության» քաղաքականությանն անցումը պայմանավորված լինելով 60-70- ական թվականներին առաջացած խորը ծգնաժամով. Նպատակառության էր երկրում ձևավորված տնտեսական համակարգի հիմնարար վերափոխմանը, որը կարող էր ապահովել Չինաստանի հետագա դինամիկ զարգացումը: Քաղաքականության հիմքում որվեց «սոցիալիստական հասարակարգի» և «տնտեսական համակարգի» միջև զաղափարախոսություն-տնտեսություն փոխշաղկապվածության նախկին ըմբռումների՝ ըստ էռության հեղափոխական նշանակությունունեցող փոփոխություններ, որում գիշավոր նպատակը՝ էկոնոմիկական էվոլուցիոն ազատականացմամբ երկրի արդյունավետ զարգացման ապահովում էր: Քարեփիխումները ենթադրում էին ոչ թե հասարակարգի այլ տնտեսական համակարգի գործողության վերափոխում պլանայինից - շուկայական էկոնոմիկայի էվոլուցիոն անցնան իրականացմամբ: Ընդ որում, բացառելու համար շուկայական տնտեսության կարգավորիչ մեխանիզմներում առկա հնարավոր տարերայնության բացասական հետևանքները, քարեփիխումների քաղաքականությունը նախատեսում էր շուկայական էկոնոմիկական համակարգի գերակայության պայմաններում, մակրոտնտեսական մակարդակով պետական վերահսկողության պահպանումը և էվոլուցիոն կատարելագործումը: Նման մոտեցմամբ պետությանը վերապահվում էր երկրի ներսում միացյալ շուկայի ստեղծման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման ֆունկցիա, ինչը ստեղծում է տեղական նշանակության և երկրի չափանիշներով առաջացած հիմնախնդիրների համադրելի լուծումների փնտրման և պլանավորման հնարավորություն: Շուկայական էկոնոմիկայի և կառավարման համակարգի նման զուգորդմամբ բարեփիխումների իրականացման նպատակը ԶԺԴ ԿԿ 14-րդ համագումարի կողմից (1992թ), սահմանվեց որպես «չինական առանձնահատկությամբ սոցիալիստական շուկայական տնտեսության ստեղծում»:

Երկրի բացության քաղաքականության իրականացման ենթատեսատում ԶԺԴ չորս քաղաքներ՝ Շենժեն, Չունիայ, Սիանուն և Չանտոու, հայտարարվեցին հատուկ էկոնոմիկական գոտիներ: Հետագայում՝ ծովափինյա 14 քաղաքներ, Ցանցզի և Զժուցյան գետերի ակոնքներն ու Բահայյան ծոցն ընդգրկող 6 շրջանները, ինչպես նաև Յայնան կղզին՝ վերածեցին ազատ էկոնոմիկական գոտիների: Այդ գոտիներին տրվեց ներդրումային և հարկային արտոնություններ՝ արտերկրյա ֆինանսական և տեխնոլոգիական ներդրումների ներգրավումը, ինչպես նաև տնտեսական արդյունավետ կառավարման արդիական մեթոդների փոխառումը խրախուսելու նպատակով: Ազատ էկոնոմիկական գոտիների հետագա

արագընթաց տնտեսական աճը, շուկայական տնտեսության զինական առանձնահատուկ կառավարման համակարգի կիրառման պայմաններում, մեծ արդյունավետությամբ նպաստեց երկրի ընդհանուր զարգացմանը: Զժշշ ընդհանուր տնտեսական զարգացման գերակա նպատակները հստակ սահմանվեցին 1987 թ.-ին ընդունված «Զարգացման երեք աստիճանների ռազմավարությունում»: Առաջին աստիճանում նպատակադրվել էր 1980 թ-ի ՀՆԱ-ի կրկնապատկմամբ երաշխավորել քնակչությանը սննդով և հագուստով ապահովումը: Երկրորդ աստիճանում նախատեսվում էր 1980 թ-ի ՀՆԱ-ի քառապատկում 20-րդ դարավերջին, որն իրականացվեց ավելի շուտ՝ 1995 թ-ին: Զարգացման երրորդ աստիճանում նախատեսվում է մեկ շնչին հասնող եկամուտները և քնակչության կենսամակարդակը՝ 2050 թ-ին հասցնել միջին՝ զարգացածությամբ երկրների մակարդակին, որով և տնտեսության բարեփոխումների առաջին փուզը հիմնականում կավարտվի:

1.1.1. Զինաստանի տնտեսության հիմնական բնութագրիչները և ներկա գլոբալ դիրքը

Սկսած 70-ականների վերջից Զինաստանի ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է ավելի քան 10% (Աղյ.-1.1): Ցուրաքանչյուր յոթ տարվա ընթացքում երկրի էկոնոմիկայի մեծությունը կրկնապատկվել է, ինչի արդյունքում 2008 թ. Զժշշ ՀՆԱ-ը գերազանցում էր 1978 թ. մակարդակը ավելի քան 17 անգամ, իսկ 1998 թ.՝ 4 անգամ: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ը՝ 9% միջին տարեկան աճով, 2008 թ կազմում էր ավելի քան՝ 3466 ԱՄՆ դոլար՝ 13 անգամ զերազանցելով 1978 թ. արժեքը՝ ֆիքսված գներով: 2008 թ. Զինաստանի էկոնոմիկան իր 4.52 տրլ դոլ. ՀՆԱ-ով աշխարհում մեծությամբ երրորդն էր, իսկ 2010 թ. կեսերին՝ արդեն իսկ գերազանցեց նաև Ճապոնիայի տնտեսությանը([1], նաև՝ Աղյ.-1.1):

Չնայած Զժշշ ՀՆԱ արագընթաց աճին և մեծությանը՝ այն ունի չափազանց բարձր կենտրոնացվածություն: Երկրի 31 նահանգներից հինգում՝ (Գուանջուն, Չանդրլոնգ, Ջանսու, Ջեջան և Ջենան) հաշվվում է Զժշշ ՀՆԱ մոտ՝ 46%-ը և հիմնական համախառն կապիտայի կուտակման 40%-ը, իսկ ամենացածր ՀՆԱ ունեցող վերջին հինգ նահանգներում՝ (Գուանսու, Ջայսան, Լինգսիա, Ցինհիայ և Տիբեթ) մոտ 2.4%-ը, համախառն կապիտայի շուրջ 2%-կուտակմամբ[2,10]: Լոյն պատկերն է նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ տարրերությունների առումը: 2008 թ. ամենաբարձր մեկ շնչին հասնող ՀՆԱ-ը Չանհայում կազմում էր ավելի քան 10000 ԱՄՆ դոլ., ամենացածրը՝ Գուինչզոու նահանգում մոտ 1600 ԱՄՆ դոլ. [2,10]: Սիժամանակ վերջին տարիներին ցածր ՀՆԱ ունեցող նահանգներում առկա է ՀՆԱ-ի համեմատաբար ավելի բարձր աճ[2,10]:

Աղյուսակ	1978	1985	1995	2000	2004	2005	2006	2007	2008	2009
ՀՆԱ ամբ. Մյու. ՏՀԲԸ ¹	364.5	901.6	6079.4	9921.5	15937.8	18321.7	21192.4	25770.6	31044.5	33540.0
ՀՆԱ ամբ. Մյու. \$ ²	216.9	307.0	727.9	1298.5	1931.7	2235.8	2657.8	3382.5	4522.6	4917.0
ՀՆԱ ամբ. %-ով	11.7	13.5	10.9	8.4	10.1	10.4	11.6	13	9.6	8.7
ՄԵՇ դիմուն ՀՆԱ ՏՀԲԸ ³	381	858	5046	7858	12336	14040	16084	18934	23690	25275
ՀՆԱ ամբ. (1978-100%-ով)	100	292.9	503.3	799.9	1087.4	1200.8	1340.7	1500.7	1753.6	—
ՄԵՇ ԱՌ/Հ ամբ. (1978-100%)	100	175.5	396.6	534.9	802.2	880.7	977.8	1088.8	1304.3	—
Արտահանում Մյու. \$	9.75	27.35	148.78	249.2	593.4	762	968.9	1217.8	1428.6	1201.9
Արտահանում Մյու. Տ	30.89	42.91	132.08	225.09	561.4	660	793.5	956	1233.1	1097.5
Արտահանում Պաշտոն. \$	1.6	12.7	75.4	145.6	609.9	818.9	1066.3	1528.2	1964	2272.6
ՏՀԲԸ Փակուսություն (Անգլա.)	2.68	2.94	8.349	8.2783	8.2777	8.2765	7.8087	7.3046	6.8346	6.8282
Արտահանում %-ով	17.92	23.71	29.04	36.22	41.76	42.99	43.9	44.94	45.7	46.64
Քարոզությ. թ. ՄԵՇ ԱՌ/Հ ՏՀԲԸ	343	739	4283	6280	9422	10493	11759	13786	15781	17175
Վարչական ԱՌ/Հ մէջ ՏՀԲԸ	134	398	3578	2210	2963	3255	3587	4140	4761	5153
Արտահանում Մյու. \$	—	20.11	106.6	145.73	228.6	281.045	322.988	373.618	374.46	428.65
Փառապահ ԱՌ/Հ Մյու. \$	—	19.56	37.5	40.7	60.6	72.4	72.7	83.5	92.3	90.03

*- RMB- Չինաստանի միավոր՝ յուսն, - ԱՄՆ դոլլար; **- Աղյուսակում RMB և \$ -ով բնային արժեքները երրկած են Ներկայիս գներով; ***- Մ/Ծ ընկնող եկամուտ. Եթե շնչին ընկնող եկամուտ; ****- Տվյալները հաշվարկված են հաստատում գներով; ԱՌ/Հ Արտահին ուղղակի ներդրումներ;


Աղյուսակներ: PRC National Bureau of Statistics (NBS), China Statistical Yearbooks 1996-2008; General Administration of Customs of the PRC, China's Customs Statistics; Monthly Foreign Exchange Reserves, 2009-SAFE- State Administration of Foreign Exchange of PRC; Economy Watch- <http://www.economywatch.com/>; The US-China Business Council <http://www.uschina.org/statistics/economy.html>;

Մեծությամբ աշխարհում երկրորդ էկոնոմիկան և ամենաբարձր ՀՆԱ աճի տեմպերն ունեցող Չինաստանում, բնականորեն չափազանց ցածր է մնում մեկ շնչին հասնող ՀՆԱ-ը՝ թե զարգացած երկրների՝ և թե՝ մի շարք զարգացող երկրների հետ համեմատ, ինչը պայմանավորված է ժողովորդագրական յորահատուկ իրավիճակով (համաձայն 2008 թ-ի տվյալների՝ ՉԺՀ-ը գրադարձնում է 106-րդ տեղն աշխարհում [9] (Նկ.-1.1.1.2)): Դամաձայն ՍԱԿ-ի չափանիշների՝ ՉԺՀ-ում օրեկան 1 ԱՄՆ դոլ. և պակաս եկամուտ ունեցողների պաշտոնական թիվը կազմում է ավելի քան 150 մլն. մարդ, կամ՝ բնակչության ավելի քան 11%-ը[1,9]

1980թ. սկսած Չինաստանում աղյուսակային մակարդակը նշանակալիորեն նվազելէ՝ 1981թ.-ի 84%-ից հասնելով մինչև 11%-2009թ.-ին: Նշանակալիորեն աճել է կյանքի տևողությունը, առողջապահության և կրթության ծախսները [10]: Կառավարության ծախսների հիմնական մասը ուղղվում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: 2008թ.-ին կառավարության ծախսների 55%-ը կատարվելէ բնակչության՝ կրթության, սոցիալական անվտանգության և գրադարձնության, համայնքային աշխատանքների կազմակերպան, բնապահպանության, առողջապահության և այլ ծառայությունների ապահովման ոլորտներում[2,10]: Կենսամակարդակի բարձրացման կարևորագույն ցուցանիշ է մասայական որբանիզացիան: Զարգացային բնակչությունը, որը 1978թ.-ին կազմել է 18%, ամելով՝ 2008թ.-ին արդեն կազմում էր 45.7%: Ըստ որում, նշանակահատվածում քաղաքային


թնակչության եկամուտները բացարձակ մեծությամբ աժել են ավելի քան 50 անգամ (Աղյ. -1.1):

Նկար-1.1- ՉԺՀ նոմինալ և համադրելի գներով ՀՆԱ միջազգային համեմատություններ- 2008թ.



Աղյուր:- IMF World Economic Outlook (October 2009).

Նկար-1.2- ՀՆԱ աճի համեմատություններ(2004-2009թթ.)



Աղյուրներ- Economy Watch- <http://www.economywatch.com/economic-statistics/year/2008/>; TradingEconomics- Global Economics Research- <http://www.tradingeconomics.com/Economics/GDP-Growth.aspx?Symbol=CNY>


Արտահանման արագ զարգացումը և էկոնոմիկայի կուտակային քնությը Զինաստանի համար հնարավորություն ստեղծեց ապահովել աշխարհում ամենամեծ արտարժույթային պահուածը: 2009թ. սեպտեմբերի վերջին այն

հասել է ավելի քան 2.27 տրիլ. դոլարի, որը կազմում է արտարժութային համաշխարհային պաշարների մոտ 30%-ը: Աննախաղեա է նաև պահուատի կուտակման արագությունը՝ 2001թ.-ին այն ընդամենը կազմել է մոտ 200 մլրդ. դոլ., ավելի քան 11 անգամ քիչ 2009թ.-ի մակարդակից (Աղյ.-1.1)և[67]: Լինելով և մնալով արտաքին ուղղակի ներդրումների (ԱՌՒՆ) համար ամենագրավիչ երկրներից մեկը զարգացող երկրների շարքում (Աղյ. 1.1)՝ այնուամենայնիվ ՉԺՀ տնտեսությունը, երկար ժամանակ ուներ արտարժութային պաշարների մեծ անհրաժեշտություն: Ներկայում Չինաստանը կուտակել է այնպիսի պաշարներ, որը որոշակի անհանգստություն է առաջացնում արտերկրում՝ առաջին հերթին ԱՄՆ-ում [65]: Ավելին, զգայիրոն ավելացել է նաև ՉԺՀ ուկու պաշարը՝ 2009թ. ապրիլին կազմելով 1054տ., որը 454տ. ավել է 2003թ.-ի համեմատ [8]:

Արտաքին առևտուրը երկրի տնտեսության զարգացման և ՉԺՀ արտերկրյա համագործակցության կարևորագույն ոլորտներից է: Անցյալ 30 տարիների ընթացքում Չինաստանում ձևավորվել է արտահանման ուղղվածությամբ:

**Նկար-1.3- Չինաստանի ՀՆԱ կառուցվածքի փոփոխությունը (ըստ արդյունաբերական ոլորտների-(%)) և առևտուրի ու արտահանման հարաբերակցությունը
ՀՆԱ հետ (%)-1978-2008թթ.**

(ՀՆԱ=100%)



*- Առաջնային արդյունաբերություն- գյուղատնտեսություն և անտառատնտեսություն; Երկրորդային արդյունաբերություն- արդյունաբերություն, էներգետիկա և շինարարություն; Երրորդային արդյունաբերություն- տրանսպորտ, ծառայություններ, կրթություն և առողջապահություն

Աղյուր: PRC National Bureau of Statistics (NBS), China Statistical Yearbooks 1996- 2008;

տնտեսություն: Արտահանումը Երկրի արդյունաբերական զարգացման համար առաջնային նշանակության գործոն է, ինչպես նաև հանդիսանում է Չինաստանի ՀՆԱ ծևավորման հիմնական բաղադրիչներից մեկը (Ակ.-1.3): Արտաքին առևտորի աճի տեմպերը կտրուկ բարձրացավ, հատկապես 2001թ.-ին Առևտորի Համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ) ԶԺՀ անդամակցությունից հետո: 2002-2008 թթ.-ին արտահանման և ներմուծման տարեկան միջին աճը կազմել է 27.3% և 26.8%՝ համապատասխանաբար: 2002թ.-ից սկսած արտաքին առևտորի և արտահանման հարաբերակցությունը Երկրի ՀՀԱ-ին կազմում է՝ համապատասխանաբար շուրջ 60% և 30% (Ակ.-1.3):

Զարգացած տնտեսությունների հետ Չինաստանի ամուր կապվածությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է արտաքին առևտորից Երկրի տնտեսության բարձր կախվածությամբ, հանգեցրեց ԶԺՀ հկոնոմիկայի վրա զգնաժամի զայի ազդեցությանը: Գյորալ տնտեսական զգնաժամը նախև և առաջ լրջորեն վնասեց Չինաստանի արտահանման շարունակական աճի տեմպերի պահպանմանը: 2009թ.-ին՝ 2008թ.-ի համեմատ, արտաքին առևտորի ծավալը նվազել է 14%-ով, ընդորում, արտահանումը նվազել է ավելի քան 16.4%-ով՝ կազմելով 1201.9 մլրդ. դրամ [1.11] (Այլ-1.1): Չնայած դրան, Չինաստանն առաջ է անցել Գերմանիայից և արտահանման ծավալներով դարձել է առաջին Երկիրն աշխարհում: Արտաքին առևտորի հսկայական պրոֆիցիստը լրջոր տարածայնություններ է առաջացնում Չինաստանի և Երկրի զիսավոր առևտորական գործընկերներ՝ ԱԱՌ-ի ու ԵՄ միջև, որոնք մեղադրում են Չինաստանին յուանի կուրսի արհեստական ցածր արժեքի պահպանման հարցում, ինչի հետևանքով սահմանափակվում է ներմուծումը: 2008թ.-ին Չինաստանի արտահանման շուրջ 45%-ը առարկել է ԱԱՌ և ԵՄ ներմուծման 15%-ի դեպքում: Առևտորի դրական մեծահաշվեկշռի առկայությունը առանձնապես զգային է դրսևորվում ԱԱՌ հետ հարաբերություններում, որին բաժին է ընկնում Չինաստանի արտահանման շուրջ 19%-ը, այն դեպքում երբ, ԱԱՌ-ից ներմուծումները կազմում են ԶԺՀ ներմուծման ընդհանուր ծավալի ընդամենը 7%-ը [2, 10, 12, 13]:


1.1.2.- ԶԺՀ էներգետիկ պահանջարկի աճը

Որպես 1980-ականներից սկսված տնտեսական տպավորիչ աճի և հարակից այլ գործոնների ընականոն հետևանքը 1993թ.-ից Չինաստանի տնտեսությունում առաջացավ որակապես նոր իրավիճակ, ինչն արտահայտվեց Երկրում առաջնային էներգիայի արտադրության և պահանջարկի միջև հարածուն բացասական հաշվեկշռի անշրջելի առկայությամբ:

Չինաստանի արագընթաց տնտեսական աճի զիսավոր շարժիչ ուժը Երկրի ինդուստրիալիզացումն է, ինչը սկզբնավորվեց 1980-ականներին թերև արդյունաբերության ծեռնարկությունների (օրինակ՝ տեքստիլ, հագուստի և սննդի) զարգացմամբ՝ հետագայում անցնելով ծանր արդյունաբերության ծեռնարկություններին (օրինակ՝ մետալուրգիական, թիմիական և


մերենաշինական(Նկ.-1.3,1.4)): Արդյունաբերության (Երկրորդային) մասնաբաժնը մշտապես կազմում է Երկրի ՀՆԱ 47%-ից ավելին, ինչը համեմատականորեն չափազանց բարձր է զարգացած Երկրների (այդ թվում նաև մի շարք զարգացող Երկրների) նույն ցուցանիշից (Նկ.-1.5): Չինաստանի արտահանության գերակա բաղադրիչը հանդիսացող արդյունաբերության (Երկրորդային) արտադրանքի ծավալները մասնավորապես կտրուկ աճեցին վերջին տասնամյակում՝ 2001թ.-ին

Նկար-1.4-Զգդ ՀՆԱ-ի և Արդյունաբերության զարգացումը (%) 1979-2008



Աղյուր: PRC National Bureau of Statistics (NBS), China Statistical Yearbooks 1996- 2008;


Նկար- 1.5-Չինաստանի ՀՆԱ կառուցվածքի համեմատությունն այլ Երկրների հետ
(ըստ արդյունաբերական ոլորտների-(%))



Աղյուր- World Bank report-2008, (figures for 2006);


ԱՐԿ-ին ԶՃՀ անդամակցությունից հետո: Դա հանգեցրեց Նրան, որ մի շարք հիմնական նշանակություն ունեցող արտադրատեսակների արտադրության և որպես դրա հետևանք՝ ռեսուրսների պահանջարկի առումներով, Չինաստանը ստանձնեց աշխարհում առաջնային դերակատարում: Օրինակ՝ Չինաստանն արտադրում է աշխարհում արտադրվող ցեմենտի ավելի քան 50%-ը, պողպատի և այլումինի մեկ երրորդը: Պահանջարկի առումով Չինաստանն աշխարհում առաջինն է՝ բրնձի, քամբակի, պողպատի, այլումինի, պղնձի, սիկեյի և այլ ռեսուրսների օգտագործմամբ [2,10]: Բնականորեն երկրի տնտեսական և արդյունաբերական զարգացումն ու բնակչության կենսամակարդակի բարձրացումն ուղեկցվում են երկրի էներգետիկ պահանջարկի համընթաց աճով(Նկ.-1.6,1.7): 1980-2001 թթ.-ին էներգիայի պահանջարկի աճը կազմել է 31.1 տարեկան աճի միայն կեսը, բայց սկսել է համեմատաբար ավելի արագ աճել քան 31.1-ը 2001թ.-ից հետո(Նկ.-1.7): Դա առաջին հերթին պայմանավորվում է արդյունաբերության էներգատար արտադրատեսակների արտահանման, ինչպես նաև՝ ներդրման պահանջարկի աճով, և որպես հետևանք այդ արտադրությունների ծավալների նշանակայի ընդարձակմամբ (օրինակ՝ պողպատի արտադրությունը 2000թ. կազմել է 129 մլn. տ., իսկ 2008 թթ.-ին՝ 501 մլn. տ., գեմենտի արտադրությունը 2000թ.-ին կազմել է 597 մլn. տ., 2008թ.-ին՝ 1400 մլn. տ.) [15]: Էներգատար արտադրատեսակների արդյունաբերության առաջնային էներգիայի պահանջարկը կազմում է ԶՃՀ ընդհանուր պահանջարկի 50%-ը, ամբողջ արդյունաբերության շուրջ 70%-ի և բնակչության ընդամենը 10% կազմող պահանջարկի դեպքում(Նկ.-1.8):

**Նկ.-1.6- Առաջնային էներգիայի արտադրությունը և Պահանջարկը ԶՃՀ-ում
(100մլn. ՏԱՐ*)**



Արյուններ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008;
National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; *-ՏԱՐ- Տոննա Սնուկի Բամարժեք (ice)


Նկար-1.7- ՀԱՅԱ- ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԱՆՁԱՐԿԻ
ԱԶԻ ՏԵՄՐՈՐԴ ԴԱՄԵՍՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ (%-Ներով)



Աղյուսներ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008;
National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008;

Նկար-1.8- Էներգիայի օգտագործման հաշվեկշիռը ըստ
արդյունաբերության սեկտորների

(մլն. ՏՄԴ)




Աղյուսներ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008;
National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008;



2000-2008 թթ.-ին ՉԺՀ առաջնային էներգիայի պահանջարկի տարեկան աճը կազմել է 9.43%՝ մոտ 1.9% համաշխարհային տարեկան աճի համեմատ, իսկ 2005-2008 թթ.-ին տարեկան միջին աճը կազմել է 8.25%, աշխարհում մոտ 2% տարեկան աճի դեպքում (Նկար-1.7) [14]: 2008 թ.-ին Չինաստանի էներգիայի պահանջարկը կազմում էր համաշխարհային պահանջարկի 17.7%-ը (աշխարհում երկրորդը ԱՄՆ-ից (20.4%) հետո)՝ պահպանելով շարունակական աճի ամենաբարձր տեմպերն աշխարհում: Չինաստանը հանդիսանում է աշխարհում ածույթի առաջին և նավթի՝ երկրորդ օգտագործողը[16]:

ՉԺՀ ՀՆԱ-ն 2000-2020թթ. ընթացքում քառապատկելու ռազմավարական նպատակը երկրի էներգետիկ անվտանգության խնդիրը դարձնում է հիմնարար առաջնահերթություն: Դամաձայն ՉԺՀ ԳԱ փորձագիտական կախսատեսումների Չինաստանի տնտեսությունը կպահպանի տարեկան առնվազն 8% աճի տեմպը մինչև 2015թ-ը, որից հետո այն կարող է համեմատաբար նվազել մինչև 6.5% [17]: Ըստ էներգիայի միջազգային վարչության հետազոտությունների[18] ՉԺՀ տնտեսական զարգացման ներկայիս տեսակի պահպանման դեպքում, երկրի էներգետիկ պահանջների տարեկան միջին աճը 1990-2030 թթ. հատվածում կկազմի 3.4% և արդեն իսկ 2020թ.-ին ՉԺՀ էներգիայի պահանջարկը կգերազանցի ԱՄՆ-ի առաջնային էներգիայի ծախսը(Նկար-1.9): Ներկայում ՉԺՀ էներգետիկ պահանջների տարեկան աճը շուրջ 3 անգամ գերազանցում է համաշխարհային միջին ցուցանիշը [16-18]:

Նկար-1.9-Առաջնային էներգիայի պահանջարկն ըստ երկրների - 1990-2030 թթ.
(100 Միլիոն ՏԱՀ)




*- Տարեկան միջին աճի տեմպերը: Աղբյուր: EIA-International Energy Outlook 2009;

Երկրի տնտեսական բարեփոխումները առաջին հերթին ներքին ռեսուրսների միջոցով ապահովելու ռազմավարությունը, ի սկզբանե եղել և մնում է հիմնարար նշանակության մոտեցում Չինաստանի համար: Երկրի էներգետիկ պահանջները ներկայումս նույնպես հիմնականում ապահովվում են ներքին միջոցներով (մոտ 90%-2008թ.): Չնայած նրան, որ նախատեսվում է այն նվազեցնելը՝ 2020թ.-ին հասցնելով 80%-ի, այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում Չինաստանն ունենալու է ինքնապահովման ամենաբարձր ցուցանիշներից մեկն աշխարհում[17]:

1.2- ԶԺԴ առաջնային էներգիայի կառուցվածքը, էներգետիկ համակարգի ներկա իրավիճակը և զարգացման հիմնական տեսնդենցները, բարեփոխումները, քաղաքականությունն ու էներգոանվտանգության ռազմավարությունը

Առաջնային էներգիայի արտադրության կառուցվածքում հիմնական բաղադրիչն ածուխն է (2005թ-69.9%), որը լիովին արտադրվում է Չինաստանում: ԶԺԴ ածխի ուսումնասիրված պաշարները մեծությամբ երրորդն են աշխարհում, զիջելով միայն ԱՄՆ-ին և ՌԴ-ին, և կազմում են շուրջ 114.5 մլրդ. տոննա[18]: Ածխի օգտագործման մասնաբաժինն էներգոարտադրությունում նվազելով՝ 2020թ-ին կկազմի 53%, իսկ 2050թ-ին՝ 40%: Նավթի մասնաբաժինը եղել է և կմնա իր նշանակությամբ երկրորդը ԶԺԴ էներգետիկ պահանջարկում՝ 21.1%՝ 2005թ-ին, 22%՝ 2020թ-ին, և 23%՝ 2050թ-ին (Նկ.-1.10) [17]: Յիշոր և ատոմային էներգիայի արտադրությունը՝ 2050թ-ին 10% կազմող մասնաբաժնով երրորդ տեղը կզիջի այլ վերականգնվող էներգոուղղությունների՝ քամուց, արևային և այլն, արդեն իսկ կայունորեն զարգացող էներգոարտադրությանը:

**Նկար-1.10-ԶԺԴ առաջնային էներգիայի կառուցվածքի փոփոխությունների
կանխատեսումը -2005-2050թթ.**



Աղյուսելու: Chinese academy of Sciences; Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008. www.eia.doe.gov/oiaf/aeo/; Cheng-Shin Ouyang- Primary Energy Imbalance and China's Responses: with special Reference to Oil Industry- Chung-Hua Inst. of Economic. Research-March-2008; BP Statistical Review of World Energy-June 2009;

Ներկա իրավիճակը- ԶԺԴ էներգոանվտանգության տեսակները բաշխված են անհամաշխափորեն: Չինաստան աշխարհում առաջինն է հիդրոէներգետիկ ռեսուրսներով, 3-րդը՝ ածխի, 13-րդը՝ նավթի և 17-րդը՝ բնական գազի

պաշարներով: Չափազանց ցածր է մեկ շնչի հաշվարկով առկա ռեսուրսների պաշարները (Նավթը կազմում է աշխարհի միջինի՝ 6.1%-ը, գազը՝ 6.5%-ը, ածուխը և հիդրօռենուրները՝ 50%), ինչպես նաև՝ էներգիայի ծախսումը (կազմում է՝ ԱՄՆ մեկ շնչի պահանջարկի ընդամենը՝ 1/8, ԵՄ՝ 1/4) [19,20]: Էներգոռեսուրսները ցրված են ամբողջ տարածքով, բայց բաշխված են շատ անհամաշափորեն: Ածուխը հիմնականում կենտրոնացված է հյուսիսում և հյուսիս արևմուտքում, նավթի և գազի հանքավայրերը՝ արևելյան, կենտրոնական և արևմտյան հատվածներում, այն դեպքում, եթե էներգիայի հիմնական մասնաբաժինն օգտագործվում է առավել զարգացած հարավ-արևելյան և ծովափնյա շրջաններում, որտեղ կենտրոնացված է արդյունաբերության հիմնական մասը (Հավել.-2, Քարտեզ- 1 և [19]): Նման իրավիճակում առաջանում է ածուխի և նավթի հյուսիսից հարավ մեծածավայ տեղափոխումների, ինչպես նաև թական զագի և էլեկտրոններգիայի արևմուտքից արևելք մեծ հեռավորություններով ծախսատար առաջումների անհրաժեշտություն [19]:

Միաժամանակ էներգիայի պահանջարկի արագնթաց աճը գուգորդվում է էներգիայի օգտագործման համեմատաբար ցածր արդյունավետության հետ [20]: Չինաստանի էներգետիկայում արդյունավետությունը կազմում է 33%, որը 10% ով ցածր է աշխարհի միջինից (Այլ.-1.2): Էներգիայի միջին տեսակարար պահանջարկը՝ պողպատի, ոչ գունավոր մետաղների, շինանյութերի, նավթավերամշակման, քիմիական, տեքստիլ և թեթև արդյունաբերություններում 40%-ով բարձր է աշխարհում միջին տեսակարար պահանջարկից [20]: Ավտոմեքենաները օգտագործում են 25% և 20%-ով ավելի վառելանյութ, քան համապատասխանաբար Եվրոպայում և Ճապոնիայում [20]: Զեօնում նպաստակով օգտագործվող էներգիայի պահանջարկը 2-ից 3 անգամ գերազանցում է զարգացած երկրներում նույն կիրայական պայմաններում կատարվող էներգոծախսումները:

Այլուսակ-1.2- Էներգաօգտագործման ծավալների որոշ համեմատություններ


Արտադրություն	Միջինը ՉԺՀ-ում	Միջինը Աշխարհում	Տարրեարժույթ %-ով
Անի օրուագրենում էկզորսներիցախի Արտադրությունը (ցույկ/ԹԻ)	370	301	18%
Էներգետիկ պահանջարկ (ԷԿ) պարզաբն արտադրությունը (էկուու)	714	610	17%
ԷԿ- ցենտրալ սրտացարայինը (էկուու)	153	127	20%
ԷԿ նավթի մշակման ցերացու (էկուու)	104.3	73	43%
ԷԿ երինի արտադրությունը (էկուու)	906	629	57%
ԷԿ պիրենական անհիմակ արտ-ում (էկուու)	1314	1000	31%

Արդյունելի-; Na Zhang- Energy situation and future development strategy in China- Institute of Engineering Thermophysics, Chinese Academy of Sciences- Beijing-2009, Material of Bureau of national Energy 2008

Ածովիսը որպես էներգոարտադրության հիմնական միջոցի օգտագործումը Չինաստանում (ավելի քան 2.4 անգամ գերազանցում է աշխարհում ածովիս օգտագործման միջին մակարդակը (Նկ.-1.10)) առաջացնում է լրջագույն հիմնախնդիրներ շրջակա միջավայրի պահպանման առումով: 1990-2008 թթ.-ին թթվային անձրևներով աղտոտվել է մոտ 1.5 մլն. մ² տարածք: Չինաստանի 10քաղաքներն ընդգրկվածներում 20ամենաաղտոտված քաղաքների ցանկում [20,21]: 1999թ.-ից պահպանվող ամենաբարձր SO₂-ի արտանետումների կեսից ավելին առաջանում է ածովիս օգտագործմամբ ջերմնիեկտորկայաններից: 2005 թ-ից ծեռնարկվող միջոցառումների շնորհիվ առկա և նոր կառուցվող ջերմուկիեկտորկայաններում ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ, արդեն 2008թ.-ին՝ ՉԺՀ-ում ծծմբի դիօքսիդի արտանետումները նվազել են 5.95%-ով: ՉԺՀ ինդուստրիալզացման և էներգիայի պահանջարկի վերջին տասնամյակում առկա առանձնապես արագընթաց աճն ուղեկցվում է շրջակա միջավայրի վրա թողնված համաչափ ազդեցությամբ: 2000-2006թթ.-ին՝ աշխարհում CO₂-ի արտանետումների աճի շուրջ 57% -ը պայմանավորված է Չինաստանում արտանետումների ծավալների 50% կազմող աճով [20,21]: 2008* թ.-ից Չինաստանում

**Նկ. 1.11- Ըստհանուր էներգիայի պահանջարկը 10000 յուան ՆՀԱ-ի համար
(էներգոինտենսիվություն)**

(ԲՆԱ-ն հաշվարկված է 2005թ.-ի համեմատական գներով)



Աղյուրներ: China Energy Statistical Yearbook (CESY) -2006; National Bureau of Statistics of China (NBSC); China Daily 03/04/2010 page8

*- Ըստ չինական աղյուրների [20]: Ըստ էներգիայի միջազգային գործակալության՝ 2006թ.-ից (տես- EIA (2008). IEA2006, Energy Information Administration, available at <http://www.eia.doe.gov/pub/international/leal/tafelh1co2.xls>.

CO2-ի արտանետումները հանդիսանում են աշխարհում ամենամեծածավաը, չնայած՝ մեկ շնչին հասնող արտանետումները մոտ են համաշխարհային միջինին՝ կազմելով շորջ 4 տոննա, ինչը 5 անգամ փոքր է ԱՄՆ-ի, և 2 անգամ ԵՄ նույն ցուցանիշներից:

Էներգիայի պահանջարկի մեծածավայ աճը հանգեցրել է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանման առումով ՉԺՀ-ին ուղղված միջազգային պահանջների հաճախակիության մեծացմանը, այլև երկրի անվտանգ էներգոապահովմանն ուղղված Չինաստանի գործադրվող ջանքերի և հոգածության նշանակայից աճին: Էներգիայի խնայողության, անվտանգ մատակարարման և էներգոազտագործմամբ պայմանավորված հնարավոր ռիսկերի նվազեցման նպատակով (այդ թվում ածխածնի արտանետումների նվազեցման) Չինաստանը պլանավորել է 11-րդ հնգամյակում (2006-2010) 20%-ով նվազեցնել էներգոինտենսիվությունը՝ ինչը դեռևս նշանակալիորեն բարձր է զարգացած երկրների հետ համեմատ* (Սկ-1.11)[22]:

Այս առումով, որպես կարևորագույն քայլ, ՉԺՀ կառավարությունը սկսեց իրականացնել «1000 ձեռնարկությունների ծրագիրը», էներգոինտենսիվության նվազեցման ծրագրում ընդունվելով երկրի խոշորագույն 1000 ձեռնարկություններին, որոնք միասին օգտագործում են ՉԺՀ արդյունաբերությունում ծախսվող էներգիայի մոտ կեսը և երկրում պահանջարկի՝ մեկ երրորդը [23]: Ծրագրով նախատեսվում է էներգոազտագործման արդյունավետության բարձրացման շնորհիվ 2010թ.-ին 100 Մլն. ՏՄՀ-ով նվազեցնել էներգիայի բազմային օգտագործման ծավալները, ինչը նաև նշանակում է՝ 260 Մլն. տոննայով CO2-ի արտանետումների նվազեցում [21,23]: Ըստհանուր առմամբ ծրագրով նախատեսված է 2010թ.-ին հասնել, շրջակա միջավայրն աղտոտող հիմնական արտանետումների մոտ 10%-ով կրճատման: 2009 թ-ին Չինաստանը հայտարարեց նաև 2020թ-ին 2005թ-ի համեմատ CO2-ի արտանետումների 40-45%-ով նվազեցման մասին[26]:

2007թ-ի հունիսին Չինաստանը հրապարակեց իր առաջին՝ «Կիմայի փոփոխման ազգային ծրագիրը», որով սահմանվեցին մինչև 2010 թ-ը իրականացվող միջոցառումները. կիմայի պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացման հիմնարար սկզբունքներն ու մոտեցումները [24]: Դիմնադրվեց նաև «Կիմայի փոփոխման ազգային առաջատար խումբ» Կարչապետի նախագահությամբ: Նշկած միջոցառումներով շրջակա միջավայրի պահպանման խնդիրներն ընդուրկվեցին պետական կառավարման բարձրագույն մարմնի համակարգման ոլորտ:

Ըստ վերջին տվյալների ձեռնարկված քայլերի շնորհիվ

*- 2006թ. ՉՆԱ 10.000\$ (համերաելի գներով) համար ՉԺՀ-ում ծախսվում է 4.7 անգամ ավելի էներգիա քան ԱՄՆ-ում և 3.5 անգամ ավելի՝ քան աշխարհում միջին ցուցանիշը: Էներգիայի արդյունավետության բարձրացման հարցը հիմնարար նշանակություն ունի և առանձնահատուկ ուշադրության առարկա է տես՝ Cherng-Shin Ouyang- Primary Energy Imbalance and China's Responses-CIER-2008].

Էներգոինտենսիվությունը նվազել է 2006թ.-ին՝ 1.79%-ով, 2007թ.-ին՝ 4.04%-ով, 2008թ.-ին՝ 5.2%-ով և 2009թ.-ին՝ միայն 2.2%-ով [25] (տես նաև՝ Նկ.1.11): Ըստ էության՝ 2006- 2009թթ.-ին էներգոինտենսիվությունը նվազել է միայն 14.38%-ով[26] և 2010 թ-ի համար նախատեսված 20%-ով նվազեցման նպատակի հրականացման համար իւրապես անհրաժեշտ է լրջագույն ջանքերի և ծանրակշիռ միջոցների ներդրում:

Ընդհանուր առմամբ, Զինաստանի էներգոիամակարգում ներկայում առկա են ռեսուրսների անբավարարության (հատկապես տեսակարար արժեքների առումով), էներգիայի օգտագործման ցածր արդյունավետության, շրջակա միջավայրի աղտոտող մեծածավալ արտանետումների, ինչպես նաև համակարգի կառավարման մեխանիզմների օպտիմալացման հիմնախնդիրներ:

Զարգացման հիմնական տեսնեցները, բարեփոխումներն ու էներգոանվտանգության ռազմավարությունը- Երկրի կայուն առաջընթացն ապահովող էներգոիամակարգի ստեղծման ռազմավարությունն իր մեջ ներառում է տնտեսական աճի, սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի պահպանման հիմնային բաղադրիչների օպտիմալ զուգորդման անհրաժեշտություն: Ընդհանուր առմամբ դա ոչ միայն տնտեսա-տեխնիկական, այլև հասարակական որոշակի հարաբերությունների ձևավորման խնդիր է և ենթադրում է էներգոարտադրության կառուցվածքային օպտիմիզացիա, արդյունաբերության տեխնոլոգիական վերազինում և վերափոխում, նվազագույն արտանետումներով տնտեսության զարգացում, ռեսուրսների խնայման և շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունը գիտակցող հասարակության ձևավորում և այլն: Նվազագույն կանխատեսումներով ՉԺՀ էներգիայի պահանջարկը 2020 թ-ին լինելու ավելի քան 4 մլրդ. տոննա ածովիչ օգտագործման համարժեքը (Մլրդ. ՏՄՀ), ինչը գերազանցելու է 2008 թ-ի մակարդակը ավելի քան 40%-ով(Նկ. 1.6.1.9): Էներգոիամակարգի զարգացման ուղղվածությունը Զինաստանում հիմնականում կանխորոշվում է.

- ռեսուրսների առավել խնայողաբար օգտագործման և վերականգնվող էներգոռեսուրսների կիրառման նշանակալի աճով,

- էներգիայի խնայման և էներգիայի օգտագործման արդյունավետության բարձրացմամբ, ինչպես նաև այդ նպատակին ուղղված ծրագրերի հրականացման առաջնային նշանակությամբ,

- էներգատարարտադրություններով արդյունաբերության հագեցվածության հետևանքով դրանց հետագա աճի տեմպերի սահմանափակմամբ,

-ուրբանիզացիայի և կենսամակարդակի շարունակական աճով պայմանավորված ենթակառուցվածքների արագ զարգացմանն ուղղված էներգոծախսումների, ինչպես նաև ընակչության էներգաօգտագործման ծավալների նշանակալի ավելացմամբ,

- շրջակա միջավայրի պահպանման պահանջարկի խստացմամբ և կյիմայի փոփոխման խնդրի կարևորության ավելի խորացող գիտակցմամբ և այլ հարակից գործոններով:

Էներգիայի կառուցվածքային օպտիմալացումը ուղղված է շրջակա միջավայրի համար անվտանգ կամ նվազ վտանգավոր ուղղությունների զարգացմանը(Նկ. 1.10): Կերականգնվող էներգոսեսուրսների (արևի, քամու և բիոլիչներգիա) կիրառմամբ էներգիայի արտադրությունը արդեն խև 2020 թ-ին կարող է կազմել 7%, իսկ 2050 թ-ին՝ 15% (առանց հիդրոկայանների)(28):

Աստոմային էներգոարտադրության զարգացումը կարող է դառնալ հիմնական ուղղություններից մեկը, ինչը ենթադրում է նաև լայնածավալ միջազգային համագործակցության խթանում: 2008թ-ին ՉԺՀ-ում գործում էր ընդամենը 4 երկրորդ սերնդի աստոմակայաններ, որոնք արտադրում են երկրի էներգիայի 1.2%-ը: 2020 թ-ին պլանավորվում է հասնել 5%-ի [29]:

Ներկա գիտական և տեխնոլոգիական հնարավորություններով Զինաստանի համար շատ դժվար է հասնել տնտեսական բարձր արդյունավետությամբ էներգիամակարդի ծնավորման, կայուն զարգացման և օպտիմալ օգտագործման նպատակների կենսագործմանը: Էներգետիկայի ոլորտում գիտության և տեխնոլոգիաների զարգացման խնդիրներն առանձնահատուկ ուշադրության առարկա են ՉԺՀ-ում: 2010 թ-ի հոնվարին Զինաստանում հայտարարվեց էներգետիկայի ոլորտում հետագործությունների և տեխնոլոգիական մշակումների 16 պետական կենտրոնների ստեղծման մասին[34]: Կենտրոնների գործունեությունն առընչվելու է էներգետիկայի բոլոր ոլորտներին, ինչպես նաև նոր նյութերի և սարքավորումների մշակումներին:

Զինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման առկա մարտահրավերների դիմակայման և հիմնախնդիրների լուծման հիմքը անող պահանջարկի վերահսկման և արդի իրավիճակին համահունչ պետական կառավարման օպտիմալ մեխանիզմների մշակումն ու ներդրումն է: Բարեփոխումների քաղաքականության իրականացման ընթացքում էներգետիկայի կառավարման համակարգը բազմից ենթարկվել է փոփոխությունների: 1980 թ-ին կազմավորվեց «Էներգիայի պետական կոմիտեն», որը երկու տարի անց կազմայուժվեց: 1988թ-ին ստեղծվեց էներգիայի նախարարություն, որը կազմայուժվեց 1993թ-ին, որից հետո Զինաստանում էներգիայի միասնական կառավարման պետական հաստատությունը, ըստ էռթյան, բացակայում էր: 2003-2004 թթ. առաջացած էներգետիկ անքավարարության կտրուկ աճի թելադրանքով (2004 թ. նավթի ներմուծման ծավալը 2002 թ. համեմատ աճեց մոտ 67%-ով) ՉԺՀ կառավարությունը կազմավորեց էներգիայի կառավարման Պետական խորմ՝ Զինաստանի Կարչապետի ղեկավարությամբ[30]: Խմբի հիմնական խնդիրները ՉԺՀ էներգետիկ ռազմավարության, ոլորտի զարգացման և էներգաօգտագործման օպտիմալացման, երկրի էներգետիկ անվտանգության ապահովման և միջազգային համագործակցության քաղաքականության մշակումն էր: 2007 թ. ղեկտեմբերին Խմբի կողմից հրապարակվեց «ՉԺՀ էներգիայի սպիտակ թղթեր» փաստաթուղթը և «ՉԺՀ էներգիայի օրենքի» նախագիծը, որը դրվեց համաժողովրդական քննարկման[31]: Օրենքը սկսեց գործել 2009թ.-ից: Օրենքը ավելի է կենտրոնացրել Զինաստանի էներգետիկ

ոլորտի ամրողական կառավարումը, ինչպես նաև ոլորտին առնչվող ներքին և արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նման կենտրոնացվածությունը արդիական է և խստ հրատապ նախ և առաջ այն իմաստով, որ պետական մակարդակի ռազմավարական խնդիրները և երկրի անվտանգությանն առնչվող մարտահրավերների լուծման հարցերը լիովին կդառնան պետության քաղաքականության սուբյեկտ և չեն պայմանավորվի թեկուզ և պետական, կորպորացիաների բացառապես շուկայական ընույթ ունեցող գործառույթներին:

Արդեն իսկ 2008 թ-ի օգոստոսին կազմավորվեց «Էներգիայի պետական կառավարման վարչությունը», որի հրավասությունը տարածվեց ոլորտին առնչվող բոլոր գործառույթների վրա, այդ թվում՝

- Էներգիայի զարգացման պյանավորման և բարեփոխումների համակարգման ու իրականացման,

- արդյունաբերական քաղաքականության և Էներգոհամակարգին առնչվող օրինագծերի մշակման,

- Էներգոսեռուրսների հանույթի և Էներգոարդյունաբերության ոլորտային կառավարման,

- Էներգոօգտագործման հաշվեկշիռի կարգավորման, Էներգիայի և ռեսուրսների խնայողության, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի ապահովման ու շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների մշակման,

- Էներգոժարագրերի ֆինանսավորման,

- միջազգային համագործակցության ծավալման, բանակցությունների վարման, պայմանագրերի պատրաստման և քնազգառում արտերկրյա ներդրումների իրականացման հաստատման և այլ գործառույթներով:

«ՉԺԴ Էներգիայի սպիտակ թղթեր» փաստաթղթով և «ՉԺԴ Էներգիայի օրենքով»՝ որպես՝ Զինաստանի Էներգոհամակարգի զարգացման ռազմավարության հիմնային նպատակներ սահմանվում են՝

- Էներգիայի խնայման առաջնահերթությունը,

- ներքին ռեսուրսների վրա հենվելու առաջնայնությունը,

- զարգացման տարրեր մեթոդների կիրառման խրախուառմը,

- գիտության և տեխնոլոգիայի զարգացումը և կիրառումը,

- շրջակա միջավայրի պահպանումը;


- միջազգային համագործակցության ընդունումը՝ փոխահավետության սկզբունքով [20, 30-32]:

2010թ-ի հունվարի վերջին ՉԺԴ Պետխորհուրդը հայտարարեց Կարչապետի նախագահությամբ Էներգիայի ազգային կոմիտեի կազմավորման մասին [33]: Կոմիտեի հիմնական գործառույթներն են Էներգիայի զարգացման ռազմավարության մշակումն ու ընդունումը, Էներգոանվտանգության գիսավոր խնդիրների քննարկումն ու լուծումների մշակումը, երկրում Էներգիայի իրացման կառավարումը, ինչպես նաև միջազգային համագործակցության համակարգումը: Ըստ էության Կոմիտեն ՉԺԴ Էներգիայի քաղաքականության ռազմավարության մշակման և համակարգման ու կառավարման բարձրագույն մարմինն է:

1.3-Արտաքին վերահսկողության տակ գտնվող ռեսուրսների ներմուծումից ՉժԴ խորացող կախվածությունը -էներգոռեսուրսներ

21-րդ դարասկիզբ ՉժԴ-ն թևակոյինել է տնտեսական զարգացման, ինչպես նաև երկրի միջազգային ազդեցության և դերի աճի որակապես նոր փուլ: Երեսունամյա արագընթաց և կայուն զարգացումից հետո երկրում ձևավորված հսկայածավալ տնտեսությունը և աճի բարձր տեմպերն առաջացրել են էներգիայի և անհրաժեշտ այլ թնական ռեսուրսների մատակարարման ծավալների, ինչպես նաև իրացման և ներմուծման շուկաների ընդարձակման թնականու անհրաժեշտություն: Թնական ռեսուրսների և հումքի պահանջարկի առանձնահատուկ շոշափելի աճ Չինաստանի տնտեսությունում առաջացավ վերջին տասնամյակում: Ընդորում՝ աշխարհում որոշ ռեսուրսների ընդհանուր պահանջարկի աճի հիմնական մասնաբաժինը պայմանավորված է Չինաստանի տնտեսությունում դրանց պահանջների մեծացման հետ (Նկ-12): Չինաստանի մասնաբաժինն աշխարհում 2000-2007-թթ. պահանջարկի ընդհանուր աճում, կազմել է նավե՞՝ 35.9%, ցինկ՝ 87%, նիկել՝ 79%, այրումին՝ 60%, պղինձ՝ 99%, երկաթահանք (և պողպատ)՝ 59% և այլն (Նկ-1.12): Չինաստանը նավեի և էներգիայի օգտագործման ծավալներով ներկայում հանդիսանում է աշխարհում երկրորդ (ԱՄՆ-ից հետո), իսկ մի շարք ռեսուրսների պահանջարկով, փոխարինելով ԱՄՆ-ին, դարձել է առաջնորդ՝ (ցինկ, նիկել, այրումին, երկաթահանք, պղինձ, ածուխ և այլն): Չնայած երկրում ռեսուրսների արդյունահանման ծավալների

Նկար-1.12- ՉժԴ ռեսուրսների պահանջարկի աճը և մասնաբաժինն աշխարհի ընդհանուր աճում



Աղյուսներ- National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; Chinese statistics and metal forecasting-Macquarie Commodities Research Macquarie Capital Securities- April 2008

Նշանակալից աճին (օրինակ նավթի արդյունահանման աճը նշված ժամանակահատվածում կազմել է շորոջ 15%, պղինձ՝ 14.8%, ցինկ՝ 10.2%, նիկել՝ 20.3% և այլն) պահանջարկի աճի աստիճանային տեմպերը հանգեցրել են ներմուծումից հարածուն կախվածության՝ տարբեր ռեսուրսների առումով, ներկայում հասնելով 4-ից մինչև 99%-ի՝ տեսանելի ապագայում ներմուծումից կախվածության աճի միտումների ակնհայտ պահպանմամբ (օրինակ, նավթի ներմուծումը 2020թ.-ին արդեն կարող է կազմել պահանջարկի 65-70%-ը):

Պահանջարկի աճի տեմպերի նման թղթաքային մեծությունը՝ հատկապես մետաղների գծով, անշուշտ պայմանավորված է վերջին տասնամյակում Չինաստանում ենթակառուցվածքային շինարարության աննախադեպ աճով: Չետևարար, չնայած հիմնավորելի է ապագայում աճի տեմպերի նվազման կանխատեսելիությունը, այնուամենայնիվ աճի ընդհանուր միտումները՝ տեսանելի ապագայում կապահպանվեն այն ծնող հիմնարար գործոնների շարունակական ազդեցության հետևանքով:

Եթե հիմնական գործոններ որոշիչ են (և տեսանելի ապագայում կմնան այդպիսին) Չինաստանի ռեսուրսների պահանջարկի ծավալների որոշման և հետագա փոփոխման առումով՝

- ռեսուրսական գարգացումն ու երկրում ռեսուրսների անբավարար առկայությունը,

- երկրի տնտեսության ինդուստրիալիզացիոն գործընթացը,

- քնակչության կենսամակարդակի աճն* ու արագ ուրբանիզացիան** (տես- Այլուսակ-1.1):

Ըստհանուր առամարտ Չինաստանը ներկայում անցնում է երկրի գարգացման միջտ նույն փոփերով, որով արդեն անցել են բոլոր գարգացած երկրները: Չինական տարրերությունը ՉԺՀ դեպքում, տնտեսական ահօելի մասշտաբներն են, գարգացման գործընթացներում առկա տպավորիչ արագությունը, ինչպես նաև աննախադեպ ժողովրդագրական իրավիճակով պայմանավորվածներին գործոնի առավելնշանակալից ազդեցության առկայությունը:

Չնայած պահանջվող ռեսուրսների տեսակների լայն սպեկտորին, քնականորեն գերակա առաջնայնությունը էներգոռեսուրսների ներկրությունից հարածուն կախվածությունն է, ինչն ընդհանուր առմամբ, հիմնարար

*- Ակսած 1978թ-ից, Չինաստանի ՀՆԱ-ն աճել է ավելի քան 17.5 անգամ իսկ մեկ շնչին ընկնող եկամուտը՝ ավելի քան 13 անգամ (տես- Այլ-1.1):

**- Օրինակ՝ ուրբանիզացիայի ներկայի միջին տեմպերի պահպանման դեպքում, 2025-ին քաղաքային քնակչությունը կազմի՞՛ 66%: ՉԺՀ-ը կունենա՝ միինու և ավելի քնակչությամբ (ներկայում եվրոպայում կա՝ 35-ը)- 2030-ին ՉԺՀ-ն կունենա շորջ մեկ մլրդ. քաղաքային քնակչություն, ինչի հետևանքով՝ կառուցվելու է 170 նոր տրամադրության հաճակարգեր՝ (2 անգամ ավել քան ներկայում կա Եվրոպայում) և այլն: (Տվյալները վերցված են)- China's Urban Population Boom-THE CHINA ANALYST- by THE BEIJING AXIS Ltd.-April-2008:)

Նշանակություն ունի երկրի տնտեսության հետագա զարգացման՝ այս ինաստով նաև այլ ռեսուրսներից կախվածության աստիճանի հետագա աճի որոշման առումով:

Արտաքին էներգակիրների Զինաստանի պահանջարկը խստորեն փոխկապակցված է էներգիայի ոլորտում ներքին քաղաքականության հետ: Էներգետիկ անվտանգության ռազմավարությունը, նաև և առաջ, ներառում է էներգիայի պահպանման և օգտագործման արդյունավետության բարձրացում, էներգիայի ոլորտի կառուցվածքի և պահանջարկի օպտիմալացում, շրջակա միջավայրի պահպանում և նոր ալտերնատիվ ու վերականգնվող էներգուեսուրսների օգտագործում, նավթի ռազմավարական պահուստի ստեղծուած:


ՉժՆ էներգոապահուվման խնդիրն առաջին անքամ առաջացել է 1993թ.-ին, երբ երկուում նավթի օգտագործման պահանջարկը 1.2%-ով գերազանցեց արդյունահանվող և վերամշակվող նավթի ծավալը, ինչով ՉժՆ-ն նավթ արտահանող (net) երկրից դարձավ (net) նավթ ներմուծող (Նկ-1.13, 1.14): Հետագա տարիներին նավթի ներմուծման պահանջարկի աճի արագությունը հանգեցրեց Զինաստանի նավթի ներքին պահանջարկի բավարարման հիմնարար կախվածությանը արտաքին ներկրումներից: 1985-1995թթ. Զինաստանի նավթի պահանջարկը կրկնապատկվեց 1.7-ից 3.4 միլ. բար./օր: Այն նորից կրկնապատկվեց 2005-ին՝ կազմելով 6.8 միլ. բար./օր [19]: 2000-2009 թթ. ժամանակահատվածում ՉժՆ-ում նավթի արտադրությունը տարեկան աճել է ընդամենը 1.9%-ով և 2009թ.-ին կազմել է 190 մլն. տոննա (3.93 միլ. բար./օր) 394 մլն. տոննա (8.14 միլ. բար./օր) պահանջարկի դեպքում** (Նկ-1.12): 2009թ.-ին նավթից արտաքին կախվածությունը կրկնապատկվեց է 2000թ.-ի համեմատ, կազմելով 54% (net) (Նկ-1.15): Ըստ որում, 2006թ. տվյալներով՝ Զինաստանում հետազոտված նավթի պաշարները կազմում են ընդամենը 16 մլրդ. բարել՝ համաշխարհային ծավալների շուրջ 1.4%-ը [17]:

Սկսած 2000 թ-ից Զինաստանի հիմնական նավթահանքերից արդյունահանուած սկսել է նվազել տարեկան 5-7%-ով: Այդ հանքավայրերից 2008թ-ի 3.8 միլ. բար./օր նավթի հանույթը 2030 թ-ին կարող է կազմել ընդամենը՝ 3.2 միլ. բար./օր [35, 43]: Առաջմ հետազոտված նոր պաշարները նշանակալից չեն: Ամենայն հավանականությամբ նավթի արդյունահանուած ՉժՆ-ում մոտեցել է իր ամենաբարձր

* 2005թ. ՉժՆ-ն ուներ ընդամենը 30 օրվա պահուատ, այն դեպքով, երբ օրինակ՝ ԱՄՆ, Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիա նավթի ռազմավարական պահուստը կրակարարի համապատասխանարար՝ 158, 169, 127 և 96 օրվա համար: 2003թ-ից ՉժՆ-ն սկսեց՝ 16.4 մլն. մ3 ծավալով, 4 նոր պահուստարանների կառուցումը, որն ավարտվեց 2008թ-ին: ՉժՆ էներգիայի ազգային վարչությունը 2009թ-ին որոշեց՝ մինչև 2011 թ-ը կառուցել 8 նոր պահուստարաններ, որուի Զինաստանի պահուստային նավթի ծավալը կիսանի՝ 44.6 մլն. մ3, որուք կարող են բավարարել Զինաստանի 90 օրյա նավթի պահանջները: [38, 39].


** Համեմատության համար նշենք, որ ներկայում ԱՄՆ-ը օգտագործում է մոտ 21 միլ. բար./օր, որը կազմում է համաշխարհային արտադրության շուրջ 25%, ԱՄՆ-ի էներգիայի պահանջարկի՝ 40%-ը և ավելի քան 2.5 անգամ՝ գերազանցում է ՉժՆ օգտագործման ծավալը [18]:

**Նկար-1.13-ՉԺՀ նավթի արդյունահանումը և պահանջարկը
(1990-2009 թթ. Միլիոն տ.)**



Աղյուսակ: China Energy Statistical Yearbook (CESY) -2008; National Bureau Statistic of China (NBSC); BP Statistical Review of World Energy-June 2009; EIA, International Energy Annual, Short Term Energy Outlook-2009թ.

**Նկար- 1.14-Չեղուկ վառելանյութի օգտագործումը (Հիմնային կանխատեսում)
ըստ երկրների 1990-2030 թթ. (Մլն. բար. Օրեկան)**



*-Այցին տարեկան աճը (%-ներով): 2006-2030թթ.


Աղյուսակ: EIA-International Energy Outlook 2009**.

**- EIA կանխատեսումները ստվերաբար միշտ են գուազում այլ կազմակերպությունների հաշվարկների հետ համեմատած: Օրինակ՝ 2020թ-ին ՉԺՀ նավթի պահանջարկի ԷIA կանխատեսումը կազմում է՝ 605 մլն. տ., IEA-ը՝ 639 մլն. տ., CNPC-RIET-ը՝ 621 մլն.-տ.[35]: Այդ իմաստով, հավասարաբար ԷIA կանխատեսումները կարող են լինել ավելի հավաստի:

արժեքին (մոտ 2015 թ-ին) և կարող է սկսել նվազել արդեն իսկ հետագա տասնամյակում [36,37], պահանջարկի աճի մոտավորապես նոյն տեմպերի պահպանման պայմաններում[35,36]:

ՉժՇ առաջնային էներգիայի կառուցվածքային հետագա փոփոխությունների հեռանկարը(Նկ.-1.10) և էներգուեստուրսներով՝ ապահովության առկա մակարդակի հաշվառումը, Ենթադրում Են տեսանելի ապագայում, նավելի պահանջարկի նշանակալից աճի պահպանումը, ինչպես նաև նավթի առանձնահատուկ նշանակությունը երկրի էներգոապահովման անվտանգության ռազմավարությունում: Երկրի տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և որրանիզացիայի գործուներով պայմանավորված էներգոապահովությունը աճի տրամաբանության զուգորդումը վերոշարադրյալին հիմնավորվում է նավթի՝ որպես գերակա կարևորության էներգակրի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև նավթի արտաքին ներկրումներից ՉժՇ կախվածության առաջնային նշանակությունը երկրի անվտանգության առումով:

Նկար-1.15- ՉժՇ կախվածությունը նավթի արտաքին ներկրումներից (- %)



Sources:- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; Report of the China's Academy of Social Sciences(CASS)-2009; BP Statistical Review of World Energy-June 2009; EIA- Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008.

2000-2008- թթ. ՉժՇ բնակչության տարեկան աճը կազմել է 0.58%: Ենթադրում է, որ հետագա տարիներին աճը կկազմի 0.5%, որի դեպքում 2020- թ-ին ՉժՇ բնակչությունը կկազմի 1.4 մլրդ: Որբանիզացիայի աճի 0.8% ներկայիս տեմպերի պահպանման դեպքում (Աղյուսակ-1.1) բաղադրային բնակչությունը կկազմի 55%: Մեկ շնչին ընկնող եկամուտները

տարեկան աճելով՝ զյուղերում 4.3%-ով, քաղաքներում 6.5%-ով, 2020 թ-ին համապատասխանարար կլազմն 6134 և 28433 յուան: Առաջնային, երկրորդային և երրորդային ինդուստրիաների տարեկան միջին աճը մինչև 2020 -թ-ը պլանավորված է համապատասխանարար՝ 3.1%, 6.9% և 7.1%, որի դեպքում 2020- թ-ին ՆՀԱ ոլորտային կառուցվածքում դրանք կունենան 6.5%, 50.9% և 42.6% մասնաբաժններ (Նկ-1.3)[35]: 2009-թ-ին Չինաստանում վաճառվել է 13.5 մլn. (գերազանցելով ԱՄՆ տարեկան վաճառքը) նոր ավտոմեքենաներ, ինչը 44%-ով ավելի է 2008-թ-ի համեմատ: Շարադրվածն այն հիմնական (բնակչ ոչ ամբողջական) գործոններն են, որոնք ձևավորում են նավթի պահանջարկի շարունակական աճը ՉԺՀ-ում և ավելի կամ սակավ ինտենսիվությամբ գործելու են տեսանելի ապագայում (Նկար-1.15): 2015թ. Չինաստանը կարող է օգտագործել աշխարհում արդյունահանվող նավթի 14%-ը (9.4 միլ. բար./օր) ներմուծումից շուրջ 60 տոկոս կախվածությամբ (Նկար-1.14, 1.15) [18]: 2020-թ-ին նավթի արտաքին ներկրումներից ՉԺՀ կախվածությունը կավելանա և շուրջ 5%-ով(Նկար-1.14, 1.15) [17]:


Ի տարբերություն նավթի՝ Չինաստանում առկա է բնական գազի քավականին հոսաղորդ պաշարներ: Յամածայն CNPC-ի 2005-թ-ին հրապարակած տվյալների՝ Չինաստանի բնական գազի հեռանկարային երկարանական հնարավոր պաշարները կարող են կազմել մինչև 56 տրիլ. մ3[40,41]: Կիրառական նշանակության առումով, ըստ CNPC-ի 2008-թ-ին հրապարակած տվյալների, ՉԺՀ-ում բնական գազի հաստատված պաշարները կազմում են 5.94 տրիլ. մ3, որից 3.09 տրիլ. մ3 -ը հանդիսանում է տեխնիկապես և տնտեսապես շահագործելի[42]:

Չինաստանի Պետխորհրդի զարգացման հետազոտությունների կենտրոնի 2004 թ-ին հրապարակած «Էներգիայի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը» գեկույցում ներկայացրեց Չինաստանի բնական գազի օգտագործման երկարաժամկետ քաղաքականությունը և պահանջեց որպես ածխի ալտերնատիվ, աջակցել բնական գազի օգտագործման մեծացմանը հատկապես էներգիայի արտադրության և բնակչության սպասարկման ոլորտներում[40]: Բոլոր դեպքերում, չնայած որոշակի աճին, բնական գազի մասնաբաժնը ՉԺՀ էներգետիկ հաշվեկշռում դեռևս քավականացափ փոքր է և 2008-թ-ին կազմել է ընդամենը 3.6%՝ 2005-թ-ի 2.7% -ի համեմատ (Նկ-1.10): Ելեկտրական էներգակիրների դիվերսիֆիկացման, էներգոարդյունավետության բարձրացման և շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից 10-րդ (2001-2005թթ.) և 11-րդ (2006-2010թթ.) հնգամյա պլաններում ՉԺՀ կառավարությունը պլանավորել է ավելացնել բնական գազի օգտագործման ծավալները՝ գազի մասնաբաժնը ՉԺՀ էներգետիկ հաշվեկշռում հասցնելով 5.3% 2010-թ-ին, 10%՝ 2020-թ-ին և 12%՝ 2050 թ-ին (Նկ-1.10, 1.16): Այսուամենայինք, այն կինդի նշանակալիորեն ցածր համաշխարհային միջինից, որը կազմում է շուրջ 25%:

2007 թ-ի օգստոսին ՉԺՀ զարգացման և բարեփոխումների կոմիտեն հրապարակեց «Բնական գազի օգտագործման քաղաքականությունը»

փաստաթուղթը, որով սահմանվեցին գազի օգտագործման առաջնայնություն ունեցող կատեգորիաները (քաղաքների բնակչություն ընդգրկելով նաև ցեղուցում և էլեկտրոէներգիայի արտադրություն) և գազի ոլորտում առաջնային ծրագրերը: Նախատեսվում է մինչև 2050 թ-ը ՉԺՀ քաղաքների 65%-ի գազաֆիկացում[43]:

Նկար- 1.16- ՉԺՀ-ում Բնական գազի պահանջարկի և արդյունահանման կանխատեսումը մինչև 2020թ.



Sources:- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; BP Statistical Review of World Energy- June 2009; CNPC-Annual reports; IEA- Natural Gas in China Market evolution and strategy- June 2009; ERI Report - 2005;

Չնայած սկսած 2000թ-ից ՉԺՀ-ում գազի օգտագործման տարեկան աճը արտահայտվում էր երկնիշ թվերով (2004թ-ից սկսած շուրջ 20% տարեկան), մինչև 2007թ-ը ներառյալ Չինաստանում գազի պահանջարկը լիովին ապահովվում էր ներքին արդյունահանմամբ (Նկար-1.16): Կերպին երկու տարիներին գազի պահանջարկն աճելէ ավելիքան 25.8%-ով՝ 2009թ-ին արդեն առաջացնելով 4.45 մլրդ. մ3-ի ներմուծման անհրաժեշտություն, ինչը 2010թ-ին արդեն կարող է հասնել 20 մլրդ. մ3-ի: Տարբեր կանխատեսումներով, արդեն իսկ 2020թ-ին բնական գազից ներմուծման կախվածությունը կարող է կազմել 30-90 մլրդ. մ3 (Նկար-1.16):

Ի տարբերություն նավթի՝ Չինաստանն ակնհայտորեն շատ ավելի պատրաստված և նախապես հստակորեն մշակված ծրագրով դիմավորեց բնական գազի պահանջարկի աճի բավարարման առաջացող խնդրները՝ պահանջարկությունը անհրաժեշտ հիմնական լուծումները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին ներկրումների ապահովման առումով:

Արդեն իսկ 1990-ական թվականներից կառավարությունը սկսեց օժանդակել քննական գաղի տեղափոխման և օգտագործման Ենթակառուցվածքների շինարարությունը: 1997թ-ին Շանսի (Օրդու հանքավայր)-Դեկին 868 կմ. (3.6 մլրդ. մ3) խոշոր խողովակաշարի կառուցում ավարտելու հետո 2000թ-ին ԶՃ՝ կառավարությունը ճեռնարկեց այս ոլորտում իւկապես առաջին ազգային մասշտաբների ծրագրի՝ Արևմուտք-Արևելք գազատարի շինարարության իրականացումն էր, որն ավարտվեց 2004 թ-ին: 3900 կմ. երկարությամբ գազատարը Սինյանի Տարիմ հանքավայրից 17 մլրդ. մ3 գազ է տեղափոխում Շանհայ Չանսու Նահանգի արդյունաբերական գարգացած շրջանները: 2008թ-ին ԶՃ-ում, ընդհանուր առմամբ, արդեն կառուցվել էր 27000 կմ. ընդհանուր երկարությամբ գազատարներ [42]: 2008 թ-ի փետրվարին սկսվեց երկրորդ Արևմուտք-Արևելք 20 մլրդ. ԱՄՆ դոլլար ներդրմամբ, և 8704 կմ ընդհանուր երկարությամբ գազատարի շինարարությունը, որի առաջին՝ արևմտյան (2461 կմ.) մասի կառուցումն ավարտվեց 2009թ-ի դեկտեմբերին: 2571 կմ. երկարությամբ արևելյան հատվածի շինարարությունը կավարտվի 2012թ-ին: Գազատարը հանդիսանում է Թուրքմենստան-Ռիգբեկստան-Ղազախստան-Չինաստան 1818 կմ. (Տրանս-Ասիական գազատարի (ՏԱԳ)) շարունակությունը, որը ԶՃ տարածքում սկսվելով Սինյանի Շորգոս սահմանային թնակավայրից և հատելով Չինաստանի 14 նահանգներ, ավարտվում է Չոնկոնգում (Չավել-2-Քարտեզներ-3,4) և [42]): Ալգրնապես նախատեսվել էր գազատարով առարել 30 մլրդ. մ3 միջինասիական գազ (ինչը համարժեք է 76.8 մլն. տ. ածուխի օգտագործմանը և 1.66 մլն. տոննայով՝ SO2 -ի ու 150 մլն. տոննայով՝ CO2 -ի արտանետումների նվազեցմանը), բայց ամենայն հավանականությամբ այն կիասցվի 40-50 մլրդ. մ3-ի: Պահանջորդվում է նաև 3-րդ և 4-րդ՝ Արևմուտք-Արևելք գազատարների շինարարությունը, որով գաղի ծավալների առարկումը կարող է հասցել 50-60 մլրդ. մ3:

Արտաքին ներկրումներով գաղի պահանջարկի բավարարման առաջին գործնական ծրագրը հեղուկացված թնական գազի (LNG) 11 տերմինալիների կառուցման պլանավորումն էր, որոնց ընդհանուր հզորությունը համարժեք է ավելի քան 40 մլրդ. մ3 թնական գազի ներկրմանը: Սուաջին LNG տերմինալը Գուանչոոն նահանգում շահագործման հանձնվեց 2006 թ-ին, երկրորդ՝ Ֆուչանում՝ 2008 թ-ին, երրորդ՝ Շանհայում 2009 թ-ին: Երկու տերմինալներ՝ Զանսու նահանգում և Դայչանում պլանավորված է շահագործման հանձնել 2011թ-ին: Ստորագրված երկարաժամկետ պայմանագրերով հեղուկ գաղի ներկրումները կիրականացվեն Ավստրալիայից, Մալազիայից, Ինդոնեզիայից, Չառարից և այլն [40, 42]:

Չիմնական արտաքին ներկրումներն այնուամենայնիվ պլանավորված է իրականացնել խողովակաշարերով՝ Սիչին Ասիայից (ՏԱԳ), Ռուսաստանից, Մյանմարից, հնարավոր է նաև Իրանից (Իրան-Պակիստան գազատար) (Չավել-2-Քարտեզներ-2-5):

Գլուխ 2. Չինաստանի արտաքին ներդրումներն ու էներգետիկ անվտանգությունը: Էներգետիկ ոլորտում արտաքին ներդրումների առանձնահատկություններն ու ռազմավարությունը

2.1. ՉԺՀ «Գնալ դուրս» - (zou chu qu) ռազմավարությունը*

Չինաստանում 1978թ.-ից սկսված գործընթացներում չնայած բացության քաղաքականության կիրաօնան սկզբունքի ընդունմանը այնուամենայնիվ երկրու քարեփիստումների իրականացման ու տնտեսական գարգացման երաշխավորման հիմքում դրվեց դրանք առաջին հերթին ներքին ռեսուլտսներով ապահովելու հիմնադրույթը: Չնայած դրան՝ արդեն իսկ 1993թ.-ից Չինաստանի տնտեսությունում առաջացած առաջնային էներգիայի արտադրության և պահանջարկի միջև հարաճուն բացասական հաշվեկշռի առկայությունը, հանգեցրեց այդ հիմնադրույթի կիրառելիության բացարձականացման անհնարինության, և երկրի տնտեսությունում որակապես նոր իրավիճակի առաջացման գիտակցմանը: 1993թ.-ը ՉԺՀ տնտեսության համար շրջադարձային էր նախ և առաջ նրանով, որ էներգետիկ բացասական հաշվեկշռի ծավորման հիմքը երկրի նավթի պահանջարկն էր: Չնայած 1978-1993թթ. ընթացքում ՉԺՀ-ում նավթի արդյունահանման ծավաների նշանակայից աճին՝ 38.4% [1-4], առաջին անգամ Չինաստանում նավթի օգտագործման պահանջարկը 1.2%-ով գերազանցեց արդյունահանվող և վերամշակվող նավթի ծավալը, ինչով ՉԺՀ-ն նավթ արտահանող (net) երկրի դարձավ (net) նավթ ներմուծող: Իրավիճակի թելադրությունը հենց դա հանդիսացավ այն սկզբնակետը, որից հետո Չինաստանում սկսվեց ծևավորվել, իսկ հետագա տարիներին ամրապնդվել արտերկրուում ռեսուլտների հայթայթման անհրաժեշտությունը: Բոլոր դեպքերում ակնհայտ դարձավ այն հանգամանքը, որ ՉԺՀ-ում առկա նավթի պաշարները չեն կարող բավարարել երկրի տնտեսության գարգացման պահանջները և արտերկրոյա էներգետիկ ծրագրերին չինական ծեռնարկությունների մասնակցությունը դարձավ անհրաժեշտություն:

Նիմսախնդրի առկայությունը և միջազգային ծեռնարկումների կարևորությունը ու նշանակությունը երկրի տնտեսական կայուն գարգացման և էներգետիկ անվտանգության ապահովման առումով ՉԺՀ քարտրագույն դեկավարության կողմից վերջնականապես ընդունվեց միայն 90-ականների վերջում: Ի հավելում քարեփիստուների և բացության հիմնադրույթների 1997թ. վերջում սկզբնավորվեց «Գնալ դուրս» ազգային ռազմավարությունը, որով չինական ծեռնարկություններին

*- (走出去- *zouchuqu*) բառացիորեն նշանակում է «Գնալ դուրս». որը և օգտագործելում է տոյն աշխատանքում՝ որպես ռազմավարության անվանում: Դա առանձնապես ընդունվել է չինական հնագույն քաղաքակրթության, պատմամշակութային և աշխարհաքաղաքական այն յուրահատկությունը, ըստ որի՝ Չինաստանի դեպքում, մշակութային, կրոնական և պետական սահմանները գրեթե համընկում են:

(հատկապես նավթային) տրվեց արտերկրում ծեռնարկատիրական գործունեության զարգացման և ընդարձակման հանձնարարական[5]: Սկզբնավորվող ռազմավարությունն իր մեջ ներառու էր ինչպես Տրանս-Ազգային ընկերությունների (SUC) ծևավորման, այնպես էլ ծեռնարկությունների կողմից արտերկրում ներդրումների իրականացման խրախուաման և կառավարման համակարգի ու ֆինանսական ռեժիմի ազատականացման անհրաժեշտության ըմբռնումը, ինչը փաստաթղթային ծևակերպում ստացավ 1997թ. սեպտեմբերին կայացած ԶԺԴ ԿԿ 15-րդ համագումարի ընդունված Հայտարարությունում[6,7]: Ըստ էության ծեռնարկություններին ընձեռնվեց արտերկրում արտաքին ուղղակի ներդրումների (ԱԱՌԴՆ) իրականացման հնարավորություն: Միևնույն ժամանակ չափանիկության մասին այլ օրենքը հայտարարությունը կայացած է 1992 թ.-ին Դեն Սյափինի ԶԺԴ հարավային շրջաններ կատարած հատուկ այցին՝ Չինաստանից արտերկրներում ներդրումների հոսքն ուներ չնշին ծավալներ(Նկ.-2.1):

Այս, որ երկրի էներգոանվտանգության ապահովում առաջնային նշանակություն ունեցավ «Գնալ դուրս» ռազմավարության մշակման առումով, ըստ էության՝ դրական կամ բացասական երանգավորմամբ ընդունվում է այս հարցն ուսումնասիրող գրեթե բոլոր հետազոտողների կողմից (Xu Xiaojie, Ken Davies, Bernt Berger, Zhang Jiawei, Wu Lei, Erica S. Downs, Zhang Jianxin և այլն): Խնդրի էության բազմակողմանի և ամրողական ըմբռնման առումով տեղին է նաև ռազմավարության մշակման ակունքներում եղած այլ գործուների հաշվառումը, որոնք նշանակալից ազդեցություն ունեցան թե ռազմավարության սկզբնավորման և թե «Գնալ դուրս» գործընթացների արագացման և հետագա զարգացման առումով: Առաջինը, շուկայական մեխանիզմների շուրջ քանամյա գործուն ներդրման շնորհիկ չինական ծեռնարկություններում և բանկերում բնականորեն ծևավորված և ամրապնդվող ազատ միջոցների կուտակումն էր, ինչը պայմանավորեց ծեռներեցության ծավալների ու աշխարհագրության ընդարձակման անհրաժեշտությունը: Երկրորդը, 1997-1999թթ. ասիական ֆինանսատնտեսական ծգնաժամի հետևանքներով պայմանավորված արտերկրի հետ Չինաստանի տնտեսական զարգացման անմիջական շախկապվածության իրատեսական գիտակցումը, ինչն էկոնոմիկայի գործալացման տենտեսցների առկայության ընդհանուրական ըմբռնումը բերում էր կիրառական հարթություն: Եվ հաջորդը՝ Դոնկ Կոնգի 1997թ. վերամիավորմամբ, այնտեղ առկա միջազգային ֆինանսա-տնտեսական գործառությունների ահռելի փորձի գործնական կիրառմամբ պայմանավորված առավելությունների գիտակցումը: Վերոշարադրված հիմնավորում է, որ ընդհանուր առմանը, սկզբնավորվելով որպես Չինաստանի համար ռազմավարական նշանակության հիմնախնդրի՝ էներգոանվտանգության ապահովման մեխանիզմ, «Գնալ դուրս»-ը՝ արդեն իսկ ծևավորման փուլում, լիովին համահունչ էր՝ թե երկրի ներսում և թե հանընդհանուր չափանիշներով ընթացող գործընթացների ուղղվածությանը, բնույթին և զարգացումների տրամաբանությանը:

Առևտորի, ֆինանսական և ներդրումային ռեժիմների հետագա ազատականացման առանձնապես մեծ առաջընթաց կատարվեց Առևտորի համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ)՝ Զինաստանի 2001 թ.-ին անդամակցության նախապատրաստական փոլում: 2002 թ.-ին ԶԺԴ ԿԿ 16-րդ համագումարում վերջնականապես հաստատվեց «Գնալ դուրս» ազգային ռազմավարությունը[13]: Արտերկրում ներդրումների հարցը հետագայում դարձավ ԶԺԴ կենտրոնական կառավարության և ԶԺԴ ԿԿ մշտական ուղաղրության առարկա՝ ընդգրկվելով նաև ԶԺԴ զարգացման 11-րդ հնգամյա պլանում որպես հիմնական նպատակներից մեկը [21-27]: Ըստ էության, «Գնալ դուրս» քաղաքականությունը սահմանվեց, որպես չինական ձեռնարկությունների միջազգային շուկա դուրս գալու գործընթաց՝ «գլոբալ էկոնոմիկական մրցակցությանը մասնակցելու համար», որն իր մեջ ներառում է՝ «արտաքին առևտուրը, արտերկրում ներդրումների իրականացումը, արտերկրից ներդրումներին ներգրավումը, աշխատուժի արտահանումը և միջազգային պայմանագրերը»[8,9]: Զինական ձեռնարկությունների համար նորը, հիմնականը և առաջնայինը, «Գնալ դուրս» քաղաքականությամբ արտերկրում ներդրումներ կատարելու ռազմավարական հնարավորության ընծեռումն ու խրախուսումն էր, ինչը հանդիսանալու էր այդ ձեռնարկությունների միջազգային չափանիշներով մրցունակ ընկերությունների վերածվելու, ինչպես նաև երկրի տնտեսական առաջընթացի գլոբալ ապահովման գրավականը:


Տնտեսության շարունակական աճող պահանջարկների պայմաններում արտերկրյա ներդրումների խրախուսման առումով ԶԺԴ կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների իրականացումը հանգեցրեց Զինաստանից ԱԱՌԻՆ-ի հոսքինշանակալիցածի, ինչը հատկապեսն կատելի է 2004-ից հետո (տես. Նկ.-2.1): Այս ենթատեքստում և մամանակահատվածային ոչ ֆորմալ տրոհման դեպքում, եթե 1990-1997թ.-ը կարող է համարվել ԱԱՌԻՆ-ի քաղաքականության սկզբանավորման փուլ, 1997-2004թ.-ը՝ «Գնալ դուրս» ռազմավարության ընդունման և ամրապնդման փուլ, ապա 2004-ից հետո շարունակվող շրջանը՝ իրավմամբ հանդիսանում չինական ձեռնարկությունների «Գնալ գլոբալ»՝ ռազմավարության փուլ[27]*:

Արտաքին ներդրումների քաղաքականության մշակման հիմքում որպես հիմնական մոտեցում ԶԺԴ կառավարության կողմից դրվեց պետական ձեռնարկությունների (ՊԶ) բարեփոխման համար անհրաժեշտ պայմանների ու տնտեսական կարիքների ապահովմանը օժանդակող՝ ԱԱՌԻՆ-ի իրականացման հնարավորության ընծեռումը: Ստեղծվեց ՊԶ-ից ԱԱՌԻՆ-ի վարչարարության և որոշումների ընդունման համակարգ, որը ներառում էր ինտիրների բավականաչափ

* - «Գնալ դուրս» անվանման փոխարեն՝ արևմտյան գրականության մեջ օգտագործվող «Գնալ գլոբալ»-ը («Go Global») ավելի կիրառելի է թվում ԱԱՌԻՆ-ի գլոբալ ծավալման շրջանի համար՝ 2004թ.-ից հետո:

լայն շրջանակ, այդ թվում Ներդրումային նախագծի նպատակահարմարության որոշման, տարադրամային միջոցների վերահսկողության և ակտիվների կառավարման, հետագա ստուգումների, շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հսկողության և այլ հարցեր: Չնայած Նրան, որ ընդունված որոշումները հենվում էին Ներդրումների տնտեսական հիմնավորվածության և ծեռարկությունների կարիքների առաջնայնությունների վրա, այնուամենայնիվ այդ գործընթացում պետական հաստատությունների մասնակցության վճռական նշանակությունը ԶԺԴ-ից կատարվող Ներդրումների արևմտյան ընկալումներին հաղորդում էին քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված լինելու ուղեկից հատկանիշներ: Սույն ընկալումներով պայմանավորվում են զարգացած երկրների կողմից հատկապես արդյունաբերության ոլորտի շուկաներում չինական ընկերությունների ընդգրկման հնարավորությունների որոշակի սահմանափակումները [31]:

Նկար- 2.1- Փաստացի օգտագործված Արտաքին ուղղակի ներդրումները (ԱՖՈՒ)
ԶԺԴ-ից (1990-2008թ.)



*ԶԺԴ -ում ԱՖՈՒ առաջին պաշտոնական վիճակագրությունը հրապարակվել է 2004թ.
 Աղյուսելու:- UNCTAD- World Investment Report 2009; MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Գոյություն ունի «Գնալ դուրս» կամ «Գնալ գլոբալ» ռազմավարության ոչ համարժեք արտերկրյա ընկալումների վեկտոր, որով այն նույնացվում է ԶԺԴ արտաքին քաղաքականության հետ՝ ներկայացնելով այն որպես չինական «Մեծ ռազմավարություն» կամ համարվում է դրա մի մասը [51-56]: Ընկալումների հիմքում անշուշտ դրված է արտաքին գործառությունների հետ «Գնալ դուրս» ռազմավարության կապվածությունը, ինչպես նաև կառավարման համակարգերի և քաղաքակրթական տարրերությունների

թերըմբռնումներն ու ոչ ամբողջական դիտարկումը:

Չինաստանի ռազմավարական մոտեցումը լիովին բացառում է տնտեսական պոտենցիալի՝ որպես արտաքին քաղաքական ազդեցության լծակի վերածման, ինչպես նաև ներդրումների արտահանման գործընթացում քաղաքական մոտիվացիայի կիրառելիության հնարավորությունը:

«Գնալ դուրս» ռազմավարությունն առաջին հերթին նպատակառության է ներքին կառավարման և կառուցվածքային այնպիսի բարեփոխումների իրագործմանը, որոնք կնպաստեն և կիրախուսեն ցինական ձեռնարկությունների կողմից արտաքին ներդրումների իրականացմանը և չի առնչվում ՉԺՀ արտաքին քաղաքականության գործառություններին։ Այն ավելի շուտ կառավարության մարմիններին և ձեռնարկություններին ուղղված ցուցում- հանձնարարականների շարունակական գործընթաց է, որոնք նախանշում են կառուցվածքային և կառավարման համակարգերի ներքին բարեփոխումների հիմնական ուղղությունները, մեթոդները և նպատակները, որոնց իրականացնումը կարող է հանգեցնել միջազգային չափանիշներով մրցունակ ընկերությունների ձևավորմանը՝ խթանելով դրանց հետագա զլրայի ինտեգրմանը։

Որևէ երկիր կամ տարածաշրջան ուղղված ԱԱՌԻ-ի լայնածավալ հոսքերը և հատկապես դրանց աղբյուրային կենտրոնացվածությունը, էկոնոմիկական ռացիոնալության և այդ երկրների զարգացմանը նպաստելու հիմնական մոտիվացիաների հետ մեկտեղ ուղեկցվում են քաղաքական ազդեցության տարածման տարրերով։ Արտերկրում ներդրումների իրականացման Չինաստանի ռազմավարական մոտեցման առանձնահատկություններով պայմանավորված՝ «Գնալ դուրս» ռազմավարության ծավալմանը համընթաց առաջանում են երկրի ներքին շահերի առաջնայնության պահպանման և ՉԺՀ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների* միջև ներդաշնակության դիվանագիտական ապահովման՝ Չինաստանի համար բոլորովին նոր խնդիրներ։ «Չինաստանը երրևէ այնքան սերտողեն կապված չի եղալ մնացած աշխարհի հետ, ինչպես այժմ»- և այդ խնդիրների ըննարկման ու լուծումների վնասը 2006 թ-ի օգոստոսին, երկրի բարձրագույն դեկավարության նպատակով նպատակով 2006 թ-ի օգոստոսին, երկրի բարձրագույն դեկավարության նախաձեռնությամբ հրավիրվեց ՉԺՀ արտգործնախարարության և դիվանագիտական հաստատությունների համատեղ կոնֆերանս[47-49]։ Չնայած արտաքին ներդրումների զգայի աշխին՝ Չինաստանի հաջողվում է ապահովել դրանց արտահանման գործընթացում քաղաքական մոտիվացիայի կիրառելիության բացառումը։

*-ՉԺՀ արտաքին քաղաքականության հինգ հիմնարար սկզբունքներն են՝ խնդիրներանության և տարածաքային ամբողջականության փոխադարձ հարգանքը, ազեւմիայի բացառում, միջայաց ներքին գործերին չմիջամտելը, հավասարություն և փոխահավետություն, խաղաղ գոյակցություն։

Բարեփոխումների գարզացմանը և պետական ծեռնարկությունների ամրապնդմանը համընթաց ծեռնարկությունների արտերկրյա գործունեության ակտիվացմանը նպաստելու համար, ԶԺՀ կառավարությունը վերջին մի քանի տարիների ընթացքում, մշակել և ընդունել է մի շարք օրինագծեր, որոնք քայլ առ քայլ պարզեցնում են ԱԱՌՆ-ի որոշումների ընդունման և հաստատման գործընթացները[10-16]: Դատկապես 2004թից հետո իրականացված ներքին ինստիտուցիոնալ վերափոխումները, ֆինանսական համակարգի վերակառուցմերը և ծեռնարկությունների միաժամանակյա բարեփոխումները հանգեցրին նրան, որ ընկերություններն ավելի շոշափելիրուն կարող են զգալ իրենց կողմից կատարվող ներդրումային գործարքների շոկայական հետևանքները: 2009 թ. մարտին ընդունված «ԱԱՌՆ-ի վարչարարության չափանիշների» և 2009 թ. հունիսին ընդունված՝ «ԱԱՌՆ-ի տարադրամային վարչարարության կարգավորում» փաստաթղթերով, արտերկրյա ներդրումներ իրականացնելիս միայն ավելի քան 100 մլն. դոլարից ավելի ներդրումների դեպքում է ծեռնարկություններից պահանջվում կենտրոնական կառավարության կողմից հաստատման գործընթաց, մինչև 100մլն.դոլարը՝ հաստատվումէ տեղականկառավարության կողմից, իսկ մինչև 10 մլն- դոլար ներդրումների դեպքում, ըստ էտայան՝ ծեռնարկություններին տրվում է՝ տարադրամային սեփական միջոցների իրենց հայեցողությամբ օգտագործելու հնարավորություն[17-20]: **Պ2-ի** կողմից որոշումների ընդունման ազատության ընդարձակումը էապես նպաստում է ծեռնարկությունների մրցունակության արտերկրում և արտաքին ներդրումների հոսքերի աճին ու աշխարհագրական տարածմանը, ինչպես նաև Զինաստանից կատարվող ներդրումների վերաբերյալ ըմբռումների փոփողմանը:

Չնայած այս ուղղությամբ կատարված հսկայական առաջընթացին՝ Զինաստանի համընդհանուր չափանիշներով ներդրումներ արտահանող երկրի վերածվելու ուղղությամբ ընթացող վերափոխումները դեռևս հեռու են ավարտված լինելուց, և ենթադրում են՝ երկրի ընդհանուր գարզացմանը համահունք և համաշափ բարեփոխումների իրականացման շարունակական գործընթաց: Զարգացման առկա միտումներն ապացուցում են՝ ԱԱՌՆ-ի իրականացման որոշումների ընդունման մեխանիզմների հարածուն ազատականացման ուղղվածությունը, ինչով հիմնավորվում է, որ դեռևս պահպանվող ընթացակարգային սահմանափակումներն ունեն կառուցվածքային և ոչ թե ռազմավարական բնույթը:

ԶԺՀ «Գնալ գյորալ» - ռազմավաերթյանն ու ԱԱՌՆ-ի զարգացման և ծավալման անհրաժեշտության գիտակցումը, նախ և առաջ, արտացոլում են երկրի էկոնոմիկական զարգացման վերջին տարիների հիմնարար նշանակության մակրոէկոնոմիկական և միկրոէկոնոմիկական տեղաշարժերը[29]: Որպես արտաքին առևտորի արագ զարգացման և կապիտալի հոսքերի դրական հաշվեկշռի հետևանքը ԶԺՀ արտաքինացման պաշարը դարձավ աշխարհում ամենամեծը՝ 2009թ-ի սեպտեմբերին կազմելով շուրջ 2.3 տրիլիոն ԱՄՆ \$ (տես՝ Աղյ-1.1): Որպես դասականորեն կիրառվող

մեխանիզմ՝ արտաքին ներդրումների աճով որոշակիորեն կարգավորվում է՝ արտահանման և կուտակային ուղղվածությամբ Չինաստանի տնտեսությունում կապիտայի միջազգային հոսքերի հաշվեկշռը երկրում կուտակված տարադրամային հսկայական միջոցների արժեզգկման ավելացող մնաման պայմաններում[29]:

Տնտեսական զարգացման մյուս կարևորագույն միկրոէկոնոմիկական տեղաշարժը բարեփոխումների և բացության քաղաքականության իրականացման ընթացքում՝ Ներդրումային ներուժ ունեցող և միջազգային համագործակցության որոշակի փորձով ու համեմատական մրցունակությամբ ցնական պետական խոշոր ընկերությունների ծևավորում է, որոնք շուկայական մեխանիզմների թելադրանքով նպատակատրվեցին արտերկրյա ձեռնարկատիրական գործառույթների կիրառմանը: Այդ ընկերությունների միջազգային ասպարեզ դրվագ գալու արագացման շարժիչ ուժը ոչ միայն ռեսուրսային անթափառությունն է, այլև խթանող այնպիսի գործոնների առկայությունը. ինչպիսին են Ներդրումային միջոցների առաջացումն ու կուտակումը, որոշ ոլորտների արտադրանքներով՝ Ներդին շուկայի հագեցվածությունը և դրանց իրացման տարածների և առևտրական ցանցերի ընդլայնման անհրաժեշտությունը տեխնոլոգիաների, բրենդների, պատվիրատունների և մատակարարումների ցանցերի ընդարձակման անհրաժեշտությամբ պայմանավորված արտերկրյա ձեռնարկությունների ռազմավարական ձեռքբերումները, երկրում մոնոպոլ կարգավիճակի կորստի հետևանքով՝ միջազգային դիվերսիֆիկացիայի կարևորությունը և այլն[29,30]:

Վերոշարադրյալից բխում է, որ ՉԺՀ «Գնալ գլոբալ» - ռազմավարության ընդունման և արտերկրյա Ներդրումների ծավալման և ընդլայնման հիմնային գործոններն ու շարժիչ ուժերն ունեն էկոնոմիկական հիմնավորվածություն, հանդիսանում են երկրի տնտեսական զարցագման բնականուն հետևանք և պայմանավորված չեն քաղաքական նպատակահարմարությամբ: Չինական ձեռնարկությունների գլոբալ մակարդակ դուրս գալը ընդհանուր առմամբ պայմանավորվում է շուկաների ընդարձակման, ռեսուրսների ապահովման, ռազմավարական նշանակության ակտիվիզացիայի ձեռքբերման և արդյունավետության բարձրացման ռազմավարական նպատակներով[7]: Այդ նպատակները թելադրվում են ՉԺՀ էկոնոմիկայի արտահանման ուղղվածությամբ, տնտեսության արագ զարգացումով պայմանավորված ռեսուրսային պահանջարկի աճով, տնտեսության հետագա զարգացումն անհրաժեշտ տեխնոլոգիաներով և հումքերի ռազմավարական ապահովման գերակայությամբ, ինչպես նաև դրանց հետագա օգտագործման արդյունավետության բարձրացման հրամայականներով:


Չինաստանի շարունակվող տնտեսական աճի պայմաններում այդ գործոնները տեսանելի ապագայում, կպահպանեն ՉԺՀ-ից ԱԱՌԴ-ի խթանման առումով շարունակական ազդեցությունը:

2.2.1.- ԶԺԴ արտաքին ներդրումները

Վերջին երեսուն տարում Չինաստանն աչքի է ընկնում իր տնտեսական կայուն զարգացմամբ, որն ուղեկցվում է ներդրումների ներգրավման նշանակալից պահանջարկով. կապիտալի մասայական ներհոսքով և արտահանման արագընթաց աճով: Չուկայական տնտեսության զարգացումը և բացության բաղաքականությամբ պայմանավորված՝ միջազգային համագործակցության նկատմամբ վստահության աճը, հիմնարար նախադրյալներ ստեղծեցին շինական ծեռնարկությունների կողմից արտերկրյա զգայի ներդրումների իրականացման առումով: Տնտեսական հետագա զարգացման անհրաժեշտությամբ և գրոքականությամբ համագործակցության ինտեգրման արդի հրամայականով պայմանավորված՝ ԶԺԴ կառավարության ընունած «Գնայ գրոքա» - ռազմավարությամբ, վերջին մի քանի տարում, Չինաստանը վերածվել է աշխարհում կապիտալի արտահանման նոր աղբյուրի՝ միաժամանակ պահպանելով արտաքին ներդրումների համար գործառնությունը:

Չինաստանից արտաքին ուղղակի ներդրումների ընդհանուր հոսքը 2008թ.-ին կազմել է 183.97 մլրդ. դոլար գերազանցելով 2000թ.-ի հոսքը շուրջ 9 անգամ՝ տարեկան աճելով՝ շուրջ 32%-ով: Դատկապես նշանակալի աճ գրանցվել է 2004թ.-ից հետո՝ շուրջ 34.8 մլրդ. դոլար և ավելի քան 42% միջին տարեկան աճի տեսքություն, ինչն առանձնապես տպավորիչ է ճգնաժամի հետևանքով աշխարհում արտաքին ուղղակի ներդրումների հոսքի զգային վազման պայմաններում(Նկ.-2.2):


Նկար-2.2- ԶԺԴ ԱԱՈՒՆ Ընդհանուր Հոսքը Ակսած 1980թ.-ից (Ըստ նշված տարիների)



Աղյուրներ:- MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Միաժամանակ, ՉԺՀ-ից ԱԱՌԴ-ի թե՛տարեկան և թե՛ընդհանուր հոսքերը՝ որպես երկրի ՀՆԱ-ի մաս* (առավել ևս՝ բացարձակ մեծությամբ) չնայած վերջին շրջանում առկա աճի միտմանը, նշանակայիրեն զիջում են զարգացած և որոշ զարգացող երկրներից արտաքին ներդրումների հոսքերին (Նկ. -2.3; 2.4; 2.5): Չինաստանի ՀՆԱ-ի և դրանում ներդրումային մասի շարունակական աճը, ինչպես նաև արտաքին ներդրումների զարգացման անհրաժեշտությունն ընդգծում են ՉԺՀ-ից ԱԱՌԴ-ի հետագա ծավալման հսկայական ներուժի առկայությունը: 2008թ.-ի վերջին, ցինական 8500 ներդրող միավորները հիմնել էին 12000 ծեռնարկություններ, որոնք սփռված են 174 երկրներում ավելի քան մեկ տրիլիոն դոլար ակտիվների ընդհանուր ծավալով[1]: Չնայած ՉԺՀ-ից ԱԱՌԴ-երի աշխարհագրության ընդարձակմանը, այնուամենայնիվ, դրանց ավելի քան 86%-ը կենտրոնացված է Չինաստանից առաջին յոթ ամենամեծ ներդրումներ ստացող վայրերում՝ ակտիվորեն օգտագործելով նաև օֆշորային գոտիների ընծեռած հնարավորությունները (Նկ.-2.6 և 2.7): Չինական ծեռնարկությունների համար առանձնապես նշանակալից է Հռոկ Կոնգի՝ որպես արդյունավետ ֆինանսական ծառայությունների կենտրոնի դերը ներդրումային ֆոնդերի ստեղծման և դրանց միջոցով, թե՛ երկրի ներսում և թե՛ արտերկրում ներդրումների իրականացման առումով:


Նկար-2.3- Որոշ երկրների ԱԱՌԴ Ընդհանուր Պոսը 1980-2008թ. (Մլրդ. դոլար)



Աղյուրներ:- UNCTAD- World Investment Report 2009;


*- 2008թ.-ին ԱԱՌԴ-ը համապատասխանաբար կազմել է ՀՆԱ հետևյալ մասերը՝ ՉԺՀ - 3.4%, Աշխարհ- 26.9%, Զարգացող երկրներ- 14%, Զարգացած երկրներ- 33%, ԱԱՌԴ- 22.2%, Ճապոնիա- 10.4%, Գերմանիա- 39.8%, ՈՒ- 12% (լևս նկ. -UNCTAD- World Investment Report 2009.):

Նկար-2.4- Որոշ երկրներից և տարածաշրջաններից ԱԱՌԻՆ ընդհանուր հոսքերը (սկսած 1980-ից) -որպես ՊՆԱ մաս (%) - 1993 – 2008թթ.



Աղյուսներ: UNCTAD- World Investment Report 2009;

Նկար-2.5- Որոշ երկրներից և տարածաշրջաններից ԱԱՌԻՆ ընդհանուր հոսքերի (սկսած 1980-ից) – Տարեկան աճը (%) :- 2003- 2008




Աղյուսներ: UNCTAD- World Investment Report 2009;

Չինական խոշոր պետական ծեռնարկությունների կողմից ոչ մեծ արտաքին Ներդրումների հրականացման սկզբնավորման փուլում՝ (1979-1991թթ.), որանց շուրջ 80%-ը ուղղվում էր Հյուսիսային Ամերիկայի և Օվկեանիայի թնական ռեսուրսների ոլորտ (հիմնականում Ավստրալիա և Կանադա՝ հանքարդյունաբերության և նավթի ոլորտներ) [2]: Եթագայում ԱԱՌԴ-ի հրականացման քաղաքականության և ռազմավարության մշակմանն ու զարգացմանը համընթաց հիմնովին փոփոխվեցին Ներդրումների՝ ըստ երկրների և աշխարհագրական բաշխման շեշտադրումները՝ ուղղելով դրանք Ասիայի և Հատինական Ամերիկայի զարգաղող տարածաշրջաններ: 2008թ.-ի ընդհանուր հոսքերում Ասիայի մասնաբաժնը կազմում է 71.38% որից 88.2%-ը՝ Չինկ Կոնգինը, Չի. Ամերիկայինը՝ 17.53%, որից շուրջ 95.6%-ը բաժին է ընկնում Սամայան և Վիրջինյան կղզիներ օֆշորային գոտիներին (Նկ.-2.6, 2.7): Արտաքին Ներդրումների վերջին տարիների շեշտակի աճի ընթացքում ասիական տարածաշրջանի առաջնայնության պահպանման պայմաններում նկատելի են Օվկեանիայում* և առանձնապես Աֆրիկայում Ներդրումների ծավալման և զարգացման միտումների առկայությունը (Նկ.-2.6 և 2.7): Ըստ որում, վերջին մի քանի տարիներին գրանցվել է՝ Աֆրիկայում Չինաստանից կատարվող Ներդրումների կայուն և գրեթե համաշափ տարեկան աճ՝ 2003 թ-ից սկսած յուրաքանչյուր տարի՝ շուրջ 74%[1]: Ներդրումները հիմնականում ուղղվում են ռեսուրսների ոլորտ և դրանցով հարուստ երկրներ՝ Արմենիա, Սիրիա, Սուրիան, Զամբիա և այլն: Չի. Աֆրիկայում 2007-2008թթ-ին կատարված որոշ Նշանակալից Ներդրումներով, այդ թվում՝ բանկային համակարգում 2007թ.-ի 5.6 մլրդ. դոլար Ներդրմամք, այս երկիրը դարձավ Չինաստանից ամենամեծ Ներդրում ստացող երկիրը մայրցամաքում (Աֆրիկայում Ներդրումների 39%-ից ավելին) [57,58]: Աֆրիկան մայրցամաքում ՉԺՀ-ից կատարվող Ներդրումների ընդգրկունությունը, աճի կայուն դինամիկան և ռեսուրսների ոլորտային ուղղվածությունը, դարձել է սևոռու ուշադրության առարկա և հիմնականում դիտարկվում է արևմտյան երկրների՝ հատկապես ԱՄՆ հետ Չինաստանի ռազմավարական մրցակցության ենթատեքստում:


*- Իրականում Օվկեանիայում ՉԺՀ-ից Ներդրումների աճը պայմանավորված է Ավստրալիայում կատարված մեծածավալ Ներդրումներով: 2007 և 2008 թթ.-ին Ավստրալիայում Ներդրումները համապատասխանաբար աճել են ավելի քան 82%-ով և 132%-ով՝ 2008թ.-ի ընդհանուր հոսքերում կազմելով Օվկեանիայում շինական Ներդրումների շուրջ 88%-ը [MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment]:

Նկար.2.6-Չինաստանի ԱԱՈՒՆ-ի ընդհանուր հոսքը՝ ըստ տարածաշրջանների -2008թ.



Աղյուրներ:- MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Նկար.2.7-Չինաստանից ԱԱՈՒՆ-ի ընդհանուր հոսքի 7 ամենաշատ ստացողներ- 2008թ.




Աղյուր- MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Չնայած զարգագած երկրներում և տարածաշրջաններում Չինաստանից իրականացվող ներդրումների պահպանվող շրջափեյի ամին՝(2004թ-ի համեմատ 2008թ-ին ՉԺՌ-ից ԱԱՈՒՆ-ի ընդհանուր հոսքերն աճել են՝ Եվրոպա՝ 7.6 անգամ, ՀԱ. Ամերիկա՝ 4 անգամ), այնուամենայնիվ Նկատելի

Է դեպի զարգացող երկրներ և տարածաշրջաններ ուղղվածության ընդգծված տեսնենցի առկայությունը: Ներդրումների 2008թ.-ի ընդհանուր հոսքերում ավելի քան 96%-ը (ավելի քան՝ 176.6 մլրդ. \$) բաժին է ընկույտ զարգացող երկրներին, ինչով՝ Չինաստանը վերածվում է այդ երկրների էկոնոմիկաների ֆինանսավորման կարևոր գործոնի:

Չինաստանի արտաքին ներդրումները հիմնականում ուղղված են երկու հիմնական ոլորտներ ռեսուրսների՝ երկրում դրանց առող պահանջների բավարարման համար (միջինը մինչև 2003թ.-ը՝ 25%, 2004-2008թթ՝ 15%), ծառայությունների (միջինը մինչև 2003թ.-ը՝ 60%, 2004-2008թթ՝ 74%, իսկ 2008թ.՝ 79%), որն ընդգրկում է՝ ֆինանսների, առևտուրի, տրանսպորտի, ձեռներեցության զարգացման և այլ ուղղություններ, որոնք նպատակ ունեն օճանդակելու Չինաստանի արտահանմանը և ներմուծմանը, ինչպես նաև նպաստելու արտերկրից ներդրումների ներգրավմանը ՉԺՀ: Վերջին 3-4 տարիների ընթացքում կատարված մի քանի խոշոր ներդրումները նշանակալիորեն փոփոխեցին ԱԱՌԻՆ-ի ոլորտային կառուցվածքը (Նկար-2.8):

Նկար-2.8-ՉԺՀ ԱԱՌԻՆ-ը ըստ ոլորտների (%)- 2004-2008թթ.



Աղյուր- MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Առանձնահատուկ ուշադրության է արժանի միայն սկսված 2006թ.-ից պաշտոնապես հրապարակվող և որևէ ներդրումային քաղաքականության իրականացման կարևորագույն բաղադրիչը հանդիսացող ֆինանսական ոլորտի ներդրումների կտրուկ աճը և դրանց մեծ տեսակարար կշռի առկայությունը ՉԺՀ-ից ԱԱՌԻՆ-ի ընդհանուր հոսքերում (Նկ. -2.8): 2008թ.-ի ՉԺՀ-ից ԱԱՌԻՆ-ի ընդհանուր հոսքերում ֆինանսական ներդրումները

կազմել են 36.69 մլրդ. Տ. որից 26.79 մլրդ. Տ.-ը պատկանում էր 28 երկրներում և տարածաշրջաններում 63 տարրեր բնույթի մասնաճյուղեր ունեցող չինական առևտրային բանկերի համակարգին [1]: Չնայած վերամշակող արտադրության և գյուղատնտեսության ոլորտներում կատարվող ներդրումների որոշակի աճին, այնուամենայնիվ, դրանք երբևէ չեն ունեցել առաջնային նշանակություն(Նկ.-2.8):

Ըստհանուր առմամբ, ԶԺԴ-ից ներդրումների ոլորտային ուղղվածությունը լիովին համահունչ է ներքին պահանջների զարգացման տրամաբանությանը և կառուցվածքային առումով նպատակառության է Չինաստանի արտահանման կողմնորոշմամբ և ներքին ռեսուրսների անբավարարվածությամբ էկոնոմիկայի կարիքների բավարարմանը:

**2.2.- Տրանս-ազգային ընկերությունների (ՏԱՀ) ձևավորումը
ՉԺՀ-ում և դրանց կողմից արտաքին ներդրումների
իրականացման մեխանիզմները:
Չինաստանի ազգային նավթային ընկերությունները (ԱՆՀ)**

Զարգացումների Ներկա փոլում էկոնոմիկական զլորախզացիան հանդիսանում է դոմինանտ տեսդիմոն, ինչն ընդհանուր առմամբ հանգեցնում է ռեսուրսների և ապրանքների հսկայածավալ հոսքերի: Չնայած իր բազմաքայլ ազդեցությանը՝ այնուամենայինիվ զլորախզացիոն գործնքացը զարգացող երկրների համար ընձեռում է նաև արագընթաց զարգացման և համաշխարհային տնտեսությունում ավելի արագի հսկութագրվելու հնարավորություն: Այսառաջնային կարևորագույն և առաջնահսկութագրվելու ուժի այդ երկրներում միջազգային չափանիշներին համապատասխանող տրանս-ազգայինընկերությունների (ՏԱՀ) ձևավորումը: Նմանչափանիշներին համապատասխանող և մրցունակ շինական ընկերությունների ստեղծման խնդիրը՝ որպես հիմնարար առաջնահսկություն, դրվեց նաև «Գնալ դրւս» ազգային ռազմավարության արդեն իսկ սկզբնավորման փոլում:

Զարգացող երկրներում և հատկապես Չինաստանում տրանսազգային ընկերությունների թվի աճը վերջին տասնամյակում՝ միջազգային տնտեսական կյանքի առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող թեմաներից մեկն է: Ի տարբերություն այլ երկրների (այդ թվում նաև զարգացող) տրանս-ազգային ընկերությունների՝ շինական ՏԱՀ-ը ձևավորվել են պետության մասնակցությամբ, ինչը լրացնուիչ ձևունություն է ապահովում նրանց արտերկրյա գործունեությանը: Մյուս կողմից, այդ առանձնահատկությամբ պայմանավորված շինական ՏԱՀ-ը մշտապես գտնվում են առանձնակի ուղղորդության կենտրոնում, և չնայած նրան, որ այդ ընկերությունների արտերկրյա գործառույթները հենվում են շուկայական մեխանիզմների կիրառման վրա, այնուամենայինիվ պետական մասնակցության հանգամանքն առաջացնում է հասկանալի, բայց և ակնհայտորեն ուժեցված անհանգույթություն: Իրավիճակի ամբողջական գնահատման համար պետք է ի նկատի ունենալ Չինաստանում և աշխարհում ՏԱՀ-ի ձևավորման և գործունեության ծավալման փոլում առկա սկզբնական և հիմնային նշանակություն ունեցող օրեկտիվ տարրերությունների առկայությունը:

1998 թ.-ից ՉՃ-ում սկսվեց կիրառվել խոշոր պետական ծեռնարկությունների ամրապնդման ռազմավարությունը, որը Ներառում էր նաև փոքր և միջին ծեռնարկությունների նկատմամբ շուկայական մեխանիզմների լիակատար կիրարում* [6]: “Ղեական ծեռնարկությունների միավորման արդյունքում

* (抓大放小ժամանակաշրջան) - «պահեց մծեթին և թողնել փորբերին» քաղաքականությունը մշակվել է 90-ականներին՝ հետազոտություն ՀՃՎ Կարչապետ (1998-2003թ.) նու Շնունդի կողմից: Դաստավելի 1997թ. ՀՃՎ ԿԿ 15-րդ Համագումարություն որպես քարեփոխումների ռազմականացություն և կիրառմել է 1998թ.-ից:

Նշանակալիորեն կրծատվեց դրանց քանակը, բայց ծևավորվեցին բազմաթիվ խոշոր ՊԶ-եր, այդ թվում՝ հզոր և միջազգային չափանիշներով մրցունակ մի քանի ընկերություններ: Ուստամբարությամբ նախատեսվում էր նաև՝ ըստ ամենայնի պետական աջակցություն ցուցաբերել այն խոշոր ՊԶ-ին, որոնց իրենց հետագա գործունեությամբ ծեղզ էին բերում ՏԱՀ-ի չափանիշներին համապատասխանելու որոշակի հնարավորություններ: Խոշոր պետական ծեռնարկությունների հիման վրա, որոնց հետագա զարգացույց Շինաստանի տնտեսության շարունակական աճի պայմաններում, օրենսդրությամբ չեղականափակվել միայն երկրի ներսում ծավալվող գործունեությամբ, քնականաբար ծևավորվեց տրանս-ազգային ընկերությունների մի ամբողջ սերունդ:

Դետագայում արդեն, բազմաթիվ ոչ պետական ընկերություններ նոյնպես ակտիվորեն ընդգրկվեցին արտաքին ներդրումների ոլորտ: 2008 թ.-ի ԱԱԾԻՆ-ի 50.2%-ն իրականացվել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 16.1%-ը՝ պետական ծեռնարկությունների և 9.4%-ը՝ մասնավոր ընկերությունների կողմից: Ընդ որում, պետական ծեռնարկությունների ներդրումները 2007 թ.-ի համեմատ նվազել են՝ 3.6%, ովք: 2005-2008 թթ.-ի ընթացքում՝ աշխարհի 500 խոշոր ընկերությունների թվում ընդգրկված չինական ՏԱՀ-ի թիվը աճել է 17-ով և դարձել է 37: Նման կտրուկ աճը առանձնապես նշանակալի է՝ զարգացող այլ գյուղավոր տնտեսություններում դրանց քանակի ոչ մեծ աճի, և զարգացած երկրներում՝ այդ թվի կրծատման պայմաններում (Այլ.-2.1): Ըստ նախնական տվյալների՝ 2009 թ.-ին նման չինական ընկերությունների թիվը կազմել է 47՝ նշված միտուների պահպանմամբ:

**Աղյուսակ- 2.1- Ընկերությունների "Global Fortune 500"-2008
ներկայացվածության համեմատություն**

	2005	2006	2007	2008
Բրազիլիա	4	5	5	6
Ռուսաստան	5	4	5	8
Հնդկաստան	6	6	7	7
Չինաստան	20	24	29	37
ԻՉՀ	35	39	46	58
Ճապոնիա	70	67	64	68
ԱՄՆ	170	162	153	140
ԵՄ	165	165	170	163

	Global Fortune		PjW-ի կազմ 100-ից
	Կարգը*	Ենամուռ Այլ. \$	
CNPC	13(2)	181,123	5
Sinopec	9(1)	207,814	25
CNOOC	318(19)	28,027	48
Sinochem	170(10)	44,457	--

*. Գնացքային եշխամ է ամ 2007-ի համեմատ
PjW- Petroleum Intelligence Weekly

Աղյուսակ-Global Fortune 500- <http://money.cnn.com/magazines/fortune/global500/2009/countries/China.html>

Petroleum Intelligence Weekly's annual- Energy Intelligence Top 100: Ranking the World's Oil Companies - http://www.energyintel.com/PublicationHomePage.asp?publication_id=4

Առանձնապես տպավորիչ է շինական ազգային նավթային ընկերությունների (ԱՆՀ) առաջընթացը, որոնցից CNPC-ին՝ համաձայն PIW դասակարգման, 2007թ.-ին արդեն հանդիսանում էր աշխարհի 5-րդ խոշորագույն նավթային կորպորացիան(Աղյ.-2.1):

Ընդհանուր առմամբ, Չինական SUC-երը ծևավորվել են՝ «Գնալ դուրս» քաղաքականության հրականացման, ընդամենը վերջին 10-15 տարիների ընթացքում, երբ արևմտյան՝ ինչպես նաև զարգացող այլ երկրների որոշ ընկերություններ, արդեն իսկ ծևավորել են իրենց ազգային հզոր ապրանքանիշերը և կուտակել էին միջազգային շուկաներում գործունեության և մրցակցության հսկայական փորձ: Մինչ այդ, շինական ծեռնարկությունների միջազգային համագործակցության փորձը լավագույն դեպքում սահմանափակվում էր՝ քարեփոխումների ժամանակահատվածում արտերկրյա որոշ ընկերությունների հետ Չինաստանում հրականացվող համատեղ ծեռնարկաստիրական գործունեությամբ, որի ընթացքում, այդ ընկերությունների կողմից փորձի, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանցումները հիմնականում կատարվել են՝ այլ երկրներում հնարավոր մրցակից շինական ընկերությունների ծևավորումը բացառելու հաշվարկով: Ընդ որում, արտերկրյա քազմաթիվ SUC-ը (Ճապոնիա, ՀՎ. Կորեա և այլն), երկրներու «սառը պատերազմյան» ժամանակահատվածում ծևավորվել են այդ երկրների ֆինանսական և տեխնոլոգիական վերազինան առաջնահերթ նշանակություն ունենալու, ինչպես նաև արտաքին շուկաներում քայլ առ քայլ ներգրավվելու պայմաններում: Չինական SUC-ը կազմավորվել են երկրում շուկայական տնտեսության ծևավորման բոլորուվին այլ մեխանիզմների կիրառման, ինչպես նաև որակապես տարբեր՝ ոչ համարժեք նպաստավորությամբ, արտաքին միջավայրի առկայության պայմաններում: Ավելացնելու, այս ամենը, ինչպես նաև արտաքին շուկաներում էվոլյուցիոն ճանապարհով ընդգրկվելու հնարավորությամբ ծեռք բերվող փորձի դեֆիցիտը տեսանելի ապագայում, որոշիչ նշանակություն կունենան Չինաստանի SUC-ի արտերկրյա գործունեության սկզբունքների որոշման և գործառույթների հրականացման առումով:

Խնդիրն ընդհանրացված ենթատերստում դիտարկելու դեպքում, հետևում է, որ իրականում Չինաստանը հետ է ընկել գլոբալ ներդրումների դաշտում և ներկայումս անհրաժեշտաբար հաղթահարելով քազմաթիվ արգելվելու, փորձում է հնարավորինս արագ դուրս գալ այդ ոչ նպաստավոր իրավիճակից: SUC-ի ծևավորումը և որանց արտաքին շուկաներ դուրս գալու տեսնենցը հանդիսանում է Չինաստանի 1.3 մլրդ քսակության կենսական պահանջների և կոլոնիզմիկայի հետագա զարգացումն անհրաժեշտ նյույատեխնիկական ռեսուրսներով ապահովելու քսականու հետևանք, ինչը միաժամանակ լիովին համահունչ է համընդիհանուր չափանիշներով ընթացող առկա գործընթացների հետ: Նույն գլոբալ հիմնախնդիրների լուծման հնարավոր օպտիմալ ժանապարհը

Չինաստանի հետ համագործակցելու ժանապարհն է, ինչի արդյունքում միջազգային շուկայում հեղինակություն ունեցող՝ հատկապես արևմտյան SUC-ը, մաքսիմում արդյունավետությամբ կկարողանան օգտագործել իրենց ունեցած համեմատական առավելությունները:


2.2.1.- ՉԺՀ Նավթային ընկերությունների ներդրումային աշխարհագրությունը և քաղաքականությունը

Չինաստանի առաջին SUC-ը ձևավորվել են միայն 80-ական թվականների վերջում, երբ ՉԺՀ էներգիայի նախարարության վարչության լուծարման արդյունքում կազմավորվեցին CNPC-(China National Petroleum Corporation), Sinopec (China National Petroleum and Chemical Corporation), և CNOOC-(China National Offshore Oil Corporation) և Sinochem* ազգային նավթային ընկերությունները (ԱՆԸ), որոնց ընծեռնվեց՝ նավթի, գազի և դրանց վերամշակման ոլորտին առնչվող ներքին և արտաքին գործընթացներում գերակա և որոշիչ դեր:

CNOOC-ին կազմավորվեց 1982 թ.^{*} Նավթարդյունաբերության նախարարության օֆշորային ակտիվների հիման վրա: Ջանի որ, օֆշորային ոլորտը լիովին նոր էր Չինաստանի համար, CNOOC-ին ընծեռնվեց միջազգային նավթային ընկերություններ (ԱՆԸ) հրավիրելու և նրանց հետ համագործակցելունարավորություն՝ ՉԺՀ ծովային տարծքում նավթի և գազի նոր հանքավայրերի հետախուզման և արդյունահանման (ՊԱ) նպատակով: Sinopec-ը կազմավորվեց 1983 թ. Նավթարդյունաբերության և քիմիական արդյունաբերության նախարարությունների նավթավերամշակման և նավթարհիմական արդյունաբերության ակտիվների հիման վրա, որը և հանդիսանում է ընկերությունն գործունեության հիմնական ոլորտը: Sinopec-ի գործառույթներն ընդգրկում են նաև նավթի և բնական գազի հանքավայրերի շահագործումը. Էներգակիրների տեղափոխման և պահեստավորման խնդիրները: Չինաստանի ցամաքային նավթի և գազի հետախուզման և արդյունահանման հիմնական գործառույթները դրվեցին 1988 թ-ին կազմավորված CNPC ընկերության վրա (Ակար-2.9): CNPC-ին հանդիսանում է Չինաստանի նավթի և բնական գազի շահագործման խոշորագույն ընկերությունը, ինչպես նաև՝ ոլորտում ԱԱՌԻՆ-ի հիմնական իրականացնողը: 1998թ-ին CNPC-ին և Sinopec-ը վերակազմավորվեցին որպես կոմերցիոն ծեռնարկություններ:

*- Sinochem ընկերությունը հիմնականում գրաղվում է նավթի և նավթամթերքների արտահանմաք և ներմուծմաք: Ընկերությունը ակտիվություն իրականացնում է նաև արտերկրյա ներդրումներ, այդ թվում մեծածավալ, համագործակցելով՝ 2007թ.-ին կազմավորված Չինաստանի Պարային Յարատության 200 մլրդ. դրամը ֆոնդի (ԱՐՖ) և Չինաստանի ներդրումային ընկերության (CIC) հետ: Չինաստանի 5-րդ նավթային ընկերությունը՝ (Zhenhua Oil Company), որը պատկանում է Norinco (North Industrial Company) ընկերությանը, CNPC-ի և CITIC Energy ընկերությունների հետ համատեղ, որոշակի ներդրումներ է իրականացրել Սիրիայում, Ղազախստանում և Իրաքում:

Նկար-2.9- ՉԺՀ ԱՆԸ-ի նավթի և բնական գազի պացուցված ներքին պաշարները և արդյունահանումը- 2008թ.



*- Առաջացուցված պաշարները- (1013 բարել նավթի համարժեք); **- Արդյունահանումը-(10 7 բարել նավթի համարժեք՝ օրեկան);


Մոլորակ- China Energy Statistical Yearbook (CESY);China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic;

Որպես ամենախոշոր ԱՆԸ CNPC -ն, առաջին հերթին, ակտիվորեն ներգրավվեց Չինաստանում նավթի և գազի նոր պաշարների որոնման և շահագործման աշխատանքներում: Զեռնարկվեցին նաև արտերկրյա համագործակցության հաստատման առաջին քայլերը: 1993 թ-ին առաջացած նավթային հիմնախնդիրն ամենայն հավանականությամբ, ամբողջ խորությամբ չընկալվեց Չինաստանում: CNPC-ին ընդամենը հանձնարարվեց որոշակիորեն ակտիվացնել արտերկրում՝ հատկապես Պերույում, Սուդանում և Ղազախստանում, նավթի ՀԱ ծրագրերին մասնակցությունը:

«Գնալ դրվս» ռազմավարությունը էապես նպաստեց չինական ծեռնարկությունների, առաջին հերթին ԱՆԸ-ի, արտերկրյա սերդումների աշխարհագործային ընդարձակմանը և իրականացման նշանակալի ակտիվացմանը: Համաշխարհային շուկայում առևա ռեսուրսների սահմանափակությամբ պայմանավորված այլ ԱՆԸ-ի հետ մրցակցության պարտադրված անհրաժեշտությունը, հանգեցրեց չինական ԱՆԸ-ի կողմից միջազգային նորմերի և գլոբալ ինտերման չափանիշների ավելի խորը ըմբռնմանը և գիտակցմանը: Չինական ԱՆԸ-ն ընդգրկվեցին Շոնկոնգի և Լյու Ցորցի արժեթղթերի շուկա և կարծ ժամանակահատվածում դարձան ազդեցիկ գլոբալ ներդրումներ իրականացնող ընկերություններ: Չինական ԱՆԸ-ը նշանակալիորեն ընդարձակեցին իրենց ներդրումային աշխարհագործությունը, ծգտելով ընդգրկվել Մերձավոր Արևելյան ավանդաբար

Էներգոռեսուրսներով հարուստ շուկայում, ամրապնդել և զարգացնել Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի երկրներոի հետ նավթի և թափանական գազի ոլորտներում գործընկերային հարաբերությունները, ինչպես նաև շինաֆրիկյան տնտեսական համագործակցությունը (Նկ.-2.10 և Դաշտաված-1): Դետագայում շինական նավթային ընկերությունները, հատկապես՝ CNPC-ին, Sinopec-ը և CNOOC-ին, դարձան Չինաստանի առաջին արտաքին ներդրումների իրականացման և «Գնալ դուրս» ազգային ռազմավարության կենսագործման հիմնական շարժիչ ուժերը: Մինչև 2010թ.-ը այս ընկերություններն իրականացրել են 100-ից ավելի ներդրումային գործարքներ, այդ թվում՝ ՉժՇ-ից ամենախոշոր Անդին-ը (Նկ.-2-10) [5, 64, 74,75]:

**Նկար-2.10- Չինաստանի ԱՆԸ-ի արտերկրյա ներդրումները-
1992-2009(3 եռամյակ) (Միլիոն. ԱՄՆ\$)**



	CNPC	Sinopec	CNOOC	Sinochem	Zhenhua	TOTAL	
CNPC	7599	810	0	5555	9182	2111	23000
CNOOC	2289	968	450	0	0	122	3649
Zhenhua oil	0	0	100	65	0	0	95
TOTAL	13003	2038	450	10763	13402	2883	42539

Sources- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008;
National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; MOFCOM- 2008 Statistical
bulletin of China's outward direct investment;

2009թ-ի վերջին **CNPC-ին** ներդրումների էր իրականացրել 31 երկրների 81 ծրագրերում (Հավել.-1-Ակ.-1): Ընկերությունն իրագործում է նավթի և գազի արդյունահանման առնչվող բոլոր հնարավոր՝ այդ թվում նաև, արտադրության կիրացման գործառույթները, ինչպէս՝ CNPC-ին իրդուատրենուարկության՝ PetroChina Co., Ltd-ի հետ միասին, վերածվել է միջազգային ասպարեզում մրցակցային բարձր չափանիշներ ունեցող ծեռարկության: CNPC-ի 560 ինժեներական ծառայությունների իրականացնող խմբերն աշխատում են 45 երկրներում: Ընկերությունն արտադրանք և սարքավորումների է արտահանում աշխարհի 70 երկրների և տարածաշրջաններ:

CNPC-ին ճգույն է աշխարհի խոշորագույն նավթային ընկերությունների հետ համատեղ, ընդգրկվել էներգակիրների գլոբալ շուկա: Արտաքին ներդրումների խոշորածավալությունը հիմնական առաջնայնություն չէ՝ դրանց իրականացման որոշումների ընդունման առումով: CNPC-ին ավելի շուտ կենտրոնացված է արտաքին ներդրումային ծավալների որոշ սահմանափակ մակարդակով այնպիսի ծրագրերին մասնակցությանը, որոնք աջակցում են ընկերության գլոբալ ինտերնացիոն գործությունը:

2009թ-ի վերջին **Sinoprec-ը** ներդրումներ էր իրականացրել 22 երկրների ավելի քան 30 ծրագրերում (Հավել.-1-Ակ.-1): Sinoprec-ի գործունեությունը հիմնականում ընդգրկում է՝ Արևմտյան Աֆրիկան, Մերձավոր Արևելքը և ԽՍՀՄ նախկին երկրները: Մինչև 2008թ-ի վերջը Sinoprec-ը որևէ նշանակալից ներդրում չեր իրականացրել: Ամենախոշոր ներդրումն իրականացվել է 2009թ-ին՝ երբ Sinoprec-ը 7.24 մլրդ. դոլարով ծեռք թերեց Addex Petroleum-ընկերությունը (Հավ.-1-Այշ-1): Ընկերությունը շարունակում է փնտրել իրեն համար օպտիմալ ուղղությունները արտերկրյա շուկայում, և հիմնականում կենտրոնացած է երկրի ներսում նավթավերամշակման գարզացման խնդիրների վրա:

CNOOC-ին, ակտիվ գործունեություն ծավալել է հիմնականում Շարավ Արևելյան ասիայում և Արևմտյան Աֆրիկայում (Հավելված-1): Ընկերությունը հիմնականում կենտրոնացած է ՉժՇ-ում օֆշորային ուղղության զարգացման վրա և հանդիսանում է նաև LNG տերմինալների հիմնական կառուցողը և օպերատորը: 2008թ-ին CNOOC-ն ծեռք թերեց Նորվեգական ծառայությունների մատուցման Wilco ընկերությունը՝ 3.78 մլրդ. դոլար, որը ընկերության խոշորագույն ներդրումն է (Հավ.-1-Այշ-1):

CNOOC-ն ճգույն է վերածվել միջազգային ասպարեզում մրցունակ և անկախ ընկերության, շարունակելով գլոբալ ծավալում՝ գազի հանքավայրերի և օֆշորային տեխնոլոգիաների ծեռցերումների ուղղությամբ:

Չինաստանի տնտեսության հարածուն աճի և էներգուստությունների անբավարարության պայմաններում, չինական ԱՆՀ-ն ակնհայտորեն ակտիվություն կշարունակեն իրականացնել արտաքին ներդրումների ծավալման ռազմավարություն: Չինական ԱՆՀ-ն ունեն ներդրումների ռիսկայնության դիմակայման համեմատական մեծ ռեսուրս և էներգուստուրումներ արդյունահանող երկրների պահանջների բավարարման բարձր ճկունություն, ինչը միջազգային շուկայում շոշափելի առավելություն է և հետագա հաջողության՝ գործուն գրավական:

2.3. Արտերկրյա ներդրումները և ընկերությունների Միաձուլումն ու ծեռցբերումը (Մ2) Զինաստանի ՏԱՀ-ի կողմից

Արտերկրում նոր շուկաներ և ռեսուրսներ փնտրելը ՏԱՀ-ի հետագա գոծունեության համար դառնում է անհրաժեշտ պայման: Չնայած Զինաստանի համեմատաբար դեռևս փոքր մասնաբամնին համաշխարհային ներդրումային հոսքերում՝ վերջին տասնամյակում չինական ընկերությունների գլոբալ մակարդակ դուրս գալու ֆենոմենը դարձել է ներկա փուլում ԶԺԴ համաշխարհային ինտեգրման հիմնարար քնութագրիչներից մեկը:


ԶԺԴ-ից ԱԱՌԻՆ-ի ամիսն գուգահեռ՝ Զինաստանի խոչըր ծեռնարկությունների կողմից արտերկրյա հատկապես արևմտյան և հիմնականում ռեսուրսների, տեխնոլոգիաների, կապի և առևտությունների ոլորտին առնչվող, ընկերությունների միաձուլումը և ծեռցբերումը (Մ2). քայլ առ քայլ դարձել է արտերկրյա ներդրումների զարգացման հիմնական շարժիչ ուժը: Ի տարրերություն ավելի վաղ շրջանի, երբ ԶԺԴ ծեռնարկությունների կողմից կիրառվում էին համատեղ ծեռնարկությունների, կամ՝ մասնաճյուղերի բացման մեխանիզմները, ներկայում ԱԱՌԻՆ-ի արտահոսքի գերակա միջոցը դարձել են Մ2 գործարքները: Նման մոտեցումը և համատեղ ծեռներեցության իրականացումը, մեծ արդյունավետությանը լուծում է այն առևկա խնդիրները, որոնք առաջանաւի և համար միանվերջին տասնամյակում գլոբալ մասշտաբներ դուրս եկող, չինական ծեռնարկությունների համար: Մ2 գործարքներում ամենաակտիվ և ծանրակշիռ դերակատարումն՝ ի սկզբանե (նաև ներկայումս) պատկանում է Զինաստանի նավթային ընկերություններին: Վերջին տարիներին, նկատելիորեն ակտիվացել է նաև ֆինանսական, լեռնամետալորդիական և հանքավերամշակման պետական և մասնավոր չինական ընկերությունների արտերկրյա գործառույթները, այդ թվում նաև՝ գնումները:

2003թ-ից մինչև 2009թ.-ի առաջին երեք եռամսյակներն ընկած ժամանակահատվածում չինական ծեռնարկությունների կողմից կատարվել է 437 Մ2 գործարք 116.8 մլրդ \$ ընդհանուր արժեքով, որից 241-ը՝ 75.3 մլրդ. \$ արժեքով, վերջին երկու տարիներին: Էներգիայի, հանքարդյունաբերության և դրանց օժանդակ հիմնական առողջությունների գնումները եղել և մնում են հիմնականը և ծավալային (127 գործարք՝ 29%) և արժեքային առումներով (66%- 77.1 մլրդ. \$), ԶԺԴ Մ2 գործառույթներում (Նկ.-2.11):

Ընդհանրացված տվյալների և վերլուծությունների բացակայության պատճառով դժվար է օբեկտիվորեն գնահատել այդ ծեռցբերումների հետագա օգտագործման արդյունավետության աստիճանը [68]: Բոլոր դեպքերում առևկա են նաև նշանակայի կորուստներ, ինչպես օրինակ՝ չինական ապահովագրական ընկերության՝ Ֆորտիս բելգիա-գերմանական բանկում ներդրված 3.34 մլրդ. դոլարի կորուստը 2008թ.-ին [45]: Ընդհանուր առմամբ, ենթադրելի է, որ ռեսուրսային ոլորտը սովորաբար ապահովում է եկամտաբերության և արդյունավետության որոշակի մինիմում, ինչին

մեծապես նպաստում է նաև պատրաստվածության բարձր մակարդակ ունեցող ինժենիերների առկայությունը: Այլ խնդիր է ծառայությունների և հատկապես ֆինանսների ոլորտները, որոնք ենթադրում են կառավարման ժամանակակից համակարգերի ներդրման և կառավարիչների ուսուցման դպրոցի առկայության խիստ բարձր անհրաժեշտություն: Միաժամանակ, արտերկիր գործուղած չի լին կառավարիչներն ու աշխատակիցները մշտապես կանգնում են մշակութային և քաղաքակրթական մեծ տարբերությունների հայթահարման և տեղի արթեքային համակարգի յուրացման դժվարությունների առջև: Այս ամենով պայմանավորված, ենթադրելի է, որ այդ ոլորտներում ծեղզերված ծեղնարկությունների օգտագործման արդյունավետությունը հեռու է կատարյալ լինելուց և պահանջում է հետագա առանձնահատուկ ուժադրության անհրաժեշտություն:

**Նկար-2.11- ՉԺՀ ՄԶ գործառույթների ոլորտային բաժանումը
2003թ.-2009(3 եռամյակ) - (%)**



Ա- Ըստ Արժեքի, Ծ- Ըստ քանակական Շավաների

Սերունդ- The emergence of China- New frontiers in outbound M&A- Deloitte- merger market- November 2009

ՄԶ գործառույթները, ընդհանուր առմամբ, հանդիսանում են արտաքին ներդրումների զարգացման կարևորագույն ցուցանիշ, ընութագրելով դրանց արդյունավետությունը, SUC-ի միջազգային շուկայում գրաված դիրքը և գլոբալ ինտերնացիոն աստիճանը: Այդ գործառույթներն արտացոլում են փոխվաստահության և շուկայական մեխանիզմների գերակայության իրական մակարդակը: ՄԶ գործառույթները թելայդրվում են՝ SUC-ի հետագա զարգացումն անհրաժեշտ տեխնոլոգիաներով և հոմքերի ռազմավարական ապահովման գերակայությամբ, ինչպեսնաև՝ դրանց հետագա օգտագործման արդյունավետության բարձրացման հրամայականներով: Լայնամաշտար

ՄԶ գործարքները, սովորաբար ուղեկցվում են նաև հասարակական զգայուն քննարկումներով, առանձնապես՝ ազգային նշանակության ապրանքանիշի հանդիսացող և առավել ևս ընական ռեսուրսների ոլորտի ընկերություններին առնչվող գործառույթների դեպքում: Այս իմաստով ՄԶ գործարքներում վերջնական որոշումների ընդունումը երթեմն պայմանավորվում է ոչ միայն դրանց տնտեսական արդյունավետությամբ, այլև հարակից՝ այդ թվում քաղաքական տարրերի առկայությամբ գործոններով, ինչպես օրինակ՝ CNOOC-չինական նավթային ընկերության կողմից UNOCAL ամերիկյան ընկերության գնման փորձի դեպքում* [32-37]:

Չնայած գորալ մակարդակով ընթացող ներդրումներին քաղաքականությունում կատարվող փոփոխություններն ընդհանուր առմամբ, ուղղված են դրանց թափանցիկության ապահովմանը և վստահության մթնոլորտի ամրապնդմանը, այսուամենայնիվ՝ ընդունված որոշումները միշտ չեն, որ կարող են հիմնավորել էկոնոմիկական նպատակահարմարությամբ և ֆինանսական առաջարկների օպտիմալությամբ[46]: Միաժամանակ, մերժումների բացատրության հիմքում միայն պրոտեկցիոնիզմի կամ առավել ևս քաղաքական շարժադիրների որոշումը, կարող է հանգեցնել հիմնախնդիրների ըմբռնումների միակողմանության, ամեն դեպքում՝ ոչ լրիվության: Արտաքին լայնածավալ և կենտրոնացված ներդրումներն ընդհանրապես, և ՄԶ խոշորածավալ գործառույթները մասնավորապես, էկոնոմիկական նպատակահարմարությանը զուգահեռ մշտապես կարող են այս կամ այն աստիճանով առնչվել հարակից ներքին և արտաքին քնույթի բազմաթիվ գործոնների ամրողության հետ: Այս իմաստով, օպտիմալ որոշումների ընդունումը կարող է կատարվել միայն բազմաթիվ պարամետրերի և գործոնների համադրմամբ:

Դամաշխարհային տնտեսական ծգնաժամով պայմանավորված՝ արժույթների փոխարժեքների շոշափելի տատանումներն ու արևմտյան ընկերությունների ակտիվների գների նշանակալից անկումը, ըստ Էնորյան, լրացուցիչ հնարավորություններ ստեղծեցին՝ ծգնաժամին արդյունավետորեն դիմակայող և 2009թ.-ին արտերկրոյա ներդրումների աճի դինամիկան պահպանող շինական ծեռնարկությունների կողմից, ՄԶ գործարքների ծավալման առանուկ: Ի տարրերություն Չինաստանի, մնացած գյուսավոր տնտեսություններից Աֆուն-ի հոսքը 2009թ.-ի սկզբին նշանակալիորեն դանդաղեց, քանի որ ծգնաժամը, ընդհանուր առնամբ՝ նվազեցրել էր այդ երկրների SUC-ի ներդրումային հնարավորություններն ու հիմնավորվածությունը [2]: Սամսնավորապես, 2009թ.-ի առաջին վեց ամիսներին, շինական ՏԱՀ-ի արտերկրոյա ծեռնարկությունների ՄԶ-ը՝ անցյալ տարվա նոյն ժամանակահատվածի համեմատ աճել են 26.3%-ով, այն դեպքում, երբ նոյն ժամանակահատվածներում ԶՃ-ում Net գնումները նվազել են 56.6%-ով (Աղ. -2.2 և[4,5]): Ըստ նախնական ուսումնասիրությունների, 2009թ.-ին միջազգային շուկայում

*-2005թ. Չինական CNOOC ընկերությունը մասնակցելով UNOCAL ԱՄՆ 9-րդ մեծ նավթային ընկերության գնման մրցութիւններիացը էր լայնագովուն ֆինանսական և ծեռնարկատիրական առաջարկը՝ 18,5 մլրդ \$՝ 67% - մասնաբաժի համար: Չնայած դրան շինական ընկերության առաջարկը մերժվեց, այդ թվում ԱՄՆ Կոնգրեսի միջամտության արդյունքում [32-37]:

գրանցվել է ընկերությունների ՄԶ-ի ընդհանուր ակտիվության 60% անկում, իսկ զարգացող զիսավոր տնտեսությունների դեպքում ՄԶ գործընթաց նվազել են 40%-ով՝ քաջազնությամբ ՉՃ-3 և Հնդկաստանի [6-8]: 2009թ.-ին չինական ընկերություններն իրականացրել են 500 մլն. դոլար և ավելի արժեքով 15 արտերկրյա ՄԶ գործարքներ՝ \$28.6 մլրդ. ընդհանուր գումարով, որը 25%-ով ավելի է 2008թ. համեմատ և հանդիսանում է երրորդ ցուցանիշն աշխարհուա [9]: Առաջին և երկրորդ ցուցանիշով՝ ԱՄՆ և Ֆրանսիայի ընկերություններն իրականացրել են՝ \$51.5 մլրդ. և \$31մլրդ. նման գործարքներ, որոնք 2008թ. համեմատ նվազել են համապատասխանարար 21%-ով և 39%-ով[9]: Ընդհամենց հինգ տարի առաջ՝ 2004թ.-ին, Չինաստանի իրականացրել եր 500 մլն. դոլար և ավելի արժեքով միայն երեք ՄԶ գործարքներ՝ \$2.4 մլրդ. ընդհանուր գումարով[1]:

Աղյուսակ-2-2-Չեռնարկությունների արտաքին ներդրումային գնումներ- ՉՃ-3-ոմ և արտերկրուու

	Արտաքինից ՄԶ ՉՃ-3-ոմ					ՉՃ-ՏԱՀ-ի ՄԶ-ն Արտերկրուու				
	2005	2006	2007	2008	2009*	2005	2006	2007	2008	2009*
Գումարը Այլոց \$	11590	11307	9274	5144	2995	9546	12053	6300	30200	2670
%-ԸՆՉ ՖՈՆԴ-ոմ	19.2	17.95	32.4	5.6	-	77.6	68.7	23.6	54	-
ՄԶ-ի Քանակը	258	226	233	230	53	53	72	92	88	71

*- 2009թ.-ը հաշվարկված է Հոլովար-Մեպտեմբեր ամիսներին և նախական է:
Այրուդներ- UNCTAD- World Investment Report 2008,2009; MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment; Thomson Reuters figures-China Daily-2009-07-08.

Ճգնաժամային շրջանում առաջացած տեղաշարժերի ամբողջական գնահատման առումով, կարևոր է նշել որ մի քանի երկրների կողմից (այդ թվում ՉՃ-3) ձեռնարկեցին շոապ միջոցառումներ, որոնք ընդհանուր առմամբ պարզեցնում են ՄԶ գործառույթները՝ նեղացնելով այդ գործարքներում որոշումների ընդունման պայմանների դաշտը: Միաժամանակ, ճգնաժամային պայմաններում՝ բոլոր երկրներում, սովորաբար նկատելիորեն բարձրանում են այդ որոշումների ընդունման մեջ կառավարական մարմինների մասնակցության աստիճանը և սոցիալական գործոնի ազդեցությունը: Բոլոր դեպքերում, կարևոր նշանակության ՄԶ գործարքներում որոշումների ընդունման տրամաբանությունն, ըստ Երթան, շարունակում է պահպանել սախկին հներցիան*[38-44]: Դա հիմնավորում է, որ չինական ՏԱՀ-ի կողմից 2009թ.-ին ՄԶ գործարքներում ունեցած հաջողությունները հանդիսանում են՝ ոչ միայն իրավիճակային հետևանք, այլև՝ պայմանավորված են նաև՝ այդ ընկերությունների մրցունակության աճով և միջազգային չափանիշներին դրանց համապատասխանության առաջընթացով:


*- Ավտորային ընդունելով ՉՃ-ից մի շարք նշանակայից առաջարկներ, այսուամենայնիվ՝ 2008-2009 թթ. ընթացքամ մերժեց դրանցից երեքը՝ հղում կատարելով հակամուռպու որեւէներին: Նաևքարդյունաբերության որոշումի խոշորագույն ներդրումը մերժվեց՝ ռազմական փորձարկումների շրջակին մոտ գտնվելու պատճառաբանությամբ, հետագայում ընդունելով վերամշակված՝ ավելի փորձածավալ ներդրումների առաջարկը[44]: Սես նաև Այլ. Տող 19-ը՝ Չինաստանի առևտորի նախարարությունը մերժեց Կոկա-Լուայի կողմից «Հոկիյան Յութ» ընկերության գնաման առաջարկը և այլն[42,43]:

2.3.1.- Էներգիայի ոլորտում Չինաստանի արտերկրյա ներդրումներն ու ՄԶ գործառույթները

ՉԺՀ-ում ռեսուրսների և հումքի պահանջարկի շոշափելի աճը և միայն միջազգային շուկայում կատարված գնումների միջոցով դրանց հետագա բավարարման գործնական անհնարինությունը հանգեցրեց չինական ծեռանարկությունների կողմից այս ոլորտում իրականացվող արտերկրյա ներդրումների հոսքի և ՄԶ գործարքների նշանակալից աճի (Նկ.-2.12): Չնայած պահանջվող ռեսուրսների տեսակների լայն սպեկտրին, ընականորեն էներգուտեսուրսների ներկրումից հարածուն կախվածությունը գերակա նշանակություն ունի երկրի տնտեսության հետագա զարգացման և անվտանգության ապահովման առումով:

Էներգիայի ոլորտում Չինաստանի արտերկրյա ծեռագերումները հիմնականում ուղղվածեն նավթի և գազի հետախուզման և արդյունահանման (ՅԱ) ոլորտներ (Նկ.-2.12): Ըստ որում, Եվելով ՉԺՀ էներգուկառուցվածքի զարգացման տրամաբանությունից, նման ուղղվածությունը պահպանելու է հետագա շարունակական աճի միտումները:

**Նկար-2.12 - Էներգիայի ոլորտում ՉԺՀ արտերկրյա ՄԶ գործարքներում առկա տեսնդենցները
ՄԶ Շավալը և Արժեքը (US\$ Մլրդ.)**



Ծ- Շավալ (քանակային); Ա- Արժեքը; *- Հունվար-Սեպտեմբեր- 2009թ.

Նկարի վերսի հատվածը- Էներգիայի ոլորտում նավթի և գազի ՅԱ գործարքների Շավալը և Արժեքը; Նկարի ներքին հատվածը- Էներգիայի ոլորտի այլ ՄԶ գործարքների- Շավալը և Արժեքը;

Այլուրներ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; 3. The emergence of China: New frontiers in outbound M&A- Doloitte- merger market- November 2009; MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Սկսած 1990-ականներից Չինաստանը նշանակայից արտերկրոյա ներդրումներ հրականացրեց նավթի և գազի ՉԱ ոլորտներում և արդեն 2008 թ-ի վերջում ՉԺՀ ազգային նավթային ընկերությունները (ԱՆՀ) մասնակցում էին 75 ՉԱ ծրագրերի՝ 31 երկրներում (Բավել.-1 -Նկ.-1): Ընդհանուր առմամբ, ֆինանսական ծգնաժամը չինական ընկերությունների համար ստեղծեց բարձր որակի ակտիվների ավելի ցածր գներով ծեռքբերման բարենպաստ պայմաններ: Կանխիկ դրամական միջոցներով ապահովված չինական ԱՆՀ-ի համար, տնտեսական ծգնաժամը և նավթի գների անկումը ստեղծեցին՝ ՄՇ գործառույթների հրականացման միջոցով, իրենց արտերկրոյա ռեսուրսների և ակտիվների գաղյա ավելացման, ինչպես նաև միջազգային նավթային արդյունաբերությունում ինտեգրման նոր հնարավորություններ:

Ներկայում աշխարհի նավթային պաշարները կազմում են մոտ 1240 մլրդ. բարեկ, որից մոտ 77% գտնվում է Ազգային նավթային ընկերությունների (ԱՆՀ) վերահսկողության տակ առանց միջազգային նավթային ընկերությունների մասնակցության: Արևմտյան նավթային ընկերությունները տնօրինում են նավթի և գազի համաշխարհային պաշարների մոտ 10%-ը: Նավթի արտադրության 20 խոշորագույն ընկերություններից 14 ը նույնպես ԱՆՀ -ն են:

Ընդհանրապես թիզ հավանական է դարձել աշխարհում նավթի և գազի նոր խոշոր հանքավայրերի հայտնաբերման հնարավորությունը: Նոյնիսկ զգայի նոր պաշարների հնարավորության դեպքում, նոր՝ այսպես կոչված՝ «կանաչ հանքավայրերում» սովորաբար պահանջվում է շատ ավելի երկարատև ներդրուածային ցիկլ [80]: Միջազգային նավթային արդյունաբերությունում ինտեգրումն ուշ սկսած չինական ընկերությունները, 90- ական թվականներին, ստիպված էին հիմնականում կենտրոնանալ, նավթային ներդրուածային համար ավանդաբար գրավիչ շրջանների՝ ոչ մեծածավալ պաշարներով և բարձր ռիսկային ծրագրերի ու ՉԱ ծեռնարկումների վրա: Այսուամենայնիվ, այս շրջանում, չինական նավթային ընկերությունները ծեռը բերեցին արտերկրում աշխատելու որոշակի փորձ: Փոփոխվեցին նաև համագործակցության մերույները՝ համատեղ իրականացվու ՉԱ ծրագրերից, անցում կատարվեց՝ մասնաբաժնային մասնակցությամբ ծրագրերին: Նշված հիմնախնդիրները աստիճանաբար ուղղորդեցին չինական ԱՆՀ- ին, ավելի ակտիվորեն կիրառել ՄՇ գործառույթների մեխանիզմը[80]: Ակգրեսական շրջանում դրանք հիմնականում փոքրածավալ ծեռքբերուածներ էին, որոնք այդպես էլ նշանակայի ազդեցություն չունեցան՝ Չինաստանի էներգակիրների մատակարարման առումով[80]:

Իրավիճակը էապես փոխվեց 2002 թ-ից հետո, երբ միջազգային համագործակցության որոշակի փորձ ծեռը բերած չինական ԱՆՀ-ը՝ հատկապես CNPC-ն, սկսեցին իրականացնել շատ ավելի լայնամասշտար գործառույթներ, աստիճանաբար վերածվելով գլոբալ չափանիշներին համապատասխանող ընկերությունների: Ներդրուածներն արդեն ավելի էին կենտրոնացվում միջին և խոշոր ծրագրերի իրականացմանը, որոնք

միաժամանակ ունեին նաև փոքր ռիսկայնություն: Այս շրջանում ձևավորվեց նաև շինական ԱՆՀ-ի Ներդրումների հետագա ծավալման չորս հիմնական ռազմավարական ուղղությունները՝ Ռուսաստան ու Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելյան Հյուսիսային Աֆրիկա և Հարավային և Հյուսիսային Ամերիկա [78,80]: Զինական ԱՆՀ-ը նավթ արդյունահանող ձեռնարկություններից, վերածվեցին կապիտալի գործառույթներ իրականացնող և գլոբալ մակարդակով մրցունակ՝ տրանս-ազգային ընկերությունների: Արտերկրյա ՍԶ գործառույթը, շինական ԱՆՀ-ի համար, աստիճանաբար վերածվեց՝ արտերկրյա ներդրումների իրականացման և մրցակցության կարևորագույն միջոցի [78,80]:

2003 թ-ին էներգիայի ոլորտում կատարված բոլոր արտաքին ներդրումները կազմում էին 2 մլրդ. ԱՄՆ դոլարից քիչ, իսկ 2006 թ-ին դրանց ընդհանուր գումարն արդեն կազմում էր 13.7 մլրդ. դոլար (Նկ.-2.12): 2003-2009 թթ-ի ընթացքում էներգիայի ոլորտի ՍԶ գործարքների ողջ քանակի՝ 72% -ը և արժեքի՝ 75%-ը կատարվել է նավթի և գազի ոլորտում (Նկ.-2.12):


2003թ-ից մինչև 2009թ.-ի առաջին երեք եռամյակներն ընկած ժամանակահատվածում՝ շինական ձեռնարկությունների կողմից էներգիայի, հանքարդյունաբերության և դրանց օժանդակ շինությունների ոլորտում կատարված արտաքին ՍԶ 127 գործարքներից 61-ը՝ (46.3 մլրդ. \$) իրականացվել է էներգիայի, իսկ՝ 59-ը (28 մլրդ. \$) հանքարդյունաբերության ընազագուածներում: Էներգիայի ոլորտում կատարված ՍԶ գործարքների գերակա մասը՝ 44-ը (ոլորտի 75%-ը կազմող արժեքով), իրականացվել է նավթի և գազի շահագործման քնազավառություն (Նկ.-2.12): Ըստհանուր առմամբ, 2009 թ-ին իրականացվել են նավթի և գազի ոլորտին առնչվող երեք տասնյակից ավելի արտերկրյա խոշոր գործառույթներ: 2009 թ-ին իրականացված 9 ամենախոշոր ՍԶ գործարքներից 7-ը կապված է քնական ռեսուրսների հետ, որոնցից չորսը՝ նավթի և գազի ոլորտում [79]: 2008թ.-ի դեկտեմբերից 2009 թ.-ի դեկտեմբեր ժամանակահատվածում շինական նավթային ընկերությունները իրականացրել են ավելի քան 13 մլրդ դոլար ՍԶ գնումներ [73,74]: Ելեկտր ընդհանուր գարգացումներից և ընթացիկ քննարկումներից՝ նման միտումը ամենայն հավանականությամբ կպահպանվի նաև մոտակա տարիներին:

Բավականին երկար ժամանակ ՉԺՀ ձեռնարկությունների ուշադրությունը՝ ՍԶ գործարքների առումով, կենտրոնացված էր Հյուսիսային Ամերիկայի համապատասխան ընկերությունների վրա, որոնք առանձնակի շահգործություն շին հանդես բերում շինական միաձուլումների հեռանկարի առումով: Ամենացայտուն օրինակը՝ ԱՄՆ անվտանգության կատարումներից ելեկտր, CNOOC -շինական նավթային ընկերության կողմից ՍԻՆՈԿԱԼ ամերիկյան ընկերության գնման մերժումն էր [32-37]: Սի քանի ամիս շարունակվող քանակցություններից հետո CNOOC-ին հետ վերցրեց իր առաջարկը և ՍԻՆՈԿԱԼ-ը դարձավ Chevron-ի մասը: Չսայած առաջացած խոշնդուտներին, մի քանի դեպքերում, շինական ընկերությունների ՍԶ գործարքներն էներգիայի ոլորտում ավարտվել են հաջողությամբ՝

հատկապես Կանադական ձեռնարկությունների դեպքում:

2003թ-ից հետո էներգիայի ոլորտում կատարված ՄԶ գործարքների՝ ընդհանուր ծավալի (քանակական) 25%-ը և արժեքի՝ 38%-ը հրականացվել է Հ. Ամերիկայում: Այլ տարածաշրջանները, որոնք առանձնապես գրավիչ են շինական ընկերությունների համար՝ Հարավ Արևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան են, ինչպես նաև Ռուսաստանը (Հավել.-1 Աղյ.-1; Նկ.-2.13 -2.15):

Նկար -2.13- ՉԺՀ-ից Էներգիայի ոլորտում կատարված արտերկրյա ՄԶ գործարքների աշխարհագրությունը- 2003- 2009(3-րդ երամայակ): ԾԱՎԱԼԸ




Արյուրներ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; The emergence of China:-New frontiers in outbound M&A- Deloitte- merger market- November 2009; MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

2008-2009 թթ. ընթացքում ՉԺՀ ԱՆԸ-ն ունեցան առանձնապես նշանակալից արտերկրյա ձեռքբերումներ: Գլոբալ ինտեգրման ամենամեծ նվազումներն այսուամենայինկ պատկանում են CNPC-ին: 2008թ-ն CNPC-ին արտերկրության արդյունահանել է 62.2 մլն. տ. նավե և 6.73 բլն. մ3 գազ, որից՝ 30.5 մլն. տ. և 4.66 բլն. մ3-ը հանդիսանում է CNPC-ի մասնարաժինը [75] (Նկար-2.9-2.10; Հավել.-Նկ.-1): Ընկերությունն արտերկրությամբ կառավարում է 5200 կմ. նավթատար խողովակաշարեր՝ 36.67 մլն. տ տարեկան հզորությամբ: 2009թ-ի հոկտեմբերին ավարտվեց Ղազախստան - Չինաստան նավթատարի 2-րդ փուլը (Կենկիյակ-Կումկոյ) և սկսվեց 10 լրացուցիչ մղղիչ կայանների շինարարության փուլը, որի ավարտով նավթատարը կիասցվի իր նախագծային՝ տարեկան՝ 20 մլն. տ. հզորությանը (Հավել.-2- Թարտեզ-2): 2008թ-ի հունիսի 30-ին սկսվեց 1813 կմ. երկարությանը գազատարի շինարարությունը, որի առաջին փուլը շահագործման հանձնվեց 2009 թ-ի


դեկտեմբերի 15-ին: Դեկտեմբերի 22-ին Սինծյանի Յորբու քնակավայրի շրջանում թուրքմենական գազը հատեց Չինաստանի սահմանը լցվելով 2-րդ Արևոտք-Արևելյան գազատարը (Յավելվ.-2-Թարտեզներ-3,4):

Նկար-2.14- ԶՃՀ-ի էներգիայի ոլորտում կատարված արտերկրյա ՄՇ գործարքների աշխարհագրությունը- 2003- 2009(3-րդ երամյակ): ԱՐԺԵՑՔ



Sources- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; The emergence of China:-New frontiers in outbound M&A- Deloitte- merger market- November 2009; MOFCOM- 2008 Statistical bulletin of China's outward direct investment;

Նկար-2.15- Չինական ԱՆԸ-ի արտերկրում նավթահանությի ներդրումային մասնաբաժինն՝ ըստ տարածաշրջանների -2008թ. (1000բար./օր)



Աղյուսակ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2008; National Bureau of Statistic of China -Yearbooks- 1996-2008; NOC's websites annual reports;

2009թ-ին CNPC-ին Չինաստանի Զարգացման բանկից (ՉՉԲ) ստացավ լոցուղի 30 մլրդ. դրար արտոնյալ վարկ՝ արտերկրոյմ նավթի ոլորտում Ներդրումների և ծեռքբերումների գործընթացների արագացման նպատակով[76]: Նախատեսվում է հետագա հինգ տարիների ընթացքում վարկը հիմնականում օգտագործել՝ Աֆրիկայում, ՀԱՀ, Ամերիկայում (Կենսութեալ) և Ղազախստանում Ներդրումների և նոր ծեռքբերումների նպատակով:

2009թ-ին ընկերության ամենախոշը Ներդրումը՝ 3.3 մլրդ. դրարով Mangistaumusnaigas-ի ծեռքբերումն էր, որով CNPC-ի նավթի հանույթի մասնաբաժինը Ղազախստանում հասցեց երկրի ամբողջ հանույթի շուրջ 25%-ին (Յավել.-1- Աղյ.-1): Դա լորջ անհանգստություններ առաջացրեց Ղազախստանում՝ երկրի էներգակիրների ոլորտում, չինական ԱՆՀ-ի Ներդրավվածության բարձր աստիճանի առկայության առօնությունը[77]:

2009թ-ին 7.24 մլրդ. դրարով Addax Petroleum Corp.-ի ծեռքբերումը հանդիսանում է Sinopet-ի ամենանշանակալից արտերկրոյա Ներդրումը, ինչպես նաև չինական ԱՆՀ-ի կողմից երթև կայացած ամենախոշը ՄԶ գործառույթը: Addax-ի գնումով, որին պատկանող նավթահանքերը հիմնականում կենտրոնացված են Նիգերիայում և Իրաքի քրդական շրջաններում, Նշանակալիորեն ավելացավ Sinopet-ի արտերկրոյա նավթահանույթը, ինչն, այնուամենայնիվ, կազմեց CNPC-ի հանույթի ընդամենը 25%-ը (Յավել.-1- Աղյ.-1) և [78]): Վերջին երկու տարիների ընթացքում CNOOC-ի ամենանշանակալից ծեռքբերումը, 3.78 մլրդ. դրարով Նորվեգական Nawlco Offshore-ի գնումն է (Յավել.-1- Աղյ.-1):

Ընդհանուր առմամբ, չինական ընկերությունների Ներդրումային աշխարհագրությունը, ծավալային և արժեքային մեծությունը ունի և պահպանում է ամենաարագ ընդարձակման և ամի միտումները, ինչն առավելցայտունորեն դրսնորվեց վերջին երկու տարիների ընթացքում: Ընդ որում, հիմնական ուղղվածությունը եղել և մնում է նոր էներգութեալ ներդրումը:

Էներգակիրներին առնչվող գործառույթներնն ավանդաբար շաղկապվում են քաղաքական և աշխարհաքաղաքան տեղաշարժերի հետ և երբեմն ներառում են նաև իրատեսական անհրաժեշտությանն անհամամասնական՝ ավելցուկային քաղաքականացվածության տարրեր: Եվ չնայած, այս իմաստով, Չինաստանի ռազմավարական մոտեցումը բացառում է Ներդրումների արտահանման գործընթացում քաղաքական մոտիվացիայի կիրառելիության հնարավորությունը, այնուամենայնիվ, չինական ընկերությունները չեն կարող ապահովված լինել ընդհանուր մոտեցումներով պայմանավորված ազդեցություններից: Դա առանձնապես նկատելի է միջազգային շուկայում նշանակալի էներգետիկ ակտիվներին առնչվող գործառույթների դեպքու, եթ ԶԺՀ նավթային ընկերությունները չունենալով համաշափ փորձառություն և բախվելով հովանավորչության դրսնորումների հետ պարտվում են իրենց գորալ մրցակիցներին, ինչի հետևանքով՝ չինական ծեռնարկությունները հաճախակի իրականացնում են ավելի փոքրամասշտար և բարձր

ոիսկայնությամբ ՄԶ գործարքների[72]: Էներգակիրների շուկայում գլոբալ չափանիշներով գերակա դիրքերում գտնվող, ինչպես նաև տեխնոլոգիական և փորձառության առավելություններ ունեցող արևմտյան նավթային ընկերությունները, որոշակի կոնսոլիդացիայի դեպքում, կարող են լուրջ խոչընդոտներ ստեղծել չինական նավթային ընկերությունների գլոբալ ինտեգրման հետագա ծավալման առումով։ Նկատի ունենալով, չինական ծեռնարկությունների կողմից հանքարդյունաբերության և հատկապես էներգիայի ուղղություններում արծանագրած ՄԶ գործարքների քանակական և որակական առաջընթացը, հետագա զարգացումների առումով ենթադրելի է, որ դա կարող է հանգեցնել՝ ռեսուրսների ոլորտում, արտերկրյա ընկերությունների մրցակցության աստիճանի նշանակայի աճին, ինչպես նաև հնարավոր հակասությունների դաշտի հետագա ընդարձակվմանը։ Դաշտի առնելով ՄԶ գործառույթների վերջարադրյալ առանձնահատկությունները, չի բացառվում այն հնարավորությունը, որ չինական ընկերությունների գործառույթներում քաղաքական մոտիվացիայի լիակատար բացակայությունը՝ կարող է վերածվել, ոչ նպաստավոր հանգամանքի թե՛ ռեսուրսների, և թե՛ ընդհանրապես, ՄԶ գործարքներում որակական նշանակության հետագա շոշափելի արդյունքների և ծեռքբերումների արծանագրման առումով։

Առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիմնականում գլոբալ զարգացումներում առկա միտումների և ճշնաժամային գործոններով պայմանավորված, նկատելիորեն աճել է արտերկրյա ծեռնարկությունների ՄԶ գործարքներում չինական ընկերությունների հետ արևմտյան SUC-ի համագործակցության և համատեղ ծեռքբերումների հաճախականությունը։ 2008թ.-ին Չինակո (ՉժՅ) և Այկոն (ԱՄՆ) ընկերությունների՝ Ոխո Տին(Բրիտանիա) 12% մասնաբաժնի համատեղ գնումը, կամ՝ 2009 CNPC և BP համատեղ հաղթանակը Իրաքի Ռումայիա նավթահանքի զարգացման մրցույթում և այլն, համատեղ ծերքբերումների լավագույն օրինակներ են։ Նման համագործակցության հետագա ծավալում ու խորացումը հեռանկարային էական ազդեցություն կարող է ունենալ փոխադարձ մոտեցումների և ըմբռնումների ողջ համակարգի՝ հիմնարար և որակական ձևափոխումների առումով։

2.4.-Էներգակիրների ԶԺԴ դիվանագիտությունն ու քաղաքականությունը, էներգակիրների ներմուծման անվտանգության ապահովման հիմնախնդիրները

Չինաստանում բազմատեսակ ռեսուրսների և հումքի պահանջարկի շոշափելի աճում թնականորեն գերակա կարուրությունը էներգուեսությունն է:

Աշխարհում ներկայում գործող չափանիշներով, որում երկրի ազգային տնտեսությունն իր վրա կրում է նավթի համաշխարհային շուկայի ուղղակի ազդեցությունը, երբ ներմուծման տարեկան ծավալը հասում է 50 մլն. քարտի սահմանը[81]: Այս իմաստով ընուժագրիչ օրինակ է Իրաքյան պատերազմի ուղղակի հետևանքը Չինաստանի տնտեսության վրա": Ներկայում Չինաստանի նավթի ներկրման պահանջարկը շորջ 30 անգամ գերազանցում է այդ սահմանագիծը և հեռանկարային իմաստով կրկնապատկելու է՝ 2030 թ-ին[82]: ԶԺԴ-ի համար դա նշանակում է՝ 2030 թ-ին նավթի ներկրություն՝ 75- 80% կախվածություն, ներկայիս՝ 54%-ի փոխարեն**[82], իսկ նավթի համաշխարհային շուկայի համար՝ ներկայիս երկուսի (ԱՄՆ և ՏՀՀԿ այլ երկրներ) փոխարեն՝ նավթի երեք խոշորագույն սպառող և ներկրող կենտրոնների առկայություն: Էկոնոմիկայի գլոբալացման և էներգուեսությունների հետագա հնարավոր անբավարարության անհանգստությամբ պայմանավորվող ներկա զարգացումների հետևանքով՝ Չինաստանի տնտեսությունը դառնում է բավականաչափ խոցելի՝ և նավթի արժեքների՝ և արտաքին մատակարարությունների խարարումների դեպքերում:

Էներգակիրների՝ հատկապես նավթի, անվտանգության հիմնախնդիրը, որի առաջնային ազդեցությունն ավանդաբար քաջածանոթ է ԱՄՆ-ի (Եվրոպայի) համար, թնականորեն վճռական նշանակություն է ծեղզ բերում նաև Չինաստանի հետագա զարգացման և տնտեսական անվտանգության առումով, և կարող է վերածվել՝ ԶԺԴ դիվանագիտական և պաշտպանական վերափոխումների հիմնական շարժիչ ուժի: Ակնհայտ է նաև, որ արտաքին վերահսկողության տակ գտնվող միջոցներից նման կախվածությունը ենթադրում է, որ երկրի տնտեսությունը համապատասխան էներգուեսությունով ապահովելուն ուղղված ԶԺԴ ջանքերը կարևորագույն նշանակություն ունեն՝ առաջին հերթին ազգային անվտանգության առումով:

*- Թեական ժամանակակիրների արժեքները միշտ ել զգայուն են իրավիճակային փոփոխությունների նկատմար՝ առանձնապես էներգակիրների դեպքում: Ցայտում օրինակ՝ Իրաքյան պատերազմի հետևանքով նաև այլ ամերիկական ազդեցությունը Չինաստանի համար: 2003թ-ի առաջին չորս ամսում, Չինաստանի նավթի ներմուծումն աճեց՝ 42.9%-ով, բայց վճարը աճեց տարեկան 110.6%-ով, կազմելով 4մլրդ. դոլարի լրացուցիչ ծախս: Ավելին, պատերազմը վնասեց շինական մասնակցությամբ Մերձավոր Արևելյան տարածաշրջանում ընթացող՝ ավելի քան 100 ծովագների իրականացմանը և Չինաստանից տասնյակ հազարավոր աշխատողների ներգուազման պայմանագործիքներին[69-71]:

**- Համեմատության համար նշենք, որ ցան նույն կանխատեսումների, 2030թ-ին նավթի ներմուծման կախվածությունը՝ ԱՄՆ-ի դեպքում պահպանվելու է ներկայիս՝ 73%-74% սահմաններում, իսկ ՏՀՀԿ Եվրոպայի երկրների դեպքում՝ ներկայիս 70%-ից կարող է հասնել շորջ՝ 88%-ի՝ Ցյուխսային ծովում նավթահանության նշանակային և վազման հետևանքում[82]:

Խնդրի խորությունն ըմբռնելու համար, պետք է նշել, որ էներգաապահովման հարցում Զինաստանը կանգնած է և ներքին, և արտաքին խնդիրներին դիմակայելու անհրաժեշտության առջև: Ներքին իմաստով, դա տնտեսական արագընթաց աճով, ինչպես նաև դրա հետևանք հանդիսացող սոցիալական զարգացմամբ պայմանավորված էներգաօգտագործման պահանջարկի բնականու աճի բավարարման և շրջակա միջավայրի խորացող հիմնախնդիրների լուծումն է: Արտաքին առումով, հիմնական մարտահրավերները նախ և առաջ պայմանավորված են ներկա միջազգային իրադրության փոփոխականությամբ, ինչպես նաև էներգառեստրուսներով հարուստ շրջանների համեմատական բարձր անկայունությամբ [96]:

Էներգիան հիմնային և առաջնային նշանակություն ունի աշխարհի ամենամեծ ընակյությունն ունեցող Զինաստանի էկոնոմիկական առաջնթացի, սոցիալական կայունության և երկրի ազգային անվտանգության առումով: Արտաքին վերահսկողության տակ գտնվող էներգառեստրուսների ներմուծումից խորացող կախվածությունն ուղղակիորեն առնչվում է երկրի ազգային անվտանգությանը և ենթադրում է Զինաստանի կողմից համարժեք ներգրավվածության դրսևորում:

Մյուս կողմից, էներգակիրների անվտանգության ապահովման ԶՃ՝ լուծումները վճռական նշանակություն կրնենան ոչ միայն Զինաստանի զարգացման անվտանգության առումով: Դրանք իրենց ազդեցությունը կրնենան նաև էներգակիրների մյուս խոշոր սպառողների և արտադրողների համար, և կարող են հանգեցնել՝ տնտեսական և անվտանգության հարաբերությունների համակարգային նոր վերադասավորումների՝ բազմաթիվ տարածաշրջաններում:

Զինաստանի նավթային քաղաքականությունը ծևավորվում է երկրի էներգետիկ քաղաքականության հիմնարար սկզբունքներով, իսկ նրա արտաքին գործառույթի ռազմավարությունը բխում է ԶՃ՝ արտաքին քաղաքականության հիմնադրույթներից: Նավթային քաղաքականության արտաքին գործառույթի գործնական իրականացման մեխանիզմները ծևավորվում են «Գնալ դրւս» ռազմավարությամբ: Ծարադրվածից բխում է բազմաթիվ սուբյեկտների ուղղակի կամ հարակից ազդեցության առկայությունը երկրի նավթային քաղաքականության ծևավորման և գործնական կիրառման առումով: Բայց և այնպես, զիսավոր և առաջնային դերը պատկանում է Զինաստանի ազգային նավթային ընկերություններին: Ռազմավարական առումով երկրի էկոնոմիկական զարգացման համար անհրաժեշտ արտաքին նպաստավոր պայմանների ստեղծմանը նպաստակառողված Զինաստանի արտաքին քաղաքականության համար տնտեսական գորայիզացման տեմպերը և երկրի տնտեսության արտերկրյա ռեսուրսային պահանջների ապահովման խնդիրները կախորոշիչ նշանակություն ունեն: Այլ կերպ, ազգային գերակա նպատակի էկոնոմիկական զարգացման կենսագործմանը նպաստող համակողմանի և արդյունավետ աջակցության ապահովումը

հանդիսանում է ԶԺ՝ արտաքին քաղաքականության առաջնային նպատակակետը, ինչով և նրա դիվանագիտական իրազործումը ձեռք է բերում «տնտեսական պրազմատիզմ» որոշակի ուղղվածություն։ Երկրի էներգետիկ անվտանգության, և դրա կարևորագույն քաղաքիչը հանդիսացող արտերկրյա էներգակիրների մատակարարման հիմնախնդիրները, որում գուգորդված են նաև էներգակիրների մյուս խոշոր սպառողների շահերը, ինչպես նաև գլոբալ չափանիշներով նոր վերաբաշխումների հնարարավորության առկայությունը ակնհայտորեն չեն կարող չինել։ ԶԺ՝ դիվանագիտական գործառույթների ուղարկության կենտրոնում՝ Ավելին, էներգետիկայի և էներգառեսուրսների բնագավառում համագործակցության գարգամման խնդիրները սովորաբար ընդգրկվում են միջավայրական հարաբերությունների առանցքային հիմնահարցերի կարգավորման համաձայնագործում ու պայմանագրերում և գոնվում են ԶԺ՝ բարձրագույն դեկավարության ուղարկության կենտրոնում։ Դա հնարավորություն է ընծեռում արագործն օգրացանել ԶԺ՝ էներգետիկ համագործակցությունը բազմաթիվ երկրների հետ։ Թերևս հենց դրանով է սահմանափակվում է մասնավորապես էներգակիրներից, և ընդհանրապես արտերկրյա ուսուրաներից կախվածության ազդեցությունը Զինաստանի արտաքին քաղաքական գործառույթների վրա [86]։

Դամաձայն ԶԺ՝ տեսակետի, «Էկոնոմիկական դիվանագիտությունը» նպատակառողկած է համագործակցության գարգամման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, իսկ կոնկրետ ծրագրերի իրականացումը կարող է պայմանավորվել միայն տնտեսական նպատակահարմարությամբ։ Էներգետիկ համագործակցությունը՝ Սույանի, Երանի, Կենսութեայի և այլ երկրների հետ, ընդամենը տնտեսական համագործակցություն է և չի կարող նշանակել ԶԺ՝ ներգրավվածություն, կամ ազդեցության տարածում այդ երկրներում։ Ի վերջո, արտերկրյա էներգառեսուրսներով ԶԺ՝ տնտեսության ապահովման պատասխանատվությունը և գործնական իրականացման գործառույթը դրված է չինական ԱՆՀ-ի վրա։


ԶԺ՝ նավթային ընկերությունների արտերկրյա գործունեությունը լիովին հենվում է շուկայական մեխանիզմների կիրառման, կամ, որ նույն է, լիբերալ քաղաքականության կենսագործման վրա։ Ակզրունքորեն այն համահունչ է ԶԺ՝ նավթային քաղաքականությունում, նավթադաշտականություն - Մեծ խաղե ավանդույթի վերածված քանաձնի կիրառումը քացառելու Զինաստանի դիրքորոշմանը։ Ընդգծնք, որ տվյալ մոտեցումը ոչ մի դեպքում չի նշանակում էներգակիրների կամ նավթային դիվանագիտության իրականացման քացառում։ Ավելին, ԶԺ՝ և այլ երկրների միջև էներգետիկ համագործակցության հաջողությունը հիմնվել է նախ և առաջ դիվանագիտական ջանքերի վրա։ Պետական օժանդակության և միջոցների առկայությունը կորպորացիաների քանակցային և արտերկրյա ՄԶ գործառույթներում ընծեռում են լրացույթի ճկունություն ցուցաբերելու հնարավորություն։ Կարծ ժամանակահատվածում նշանակայիրը են

ընդայնեց կորպորացիաների ներդրումների ծավալը և աշխարհագրությունը՝ որոշ դեպքերում ընդունվում են արևմտյան կորպորացիաների ազդեցության տակ գտնվող շրջանները (Նկ.2.10 և Նկավելված-1): Ըստ որում, պետք է ի նկատի ունենալ, որ այս ընկերությունները և ընդհանրապես Զինաստանը, էներգակիրների արտաքին աղբյուրների որոնման թելադրանքի առջև կանգնեցին աշխարհում արդեն իսկ գործող և արևմտյան նավթային կորպորացիաների ազդեցության տակ գտնվող ծնավորված համակարգի առկայության պայմաններում: Մի տեսակ ծայրամասային իրավիժակում հայտնված և արևմտյան նավթային ընկերություններին փորձով և տեխնոլոգիական հնարավորություններով նկատելիորեն զիջող չինական ծեռարկությունների համար, արտաքին շուկայում իրենց տեղը գտնելու հիմնական միջոցներից մեկը դարձավ գնային քաղաքականության ընդգծված կիրառումը: Դա ԶՃՀ նավթային ընկերություններին հնարավորություն ընծեռնեց միջազգային շուկայում համար շոշափելի ծեռքբերումների՝ իրենց վրա գրավելով այլ ընկերությունների սևոռուն ուղարկությունը:

ԶՃՀ կորպորացիաների էներգետիկ ռազմավարության նկատմամբ արտաքին մոտեցումներում դրսնորվեց նկատելիորեն ոտքացված անհանգուստություն, որ Զինաստանի էներգակիրների պահանջարկի ազդեցիկ աճը և վարվող առևտրական էներգետիկ քաղաքականությունը կարող են վտանգել համաշխարհային և առանձնապես ԱՄՆ էներգետիկ անվտանգությունը[83]: Իրականում, չնայած տպավորիչ առաջընթացին, չինական կորպորացիաների նավթի արտերկոյա արդյունահանումը փոքր է աշխարհում վաճառվող նավթի 3%-ից: Ըստ որում այն հիմնականում վաճառվում է դրսում, ինչը կորպորացիաների համար ապահովում է ավելի քարձր շահույթ: Ըստ տարբեր գնահատականների, Զինաստան ներկրվում է դրանց արդյունահանման ընդամենը 40-45%-ը[84]: Զինաստանի (և մասնավորապես ԶՃՀ նավթային ընկերությունների) նկատմամբ դրսնորվող առանձնահատուկ հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն ԶՃՀ-ի էներգիայի օգտագործման հսկայածավալ շուկա լինելու հանգամանգով, այլ նաև (գուցե և առաջին հերթին) այն հանգամանքով, որ որպես հարածուն և կարևորագույն գորպալ բաժնետերեր, չինական ԱՆՀ-ի ռազմավարական մոտեցումներն ու ընդունած որոշումներն էական ազդեցություն կունենան ոլորտում համընդհանուր չափանիշներով էներգոչուկայի հետագա զարգացումների առումով: Զինաստանի էներգետիկ ռազմավարության արտաքին գործառույթը հիմնվում է միջազգային համագործակցության ամրապնդման և էներգոառաքման աղբյուրների դիվերսիֆիկացիայի վրա: 1993թ-ին, երբ Զինաստանը դարձավ նավթ ներմուծող երկիր (net) նավթային ընկերություններն այն պարզապես ծեղաց էին թերու միջազգային շուկայում գնումների միջոցով: Խնդրի խորությունն ըմբռնելուց հետո ԶՃՀ ԱՆՀ-ը սկսեցին դիտարկել երկարաժամկետ նավթային գործարքների և համաձայնագրերի իրականացման հնարավորությունը, որոնք դուրս էին

զայս՝ պարզագույն նավթառաջման պայմանագրերի շրջանակից: Արտաքին աղբյուրներից էներգակիրների ներմուծման ընդգրկուն քաղաքականության մշակման և ղիշերսի ֆիկացման անհրաժեշտության գիտակցումն իր ամբողջ սրությամբ դրսկորվեց 2001թ-ի սեպտեմբերյան տեղորհստական ակտից և հատկապես՝ Իրաքյան երկորորդ պատերազմը սկսվելուց հետո, երբ ընկալվեց Չինաստանի նավթի ներկրման հիմնական աղբյուրների անվտանգության ոչ բավարար մակարդակը: Ժամանակային առումով, դա համընկավ նաև ՉԺՀ նավթի պահանջարկի նշանակալից աճի հետ, երբ 2003թ-ին Չինաստանը, շրջանցելով ծագոնիային, դարձավ երկորորդ խոշոր նավթ սպառող երկիրն աշխարհում: ՉԺՀ «Պետախիրդի» Զարգացման հետազոտությունների կենտրոնի 2004թ.-ին Իրաքարակված «Չինաստանի Էներգիայի Ազգային Ռազմավարությունը» և Զարգարականությունը, նմանատիպ առաջին փաստաթղթում արդեն իսկ ընդգծեց էներգակիրների (նավթի և գազի) ներկրման աղբյուրների ղիշերսի ֆիկացման առաջնայնությունը[85]: Արտաքին աղբյուրներից էներգակիրների մատակարարմանն ուղղված քաղաքականությունը դարձավ ընդգրկուն և ամբողջական: Մշակվեց միջոցառումների և գործունեության հստակ ծրագրեր հատկապես «Գնայ դուրս» ռազմավարության շրջանակներում, որոնց համակարգված իրականացումը հանգեցնելու էր երկրի տնտեսության էներգառեսուրսների պահանջարկի ապահովման հնարավոր բարձր աստիճանի երաշխիքներ: Ռազմավարությունում,

Նկար-2.16- ՉԺՀ նավթի ներկրումն ըստ տարածաշրջանների- (%)



Աղյուրներ- China Energy Statistical Yearbook (CESY) - China statistical Press- Beijing-2009; NBSC-Yearbooks- 1996-2008; DRS Innovations Groupe;

որպես ԶԺԴ էներգակիրների մատակարարման հիմնական արտաքին աղյուսներ նշվել են Մերձավոր Արևելքը^{*}. Ուստաստանը, Կասպյան ավազանը և Կենտրոնական Ասիան [85]: Հետագայում անշոշտ ներկրման աղյուսների աշխարհագրությունն ավելի ընդարձակվեց՝ ակտիվորեն ընդգրկելով՝ հատկապես՝ Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները: 2009-ին, նավելի շուրջ 45%-ը Զինաստան է ներմուծվում Մերձավոր Արեւելքից, 31% -ը՝ Աֆրիկայից, շուրջ 7.5%-ը Ռուսաստանից, 3%-ը Ղազախստանից և 13.5%-ը այլ երկրներից (Նկ.-2.16 և Դաշտ.-1-ի՝ Այլ.-2-ը): Ուզմավարությունն ընդգծեց ոչ միայն ներկրման աղյուսների աշխարհագրական, այլև՝ առաջման տրանսպորտային ուղիների՝ դիվերսիֆիկացման կենսական անհրաժեշտությունը:

Ներմուծման ներկայիս աշխարհագրությունը հանգեցնում է այլ երկրների կողմից վերահսկվող նավուղիներով և Մալակլա նեղուցով^{**} անցնող. ԶԺԴ ներմուծվող նավելի ամրող ծավայի շուրջ 80% -ի խոցելիությանը. ինչով նավթառաքման անվտանգությունը դառնում է առաջնահերթ խնդիր (Դաշտ.-2- Ձարտեզ-5) և [81]): Ավելին, ծովային ուղիներով ներկրման շուրջ 90%-ը իրականացվում է այլ երկրների տանկերային նավատորմի միջոցով: 2003թ. Իրաքյան պատերազմն էական ազդեցություն ունեցավ Զինաստանի նավթային անվտանգության առկա և հնարավոր մարտահրավերների, վարփող էներգետիկ արտաքին քաղաքականության աշխարհագրության և առաջումների թերությունների բացահայտման առումով: Մերձավոր Արևելքում և Պարսկական ծոցում ուժային հաշվեկշռի առաջացած որակական փոփոխությունները և անկայունության գործոնների հնարավոր հետագա աճը, Զինաստանում առաջացրեցին նախագուշական ռազմավարության ընդունման և կիրառման անհրաժեշտություն:

Զիմնախնդիրն ընդհանրացված ենթատեքստում դիտարկելու դեպքում, ընական ռեսուրսների ներմուծման անհրաժեշտության արագընթաց աճը մի կողմից վերածվում է Զինաստանի միջազգային ինտեգրման շարժի ուժի, մյուս կողմից՝ ավելի ու ավելի հեռավոր ռեսուրսների ներմուծմից կախվածությունը, հանգեցնում է երկրի տնտեսության խոցելիությանը և Զինաստանի համար որակապես նոր վտանգների առաջացմանը: Նման վտանգներից երկրի տնտեսությունն ապահովելու

*- Մերձավոր Արևելքը հանդիսանում է ԶԺԴ նավելի ներմուծման հիմնական աղյուրը և կանխատեսվում է, որ նման իրավիճակը կապահպանվի մինչև 2030 թ-ը: Սառույան Արարիան, Իրանը, Իրաքը, Օմանը և Բրաւելը նավելի հիմնական մատակարարներ են Զինաստանի համար (տես- Նկ.- 2.14-ը, նաև՝ Դաշտելմած- 1-ի՝ Այլուակ-2-ը):

**- 900 կմ երկարությամբ Մալակլա նեղուց (ամենաներ մասն ունի ընդամենը 2.7 կմ. լայնություն) կապում է Ասիայի տարածաշրջանը Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Աֆրիկայի հետ: Նեղուցով տարեկան անցնում են մոտ 50000 նավ, որունցով իրականացվում է համաշխարհային առևտուրի 40%-ը: Նեղուցով գրեթե անցնում են մոտ 15 միլ. բարեխ նավեր՝ Մերձավոր Արևելքից և Արևմտյան Աֆրիկայից : Մալակլա նեղուցով է տեղափոխվում ծագողնիա և Զինաստան ներկրվող նավելի 90%-ը և 80%-ը՝ համապատասխանաբար[87,88]:

դասական մոտեցումների ենթատեքստում, Զինաստանի տնտեսության պահանջարկի աշխարհագրական ընդարձակման արագությունը գերազանցում է նրա ռազմավարական հասանելիության հնարավորությունների զարգացմանը: Ներկայում Զինաստանը դեռևս չի տիրապետում ռազմական այնպիսի հնարավորությունների, որն անկախ իրադրության փոփոխությունից, կարող է երաշխավորել երկրի տնտեսության արտերկրյա ռեսուրսային պահանջների անվտանգ մատակարարման ապահովումը՝ խելամիտ անհրաժեշտության սահմաններում, ուժային բաղադրիչի հնարավոր կիրառմամբ: Լման իրավիճակը առաջացնում է երկրի զարգացման ռազմավարական պլանավորման որակապես նոր մոտեցումների, ինչպես նաև դրա իրագործելիության ապահովման առումով դիվանագիտական ավելի ծկուն մեթոդների կիրառման անհրաժեշտություն[28,54]: Արագընթաց զարգացումը Զինաստանին կանգնեցրել է արագորեն գլոբալ մասշտաբներով գործելու անհրաժեշտության առաջ: Որքանով և ինչպես Զինաստանը կկարողանա հայրահարել և լուծել առաջացած հիմնախնդիրները, կարևորագույն նշանակություն կունենա՝ համընդհանուր չափանիշներով երկրի դերի հետագա ամրապնդման, ինչպես նաև այլ խոչորագույն ուժային կենտրոնների հետ ՉԺՀ հետագա հարաբերությունների բնույթը որոշելու առումով:

Նախագոյական ռազմավարության ընդունումնու կիրառումը նականորեն, հանգեց՝ էներգաառաքման աղբյուրների և տրանսպորտային ուղիների դիվերսիֆիկացիայի շնորհիվ՝ Մերձավորակության շրջանից ներմուծման ծավալների և Զինաստանի կողմից անվերահսկելի նավուղիներով առաջումների ծավալների հնարավոր նվազեցման առաջնահերթության գիտակցմանը: Երկարամյա լրջագոյն ջանքերի գործադրման շնորհիվ, բացի ծովային ուղիներով կատարվող ներկրումներից, Զինաստանը հասել է էներգակիրների՝ նավթի և գազի, երեք այլ ներկրումների ռազմավարական ուղիների ձևավորմանը՝ հյուսիս-արևելյան (Ռուսաստանից), հյուսիս-արևմտյան (Միջն Ասիա, հնարավոր է նաև Ռուսաստան) և հարավ-արևմտյան (Մյանմար)[89,94] (Հավել. -2 Բարտեզ-5):

2009թ.ի նոյեմբերին CNPC-ն սկսեց Մյանմարու նավթային տերմինալի շինարարությունը, որտեղից Մերձավոր Արևելքից և Աֆրիկայից թերվող նավեր 771 կմ. երկարությամբ խողովակաշարով կառաքվի ՉԺՀ՝ չանցնելով՝ Մայականեղուցով: Նավթատարի տարեկան վերջնական թողունակությունը կազմելու է 22 մլն. տ. (առաջին փուլում 12 մլն. տ, 2012թ.-ին) և առարելու է նաև մյանմայան նավթ[89]: Պահանավորված է նաև 12 մլր. մ3 թողունակությամբ գազատարի շինարարությունը, որն ավարտվելու է 2012թ.-ին:

Ավելի քան 17 ամյա քանակցությունների արդյունքում, 2010թ.-ին ավարտին կիասցվի Ռուսաստան - Զինաստան նավթամուղը, որը տարեկան 15 մլն. տ. նավթ կառաքի ՉԺՀ[90-92]: Պահանավորվում է գազատարների կառուցում, որոնցով մինչև 70 մլրդ. մ3 բնական գազ կարող է առարկել Զինաստան[92-93]: Գործող Ղազախստան-Զինաստան նավթատարով և Տրանս-Ասիական

գազատարով վերջնական թողունակությամբ տարեկան 20 մլն. տնավթ և 40-55 մլրդ. մ3 ընական գազ է առաքվելու Չինաստան (Հավել.-2- Զարտեզներ-2-5):

Ընդհանուր առմամբ, վերջին երեք ուղիների (որոնցում հիմնականը Ռուսաստանի և Միջին Ասիայի հետ կապող ուղիներն են) ամբողջական գործարկման դեպքում ՉԺՀ ներկրվող նավթի շուրջ 40%-ը կհասցվի Չինաստան՝ չանցնելով Մալակկա նեղուցով [89,94]:

Վերոշարադրյալից բխում է, որ Միջին Ասիայից և ՌԴ-ից էներգակիրների խողովակաշարային տեղափոխումը Չինաստանի համար ակնհայտորեն ունի կենսական անհրաժեշտության նշանակություն: Ընդ որում, Կասպյան շրջանում և Ռուսաստանի հետ Չինաստանի էներգետիկ համագործակցության զարգացումներն ունեն որոշակիորեն միմյանցից տարրերվող առանձնահատկություններ ու ներքին տրամաբանություն [95-97]:

Գլուխ 3. Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների նշանակությունը և առկա իրավիճակը

3.1.- Կասպյան էներգակիրների պաշարները և դրանց նշանակությունը միջազգային էներգետիկ անվտանգության առումով

70-ական թթ. կատարված հետազոտությունների արդյունքների գերութացված ներկայացմամբ 1990-ականների սկզբում հաջողվեց ծևավորել հիպեր-վստահության մթնոլորտ առ այն, որ Կասպյան ավազանն էներգակիրների իր պաշարներով կարող է դառնալ Սերծավորարևելյան և Պարսից ծոցի շրջանների մրցակից և իր նշանակությամբ անգամ փոխարինել նրանց: Ցուրաքանչյուր հանքավայրի հետազոտության սկիզբը ուղեկցվում էր «Նոր Ջովեյթի» հայտնաբերման՝ սովորության վերածված համեմատությամբ: Պաշարների իրական գնահատման տեխնիկական և տեխնոլոգիական դժվարությունները, որոնք առկա են Կասպյան ավազանի նավթի և գազի հանքավայրերի հետազոտություններում, որոշ իմաստով նպաստեցին տարածաշրջանի երկրների լիդերների խոստումների վրա հիմնված ուժացված գնահատականների ծևավորմանը[1]: 1994թ.-ի սկզբին Ադրբեյջանի և Անգիյայի Բրիտիշ Պետրոլիում (BP) կորպորացիայի միջև ստորագրված, այսպես կոչված «Դարի պայմանագրով» սկզբնավորվեց Կասպյան ավազանում աշխարհաքաղաքական մրցակցություն, ինչն հետազոյն որակվեց որպես, «Նոր Մեծ Խաղ»: Ի տարբերություն 20-րդ դարեսկզբի, «Նոր Մեծ Խաղ»-ը նշանավորվում է, նախ և առաջ, ընդգրկված դիրակատարների առատությամբ, էլուստումիկայի գլոբալացման և էներգուեստիվների հետագա հնարավոր անքավարարության անհանգստությամբ, ինչպես նաև ուժային կենտրոնների բոլորովին այլ որակներով: Տարածաշրջանի առաջնորդների կողմից հայտարարված բաց ներդրումային քաղաքականությունը՝ Կասպյան ավազանն արևմտյան կորպորացիաների համար դարձրեց ավելի հրապուրիչ և դրանք արագործն ակնհայտ գերակա դիրքեր նվաճեցին տարածաշրջանի էներգակիրների՝ հատկապեսնավթիմասնարաֆիններում*: Յետագառումնասիրությունները հերթեցին Կասպյան ավազանի նշանակությունը՝ Սերծավորարևելյան և Պարսից ծոցի շրջաններին փոխարինելու հմաստով, միաժամանակ հիմնավորելով շրջանի կարևորագույն նշանակությունը էներգակիրների դիվերսիֆիկացիայի առումով, ինչը խիստ արդիական է էներգետիկ անվտանգության ապահովման նկատառումներով[2-6](Աղյ.-3.1): Կասպյան էներգակիրների միջազգային էներգետիկ անվտանգության առումով ունեցած նշանակության յուրաքանչյուր օբյեկտիվ գնահատական,

*- 1994 թ-ի սեպտեմբերին ստորագրված՝ Կասպյան շրջանում հանքավայրերի հետազոտման և շահագործման առաջին պայմանագրով, բաժանվել են Ազերի Չիրագ Գյումաշի (ACG) համարավայրի Փայտաճինները, որում BP-ն բացի 34.1367%-մասնաբժիշտ, ստանձնեց նաև օպերատորի կարգավիճակ, հետազոյն ստանայով նաև ԲԹՁ խողովակաշարի 30.1% -ը [Azeri-Chirag-Gunashli (ACG) Oil Field, Caspian Sea, Azerbaijan- <http://www.offshore-technology.com/projects/acg/>].

կարող է հիմնավորվել միայն նավթի և գազի արդյունահանման ավանդական կենտրոններից գյորալ (կամ տարածաշրջանային, ինչպես նաև՝ որոշ երկրների մեծածավալ էներգոռեսուրսների պահանջարկից) կախվածության շարունակականացրելու, հեռանկարային համեմատության ենթատեքստում: 2008թ. Կենտրոնական Եվրասիայում, նավթի հաստատված պաշարները կազմել են համաշխարհային պաշարների 3.6%-ը, Նավթ արտահանող երկրների կազմակերպությանը (ԱՄԵԿ- OPEC)- 77.2%-ի և Մերձավոր Արևելյան 56.6%-ի համեմատ (Այլ.-3.1): Ենթադրելի բոլոր պաշարների հայտնաբերման դեպքում անզամ, դրանք չեն կարող համեմատականորեն ծածկել ԱՄԵԿ-ի ու Մերձավոր Արևելյան երկրների, ինչպես նաև հեռանկարում նոր հայտնաբերվող համաշխարհային պաշարների ֆիզիկական և հարաբերական աճի դինամիկան (համապատասխանաբար՝ 13.9%, 1.8% և 12% վերջին վեց տարիներին) (Այլ.-3.1):

Աղյուսակ-3.1- Նավթի և բնական գազի ուսումնասիրված պաշարները Կենտրոնական Եվրասիայի երկրներում, Կատարյան ավագանում և որոշ տարածաշրջաններում-2008 թ.

	ՆԱՎԹԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ				ԲԱՐՁՐ ԳԱԶԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ			
	Ապրանքահած՝ Մլրդ. տուն		Ենթադր- վող # Մլրդ. տ. (EIA-2005)		Ապրանքահած՝ Տրիլիոն Մլրդ.՝ Մ ³		Ենթադր- վող # Տրիլիոն Մլրդ.՝ (EIA-2005)	
	%-ը աշխար- հեռմ*	%-ը աշխար- հեռմ*	%-ը աշխար- հեռմ*	%-ը աշխար- հեռմ*				
Ալբերտ	1.0	0.5	0	4.2	1.31	0.7	6.5	1.0
Ղազախստան	5.3	3.0	0.5	12.3	1.82	1.0	-0.5	2.5
Բարզմանան	0.1	0.06	0	5.1	8.1	4.3	212.7	12.0
Ռուսաստան	0.1	0.06	0	0.3	1.68	0.9	0.6	1.0
Շահանդ	6.5	3.6	0.5	21.9	12.91	6.9	76.4	14.3
Իրան*	0.014	-	0	2.0	0	-	-	0.3
Ուկրաինա	0.04	-	0	1.0	-	-	-	-
Լատվիա և Էստոնիա	16.7	9.2	0.4	-----	58.53	31.2	14.5	-----
ԱՄԵԿ (OPEC)	140.4	77.2	13.9	-----	-----	-----	-----	-----
Միջազգ. Արք	102.0	56.6	1.8	-----	76.18	40.6	6.2	-----
Եվրոպա և Եվրուստան	18.5	10.3	-3.2	-----	63.09	33.7	12.6	-----
ԱՀՀԱՄԱՐԴ-Ա	181.7	100	12.0	-----	187.5	100	10.5	-----

1- Կենտրոնական Եվրասիա- Ղարավային Կովկաս և Միջին Ասիա;

– Ապրանքահած համարվում են այն պաշարները, որոնց ծավալները բավականակի հոսանքորեն ապացուցված են երկրաբանական և ինժեներական հետազոտություններով և կարող են արդյունահանել ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններով; #Ենթադրվող են՝ ցածր ճշուրական հաշվարկված, հանրավայրերի հետագա ուսումնասիրման և նոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվող՝ նոր հավանական պաշարները; *-%-ը կրկացված են մեծացման ուղղությամբ; ^- Միայն Կատարյան պաշարները;

Արդյունքներ- BP Statistical Review of World Energy-June 2010; EIA-Caspian Sea Region: Survey of Key Oil and Gas Statistics and Forecasts- http://www.eia.doe.gov/emeu/cabs/caspian_balances.htm; Gaffney, Cline & Associates (GCA) announcements: on October 2008 &February 2009-London;


ՆԱԵԿ-ից դուրս գտնվող նավթի պաշարների տարածաշրջանային ամենախոշոր կուտակումն առկա է ԱՊՀ տարածքում (պաշարների ավելի քան 9%-ը և արդյունահանման 16%-ը 2008թ-ին), ինչը միասնական շուկայական քաղաքականության իրականացման դեպքում, կարող է թի թե շատ դրական դեր ունենալ միջազգային նավթաշուկայի՝ ՆԱԵԿ-ից լիակատար կախվածության ազդեցությունը մեղմելու առումով։ 1998-2008թ.-ին ՆԱԵԿ-ին չպատկանող երկրների նավթի արդյունահանումը նվազել է շուրջ 5%-ով, այն դեպքում երբ ԱՊՀ արդյունահանումն աճել է 73.5%-ով ծածկերով աշխարհում նավթի պահանջարկի աճի շուրջ 50%-ը[9]։ Մինչեւ, Կասպյան ավագանում աշխարհաքաղաքական մրցակցության, կամ «Նոր Մեծ Խաղի» սկզբնավորման հիմնադրույթը հենց շրջանի էներգակիրների տարանջատումն է Ռուսաստանի ազդեցությունից, որով կլիակատար կերպով պահպանվեց նավթ-քաղաքականությունը՝ բրիտանական հեղինակությամբ, քանաձնի կիրառելիության ավանդույթը։

Դետագութված և են թաղրվող պաշարների, ինչպես նաև արդյունահանման և արտահանման ընթացիկ մեծություններից բխում է, որ Կենտրոնական Եվրասիայում էներգակիրների արտադրության հիմնական դերակատարները հանդիսանալու են Աղրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը[9]։ Ուզբեկստանում՝ հետագութված և ենթադրվող, փոքրածավալ նավթային պաշարների առկայությունը տարածաշրջանում ամենախոշոր սպառման պայմաններում, կանխատեսելի են դարձնում երկրի ոչ նշանակալից հեռանկարային դերը նավթի արդյունահանման առունուկ (2008թ-ին նավթի արդյունահանումը՝ 1998թ-ի համեմատ նվազել է 41.5%-ով (Աղյ.-3.1.[9])։ Միաժամանակ, տարածաշրջանի անվտանգության համակարգում ծանրակշիռ ազդեցություն ունեցող Ուզբեկստանը, որոշակի դերակատարություն կարող է ունենալ բնական գազի արդյունահանման և արտահանման առունուկ (2008թ-ին գազի արդյունահանումը՝ 1998թ-ի համեմատ աճել է 25%-ով (Աղյ.-3.1 [9]))։

Կասպյան էներգակիրների շահագործման հիմնական առանձ-նահատկությունը դրանց արդյունահանման և առաքման բարձր արժեքն է։ Յանքավայրերի շահագործման և զարգացման տեխնիկական և տեխնոլոգիական դժվարությունների հետևանքով՝ Կասպյան հանքավայրերում արդյունահանվող նավթի արժեքը երեք անգամ զերազանցում է Պարսկական ծոցում հանվող նավթի արժեքին[15]։ Նկարներ - 3.1-ում և 3.2-ում բերված են 2010թ-ը Աղրբեջանի, Ղազախստանի և Թուրքմենստանի մինչև նավթի արդյունահանման և արտահանման (net) ծավալները, ինչպես նաև տարբեր հետազոտական աղբյուրների համադրմամբ, մինչև 2030թ-ը արդյունահանման և արտահանման (net) ծավալների հնարավոր փոփոխությունների կանխատեսումը՝ ըստ զարգացման հիմնային սցենարի*։ Զարգացման հնարավոր բոլոր սցենարների դեպքում, Կենտրոնական Եվրասիայի երկրներում նավթի


*- Յեօսանկարային կանխատեսումները հիմնականում կատարվում են երեք սցենարներով՝ Ցածր, Ջիմսային և Բարձր։

**Նկար-3.1- Կասպյան երկրներում նավթի արդյունահանումը և հեռանկարը՝ մլն. տ.
(հիմնային կանխատեսում)**



Աղյուսակ- BP Statistical Review of World Energy-June 2009; EIA- Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008. Cambridge Energy Research Associates (IHS CERA)-2009; Business Monitor International- 2009-2010- <http://www.researchandmarkets.com/index.asp>; www.eia.doe.gov/oiaf/aeo/; <http://www.rosinvest.com>; <http://www.kazenergy.com>;


**Նկար-3.2- Կասպյան երկրներում նավթի արտահանումը(net) և հեռանկարը՝ մլն. տ.
(հիմնային կանխատեսում)**



Աղյուսակ- BP Statistical Review of World Energy-June 2009; EIA- Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008. Cambridge Energy Research Associates (IHS CERA)-2009; Business Monitor International- 2009-2010- <http://www.researchandmarkets.com/index.asp>; www.eia.doe.gov/oiaf/aeo/; <http://www.rosinvest.com>; <http://www.kazenergy.com>;

արդյունահանման և արտահանման մեծությունը մնայու է համաշխարհային նավթարդյունահանման և արտահանումների 3-5%-ի սահմաներում, պահպանվելով միջազգային շուկայում իր ներկայիս ազդեցության մակարդակը[9-11]: Դամաձայն IEA կանխատեսումների, Կենտրոնական Եվրասիայում արդյունահանվող նավթը կազմելով համաշխարհային նավթարդյունահանման 4-5%-ը, 2030թ-ին, լավագույն դեպքում, կարող է ծածկել աշխարհում նավթի պահանջարկի աճի ընդամենը 10%-ը[8]: Այն որևէ նշանակալից ազդեցություն չի կարող ունենալ միջազգային նավթաշուկայում՝ ԱՄԵՐԻ-գերակա դիրքերի պահպանման առումով, որի նավթի արդյունահանումը 2002թ-ին կազմել է աշխարհում ընդհանուր հանույթի 40.8%-ը, 2008 թ-ին՝ 44.8%-ը, իսկ 2030թ-ին կարող է կազմել՝ 53-54%.ը [9,10]: Տարածաշրջանում նավթի իրական պաշարները համեմատելի են Լիրիայի պաշարների, կամ Կանադայի պաշարների կրկնապատճելի հետ [9,11] (Նկ.-3.3):

**Նկար-3.3- Կասպյան ավագանում նավթի հաստատված պաշարների և արդյունահանման համեմատական միջազգային դիրքը
(%-ներով՝ աշխարհում՝ 2008թ. ընդհանուր ցուցանիշների համեմատ)**



*Ըստզիված է Կասպյան տարածաշրջանի չորս երկրների պաշարները՝ Աղոքեցան, Ղազախստան, Թուրքմենստան և Ուզբեկստան:


Աղյուրներ՝ BP Statistical Review of World Energy-June 2009; EIA- Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008. www.eia.doe.gov/oiaf/aeo/

Ըստհանուր առմամբ, յինելով նավթով հարուատ տարածաշրջաններից մեկը և ունենալով ներդրուային որոշակի գրավություն, Կասպյան ավագանը և Կենտրոնական Եվրասիան՝ ոչ ներկայուան, և ոչ է հեռանկարուա, էականորեն չեն կարող ազդել միջազգային նավթաշուկայում ընթացող գործընթացների վրա: Աշխարհում նավթային ներդրումների հիմնավորվածությունը շարունակելու է պայմանավորվել՝ ոչ միայն շուկայական մեխանիզմների

թելաղրանքով, այլև հիմնականում քաղաքական և աշխարհաքաղաքական հարակից շեշտադրումներով։ Նավթային հիմնական ներդրումները շարունակվելու են կատարվել անկայունության բարձր աստիճան ունեցող նավթով հարուստ շրջաններում, որոնք համարվում են՝ կայունությամբ դրանցից առնվազն շահեկանորեն չտարրերվող, նոր՝ Կասպյան տարածաշրջանով։

Տարածաշրջանում հետազոտված և ենթադրվող պաշարների, ինչպես նաև արդյունահանման և արտահանման ընթացիկ մեծություններից բխում է, որ Կենտրոնական Եվրասիայում բնական գազի արտադրության հիմնական հեռանկարային դերակատարը հանդիսանալու է՝ **Թուրքմենստանը** (Աղյ.-3.1; Ակ.-3.4; 3.5; 3.6 & [[9]])

Նկար-3.4- Կասպյան երկրներում բնական գազի արդյունահանումը՝ մրդ. մ3.




Աղյուսակ- BP Statistical Review of World Energy-June 2009; ;General- Market Report (Azerbaijan, Kazakhstan, Turkmenistan and Uzbekistan Oil and Gas Reports- Q1 & Q2)- <http://www.companiesandmarkets.com/Summary-Market-Report/>- 2010; World Energy Outlook 2009 (Paris, France: International Energy Agency, 2009).

Բրիտանական Gaffney, Cline & Associates-ի (GCA) կողմից՝ Թուրքմենստանի Քարավային Իոլոտանիա-Օսման բնական գազի հանքավայրում* անցկացված՝ միջազգային չափանիշներին համապատասխանող,

*- Արգելութիւնաւ Bredas ընկերության վտարումից հետո (2003թ-ից իրականացվող հետազոտությունների արդյունքում ընկերությունը հայտարարեց հանքավայրի՝ ընդամենը 800 մլրդ. մ3 պաշարների առկաության մասին): Ակսած 2006թ նոյեմբերից, հանքավայրի հետազոտական աշխատաեքներն իրականացվում են՝ CNPC-ի կողմից, որը 2007-2008թթ. ընթացքում կատարեց 12 երկրաբան-հետախուզական հորատում: 2009թ-ի դեկտեմբերին CNPC-ն, հարավ-կորեական LG International Corp և Hyundai Engineering Co, Արարական Էմիրաթներից Gulf Oil & Gas Fze և Petrofac International Corp, կոնսորցիոնը՝ 9.7 մլրդ դրամով հաղթեց Քարավային Իոլոտանիա-Օսման հանքավայրի շահագործման և արդյունահանման համար հայտարարված տեսները[18,19]: Քանիքավայրը դեռևս ընդգրկված չէ Թուրքմենստանի պաշարների վիճակագրությունում:

Նկար-3.5- Կասպյան երկրներում բնական գազի արտահանումը՝ մրդ. մ3.




Սույնութեք- BP Statistical Review of World Energy-June 2009; ;General- Market Report (Azerbaijan, Kazakhstan, Turkmenistan and Uzbekistan Oil and Gas Reports- Q1 & Q2)- <http://www.companiesandmarkets.com/Summary-Market-Report/>- 2010; World Energy Outlook 2009 (Paris, France: International Energy Agency, 2009);

*- 2009 թ-ի տվյալները ճշգրտվել են նաև [24-26]; ^- 2010թ-ից հետո տվյալները հիմնականում IEA-ի 2009թ-ի տվյալներն են: Դաշտի են առնվել նաև տվյալ երկրների կառավարությունների կամխառեսումները [24-26];

Նկար-3.6- Կասպյան ավագանության գազի հաստատված պաշարների և արդյունահանման համեմատական միջազգային դիրքը (%-ներով՝ աշխարհում՝ 2008թ.)

(ընդհանուր ցուցանիշների համեմատ)



*Ընդունված է Կասպյան տարածաշրժականի չորս երկրների պաշարները՝ Ազերբյան, Ղազախստան, Թուրքմենստան և Ուզբեկստան: Սույնութեք- BP Statistical Review of World Energy-2009; EIA- Annual Energy Outlook 2008 With Projections to 2030, EIA-USA, June 2008. www.eia.doe.gov/oiaf/aeo/


առողջիւնի արդյունքում, հայտարարվեց [12-14], որ հանքավայրում բնական գազի պաշարները կարող են կազմել նվազագույնը 4 տրիլ. մ3, օպտիմալը՝ 6 տրիլ. մ3 և առավելագույնը՝ 14 տրիլ. մ3, ինչը համեմատելի է Ռուսաստանի խոշորագույն հանքավայրերի հետ[12-14]: Հանքավայրից կարող է արդյունահանվել մինչև 70 մլրդ. մ3 գազ: GCA-ը հետազոտել է նաև Յաշիլար հանքավայրը՝ գնահատելով առկա պաշարները 700 մլրդ. մ3-ից մինչև 1.5 տրիլ. մ3[13]: Տվյալ գնահատակենները համապատասխանում են Թուրքմենստանի բարձրագույն դեկավարության նախկինում հրապարակած տվյալներին և լիովին կարող են բավարարել Թուրքմենստանի ստանդանած բոլոր միջազգային պարտավորությունները*, որոնց առումով՝ նախկինում առկա էր տիրապետող անվտահություն: Այդ անվտահությունը հիմնականում հիմնավորվում էր, Թուրքմենստանում գազի արդյունահանման վերջին տարիների ոչ նշանակալից աճով, ինչպես նաև նախորդ հայտարարված պահանջման թերակատարմամբ[9]: Ներկայում, Թուրքմենստանը կարող է ապահովել մինչև 75 մլրդ. մ3 գազի արդյունահանում: Օսման հանքավայրի նույնիսկ նվազագույն (առավել ևս՝ օպտիմալ) պաշարների վերջնական հաստատման, ներդրումների և խոչը ընկերությունների ներգրավման դեպքում, Թուրքմենստանում ընական գազի արդյունահանումը կարող է կրկնապատկել արդին իսկ մոտակա հեռանկարում**:

Այս և այլ ենթադրելի պաշարների վերջնական հաստատման դեպքում Թուրքմենստանն, շուրջ 20 տրիլ. մ3 բնական գազի պաշարներով, կարող է դառնալ չորրորդ-հինգերորդը աշխարհում՝ վերածվելով բնական գազի միջազգային շոկայում ազդեցիկ դերակատարություն ունեցող երկրի: Այս դեպքում՝ ի տարրերություն նավթի, հեռանկարում Կասպյան տարածաշրջանը կարող է կարևորագույն դեր ունենալ բնական գազի համաշխարհային շոկայի՝ ավանդական կենտրոններից կախվածության աստիճանի նվազեցման առումով:

*- Թուրքմենստանը ստանձնել է հետևյալ պայմանագրային պարտավորությունները՝ ՌԴ (2003թ-ի պայմանագրով)- 50 մլրդ. մ3 -ից ամերով՝ մինչև -90 մլրդ. մ3 (2028թ-ին), 8 - 20 մլրդ. մ3 (մինչև 2018թ-ը)[16], ՉԺՀ՝ 2008 և 2009թթ. պայմանագրելով՝ 30-40 մլրդ. մ3 (2015թ-ին): Բարձրագույն մակարդակով, խոստացվել է 10 մլրդ. մ3 գազի առաքու ԵՄ NABUCO գազատարում: Ավելացնորեն արդյունահանման ամի ներկայիս տեմպերի պահպաման դեպքում Թուրքմենստանի համար շատ դժվար, եթե ոչ անհնարին, կինը կատարել իր միջազգային պարտավորությունները՝ օրինակ՝ 2015թ-ին: Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ օրինակ՝ ՉԺՀ արտահանվող գազի շորտ 50%-ի հանույցը հրականացնելու է շինական կողմը՝ Թուրքմենստանի Գեղիան շրջանից, որտեղ CNPC-ն միասնայա տնտրինում է 1.3 տրիլ. մ3 պաշարով զարգահանքի: Հայտարարվում են նաև նոր տեսներներ՝ խոչը ընկերությունների ներգրավմամբ, ինչը կարող է բերել արագ և նշանակալից փոփոխությունների արդյունահանման ամի տեմպերի առումով, և այլն[17](տես նաև՝ Նկ.- 3.7):

**- Ըստ 2010թ-ին Թուրքմենստանի կառավարության հայտարարված նոր տվյալների, Հարավային Խորտանիա-Օսման համբաւայրում գազի պաշարները կազմում են 16 տրիլ. մ3[18]: Աշխարհու պլանակիրելի է 2030 թ-ին եռապատճել գազի արդյունահանման ներկայի 75 մլրդ. մ3 ժամկետու, ընդորևելով նաև Կասպից ծովում հայտնաբերված նոր հանքավայրեր, որոնցում արդյունահանումը պլանավորված է հասցեի 10 մլրդ. մ3 արդին իսկ 2015թ-ին[18]:

Նկար- 3-7-Բնական գազի արտահանումների և դիվերսիֆիկացման Թուրքմենստանի պլանները և միջազգային կանխատեսումների համեմատություններ*



Հողովագայության Անուն	Առաջնակային ներքին արտահանում նախադիր մույն միավորներում	Այլ Նշանակը
Տրան-Ասիական գազառայի Թուրքմենստան-Ռուսական-Ղազախստան-Չինաստան (Կործառ)	40	2012-13թթ.
CAC: Կանոնութեական-Ասիա-Վեհարձի Թուրքմենստան-Ռուսական-Ղազախստան-Չինաստան (Կործառ)	45	+վերակառացնել?
Թուրքմենստան-Իրան՝ Կուզաքշ-Կորի-Կորի + Զարմարադ-Չինաստան (Կործառ)	14	+12- Ծորու- Անդրադ?
CCP: Մուզկաստան գազառայի Թուրքմենստան-Ղազախստան-Ռուսաստան (Լայնացիձ)	30	?
TAPI: Թուրքմենստան-Ավրաստան-Չակիստան-Հովհանստան (Լայնացիձ)	30	?
TCP: Տրան-Կասպիան գազառայի (Լայնացիձ)	30	?
ԸՆԴՀԱՄԵՐՆԵՐԸ	189	201 (+?)

*-Բոլոր դեպքերում, տեղեկատվության բաժինացիկության բացակայությունը, հնարավորության չի ընթանում հասնել համեմատաբար ճշգրիտ եղանակներում թուրքմենստան գազի դորոշի վերաբերյալ՝ նույնիսկ մոտակա հեռանկարի կանխատեսումների առում։

Աղյուսներ- BP Statistical Review of World Energy-June 2009; General- Market Report (Azerbaijan, Kazakhstan, Turkmenistan and Uzbekistan Oil and Gas Reports- Q1 & Q2)- <http://www.companiesandmarkets.com/Summary-Market-Report/>- 2010; World Energy Outlook 2009 (Paris, France: International Energy Agency, 2009); The Politics of Central Asian and Caspian Ambassador Richard Jones Deputy Executive Director International Energy Agency- Energy Chatham House, 23-24 February 2010

Ներկայումս, հաստատված համարվող պաշարների հաշվառման դեպքում (Թուրքմենստանի՝ 8.1 տրիլ. մ³ [9]) այնուամենայնիվ, Կենտրոնական Եվրասիայում գազի պաշարների և արդյունահանման միջազգային նշանակությունն որոշակի առավելություններով հանդերձ, ընդհանուր առմամբ, համարելի է այս տարածաշրջանի նավթի պաշարների համաշխարհային նշանակության հետ (Աղյ.-3.1; Նկար-3.4;3.5;3.6 և 3.7): Չնայած որ, Ներդրումային օպտիմալ քաղաքականության իրականացման ջանքերի գործադրման դեպքում, Թուրքմենստանը, նաև այս դեպքում, տեսականորեն կարող է ապահովել նախկինում իր ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը (ամենայն հավանականությամբ ժամկետային զգայի տեղաշարժմամբ), այնուամենայնիվ, տարածաշրջանի երկրներում ներկայում հաստատված նավթի և գազի ընդհանուր պաշարները (3.6% և 6.9%) և արդյունահանումը (3.3% և 5.6%) նշանակայիրեն փոքր են՝ նույնիսկ արանձին վերցրած Սաույան Արարիայի, Ռուսաստանի, Իրանի, Ջաթարի, Ջուվերի և այլ ավանդաբար էներգակիրներ արդյունահանող երկրների հետ համեմատ և այդպիսին կարող են մնալ նաև տեսանելի հեռանկարում[9]:

Դամաձայն փորձագիտական կանխատեսումների[28,29], 2020թ-ից Ղազախստանի քնական գազի ներքին սպառումը կարող է հասնել շուրջ 25-30 մլրդ. մ³ և երկրի հիմնական խնդիրը կիխնի արտաքին ներմուծումներից ուղղակի կախվածության հաղթահարումը, որը 2004թ-ի 71%-ից, նվազելով՝ 2007թ-ին կազմել է 34%[31,32]: Ներկայումս, Ղազախստանն ընդհանուր ներմուծում է 7.2 մլրդ. մ³ գազ Ուզբեկստանից, Թուրքմենստանից և Ռուսաստանից[31,32]: Ղազախստանի գազի պաշարներին արդյունահանման զգայի մասը՝ շուրջ 45%, հանդիսանում է նավթի արդյունահանման ուղեկից, և երկրում գազի հետագա հանույթի ծավալները գգայիրեն կախված կիխնեն նավթահանքերի շահագործման և նավթավերամշակման գործընթացների գարգացումներից[32]: Դամաձայն պաշտոնական հետազոտությունների թենգիզ և Կաչագան նավթահանքերից սպասվող գազի արդյունահանմամբ, երկրում գազի հանույթը՝ արդեն իսկ 2015թ-ին, կարող է կազմել 60-80 մլրդ. մ³ [33,34]: Այնուամենայնիվ, ավելի հավանական են թվում, միջազգային փորձագիտական կանխատեսումները, ըստ որոնց՝ արդյունահանման այդ մակարդակը հասանելի կիխնի 2030թ-ին, որի դեպքում՝ Ղազախստանից արտահանվող քնական գազի ծավալները կարող են կազմել մինչև 30-40 մլրդ. մ³, որից՝ 5-10 մլրդ. մ³-ը 2013թ-ից հետո, արտահանելու է ԶՃ՝[28,29]: Աղրբեջանը Հակ Ղենիս-2 շահագործմամբ, քնական գազի արտահանման ծավալները կարող է հասցնել մինչև 25 մլրդ. մ³ (Աղրբեջանի կանխատեսումները 30-35 մլրդ. մ³) [28,29]: Ամենայն հավանականությամբ, 2020-2030թ-ին, Թուրքմենստանում գազի արտադրության իրատեսական ծավալները կարող են կազմել 120-150 մլրդ. մ³, արտահանման՝ 100-130 մլրդ. մ³ ծավալներով[28-30]: Ուզբեկստանի արտահանման ծավալները չեն կարող նշանակայիրեն փոփոխվել և կարող են կազմել շուրջ 20 մլրդ. մ³, որից 8-10 մլրդ. մ³-ը արտահանվելու է Չինաստան[28,29]:


Բնական գազի գլոբալ մատակարարման առումով. Կասպյան շրջանի նշանակության և ազդեցության աստիճանը որոշվելու է տարածաշրջանում հանքավայրերի հետազոտման և արդյունահանման ոլորտում կատարվող արտադրին Ներդրումների, ինչպես նաև թնական գազի միջազգային շուկա արտահանման վստահելի ուժիների և ենթակառուցվածքային համակարգի գարգացման մակարդակով։ Դա պայմանավորված է լինի առաջին հերթին շրջանից թնական գազի հիմնական արտահանող երկրի՝ Թուրքմենստանի հանքավայրերի իրական ծավալների ծզգրտման, դրանց արդյունավետ շահագործման և արտահանման հավասարակշիռ ռազմավարության իրականացման կարողությունից։ Թուրքմենստանի գազի ոլորտում Ներկայում առաջացած դժվարություններն ու կանխատեսելիության սահմանափակումները պայմանավորված են ոչ միայն՝ Կասպից ծովի կարգավիճակի համաձայնեցման հիմնախնդրի ցուծվածությամբ և status quo-ի պահպանման Ռուսաստանի կանխարգելիչ աշխարհաքաղաքական և էներգետիկ ռազմավարությամբ, այլև՝ գուցե և առաջին հերթին, արտերկրյա Ներդրումների հեռանկարության երաշխավորվածության համար ոչ գրավիչ մթնոլորտի առկայությամբ, ինչպես նաև պաշարների առումով առկա անորոշություններով։ Հրջանում գազի երկրորդ խոշոր արդյունահանող երկրի՝ Ուզբեկստանի սպառման պահանջների շարունակական աճը հետագայում նույնպես սահմանափակելու է երկրից թնական գազի արտահանման ծավալները՝ նշանակալիորեն չփոփոխելով արտահանման Ներկայիս մակարդակը։ Դազախստանի և հատկապես Աղրբեջանի գործադրած ջանքերը՝ թնական գազի միջազգային շուկայում ակտիվ դերակատարության ստանձնման առումով, մշտապես պայմանավորվելու է Թուրքմենստանից գազառաքան ծավալներից և ուղղությունների ընտրությունից։ Ներկայում տարածաշրջանից գազի արտահանման գերակա ուղղության՝ Ռուսաստանից², և սահմանափակ քանակներով Վրաստան և Թուրքիա առաքումներից բացի, գործող և գարգացող գիշավոր ուղղությունը Չինաստանն է։

* Ռուսաստանը՝ վերջին մի քանի տարիներին, Թուրքմենստանից Ներմուծում էր շուրջ 50 մլրդ. մ³ թնական գազ։ 2009թ.-ի ապրիլին ԿԱԿ հիմնական գազատարի պայթյունից հետո թուրքմենական գազի Ներմուծումը նվազեց 80-90%-ով, երբ կրկնմերը այդպես է չկարուցած համաձայնեցնել առաքման ծավալներ և գինը [21-22]։ 2009թ.-ի դեկտեմբերին՝ ՌԴ Նախագահ Դ. Մենքենի Աշխարհա այցի ընթացքում, կողմերը պայմանավորվեցին 2010թ-ի հունվարից վերականգն գազառաքանը՝ տարեկան 30 մլրդ. մ³ ծավալներով։ Ծավալների նվազեցումը Գազպրոմի կայմից բացատրվում է ԵՄ-ում և Ուկրաինայում գազի օգտագործման պահանջարկի նվազեցմամբ։ 2010թ-ին կանխատեսվում է Թուրքմենստանից գազի արտահանման հետևկալ ծավալները՝ 6-6.5 մլրդ. մ³՝ Իրան, 5-7 մլրդ. մ³՝ Չինաստան և 30 մլրդ. մ³՝ Ռուսաստան [21-23]։ Ըստ 2010թ-ի ապրիլի տվյալների, այսուամենայնիվ, Գազպրոմը տարվա ընթացքում կարող է Ներմուծումից ընդամենը 10.5 մլրդ. մ³ գազ Թուրքմենստանից և ընդհանուրը 25 մլրդ. մ³ Միջին Ասիայից, որից 14.5 մլրդ. մ³՝ Ուզբեկստանից [27].

3.2.- Կենտրոնական Եվրասիայի էներգոռեսուրսների գլխավոր դերը, սպառման հիմնական շուկաների համար

Սպառման հիմնական շուկաների՝ ԱՄՆ, Եվրոպա, Չինաստան, Ճապոնիա և Չինակաստան, մեծ հեռավորությունը Կասպյան շրջանից, առաջման առկա համակարգերի վերագրծարկման, վերականգնման և հզորությունների ընդարձակման, ինչպես նաև նոր ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը նշանակայի ազդեցություն ունեն ոչ միայն էներգակիրների շուկայական արժեքների ծևավորման վրա, այլև հիմնարար նշանակության գործոններ են էներգակիրների ներկրման ծրագրերում ընդունելի լուծումների հասնելու և դրանց իրագործելիության հնարավորությունների առօնությունը: **Կենտրոնական Եվրասիայի էներգոռեսուրսների գլխավոր դերը սպառման հիմնական շուկաների համար դրանց ունեցած կարևորագույն նշանակությունն է էներգակիրների ներմուծման աղբյուրների դիվերսիֆիկացման առօնությունը:** Էներգոռեսուրսների հեռանկարային պահանջարկի աճի (կամ նվազման) տեսաբերի տարրերություններով հանդերձ (տես օր. Նկ-1.15), էներգոսպառման հիմնական կենտրոններն ընդհանուր առմամբ ունեն նույն հիմնախնդիրները՝ էներգակիրների տեղական արդյունահանման նվազման (կամ տեսանելի ապագայում ոչ նշանակայից աճի) հետևանքով, արտաքին ռեսուրսների ներմուծումից կախվածության աճը (կամ՝ տեսանելի ապագայում, կախվածության ներկա աստիճանի պահպանումը) (Նկ.-3.8 & [35]): Որպես հետևանք, էներգիայի դիվերսիֆիկացումը հանդիսանում է այդ կենտրոնների էներգետիկ անվտանգության ապահովման ռազմավարության գլխավոր հիմնադրույթը: Այն իր մեջ ներառում է երեք հիմնական ասպեկտներ. ընդհանուրապես էներգիայի արտադրության ներքին աղբյուրների դիվերսիֆիկացում; մատակարարման արտաքին աղբյուրների դիվերսիֆիկացում, ինչպես նաև՝ մատակարարման ուղիների դիվերսիֆիկացում [36,37]: Սպառման հիմնական կենտրոնների համար թվարկված ասպեկտներից յուպարանցուցն ունի իրագործելիության և հիմնավորվածության տարրեր աստիճան, ինչը բազմաթիվ այլ գործոնների հետ մեկտեղ, նախ և առաջ պայմանավորված է էներգաօպտավագործման արդյունավետության բարձրացման և օպտիմալացման, ինչպես նաև էներգակիրների մատակարարման աղբյուրների և ուղիների անվտանգության ապահովման առօնմներով՝ տվյալ կենտրոնի համար հասանելի կարողությունների մակարդակով: Դրանից մասնավորապես կարող է ըստ էներգակիրների տվյալ տեսակի (նավթ կամ թնական գազ), մատակարարման կոնկրետ աղբյուրի և նրան շաղկապված առաջման ուղիների նշանակության և առաջնայնության աստիճանը՝ սպառման տվյալ կենտրոնի համար: Որպես էներգակիրների զգայի պաշարներ ունեցող նոր ծևավորվող աղբյուր՝ Կասպյան ավազանն ընդհանրապես և Կենտրոնական Եվրասիան մասնավորապես, դեռևս 90-ականների սկզբներին թնականորեն հայտնվեցին էներգոսպառման հիմնական կենտրոնների ուշադրության կենտրոնում:

Նկար-3.8.- Սպառման Պաշարների Գլոբալ Տեղաբաշխություն



Աղյուսներ-BP Statistical Review of World Energy-June 2009; Eytan D.- Group Head of Research and Technology, BP Role of oil in the world's energy supply to 2050;

ԱՄՆ էներգետիկ անվտանգության առումով առկա են երկու հնարավոր հիմնական արտաքին մարտահրավերներ՝ մատակարարող երկրների կողմից արտադրության և առաքումների կանխամտածված խզումը և առաջացած նոր մրցակիցների կողմից դիտարկվող նախագծերի իրականացումը: 70-80-ական թվականների նավթային ցնցումները պետությանը, նավթային ընկերություններին և արդյունաբերողներին մղեցին ՆԱԵԿ-ի ոչ անդամ երկրներից մատակարարումների և էներգիայի այլընտրանքային ոլորտներում ներդրումների ծավալմանը, ինչի հանատեքստում էլ կարող է գնահատվել Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների նշանակությունը ԱՄՆ համար: Որոշակի խնդիրներ առաջանում են նաև սավթաշուկայում գնային նշանակալի աճի դեպքում: Արդեն իսկ 1998 թ-ին, հիմնականում նավթի ներմուծումներից բարձր կախվածություն ունեցող ԱՄՆ հետազոտողները հանգեցին այն եղուակացության, որ Կասպյան տարածաշղթանում՝ 2010 թ-ին սպասվող նավթի համաշխարհային արդյունահանման՝ 3-4 %-ը կազմող հանույթը [3,4], չնայած ապագայում կարող է ունենալ կարևոր դիվերսիֆիկացիոն նշանակություն*, այնուամենայնիվ, չի կարող

*- 2008 թ-ին Կասպյան շրջանից ԱՄՆ նավթի ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման մոտ 0.7% (Աղյուսներ՝ 3.68 մլն. տ.; Ղազախստան՝ 0.6 մլն. տ. և Թուրքմենստան՝ 0.1 մլն. տ.), 2009 թ-ին մոտ 1% (Աղյուսներ՝ 3.7 մլն. տ.; Ղազախստան՝ 1.8 մլն. տ. և Թուրքմենստան՝ 0.1 մլն. տ.) [45]: Ներմուծումները կարող են աճել շոշափելիորեն՝ Ղազախստանում նավթի արդյունահանման ծավալների սպասվող նշանակալի մեծացման հետևանքով[24]:

շոշափելիորեն նվազեցնել Պարսից Ծոցից կամ Մերձավոր Արևելից նավթից ԱՄՆ-ի կախվածությունը [7]: ԱՄՆ-ում առկա են ներքին էներգաօգտագործման օպտիմալացման ամենաժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես նաև էներգակիրների մատակարարման աղբյուրների և ուղիների անվտանգության ապահովման կարողությունների ամենաբարձր մակարդակն աշխարհում: Մյուս կողմից, նավթային գործոնն ավանդաբար հանդիսանում է ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնայնություններից մեկը և էներգաօեսուրսների հասանելիությանազատությանապահովության հիմնարար առաջնահերթություններից է: Այս առումով, դեռևս 1996թ-ի ԱՄՆ «կենսական կարնորություն ունեցող շահերի» գոտում Կասպյան տարածաշրջանի ընդունումը[38], շրջանի էներգաօեսուրսների նկատմամբ ԱՄՆ կողմից ցուցաբերվող հետաքրքրության ու տարածաշրջանում ներգրավվածության բարձր աստիճանը, համահունչ է ԱՄՆ էներգետիկ ռազմավարությունը: Բայց և այնպես էներգակիրների պաշարների և դրանց արտահանման ծավալների առումով, տարածաշրջանում ԱՄՆ ներգրավվածության բարձր աստիճան հիմնականում հանդիսանում է Եվրասիայում ընթացող գլոբալ չափանիշներով տեղաշարժերի հետևանք և առաջին հերթին ունի աշխարհաքաղաքական հիմնավորվածություն[39-44]: ԱՄՆ ներգրավվածության տնտեսական բաղադրիչը, գլխավորապես պայմանավորվում է ամերիկյան նավթային ընկերությունների՝ էներգաօեսուրսների հետազոտման, արդյունահանման և առաքումների ենթակառուցվածքներում կատարած ներդրումների և ունեցած մասնաբաժինների՝ ակնհայտորեն բարձր մակարդակով[9.]:

Մերձավորարևելյան շրջանի՝ հետևաբար նաև Մալակկա նեղուցով անցնող ներմուծումներից բացառիկ կախվածությամբ ճապոնիայի համար (օրինակ՝ նեղուցով ներմուծվում է նավթի շուրջ՝ 90%-ը[46]), կարևորագոյն նշանակություն ունի էներգաօեսուրսների դիվերսիֆիկացման որևէ հնարավորություն: Չնայած, էներգաօգտագործման օպտիմալացման ամենաժամանակակից տեխնոլոգիաների առկայությանը, էներգակիրների մատակարարման աղբյուրների և ուղիների անվտանգության ապահովման ճապոնիայի կարողությունների աստիճանը տեսաների ապագայում որոշվելու է ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունների համատեքստով, և կամ պայմանավորվելու է առաջման կենտրոնների տնտեսական շահագրգությունների մակարդակով:

Դեղկաստանի էներգաօեսուրսների աճող պահանջների բավարարման համար, Կասպյան շրջանն ունի նկատելի աշխարհագրական առավելություններ: Չնայած դրան, չափազանց ցածր է էներգակիրների մատակարարման պլանավորվող Թուրքմենստանից Ավշանստանով և Պակիստանով անցնող (ԹԱՊՀ- գազատար), ենթակառուծվածքների անվտանգության ապահովման, և առավել ևս՝ շահագրդման հոսանքության աստիճանը: ԹԱՊՀ- գազատարը տարածաշրջանում ԱՄՆ կողմից աջակցվող նախագծերից մեկն է, որի աշխարհաքաղաքական ենթատեքստը

տարածաշրջանում Հնդկաստանի ներգրավվածության մեծացումն է՝ ի հակակշի Չինաստանի: Մինչդեռ, ԹԱՊՀ- գազատարի նկատմամբ հենց Չինաստանի հնարավոր հետաքրքրությունը և նրա հետ Հնդկաստանի հետագա համագործակցության հնարավորությունը կարող է բարձրացնել գազատարի իրագործելիության աստիճանը հատկապես Պակիստանի հատվածում: Միաժամանակ, մերձավորարևելյան շրջանից Ներմուծության անվտանգության աստիճանը համեմատաբար բարձր է և մասնավորապես չեն առաջանում Մալակա Ներդուցով անցման հիմնախնդիրները, որոնք չափազանց կարևոր են ճապոնիայի և Չինաստանի համար:

Չնայած, Ներքին էներգաօգտագործման օպտիմալացման և արտադրության Ներքին աղբյուրների դիվերսիֆիկացման ամենաժամանակակից տեխնոլոգիաների առկայությանը*, էներգակիրներին ներմուծությունից Եվրոպայի կախվածությունն ակնհայտորեն գնալու շարունակական ամբի ուղղությամբ՝ Հյուսաբային ծովում նավթի և գազի արդյունահանման նշանակայի նվազման հետևանքով**[9,35]: Եվրոպայի նավթի և հեղուկացված բնական գազի LNG Ներմուծման հիմնական աղբյուրների և մատակարարման ուղիների անվտանգության ապահովման աստիճանը լիովին համապատասխանում է ԱՄՆ նույն չափանիշներին: 70-ական թվականներին առաջացած նավթային գորաթափնաժամից հետո ստեղծվածնավթառացումների գործողականությանը առնամբ կարողանում է ապահովել մատակարարությունը ընդհանուր առնամբ կարողանում է ապահովել մատակարարությունը հուսալիության և անվտանգության ապահովման ներկայում հնարավոր հասանելի ամենաբարձր աստիճան: Նավթի մատակարարման աղբյուրների արդեն իսկ առկա տարանջատվածությունը այդ կենտրոններից նույնիսկ որոշ մասի առաջումների խաթարումների դեպքում, կարող է երաշխավորվել Եվրոպայի համար նավթառաջումների անվտանգության թիզ թե շատ բավարար մակարդակ: Բոլորովին այլ է Եվրոպայի բնական գազի մատակարարման հիմնական միջոցի խողովակաշարային առաջումների, անվտանգության, և առավել ևս՝ շահագործման հուսալիության անհրաժեշտ աստիճանի ապահովման հարցը: Յետագա երկու տասնամյակների ընթացքում Եվրոպայում բնական գազի պահանջարկի կանխատեսվող աճի*** մեծ ծավալների մատակարարման հուսալիության և անվտանգության ապահովումը պայմանավորվում է առաջումների հեռավոր նոր աղբյուրների ընդգրկման և ենթակառուցվածքային նոր համակարգերի ծևավորման կարողություններով: Եվրոպայի, ինչպես և Եվրոպայի մյուս հիմնական սպառողների համար առաջանում է բնական գազի

*- ԵՄ-ը հանդիսանում է գլոբալ լիդեր վերականգնվող էներգիայի ներկայիս կիրառմամբ, որը կազմում է աշխարհում ընդհանուր օգտագործման շուրջ՝ 60%-ը. 20-30 Մյույ Եվրո Շրջանառությամբ:

**- 2007թ-ին, 2001թ-ի համեմատ՝ նավթի հաստատված պաշարները նվազել են շուրջ՝ 30%-ով, բնական գազինը՝ շուրջ՝ 28%ով, արդյունահանումը՝ նավթինը՝ 25%-ով, բնական գազինը՝ 19%-ով [9]:

***- Համաձայն կանխատեսումների ենթադրվում է, որ 2030թ-ին ԵՄ նավթի պահանջարկը գրեթե պահպանվեցու է ներկային՝ 13 մբ. բարեխօր. մակարդակը, մինչդեռ բնական գազի պահանջարկը կարող է ամեն շուրջ 38%-ով, 2030թ-ին հասնելով՝ մոտ 681 մյու. մ3 -ի [9,11,35,47]:

արդյունահանման - սպառման նոր շղթաների ձևավորման անհրաժեշտություն, որոնք ոչ միայն ֆիզիկական հեռավորությունների, այլև ուղեկից բարդությունների և ռիսկերի առումներով, նշանակայիրեն գերազանցում են մինչև այժմ հայտնի և նման շղթաների համար յուրահատուկ դժվարությունների մակարդակը: Գաջի տեղափոխման առանձնապես խողովակաշարային, օգտագործման և պահեստավորման առանձնակի ճկուն մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը ենթադրում է երկարաժամկետ և անխափան մատակարարությունների իրականացման վճռական նշանակությունը: Առաջման պայմաններ, ժամկետները առաջը և տարանցիկ երկրների փոխհարաբերությունների մակարդակը այդ երկրներում ու դրանք ընդգրկող տարածաշրջաններում կայունության ապահովման և աշխարհաքաղաքական տեղաշարժերով պայմանավորված գործուների ողջ բազմությունն ու յուրաքանչյուր տարրը և դրանց գուգորդումը կարող են որոշչի նշանակություն ունենալ կոնկրետ ժամկետներում հաստագի մատակարարությունների ապահովման առումով:

Եվրոպայի ընական գազի մատուկարարման հիմնական աղբյուրներից մեկը եղել է և տեսանելի ապագայում մնալու, Ուսաստանի* գազատարներով ներմուծվող գազը, որոնցով և ներկայում իրականացվում է նաև Կասպյան շրջանից հիմնական առաքումները**: Ակնհայտ է նաև, Եվրոպական շուկայի պահպանման նշանակությունը Ուսաստանի համար, որի ներմուծումները ոչ ճգնաժամային պայմաններում կազմում են ՌԴ-ից ընական գազի ընդհանուր արտահանման 86%-ից ավելին**[9,54]:

2006 և 2008 թթ. ձմռանն առաջացած ռուս-ուկրաինական տարածայնությունները, ԵՄ-ում էապես ամրապնդեցին գաղի մատակարարման դիվերսիֆիկացման առաջնահերթության և անհետաձգելիության անհրաժեշտությունը՝ ՌԴ-ից ներմուծումներից կախվածության աստիճանի նվազեցման նպատակով, որը որպես հիմնախնդիր, ընդհանուր առմամբ, ձևավորվել էր էներգետիկիների հատկապես բնական գազի, մատակարարման գերակա ոդիքերի ձևավորման և ամրապնդմանն ուղղված Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության առանձնահատկությունների, ինչպես նաև ԵՄ աշխարհաքաղաքական հետաքրքրությունների ենթատեքստում [37, 48-53]:

Ճիշտ հասկանայու համար Ո՞Դ-ից իրականացվող գազա-
մատակարարությունների դերն ու Նշանակությունը Եվրոպայի համար
անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ

* - Ուսաստանից ուղակի ներկրության ներկայում կազմում են ԵՄ ընդհանուր պահանջարկի շուրջ 25%-ը. 2010թ-ին սպասվում է մոտ 26.5%՝ 2020թ-ին՝ մոտ 28%-ը՝ 180-200 մլրդ. մ³ ծավառով [9,11,35,47]:

**- 2008թ-ին Կենտրոնական Ասխայից ՈԴ Ներմոծումը կազմել է 60.4 մլրդ. մ³ . ՈԴ ընդհանուր արահանումը՝ 183.7 մլրդ. մ³- որից՝ ԵՄ՝ 158.2 մլրդ. մ³ (86.1%), 2009թ-ին այդ ծավալները համապատասխանաբար կազմել են՝ 35.8 մլրդ. մ³ և 167.1 մլրդ. մ³. որից՝ ԵՄ արտահանումը՝ 119.5 մլրդ. մ³(71.5%) [54]:

Հնայած Ռուսաստանը հանդիսանում է գաղի ամենախոշոր արտահանողը ԵՄ, այնուամենայիվ, 1980թ-ից հետո քնական գաղի Եվրոպայի պահանջարկի աճի 80%-ի Ներմուծումն ապահովվել է այլ երկրներից՝ Նորվեգիա, Ալժիր, Նիգերիա, և մերձավորարևելյան տարածաշրջանից[9]: Ո՞Դ ենթակառուցվածքներով ԵՄ երկրներ արտահանվող գաղի մասնաբաժնը նշանակալիորեն նվազել է 1990թ-ի ընդհանուր ներմուծման 75%-ից, հասնելով 40%-ի 2008թ-ին, որը կազմում է ԵՄ քնական գաղի ընդհանուր պահանջարկի շուրջ 33%-ը և առաջնային էներգիայի պահանջարկի շուրջ 6.5% -ը[9,55,56]: Դա էապես ցածր է ՆԱԵԿ նավթի արտահանումներից գորալ կախվածության աստիճանից. որի մասնաբաժնը առաջնային էներգիայի պահանջարկում կազմում է ավելի քան 10%: Դամեմատության համար պետք է նաև նշել, որ նպատակային ռազմավարության կիրաօնման դեպքում՝ ընդհանուր առմամբ, քնական գաղի «փոխարինելիության» տեխնոլոգիական հնարավորություններն ու աստիճանն ավելի մեծ է, քան նավթինը որը բացառիկ գերակայություն ունի Եվրոպայի տրանսպորտային համակարգում:

Միաժամանակ, կարևոր նշանակություն ունեն նաև Ռուսաստանից Ներկըրվող գաղից՝ ԵՄ անդամ երկրների կախվածության մակարդակներում առկա տարրերությունները: Արևելածվորպական երկրների գաղի շուկան փոքրածավալ է, քայլ ունի Ո՞Դ-ից կախվածության բարձր աստիճան, այն դեպքում, երբ արևատաելուապական երկրների շուկաներն ապահովված են դիվերսիֆիկացման բարձր աստիճանով, քայլ ներմուծում են Ռուսաստանից առաջնորդ ծավաների հիմնական մասը*: ԵՄ-ում գաղի միասնական շուկայի բացակայությունը և ԵՄ անդամ երկրների համար Ռուսաստանից Ներկըրվումների անհամասեռ ազդեցությունն ու դերի և նշանակության գնահատման տարրերություններն էական ազդեցություն ունեն՝ ԵՄ և Ո՞Դ միջև գազային խնդրի քաղաքականացման առումով[56,57]:

Եվ չնայած, սկսած ԽՍՀՄ ժամանակներից տամանամյակներ շարունակ, Ռուսաստանը հուսալիորեն ապահովել է Եվրոպայի գազամատակարարումը և ակնհայտ է երկլողմ համագործակցության զարգացման շահագործվածության առկայությունը, այնուամենային՝ Ներկայումս ԵՄ-ը և Ո՞Դ-ը էներգետիկ հարաբերություններում առկա է խորքային ասիմետրիկություն: Ըստհանուր առմամբ, առաջնանայով գորայ աշխարհաքարարական տեղաշարժերի և մասնավորապես՝ էներգոանվտանգության ընկալումների արդի փոփոխությունների հետևանքով, նման ասիմետրիկության առկայությունն առաջին հերթին պայմանավորված է՝ ինչպես իր ուղղակի գազառաքանումների և կենտրոնական Ասիայից տարանցիկ տեղափոխումներում ունենալիք դերակատարության հավակնությունների առումներով Ռուսաստանի ներկա ըմբռնումներով ու մոտեցումներով, այնպես էլ ԵՄ անդամ երկրների կողմից Ո՞Դ-ից ներմուծումների նշանակության և ազդեցության անհամասեռ ընկալումներով: Պետության և էներգաընկերությունների

* Օրինակ Գերմանիան և Իտալիան Ռուսաստանից գաղի ամենախոշոր ներկրողներն են ԵՄ-ում և ներմուծում են Ո՞Դ-ից ԵՄ առաքվող գաղի շուրջ կեսը [9, 55]:

ինտեգրման աստիճանի, էներգետիկ ոլորտում մոնոպոլիաների, գների ծևակորման, եկամուտների և ներդրումների նկատմամբ առկա վերաբերմունքի և իրականացվող քաղաքականության առումներով՝ ԵՄ և ՌԴ մոտեցումներում առկա տարբերությունները նպաստավոր չեն վստահության մթնոլորտի ծևավորման ու ամրապնդման, ինչպես նաև հիմնախնդիրների լուծման ուղղված գործադրվող դիվանագիտական ջանքերի շնորհիվ հաջողության հասնելու համար:

Վերջարադրյալ հիմնավորում է Եվրոպայի համար բնական գազի մատակարարման արյուրների և ուղիների ոիվերսիֆիկացման հիմնախնդիրի կարևորագույն նշանակությունը էներգուանվտանգության ապահովման առումով: Չնայած տարբեր աղյուրների ուղիների առկայությանը, Կենտրոնական Եվրասիան, էներգոռեսուրսների, հատկապես բնական գազի իր զայի պաշարներով, յուրահատուկ և կարևոր նշանակություն ունի Ռուսաստանի գազամատակարարություններից կախվածության աստիճանի նվազեցման, ինչպես նաև Եվրոպայի գազամատակարարման ոիվերսիֆիկացման միջոցով ներմուծումների հոսանքության և ճկումության ապահովման առումով: Եվրոպայի համար Կենտրոնական Եվրասիայից էներգոռեսուրսների տեսակների ներմուծման նշանակության ոչ ֆորմալ աստիճանակարգման իմաստով, շոշափելի է բնական գազի գերակայությունը նավթի անհրաժեշտության համեմատ: Չնայած դրան, նավթի ներմուծումների ոլորտում իրականացված (ԲԹՁ նավթամուղը) և ընթացիկ նավթային ծրագրերի իրագործելիության հնարավորությունները շատ ավելի բարձր են, քան բնական գազի ոլորտում նախագծերը:

Էներգիայի ոիվերսիֆիկացումը հանդիսանում է նաև Զինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման ռազմավարության առանցքային հիմնադրությը: Էներգիայի պահանջարկի արագընթաց աճը, էներգոարտադրության ներքին աղյուրների ոիվերսիֆիկացման և երկրու էներգոօգտագործման արդյունավետության բարձրացման ու օպտիմալացման տեխնոլոգիական կարողությունների սահմանափակումները, աննախադեպ ժողովրդագրական իրավիճակով պայմանավորված գործոնների առկայությունը որոշակիորեն նպաստում են էներգակիրների՝ արտաքին աղյուրներից մատակարարությունների ազդեցության և նշանակությանը բարձրացմանը (տես-Գլուխսեր-1-ըև2-ը): Առկապահանջարկի 54%-ը կազմող ու հեռանկարում 70%-ի հնարավոր գերազանցմամբ՝ արտաքին աղյուրներից ներմուծվող նավթի 80%-ի առարկում այլ երկրների կողմից վերահսկվող և Մայակիա նեղուցով անցնող ծովային ուղիներով, Զինաստանի համար նավթառաքաման անվտանգությունը դարձնում է առաջնահերթ խնդիր: Զինաստան ներմուծվող նավթի ծավալներու մերձակորարնեցյան մասնաքածին չափազանց բարձր մակարդակը տարածաշրջանում առկա արդի ուժային բավանդի պայմաններում, որտեղ ակնհայտ է ԱՄՆ-ի վերահսկողության ռազմավարական գերակայությունը՝ սկսած Ներմեսի նեղուցից, կարող է ընկալվել որպես ԶՃ՝ էներգոռեսուրսների

մատակարարման խոցելիության հիմնավորում: Չափազանցություն չի լինի պնդելը, որ Նման խոցելիության նվազեցումը լինելու է ԶԺԴ էներգետիկ անվտանգության ռազմավարության գերակա առաջնահերության հիմնախնդիրը:

Որպես ածովի ալտերնատիվ, երկրում բնական գազի օգտագործման ծավալումը, հատկապես էներգիայի արտադրության և բնակչության սպասարկման ոլորտներում, հանդիսանում է ԶԺԴ էներգիայի ազգային քաղաքականության և ռազմավարության կարևորագույն ուղղություններից մեկը: Կամխատեսվում է, որ մինչև 2030թ. բնական գազի գլոբալ օգտագործման ծավալները տարեկան աճելուն շուրջ 2%-ով, և ներկայիս 3.1 տրիլ. մ3-ից հասնելու է մինչև 4.5 տրիլ. մ3[9,58]: Գլոբալ աճի կեսը կազմելու է Ասիայի մասնարաժինը, որի կեսը պայմանավորվելու է Չինաստանում պահանջարկի մեծացմանը[58]: Միջինացված կամխատեսվումներով, արդեն իսկ 2020թ-ին ԶԺԴ բնական գազի պահանջարկը կազմելու է շուրջ 200 մլրդ. մ3, որից 140 մլրդ. մ3-ը պահանջարկում է արդյունահանել երկրում, ներմուծել 20 մլրդ. մ3-ը LNG, իսկ մնացած 60 մլրդ. մ3-ը՝ ներմուծել խողովակաշարերով[9,28,29,35]:

Էներգակիրների ներմուծումներից հարածուն կախվածությամբ, առաջման աղբյուրների և մատակարարման ուղիների անվտանգության ապահովման՝ ԶԺԴ համար ներկայում հասանելի մակարդակով, էներգետիկ դիվերսիֆիկացման հիմնախնդիրը ձեռք է բերում կենսական անհրաժեշտության որակ: Բացի ծովային ուղիներով կատարվող ներկրումներից, Չինաստանը կարողացել է հասնել էներգակիրների՝ նավի և գազի ներկրումների երեք այլ ռազմավարական ուղիների ծևավորմանը՝ հյուսիս-արևելյան (Ռուսաստանից), հյուսիս-արևմտյան (Միջին Ասիա, հնարավոր է նաև Ռուսաստան) և հարավ-արևմտյան (Մյանմար)[59,60] (տես՝ Գլուխ-2-ը և Յավել.-2-Ջարտեզներ-2-5): Մյանմարից բերվող նավթատարուվ Մերձավոր Արևելյանց և Աֆրիկայից ներկրվող նավերի մի մասի տեղափոխումը (տարեկան 20 մլն. տ.) միայն մասնակիրներն կարող է լուծել ծովային ուղիներով նավթառարումների խոցելիության հիմնախնդիրը՝ Մալակլա ներդրության շրջանցման հմաստով: Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության առանձնահատկությունները հիմնավորում են Միջին Ասիայի էներգոռեսուրսների յուրահատուկ դերն ու նշանակությունը Չինաստանի համար:

Կենտրոնական Եվրասիայի էներգոռեսուրսների սպառման հիմնական կենտրոններից միակ՝ անմիջական ցամաքային սահման ունեցող Չինաստանի համար, հատկապես միջինասիհական էներգակիրների առօսությունը ցուցաբերվող հետաքրքրությունն ունի ոչ միայն երկրի համար կենսականորեն անհրաժեշտ էներգետիկ դիվերսիֆիկացման նշանակություն, այլև աշխարհագրական և տնտեսական նպատակահարմարությամբ պայմանավորվող բնականություն: Չնայած նրան, որ Չինաստանը հատկապես վերջին տասնամյակում գգայի հաջողություններ է արձանագրել կենտրոնական Եվրասիայում էներգակիրների պաշարների հետագութման,

արդյունահանման և առաջումների ասպարեզում, այնուամենայնիվ, ՉԺՀ Նավթային ընկերություններն ընդգրկված չեն տարածաշրջանի համար հիմնարար նշանակություն ունեցող էներգոեսուրսների շահագործման ծրագրերում:


Չինաստանի համար Կենտրոնական Եվրասիայից էներգուեսուրսների տեսակների ներմուծման նշանակության ոչ ֆորմալ աստիճանակարգման իմաստով շոշափելի է՝ նավթի գերակայությունը՝ բնական գազի անհրաժեշտության համեմատ:

Չնայած դրան բնական գազի ներմուծումների ոլորտում իրականացված ենթացիկ ծրագրերի իրագործելիության հնարավորությունները շատ ավելի բարձր են, քան նավթինը:

**3.3.- ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐԱՍԻԱՅԻ ԷՆԵՐԳԱԿԻՒՐՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ
ԵՐԿՐՆԵՐԻ ԷՆԵՐԳՈՔԱՂԱՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ու ԴՐԱ ԴՐՈՉ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՎՈՒՄ**

Ծուր Երկու տասնամյակ շարունակվում են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐԱՍԻԱՅԻ ՀՆԵՐԳԱԿԻՒՐՆԵՐԻ արտահանման դիվերսիֆիկացման անհրաժեշտության վերաբերյալ քննարկումները: Մեկ տասնամյակից ավելի ԱՄՆ-ը և ԵՄ-ը ակտիվորեն աջակցում են տարածաշրջանից նավթի և գազի ԵՎՐՈՊԱԿԱՆ շուկա արտահանման ալտերնատիվ ՌԴ վերահսկողությունից դուրս գտնվող հարավկովասյան միջանցքի ձևավորմանը: Չնայած գործադրված ջանքերին՝ ներկայումս տարածաշրջանից էներգակիւրների արևմտյան շուկա արտահանման առումով իրական արդյունքը Բաքու-Թբիլիսի-Շեիխան (ԲԹՇ) նավթատարի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազատարի կառուցումն է, որոնց արդյունավետ շահագործումն, այսուամենայնիվ, պայմանավորվում է Կասպյան արևելյան հատվածից էներգակիւրների տեղափոխմամբ (Հավել. -1 և 2- Աղյ.-3,4; և Զարտեղներ-5,6): ԲԹՇ նավթատարը, որով ներկայումս կարող է առաքվել 1մն, բարել/օրեկան (մոտ 50 մն. տոննա տարեկան՝ 2007թ-ի ապրիլից) նավթ, և որի թողունակությունը քիմիկատների օգտագործմամբ ու լրացնուի մոլիչ կայանների կառուցմամբ կարող է բարձրացվել 20-60%-ով [65-68], երբեմ չի կարող լիարժեք արդյունավետությամբ շահագործվել միայն աղբբեջանական նավթի առաջմամբ (տես նաև՝ Նկ.-3.1;3.2): Այն ի սկզբանե ծրագրվել է Ղազախստանից նավթառաջումների ենթադրությամբ: Դեռևս

Նկար-3.9.-ԲԹՇ նավթատարության առաջումների հիմնային կանխատեսում



Այլոյնըներ- BP Statistical Review of World Energy-June 2009; EIA- Annual Energy Outlook 2008. With Projections to 2030, EIA-USA, June 2008. Cambridge Energy Research Associates (IHS CERA)-2009; Business Monitor International- 2009-2010- <http://www.researchandmarkets.com/index.asp>; www.eia.doe.gov/oiaf/aeo/; <http://www.rosinvest.com/>; <http://www.kazenergy.com/>; Gulf oil & gas- <http://www.gulfolandgas.com/>; Ղեղինակների հետազոտություն:

2006թ-ին Ղազախստանը ու Աղրբեջանը ստորագրել էին պայմանագիր, որով նախատեսվում է տրանս-կասպյան և լրացուցիչ ներքին նավթատարերի կառուցմամբ ԲԹՁ-ին ղազախական նավթառաքաման համակարգի միացում: Ղազախստանի կողմից պայմանագիրը վավերացվեց 2008թ-ի մայիսին[70,71]: Ավելին, Ենթադրվում է, որ 2020թ-ից հետո ԲԹՁ-ով Ղազախստանից առաջվող նավթի մասնաբաժինը գերազանցելու է Աղրբեջանի մասնաբաժնին, որտեղ նավթի հանույթը և արտահանումը կականված է արդեն իսկ 2012-2015 թթ-ից (Նկ.-3.1;3.2 և 3.9): 2008թ-ին Ղազախստանի Թենգիզ նավթահանքից ԲԹՁ նավթամուղով առաջվել է շուրջ 0.3 մլն.տ. նավթ, իսկ 2009 թ-ին՝ 1.9 մլն. տ.[69]: Կանխատեսվում է, որ 2030թ-ին Ղազախստանը ԲԹՁ-ով տարեկան կառարի 39.5մլն. տ., իսկ Աղրբեջանը՝ 23 մլն. տ. նավթ(Նկ.-3.9):

2009թ.-ի ընթացքում Աղրբեջանի կողմից ծեռնարկված քայլերը կարող են առաջացնելքնական գազի արտահանումների ոլորտում դիվերսիֆիկացման համար ծգուումների առկայության տպավորություն: Ո՞Դ և Աղրբեջանի նախագահների միջև ծեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2009թ.-ի հոկտեմբերին ստորագրվեց 2010-2014թթ. ընթացքում Աղրբեջանից Ո՞Դ տարեկան 1 մլրդ. մ3 քնական գազի առաջնան պայմանագիր[77]: Ըստ որում, Գազպրոմը հայտարարել է նաև 2011թ-ից այդ քանակությունը կրկնապատկելու իր մտադրության մասին [78]: 2010թ.-ի հունվարին Նախիջևան գազի մատակարարման ծրագրի շրջանակներում համաձայնություն ծեռք բերվեց ծմեռային շրջանում Աղրբեջանից Իրան մինչև 100մլն. մ3 քնական գազի առաջնան վերաբերյալ[78]: Այդ ծրագրով նախատեսվում է նաև աղրբեջանական ֆինանսավորմամբ նոր 200կմ. գազատարի կառուցում հետագայում, որից հետո դեպի Իրան գազի առաջնաները կարող են հասցել տարեկան մինչև 2 մլրդ. մ3 [79]: Գազատարի իրագործելիության հնարավորությունները, քնականարար սահմանափակվելու են Իրանի միջուկային ծրագրի շուրջ ծավալվող գարգացումներով: Ուշադրության է արժանի Ո՞Դ-ի հետ պայմանագրի 2010-2014թթ. ուժի մեջ լինելու հանգամանքը, որից ընթացքում Ենթադրվում է Արևմտյան ուղղությամբ գազառացումների ծրագրերի հատկապես NABUCO գազատարի, իրագործելիության հնարավորությունների պարզեցում, ինչպես նաև Աղրբեջանում գազի արդյունահանման իրական ծավալների ծզգութում: Դա Ո՞Դ-ի հետ հարաբերությունների սերտացման ցուցադրությունը ստացված դիվիդենտների հետ մեկտեղ Աղրբեջանի համար ընձեռուած է իրավիճակային որոշում ընդունելու հնարավորություն՝ պայմանագրի ժամկետների երկարածման, գազառաքաման ժավալների փոփոխման, կամ մատակարարումների հետագա դադարեցման վերաբերյալ: Բոլոր դեպքերում, ինչպիսին է լինեն այս երկու ուղղություններով գազառացումների ծրագրերում հետագա գարգացումները, դրանք այլևս հիմնավորացնեն կարող փոխել Աղրբեջանի էներգառեստրումների արտահանումների աշխարհաքաղաքական կողմնորոշումը, որն արդեն իսկ ծևավորվել է, նայև և առաջ ԲԹՁնավթատարի կառուցմամբ: Աղրբեջաննական վորենօգտագործել

է արևմտյան ուղղությամբ իր էներգակիրների արտահանման համար Նպաստավոր աշխարհագրական ռիորջի առավելությունները, և լինելով՝ միջինասիական էներգակիրների այդ ուղղությամբ Ռուսաստանը շրջանցող առաքումների ծրագրերի իրականացման առումով ամենաշահագրգիռ երկիրը Կենտրոնական Եվրասիայում ներկայում անում է հնարավարը դրանց կենսագործման համար: Տարածաշրջանում արևմտյան հատկապես ԱՄՆ էներգությարականությունն իրականացվում է հետո Աղրբեջանի միջոցով: Էներգակիրների գործոնն ակտիվություն օգտագործվում է Բարձի կողմից արևմտյան զարգացած երկրների հետ երկարաժամկետ սերտ համագործակցություն հաստատելու, Ո՞Դ ու Իրանի ինչպես նաև ինչ որ չափով Չինաստանի հետ հարաբերությունների հաշվեկշոր ապահովման նկատառումներով: Այդ երկրների հետ էներգակիրների գործոնի օգտագործմամբ հարաբերությունների մարտավարական բայանավորումը Բարձի կողմից հաճախակի փորձվում է իրականացնել նաև՝ Հայաստանի հետ նրանց հարաբերությունների և Ղարաբաղյան հակամարտության հիմնախնդրում ընթացիկ գործընթացների համատեքստում: Կենտրոնական Եվրասիայից էներգակիրների առաքման ուղիների հիմնախնդրում, տարածաշրջանի էներգիա արտահանող երկրներից Աղրբեջանի դիրքորոշումը եղել է ամենաքաղաքականացվածը, և այդպիսին է մնալու տեսանելի ապագայում:

Միաժամանակ հենց ԲԹՁ Նավթատարի կառուցման առումով ԱՄՆ ակտիվ աջակցությունը սկզբնավորեց տարածաշրջանում խոշովակաշարային ուղղությունների աշխարհաբարական մրցակցությանը, որը հետազոյւմ առավելացույնս սրվեց NABUCO գազատարի կառուցման ԵՄ ծրագրով: Մինչ այդ հիմնականում ռազմաքաղաքական բաղադրիչների վրա հենվելով՝ իր աշխարհաբարական ազդեցության պահպանմանը զգտող Ռուսաստանը, ունենալով տարածաշրջանից էներգակիրների արտօնյալ գներով ծեռաբերման և արտահանման բացառիկ հնարավորություններ, ընդհանուր առմամբ, բավարարվում էր տեխնոլոգիական և ոչ մեծ ֆինանսական ներդրումների միջոցով սահմանափակ մասնաբժինների տնօրինմամբ: Ո՞Դ մոտեցումներում 90-ականների վերջից սկսված անցումը՝ «առողջ պրագմատիզմի քաղաքականությունը» նկատելիրեն ամրապնդեց էկոնոմիկական և աշխարհաբարական շահերի կենսագործման, փոխագրեցության և փոխադրամավածության ժամանակակից ըմբռնումների կիրառումը տարածաշրջանում[80]: Չնայած Կասպյան տարածաշրջանից էներգակիրների տարանցման գերակա դիրքերի պահպանման ռազմավարությանը, այնուամենայնիվ, ամբողջ ԱՊՀ տարածքում հատկապես տնտեսական և էներգետիկ ինտեգրման հիմնարար Նշանակության շեշտադրումը՝ Ո՞Դ «պրագմատիզմի քաղաքականությունը» մոտեցումներում որոշակի կառուցողականությունն մտցրեց Ռուսաստանի դիրքորոշումներում տարածաշրջանի փոխահավետ էներգությագրերի նկատմամբ: ԲԹՁ Նավթամուտի ԱՄՆ օժանդակությունն իր նշանակությունն ունեցավ Ղազախստանին նավթի արտահանման

ալտերնատիվ՝ Տրանսնեվտի գործող Նավթախողովակային համակարգից դուրս գտնվող ուղղող՝ Կասպյան Խողովակաշարային Կոնսորցիոն (ԿԽԿ՝ CPC) կառուցման համար Ռուսաստանի համաձայնության և աջակցության առումով։ Տարածաշրջանից քնական գազի արտահանումների ՉԺՀ և ԵՄ ծրագրերը կանխորոշիչ նշանակություն ունեցան միջինասիական գազի գնման համար շուկայական մեխանիզմների կիրառման Ռուսաստանի կողմից 2008թ. մարտին կատարված առաջարկի առումով, որով մտցվում էր գնագոյացման՝ Եվպոպայում, ՌԴ, ում գազի գների միջինացման բանաձև[83]:

Ծուրց երկու հարյուր տարի առաջ տարածաշրջանում հաստատված վերահսկողությունը, մի պետության շրջանակներում ընդհանուր համակեցությունը և այդ ընթացքում ծևավորված ամուր պատմա-մշակութային կապերը, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության համակարգում գերիշտող դիրքերի առկա մակարդակը ստեղծել են Կասպյան շրջանում ազդեցության գերակա դիրքերի պահպանման ամուր հիմք ներկայիս Ռուսաստանի համար։ Ռուսաստանի տարանցման ենթակառուցվածքային համակարգի Եվրասիական մայրցամաքում գրաված կենտրոնական դիրքը՝ իր ծովային երերով, և դրանց առկա կապակցվածությունը Կենտրոնական Եվրասիայի երկրների տրանսպորտային համակարգերի հետ, ռազմավարական նշանակություն ունի տարածաշրջանից էներգակիրների հարտահանումների համար։ Ընդհանուր առմամբ, “Մեծևադի” ծևավորման գործընթացներին համընթաց ՌԴ-ը հիմնովին փոփոխության ենթարկեց Կենտրոնական Եվրասիայում իր էներգաքաղաքականության ինչպես մարտավարական մոտեցումները, այնպես է՝ ռազմավարությունը։ Պետք է նշել, որ էներգաքաղաքականության փոփոխությունների արդյունքում, չնայած սպառման հիմնական կենտրոնների կողմից ծեռնարկված ակտիվ ջանքերին և այդ կենտրոնների՝ հատկապես արևմտյան, Նավթային ընկերությունների էներգառեսությունների հանքավայրերում ունեցած մասնաքաղաքականության ակնհայտ գերակա դիրքերին, տարածաշրջանից նավթի՝ և հատկապես քնական գազի, արտահանումներում՝ ՌԴ-ին՝ ընդհանուր առմամբ, հաջողվել է պահպանել գերակա դիրքեր (Այլ.-3.2):

Ոչ նշանակալից քանակությամբ զագ առաքվում է Թուրքմենստանից Իրան։ Միջինասիական քնական գազի առաքումների ոլորտում, Ռուսաստանի համար միակ մրցակցային մարտահրավերը դեռևս հանդիսանում է Թուրքմենստանից-Չինաստան գազատարը։ Ռուսաստանի քազմաքաղաքական մտադրությունը և դրանց իրականացման առումով գործադրված ջանքերը նույնպես եղել են ապարդյուն՝ հանդիպելով տարածաշրջանի որոշ երկրների հակադրությանը։ Բավականաչափ որոշակիորեն է դրսևորվել նաև ԱՄՆ-ի և ԵՄ հետ էներգոռեսությունների և դրանց առաքումների ոլորտներում, առավելագույնս համագործակցությունը սերտացնելով՝ տարածաշրջանի որոշ երկրների ծգումը։ Այնուամենայնիվ, ի տարբերություն Ադրբեյջանի, որն ԱՄՆ կողմից դեռևս 90-ականների կեսերից ցուցաբերված աջակցության և ակտիվ ջանքերի շնորհիվ կարողացավ հասնել իր

Էներգակիրների դեպի արևամտյան շուկա՝ ՌԴ-ի կողմից չվերահսկվող առաջման, միջինասիական երկրների համար՝ էներգակիրների արտահանման հիմնական ուղղությունը մնում է Ռուսաստանը (Աղյ.-3.2):

Աղյուսակ-3.2- Կենտրոնական Նվազախայից Նավթի և բնական գազի արտահանման հիմնական ուղղությունները-2008 թ.

	ՆԱՎԹ (Մլ. Տ.)						ԲՆԱԿԱՆ ԳԱԶ (Մլրդ. Մ ³)			
	ՈՒ	ՉԺՀ	Իրան	Վրաստան	Ալյուր Երան	Ալ	ՈՒ	Վրաստան	Իրան	Ալ
Ալյուրեան	1.5	0.2	0.2	38.4	--	0.9	0.0	5.4	0.2	0.0
Ղազախստան	48.5	6.0	1.7	--	2.6	0.8	6.5	0.0	0.0	3.2
Թուրքմենստան	0.0	0.0	1.7	0.0	0.4	0.0	40.9	0.0	6.2	0.0
ՌԴ գելեստան	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	9.3	0.0	0.0	4.2
Ըստամեջ	50	6.2	3.6	38.4	3.0	1.7	56.7	5.4	6.4	7.4

Աղյուսակ-3.2- BP Statistical Review of World Energy-June 2009; Perspectives on Caspian Oil and Gas Development- International Energy Agency Working Paper Series- Directorate of Global Energy Dialogue/2008/1- <http://www.iea.org/>; Business Monitor International- 2009-2010- <http://www.researchandmarkets.com/index.asp>; Gulf oil & gas- <http://www.gulffoilandgas.com/>; Յեղիսակների հետազոտություն:

Միաժամանակ, վերջին մեկ - երկու տարիների գործընթացներում շոշափելիորեն աճել են նաև՝ էներգաարտահանման դիվերսիֆիկացման առումով միջինասիական տարածաշրջանի երկրների կողմից ծեռնարկվող ջանքերը, որոնք կարող են էականորեն փոփոխել էներգաառաջնորդությունը՝ աշխարհագրությունը՝ նշանակալիորեն դժվարացներով Ռուսաստանյան ուղղության գերակա դիրքերի հեռանկարային պահպանումը: Դա նախ և առաջ պայմանավորվում է տարածաշրջանի էներգաշուկայում նոր իրողությունների ձևավորմամբ:

Աշխարհում նավթով հարուստ երկրների ցուցակում ութերրորդ հորիզոնականում* գտնվող Ղազախստանում է գտնվում Կենտրոնական Եվրասիա տարածաշրջանում նավթի ապացուցված պաշարների ավելի քան 81.5%-ը և ենթադրվող պաշարների՝ կեսից ավելին (Աղյ.-3.1): Նավթի արդյունահանումը երկրում, 2000թ-ի 35.3մլն. տ-ից աճելով 2009թ-ին կազմել է 78 մլն.. տ., և արդեն իսկ մոտակա տարիներին, կարող է կրկնապատկվել

*- Առաջին յոթ տեղերում են՝ Սաուդյան Արաբիան, Իրանը, Իրաքը, Թուրքիաը, ՄԱՀ.

Կենտրոնական և Ռուսաստանը[9]:

Թենգիզ* և Կաշագան* նավթահանքերի լիարժեք շահագործմամբ, ինչի դեպքում, արտահանման ծավալները կածեն շուրջ 2.5 անգամ (Ակ.-3.1; 3.2): Այս առումով, զարգացումների ներկա փուլում կասպյան նավթի հոսքերի ուղղությունների հիմնական պայքարը ծավալվում է Ղազախստանից արտահանման ուղիների շուրջ^{**}: Ղազախստանով անցնող տրանսպորտային ենթակառուցվածքները կապված են Ռուսաստանի, Եվրոպայի, Մերձավոր Արևելյան, Կենտրոնական և Արևյան Ասիայի համապատասխան համակարգերի հետ, ինչն ակնհայտորեն որոշակի գեղեկոնոմիկական դիրքի առավելություններ է ապահովում երկրի համար, այնուամենայնիվ, դրանք չեն կարող քավարարել Ղազախստանի էկոնոմիկայի գերակա ոլորտի էներգակիրների արտահանումների ներկա և հեռանկարային անհրաժեշտ պահանջները: Մերկայում, Ղազախստանն ունի առարումների ռուսաստանյան ուղրուց չափազանց բարձր կախվածություն, որով տարանցվում է նավթի արտահանումների 80%-ից ավելին (հիմնականում Ասիաու-Սամարա և Կասպյան Խողովակաշարային Կոնսորցիում նավթատարերով) (Քավել.-1 և 2-Այլ.-3.4; և Թարտեզներ-5.6) և (Այլ.-3.2)): Կասպից ծովով իրականացվող տանկերային տեղափոխումները և երկաթուղով կատարվող ծախսատար առարումների ներկայիս փոքր ծավալները տեսանելի ապագայում չեն կարող հասցվել նավթի արտահանման սպասվող արագ աճի պահանջների քավարարման մակարդակի:


- Թենգիզ- (TengizChevron (TCO)): Փայատերերը՝ Chevron- 50%; ExxonMobil - 25%; Կազմուայգազ 20%; LukArco (ՊԴ-ԱԱՆ ՀԶ)- 5%: Ավելի քան 1.2 մլրդ. տ. նավթի պաշարով: Մերլոյումները՝ 23մլրդ. դոլար (40 տարի): 2008թ-ից տարեկան արդյունահանվում է 17.4 մլն. տ. նավթ. իսկ 2012թ-ից սպասվում է 50մլն. տ.: Արդյունահանվում է նաև 16.5 մլրդ. մ3 գազ: Քանդականում է Մերձավոր Արևելյան դոլար ամենախոշոր հանքավայրը և հինգերորդ կամ վեցերորդ աշխարհում:

- Կաշագան- (Agip Kazakhstan North Caspian Operating Company (Agip KCO)) Փայատերերը՝ Eni, Total, ExxonMobil & Shell (16.66%), ConocoPhillips (8.28%), Kazmunaigaz (16.81%), Inpex (8.28%); 1.2-1.8 մլրդ. տ. նավթի պաշարով: Ենթադրվող պաշարերը կազմում են ավելի քան՝ 5.2 մլրդ. տ.; Մերլոյումները կարող են կազմել 50մլրդ. դոլար: Ակզրնապես արդյունահանվում նախատեսվել էր 2005թ-ից, որը քազմից վերագնահատվելով, ներկայում հիմնավորվել է 2013թ-ը: Ակզրում սպասվում է շուրջ 3.7 մլն. տ., հանույց, որը հետագայում կհասնի մինչև 60 մլն. տ. տարեկան: Քանդականում է աշխարհում երկրորդ ամենախոշոր օֆշոր հանքավայրը, որը հայտնաբերվել է 1968 թ-ին Այսակայի Prudhoe Bay-ից հետո: Այրուղներ:- [EIA-<http://www.eia.doe.gov/emeu/cabs/kazaproj.html>; 72]:

**- 2009թ-ին, Ղազախստանից արտահանվել է 68.1 մլն. տ. նավթ (արդյունահանած նավթի 89%-ը), որից Կենկ նավթատարուն՝ 27.5մլն. տ.(40%); Ասիաու-Սամարա՝ 17.5 մլն. տ. (26%); Ծովով տեղափոխում՝ 11.1մլն. տ. (16%); Ղազախստան-Չինաստան նավթամուղով՝ 6.2 մլն. տ. (9%); Երկարուղով՝ 4.0 մլն. տ. (6%), և Օրենբուրգի վերամշակման գործարան՝ 1.8 մլն. տ. (3%) [Oil Review- Kazakhstan Oil News- www.oilreview.kz; ЖУРНАЛ "НЕФТЬ И ГАЗ КАЗАХСТАНА" <http://www.oilgas.kz/rus/>; Евгений ПУЩИК -Нефтяной Казахстан играет свою игру- Зеркало Недели- #22 (802) 12 — 18 июня 2010- <http://www.zn.ua/>;]

Արդին իսկ հետագա 4-5 տարիներին միայն Կաշագան հանքավայրից սպասվող նավթի տեղափոխման համար անհրաժեշտ են 25 տանկերներ Կասպից ծովի համար թույլատրելի 12000 տ. ջրատարողությամբ, ինչպես նաև համապատասխան ներակառուցվածքների ստեղծում ծովի երկու ափերում [68,82]. ինչը գործնականում հնարավոր չէ լիարժեքորեն ապահովել և ամենայն հավանականությամբ, կկենսագործվի մասամբ, կամ որ ավելի հավանական է՝ հիմնականում: Գործնականում կիրառելի չէ նաև Օղեսա, Բաթումի և Չինաստան երկաթուղային առաջումների ծավալների անհրաժեշտ չափով մեծացման հնարավորությունը: Բնականաբար, Արևելյան և Արևմտյան սպառման հիմնական կենտրոններ արտահանման, ինչպես նաև երկրի հիմնական հանքավայրերի կապակցման, լայնածավալ խողովակաշարային համակարգի ստեղծման խնդիրը Ղազախստանի համար դառնում է խիստ այժմեական և հրատապ:

Նկար-3.10- Ղազախստանի նավթահանքերի պաշարներում,
արտերկյաց ընկերությունների
ընդհանուր փայտաբանում Ազգային նավթային ընկերությունների
մասնաբաժինները (ըստ երկրների-(2006թ.))



Աղյուրներ-[81]: EIA- <http://www.eia.doe.gov/emeu/cabs/Kazakhstan/Background.html>

Ի տարրերություն առաջման համակարգերի, Ղազախստանի հանքավայրերի փայտաբաժիններում արևմտյան նավթային ընկերություններն ունեն ակնհայտ գերակա դիրքեր (Նկ.-3.10): Եվրոպատանտյան ընկերությունների մասնաբաժինը Ղազախստանում ներկայում շահագործվող և զարգացվող նավթահանքերում և արտերկյաց ընկերությունների ընդհանուր փայտաբանում կազմում է ավելի է քան 65%, որից 47.5%-ը պատկանում է

ԱՄՆ ընկերություններին [81], ինչը որոշակի ազդեցություն կարող է ապահովել արտահանման ուղիների ընտրության հարցում: Փայարաժնների որոշակի փոփոխություններ կարող է առաջանալ 1.5 մլրդ. տ. նավթի պաշարով՝ Դարկիան հանքավայրի շորջ՝ CNPC-ի հետ արդեն մի քանի տարի շարունակվող բանակցությունների ավարտից հետո, որում վերջն տարիներին ակտիվություն է ապահովությունների ավարտից հետո:

Արտահանումների ենթակառուցվածքների ծավալման առումով՝ Դազախստական կողմից ծեռնարկվող քայլերի քազմավեկտորությամբ հանդերձ, գերակա նպատակառողվածությունը արևմտյան շուկա նավթառարման համակարգի զարգացումն է, ինչը համահունչ է նաև էներգակիրների արդյունահանման ոլորտում տիրապետող դիրքեր զրավող արևմտյան ընկերությունների ցանկությանը: 2008թ-ի նոյեմբերին Ադրբեջանի և Ղազախստանի պետական նավթային ընկերությունների միջև ստորագրվեց Տրանս-Կասպյան Տրանսպորտային Յամակարգի (ՏԿՃՀ) հիմնարար սկզբունքների վերաբերյալ Յամածայնագիրը, որով նախատեսվում է նավթառարումների համատեղ անվտանգ համակարգի ստեղծում: Յամածայնագրի շրջանակներում, ԲԹՁ նավթառարին Տրանս-Կասպյան խողովակաշարի կառուցմամբ միանալու ծրագիրը, որի իրագործումը ստանում է ԱՄՆ և ԵՄ լիկատար աջակցությունը, Էւկենե - Կուրյուկ ներքին նավթառարի տեխնիկա-տնտեսական հիմնավորման քայլով, մտնում է ծնավորումների ավարտման փուլ՝ դառնալով տարածաշրջանում նավթի աշխարհաքաղաքականության հետագա զարգացումների հիմնական ինտրիգը (Պավել.-1 և 2- Ալյ.-3,4; և Թարտեզներ.-5,6): Ծրագիրը նախատեսում է նաև նավթի տանկերային տեղափոխման ենթակառուցվածքների նշանակալից զարգացումը, ինչի հետևանքով, կարող է աճել նաև Իրանի Նեկկա նավթառանդիստ դազախստական նավթի տեղափոխումների ոչ նշանակալից ծավալները: Ծրագրի շրջանակներում ենթադրվում է նաև Բարու-Սուպաս նավթառարի ներկայիս տարեկան 7.5 մլն. տ. թողունակության մեծացում, մինչև՝ 10 մլն. տ., որով հիմնականում առարկելու դազախստական նավթը: Բուֆորի նեղուով տարանցումների թուրքիայի կողմից դրված սահմանափակումների հետևանքով, Սուպասայից տանկերային տեղափոխմամբ նավթը լցվելու է Օդեսաս-Բրոդի նավթառար: Ենթադրվում է ՏԿՃՀ-ի ստեղծումն ավարտել հետագա 3-5 տարիների ընթացքում, ինչը ժամկետային առումով համընկում է Թենգիզ և Կաշագան նավթահանքերի ակտիվ շահագործման փուլի հետ: ՏԿՃՀ-ի լիակատար իրագործման դեպքում, Ադրբեջանով արտահանվող դազախստական նավթի ծավալները հեռանկարում կկազմի ավելի քան 60 մլն. տ. տարեկան:

Արևմտյան սպառման շուկա արտահանումների ծավալման ներկայումս ամենաիրատեսական ծրագրը՝ Կասպյան խողովակաշարային Կոնսորցիում* (ԿուԿ)

*- 2010 թ-ի դրությամբ ԿուԿ (CPC) փայատերերն են- ՌԴ (Ներկայացված է՝ Transneft - 24% և ԿուԿ ընկերություն - 7%) - 31%; Ղազախստան (Ներկայացված է՝ KazMunaiGaz - 19% և Kazakhstan Pipeline Ventures LLC - 1.75%) - 20.75%; Chevron CPC Company - 15%, LUKARCO B.V. - 12.5%, Mobil CPC Company - 7.5%, Rosneft-Shell Caspian Ventures Limited - 7.5%, BG Overseas Holding Limited - 2%, Eni International N.A. N.V. - 2% & Oryx Caspian Pipeline LLC - 1.75%. [<http://www.cpc.ru/>]:

Նավթատարի թողունակության ընդլայնումն է: Տեսանեի հեռանկարում, Կևկ Նավթատարով առաջնորդու է Ղազախստանից արտահանվող Նավթի հիմնական մասնաբաժննը: 2008 թ-ի նոյեմբերին փայտերերի միջև ճեղք բերված համաձայնությամբ[73], 2009թ-ի վերջից սկսվեցին Նավթատարի թողունակության ընդլայնման աշխատանքները, Նախատեսելով Ներկայիս 39.7 մլն. տ-ից, 2013թ-ին Նավթառաքման ծավալները հասցնել տարեկան ավելի քան 67 մլն. տ.-ի: Բուժորի Ներդուցով տարանցումների սահմանափակումների հետևանքով, Կևկ Նավթամուղով առաջված Նավթը, Լուսոռուսիսկից տանկերներով հասցնելու է, Բուրգաս-Ակերսանդրապոլիս Նավթատար[74], որում նույնական ՈՒ-ն ունի ազդեցիկ դիրք: Նավթառաքման ինքնուրույնության որոշակի աստիճանի պահովման նպատակով, Ղազախստանը հայտարարել է՝ Հունաստանից և Բուլղարիայից Բուրգաս-Ակերսանդրապոլիս Նավթատարի կառուցման մասնաբաժնի ճեղքերման պատրաստակամության վերաբերյալ[75]: Չնայած Կևկ Նավթատարով արևմտյան սպառման շուկա Նավթի արտահանումներին, Ռուսաստանն ունի ամենախոչոր մասնաբաժննը կոնսորցիոնում և պահպանում է առաքումների տարանցմամբ պայմանավորվող առավելությունները:

Արևելյան սպառման շուկա՝ Նավթառաքման ենթակառուցվածքային համակարգի զարգացման հիմնական ուղղությունը Չինաստանն է: Ակսվել են Ղազախստան-Չինաստան Նավթատարի երրորդ փուլի աշխատանքները, որոնց ավարտով Նավթատարի թողունակությունը կիացվի 20 մլն. տ. տարեկան:

Ղազախստանից Նավթի արտահանումների խնդրի հեռանկարային դիտարկման դեպքում, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ նույնիսկ վերոշարադրյալ ծրագրերի ամբողջական կենսագործումը բավարար չէ 2020թ-ից հետո սպասվող տարեկան 150 մլն. տոննայից ավելի Նավթառաքման իրականացման համար: Որպես հնարավոր լուծումներ կարող են լինել հարավկովկասյան երկրորդ, և կամ Ղազախստան-Չինաստան երկրորդ, ինչպես նաև՝ համապատասխան քաղաքական իրավիճակի առկայության դեպքում և կամ՝ Ղազախստան - Թուրքմենստան-Իրան Նավթամուղների կառուցումը:

Բնական գազի ոլորտում սպառման կենտրոնների և Ներդրումների իրականացնող գյորալ մակարդակի ընկերությունների ուշադրությունն առավելապես կենտրոնանում է Թուրքմենստանի նոր հայտնաբերվող հսկայածավալ ռեսուրսների արդյունահանման և միջազգային շուկա դրանց առաջման ծրագրերի վրա: Չնայած նպաստավոր գործուների ծևավորման գործնաթացների առկայությանը, ոլորտում ընթացիկ իրավիճակը մնում է հակասական: 2009 թ-ին՝ Նախորդ տարվա համեմատ, երկիր տնտեսության հիմնական քաղաքորդիչ՝ բնական գազի արդյունահանման ծավալների 44.8% -ով անկում, ամրող սրությամբ բացահայտեց՝ Ռուսաստանով տարանցումներից կախվածության անընդունելի բարձր մակարդակը,

ոլորտում անկայունության առկայությունն ու անհետաձգելի քայլերի ծեռնարկման անհրաժեշտությունը: 2009թ.-ի ապրիլին Կենտրոնական Ասիա-Կենտրոն հիմնական գազատարի պայմանի և կողմնական միջն առաջման ծավալների և գների համաձայնության բացակայության հետևանքով. Թուրքմենստանից Ուսաստան գազի Ներմուծումների ծավալները տարվա ընթացքում նվազեցին 80-90 տոկոսով [21,22,84]; 2010թ. հունվարից գազառարումների վերականգնման*, և տարվա ընթացքում Մերձկասայան ու Արևելք - Արևմտադր գազատարերի (Յավել.-1 և 2-Ալյ.-3,4; և Քարտեզներ-5,6) հետաձգված շինարարությունն սկսելու վերաբերյալ 2009թ. դեկտեմբերին 7. Մեղմեդի Թուրքմենստան կատարած աշխատանքային այցի ընթացքում ծեղը բերված պայմանավորվածությունը [22,76,77] հուսադրող, բայց առկա հիմնախնդիրների լուծումների առումով իրական առաջնքաց չափահովող քայլ է: Հիմնարար նշանակություն ունի այն հանգամանքը, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամին հետևած՝ ՏՀՀԿ երկրներում բնական գազի օգտագործման նվազման հետևանքով՝ ԱՊՀ երկրներից Եվրոպա արտահանվող գազի ծավալների շուրջ 30%-ով անկումը [84], հանգեցրեց Գազպրոմի համար Թուրքմենստանի գազի Ներմուծումների անհրաժեշտության՝ ժամանակավոր կորստին: **Ո՞Դ-ի** կողմից միջինասիական գազի արտահանումների ոլորտում մոլուպոլ դիրքերի պահպանման քաղաքականությունն առանց համարժեք պարտավորությունների ստանձնամբ ամրապնդուման, ակնհայտորեն կունեսա հեռանկարային կիրառելիության սահմանափակումներ: Նման իրավիճակը նշանակալիորեն արագացնելու է տարածաշրջանի երկրների կողմից էներգոարտահանումների դիվերսիֆիկացման անհետաձգելի քայլերի ծեռնարկման անհրաժեշտությունը:

Թուրքմենստանում առկա բնական գազի պաշարների ծշտման միջազգային առողջության անցկացումը վերջին երկու-երեք տարիների ոիվանագիտական ակտիվությունը ոլորտում նախկինում ստեղծված «անթափանցելի պատճեղի» հաղթահարման առումով անհրաժեշտ քայլեր են, բայց ոչ բավարար՝ երկրում միջազգային չափանիշներին համապատասխանող ներդրումային միջավայրի ծևավորման և որպես հետևանք՝ մոտակա ապազում արդյունահանման ու դիվերսիֆիկացված արտահանումների գործուն համակարգի կառուցման համար: Ուսաստանից արտահանումների տարանցման գրեթե բացառիկ կախվածության հաղթահարման գործնական նշանակություն ունեցող միակ կարևորագույն արդյունքը Թուրքմենստան-Չինաստան գազատարի կառուցումն է, որը սկսեց գործել 2009թ. դեկտեմբերի 15-ից:

Դաջորդ չորս-հինգ տարիները հիմնարար նշանակություն կունեսան մասնավորաբեն Թուրքմենստանի և ընդհանրապես միջինասիական բնական գազի ոլորտում՝ վերափոխումների և հեռանկարային գարգացումների առումով: 2010թ. հունվարից շահագործման հանձնվեց՝ Թուրքմենստանից-Իրան գազատարի երկրորդ՝ 30 կմ. երկարությամբ նոր ճյուղը, որով Իրան մատակարարվող գազի ծավալները կարող են հասցվել

*-Պայմանավորվածություն ծեղը բերվեց, 2010 թ. Ներմուծել 30 մլրդ. մ3 գազ: Հետազոտ հայտարարվեց այդ ծավալների հնարավոր նվազեցման մասին, մինչև՝ 15-17 մլրդ. մ3 [78]:

մինչև 20 մլրդ. մ³-ի: 2010թ.-ի մայիսին Թուրքմենստանի նախագահը նախաձեռնել է Արևել-Արևմուտք Ներքին գազատարի կառուցումը սկսելու համար անհրաժեշտ միջազգային մրցույթների անցկացման նախապատրաստական աշխատանքների կատարումը: Գազատարը, բացի Թուրքմենստանի բոլոր խոշոր հանքավայրերի միջև կապակցված համակարգի ծևավորումից, ունի հետագա օգտագործման երկակի նշանակություն: Դրանով տեղափոխվող թափանց գազը կարող է առաքվել՝ Կենտրոնական-Ասիա-Կենտրոն խողովակաշարային համակարգի մաս կազմող Մերձկասայան ծրագրվող գազատարով և կամ պլանավորվող Տրանս-Կասպյան գազատարով կարող է միացվել NABUCO համակարգին: Ընդ որում, Ո՞՛ կողմից առաջարկված և Թուրքմենստանի հետ համաձայնեցված Մերձկասայան գազատարի կառուցման ծրագիրը նախատեսվում է «Հարավային հոսք» գազատարով միջինասիական գազի Եվրոպա արտահանումների նապատակով և դիտվում է որպես Տրանս-Կասպյան գազատարի կառուցման ու NABUCO ծրագրի իրականացման դեմ ուղղված կարևորագույն քայլ: Դատելով Ուսաստանի համար գազային ոլորտի ունեցած ռազմավարական առանձնահատուկ նշանակությունից և այդ ուղղությամբ Ո՞՛-ի կողմից՝ առավել ակտիվ կանխարգելի շիվանագիտության իրականացումից Տրանս-Կասպյան խողովակաշարային համակարգի ծևավորման ծրագիրը, որի հրագործումը ստանում է ԱՄՆ և ԵՄ կատար աջակցությունը, դառնալու է տարածաշրջանում էներգակիրների աշխարհաքաղաքականության հետագա զարգացումների գլխավոր ինտրիգը:

Նավթի և թնական գազի միջինասիական շուկայում ներկայում ծևավորվող իրողությունները պարտադրում են Կենտրոնական ասիայից դրանց արտահանման ուղիների առումով արագ որոշումների ընդունում: Եվ որպեսզի առաջման ենթակառուցվածքները պատրաստ լինեն հետագա 5-10 տարիների ընթացքում էներգակիրների արդյունահանման և արտահանման շոշափելիորեն աճող ծավալների տեղափոխումներին՝ այդ որոշումները պետք է ընդունվեն արդին իսկ հաջորդ 2-3 տարիներին:

Վերոշարադրյալից բխում է, որ Կենտրոնական Եվրասիայում, էներգոռեսուրսների արդյունահանման և հատկապես դրանց հետագա արտահանման ուղիների որոշման հիմնախնդիրները կարող լուծվել միայն տարածաշրջանում և սպառման հիմնական կենտրոններում էներգաշուկայի իրողությունների ծևավորմամբ ու էներգակիրների տնտեսապես օպտիմալ շահագործման ենթատեսառում: Դրանցում, քաղաքական և ընթացիկ աշխարհաքաղաքական տեղաշարժերով պայմանավորված գործուները, ինչպես նաև էներգոռեսուրսներ արտադրող երկրների կողմնորոշումների ուղղվածությունը, կշարունակեն վճարական ազդեղություն ունենալ հեռանկարային որոշումների ընդունման առումով: Սասնավորապես, աշխարհաքաղաքական որոշումների արդյունքում ծևավորված և արդեն իսկ իրականացված այսպիսի ծրագրերը, ինչպիսին է օրինակ ԲՇՁնավթատարը, դրանց շահագործման փուլում պարտադրում են նոր աշխարհաքաղաքական

ծրագրերի իրականացմանն ուղղված ջանքերի կենտրոնացում, որոնց կենսագործումը, կարող է հմաստավորել շահագործման ընթացքում առաջին պլան մղված տնտեսական հիմնավորվածության անհրաժեշտությունը:

Կասպյան էներգակիրների տեղափոխման տրանսպորտային միջանցքների վերջնական ձևավորման համար գլոբալ և տարածաշրջանային ուժերի և տարանցման երկրների միջև մրցակցությունը մտել է զարգացումների նոր փուլ, որում էներգաառաջման ուղիների ապագա քարտեզի ձևավորման առումով, կարևորագույն նշանակություն կունենան տարածաշրջանում նավթի և բնական գազի հիմնական պաշարներին տիրապետող Ղազախստանի և Թուրքմենստանի որոշումները:

Տարածաշրջանի էներգուշուկայում ձևավորված նոր իրողությունները պարտադրում էն արտահանման ուղիների առումով արագընթաց որոշումների ընդունում:

Դա պայմանավորելու է արտահանման ուղիների որոշումների ընդունման առումով լարվածության որոշակի ած՝ ինչպես էներգակիրների սպառող ու տարանցող երկրների միջև դիվանագիտական պայքարում, այնպես էլ միջազգային նավթային ընկերությունների միջև մրցակցությունում:

Տվյալ իրավիճակում, ենթադրելի է՝ տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների կողմից էներգակիրների արյունահանման և դրանց առաջման իրենց նախընտրած ծրագրերի իրագործման առումով՝ գործադրվող ազդեցության մեծացումը:

Այսպիսով, էներգակիրների արտահանման ուղիների ապագա քարտեզը կարող է կազմվել ոչ միայն էներգաշուկայի բնականուն թելադրով, այլև տարածաշրջանի երկրների քաղաքական կողմնորոշումների արդյունքում ձևավորված որոշումների ենթատերսում: Ներկա փուլում, Եվրասիական էներգահամակարգում և հատկապես միջինասիական տարածաշրջանում, գրաված գետերումիկական դիրքի առավելություններով պայմանավորված, վճռական նշանակություն կարող է ունենալ Ղազախստանի քաղաքական դիրքորոշումը:

**ԳԼՈՒԽ-4- ԶԺԴ էներգետիկ դիվանագիտությունը և
քաղաքանությունը Կենտրոնական Եվրասիայում**

**4.1- Չինաստանի էներգետիկ դիվանագիտությունը և
ընդգրկվածությունը Կենտրոնական Եվրասիայի երկրների
էներգակիրների արտադրության ոլորտում**

Էներգակիրների արտադրության ավանդական կենտրոններից կախվածության բարձր աստիճանի առկայության և դրանց առաջնա անվտանգության պահովման վատահության բացակայության պայմաններում, Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների սպառման հիմնական կենտրոններից՝ միակ անմիջական ցամաքային սահման ունեցող Չինաստանի համար, առավելագեց միջնասիական էներգակիրների նշանակությունը վերածվում է կենսականի: Կենտրոնական Ասիայի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունն ունի աշխարհագրական և տնտեսական նպատակահարմարությամբ պայմանավորվող քնականոնություն, իսկ տարածաշրջանի սահմանակից երկրների տնտեսական զարգացումն ու կայունության պահպանումը հիմնարար նշանակություն ունեն ԶԺԴ տնտեսական առաջընթացի ապահովման և անվտանգության ամրապնդման առումով: Շրջանի երկրների հետ կայուն, վստահելի և արդյունավետ համագործակցության ու բարեկամական հարաբերությունների ծնավորման առումով Չինաստանի իսկապես գործադրել է ամրողական երկկողմ և բազմակողմ դիվանագիտական ջանքեր: Այդ համագործակցության առաջընթացին մեծապես նպաստում է նաև ՌԴ հետ բարեկամական և փոխվստահության հարաբերությունների ծավալում և տարածաշրջանային համագործակցության ներդաշնակության ապահովման առումով գործադրվող ջանքերը:

ԶԺԴ-ում 1993թ. սկսված նավթի արտադրին ներմուծումներից կախվածության հիմնախնդիրը անմիջականորեն հաջորդեց Կենտրոնական Եվրասիայի երկրների անկախացմանը և ժամանակային առումով համընկալ՝ Կասպյան ավազանում Պարսից ծոցում առկա էներգակիրների ծավալներին համարժեք պաշարների առկայության վերաբերյալ շրջանառվող տեղեկատվական հոսքի տարածման հետ: Արտերկրուտ նավթի հետախուզման և արդյունահանման (ՐԱ) ծրագրերին մասնակցության ակտիվացման վերաբերյալ՝ CNPC-ին տրված առաջին իսկ հանձնարարականում, Պերույի և Սուդանի հետ մեկտեղ, որպես սահմանակից երկիր, Ղազախստանն ընդգրկվեց առաջնախություն ունեցող երկրների ցանկում[1]: Սույն հանգամանքով պայմանավորված, Կենտրոնական Եվրասիայի երկրներից, էներգակիրների ոլորտում համագործակցության առաջին ըննարկումներն սկսվել են 1993 թ. Ղազախստանի հետ: Յետազգյում, նավթի ներկրումներից կախվածության արագընթաց աճի և իրարյան պատերազմի ազդեցության հետևանքով՝ Չինաստանում նախագրութական ռազմավարության ընդունման և կիրառման շրջանակներում, լիովին հիմնավորվեց ԶԺԴ էներգոանվտանգության համակարգում, Կենտրոնական Եվրասիայի էներգակիրների ունեցած ռազմավարական դերն ու կենսական

Նշանակությանը: ԶԺԴ կառավարության կողմից դիվանագիտական լուրջ ջանքեր գործադրվեցին՝ հատկապես միջինասիական երկուների հետ, էներգառեսուրսների ոլորտում համագործակցության զարգացման հիմնարար սկզբունքների ձևավորման առումով, իսկ շինական ազգային նավթային ընկերությունները «Գնայ դրուս» ռազմավարության զարգացմանը համընթաց, արդյունավետ մրցակցությամբ՝ ապահովեցին տարածաշրջանի երկուներում գործական համագործակցության ծավալում:

Աղբեջանում շինական կորպորացիաներն ընդգրկվել են 2002թ.-ից, և 2009 թ-ի դրությամբ՝ մասնակցում են երեք ցամաքային նավթահանքավայրերի վեց բլոկների մշակմանը և կառավարմանը, որոնցում շինական կողմի նավթի մասնաբաժինների գումարային ծավալը կազմում է ընդամենը 87 մլն. տ. [1,2] (Հավել.-1 - Աղյ.-5): Տվյալ քանակությունը կարող է բավարարել ԶԺԴ ներկայիս ներմուծման ընդամենը չորս-հինգ ամսվա պահանջարկը: 2008-2009 թ-ի դրությամբ Հարավարևմտյան Գորբաստան հանքավայրից դեռևս արդյունահանվել էր շնչին քանակությամբ նավթ և գազ: Համաձայն CNPC HK ընկերության 2008 թ-ի ֆինանսական հաշվետվության, որի մասնաբաժինը Գորբաստան հանքավայրում 31.41% է, տարվա ընթացքում կրել է HK\$22,060,000 (շուրջ 2.9 մլն. ԱՄՆ դոլար) վնաս, և հետագա աշխատանքների շարունակումը պայմանավորվելու է՝ անկախ առողջի արդյունքներով[3]: Կուրսանգի-Կարաբաղյան հանքավայրում 25% մասնաբաժին ունեցող նույն՝ CNPC HK ընկերության 2008 թ-ի եկամուտները կազմել են՝ HK\$106,029,000 (13.77 մլն. ԱՄՆ դոլար), 494.5 հազար տ. ընդհանուր նավթահանույթի դեպքում[3]: Նավթն առարկում է ԲԹՁ նավթատարուվ:

ԶԺԴ էներգաանվտանգության առումով Կասպյան ավագանի դերի և նշանակության, ինչպես նաև՝ «Գնայ դրուս» ռազմավարության ենթատերսում, ԶԺԴ ԱՆՀ-երը կարևորում են Աղբեջանի էներգառեսուրսների ոլորտում ընդգրկվածության խնդիրը: Աղբեջանում ընդգրկման ամենախոշոր փորձը 2005թ. շինական CNOOC ընկերության կողմից UNOCAL՝ մեծությամբ ԱՄՆ 9-րդ նավթային ընկերության գնման մրցույթին մասնակցությունն էր: CNOOC ներկայացրել էր լավագույն ֆինանսական և ծեռարկատիրական առաջարկը՝ 18,5 մլրդ դոլար՝ 67% - մասնաբաժին համար: Չնայած դրան շինական ընկերության առաջարկը մերժվեց, այդ թվում՝ ԱՄՆ Կոնգրեսի միջամտության արդյունքում [4-8]: Ենթադրելի է, որ գնման դեպքում, CNOOC -ի կողմից՝ Կասպյան ավագանի էներգոռեսուրսների շահագործման ոլորտում ազդեցիկ դիրքի գրավման հնարավորությունը վերջին դերը չի խաղացել վաճառքի արգելման որոշումն ընդունելու հարցում:

Ընդհանուր առնամբ, չնայած շինական կորպորացիաների գործադրած համար ջանքերին նրանց որևէ կերպ չի հաջողվել մասնակցել Աղբեջանի խողովակաշարային ծրագրերին, ինչպես նաև՝ ոչ ցամաքային հիմնական էներգառեսուրսների մշակմանը: Չինական նավթային ընկերությունների

*- Դա ավելի քան 2.5 անգամ գերազանցում է մինչև 2010 թ-ը շինական ԱՆՀ-ի կողմից կատարված ՄԶ ամենախոշոր գործադրի՝ 2009թ-ին՝ Sinopec-ի կողմից 7.24 մլրդ. դոլարով՝ Addex ընկերության գնման արժեքը:

սահմանափակ ընդգրկվածությունն Աղբեջանում, այլ գործոնների հարակից ազդեցության հետ մեկտեղ, այնուամենայնիվ՝ հիմնականում պայմանավորված է՝ ոլորտում արևմտյան ուղղության գերակայության Բարձի կողմնորոշման առկայությամբ:

Չնայած դրան, չինական ԱՆՀ-երը շարունակում են Աղբեջանի հիմնական հանքավայրերի ծրագրերում ընդգրկվելու փորձերը: 2009 թ. նոյեմբերին ամերիկյան Devon Energy ընկերությունը հայտարարեց բոլոր արտերկրյա օֆշոր հանքավայրերի՝ այդ թվում նաև Ազերի-Զիրագ-Գյոնուշիի, իր մասնաբաժնների վաճառքի մասին^{*9}: Չանքավայրում մրցույթային վաճառքը՝ 3 մլրդ. դոլարով, հայտարարվել է Devon Energy ընկերության միայն նավթի մասնաբաժնի համար: Գազի մասնաբաժնը հավանաբար կրաշխվի մյուս փայատերերի միջև^[9]: Չինական CNOOC և Sinopec ընկերությունները հայտարարել են մրցույթին համատեղ մասնակցելու վերաբերյալ իրենց ցանկությունը^{**}: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2010 թ-ի Վերջին[10-12]: Չնայած փոքր մասնաբաժնին, չինական ԱՆՀ-երի հնարավոր ընդգրկումը կարևոր նշանակությամբ հանքավայրի ծրագրում, կարող է հապես խթանել ՉԺՀ նավթային ընկերությունների դերի բարձրացմանը Աղբեջանի էներգոնեխոլուսների ոլորտում***:

Տարածաշրջանում Չինաստանի էներգահամագործակցության հաջողությունը հենված է միջինասիական երկրների հետ համագործակցության առկա ձեռքբերումների վրա, որոնք հիմնականում հանդիսանում են՝ գործադրության բարձր մակարդակի՝ երկողմ և բազմակողմ, դիվանագիտական ջանքերի արդյունք: Ներկայում միջինասիական երկրներում չինական կորպորացիաները մասնակցում են շորջ 3 տասնյակի հասնող, այդ թվում նաև՝ հանքավայրերի որոնման ծրագրերի:

*- Ազերի-Զիրագ-Գյոնուշի փայաբաժնները բաժանված են հետևյալ կերպ՝ BP (34.1%, կառավարիչ), Chevron-Texaco (10.2%), Lukoil (10%), SOCAR (10%), Statoil (8.6%), ExxonMobil (8%), TPAO (6.8%), Devon Energy (5.6%), Itoclu (3.9%), Amerada Hess (2.7%): Չանքավայրի հետազոտված պաշարները կազմում են՝ 0.9 մլրդ. տ. նայե և 40 մլրդ. մ3 գազ[13]:

**- Ոչաղողության է արժանի այն հանգամանքը, որ Devon Energy ընկերության նավթի մասնաբաժնի վաճառքի շորջ չինական ընկերությունների (սկզբում CNOOC-ի, այնուհետև՝ CNOOC-ի) հետ տարվող բանակցությունները, 2010թ-ի սկզբում ակտիվություն լրացնական Աղբեջանում՝ այդ թվին որորտի նախարարի կողմից [9-12]: Ենթադրենի է, որ դա արվում էր ԱՄՆ հետ հարաբերություններում առաջացած որոշակի խնդիրների, հատկապես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ԱՄՆ աշակերտության և Կոնգրեսում Յնդասպանության ճանաչման բանաձեկի սպասվող ընսարկումների ենթատերսության: Չինական ընկերությունների Վերաբերյալ լրացնակումների ծավալը կորուկ նվազեց արձանագործությունների հաստատման գործընթացի սահեցումից, և Կոնգրեսի լիազումար նիստում Յնդասպանության ճանաչման բանաձեկի ընդգրկմանը չաջակցելու՝ ԱՄՆ իշխանության հակասության նիստումներից հետո:

***- Ոլորտում Աղբեջանի վարած քաղաքականության ենթատերսություն, հավասականությունը դր մասնաբաժննը կտրվի չինական ընկերություններին չափազանց ցածր է:

Ղինաստանի և Ղազախստանի միջև էներգիայի ոլորտում հարաբերությունների զարգացման խթանման առումով, հիմնարար Նշանակություն ունեցավ նավթի և գազի ոլորտում համագործակցության վերաբերյալ՝ 1997 թ.-ի սեպտեմբերին ստորագրված միջկառավարական համաձայնագիրը, ինչպես նաև CNPC-ի և ՂՀ էներգետիկայի և ռեսուրսների նախարարության միջև ստորագրված ղազախական էներգուեստուրսների հանքավայրերի շահագործման և Ղազախստան-Ղինաստան նավթատարի կառուցման վերաբերյալ հիմնական համաձայնագիրը: ԶՃՀ ԱԸԸ-երի առաջին ժրագիրը Ղազախստանում և Միջին Ասիայում, սկսվել է CNPC-ի կողմից 1997թ-ին ղազախական AktobeMunaigaz ընկերության 60.3% մասնաբաժնի գնումով, և նոյն թվականին ՈՒգեն հանքավայրի զարգացման և շահագործման իրավունքի ստացումով (Բավել-1 և 2- Աղj.-3-5; և Ջարտեզներ-2-6): Ղետագայում CNPC-ի մասնաբաժնը CNPC AktobeMunaigaz համատեղ ծեռնարկությունում, որը ներկայում հանդիսանում է չորրորդ ամենախոշոր նավթ արդյունահանող ընկերությունը Ղազախստանում, հասել է 85.42%-ի և հանդիսանում է Ղազախստան-Ղինաստան նավթատարի հիմնական նավթառաբողջ[13-17]: 2001թ. CNPC-ին ծեռք թրեց Կենսկիակ-Ասիաու 488.8 կմ. երկարությամբ տարեկան 5.9 մլն. տ. թողունակունությամբ նավթամույի 49% մասնաբաժնը[15, 16]: Ղազախստարի շինարարությունը սկսվեց 2002թ-ի մայիսին, և ավարտվեց 2003թ-ի մարտին, դառնալով Ղազախստանում կառուցված հետ խորհրդային առաջին խողովակաշարը: 1998-2005 թթ. CNPC-ին կարողացավ ապահովել իր մասնակցությունը նավթի և թնական գազի մի քանի փոքր հանքավայրերում, որոնցից ամենախոշորը Ղյուսային Բուզայի նավթահանքում ուսական Lukoil-ի հետ հավասար 50% մասնաբաժնի ծեռքբերումն էր [13, 15, 17]:

CNPC-ին երկրաբանական հետազոտությունների, ինժեներա-տեխնիկական և ենթակառուցվածքների ստեղծման, լայնածավալ ծառայություններ է մատուցում Ղազախստանի նավթա-գազային ոլորտում [15, 16] և ներկայում, հանդիսանում է հորատումներ իրականացնող ամենախոշոր ընկերությունը ՂՀ-ում: CNPC-ի դուստր ծեռնարկությունը՝ CPP-ը, հանդիսանում է ոլորտում ամենախոշոր շինարարական աշխատանքներ իրականացնող ընկերություններից մեկը:

Ղազախստանում և տարածաշրջանում CNPC-ի ընդգրկման ամենամեծ նվազումը՝ կանադական PetroKazakhstan ընկերության ծեռքբերումն է: 2005թ. հոկտեմբերին 4.18 մլրդ. դոլարով, մրցություն հարթելով Lukoil-ին, CNPC-ին գնեց ընկերության 100% ակցիաները, որի 33%-ը համաձայն Ղազախստանի էներգիայի և հանքարդյունաբերության նախարարության հետ կորված համաձայնագրի, 2006թ. հունիսին գիշեց ղազախական KMG (KazMunaiGaz) (կամ Պետրոկազախստանը): PetroKazakhstan-ը նավթի

*- PetroKazakhstan-ի հիմնական ակտիվները Կոմիկո նավթահանքն ու Ղիմքենի նավթավերամշակման ծեռնարկությունն էր: Բնուազայում Ղյուրնի ծեռնարկության 50%-ը փոխանցվեց KMG-ին [տես՝ Anna Shiryaevskaya, "KazMunaiGaz Completes Purchase of Shymkent Refinery from CNPC," Platts Commodity News, November 17, 2006]:

և գազի հանքավայրերի շահագործման և արդյունահանման, դրանց արդյունաբերական վերամշակման և առաքումների ինտեգրացված միջազգային ընկերություն է, որը ներկայում հանդիսանում է նավթ և նավթամթերքներ մատակարարող երկրորդ ամենախոշոր ձեռնարկությունը՝ Ղազախստանում [15, 18-20]:

Ղազախստանի հետ երկուո՞մ Էներգոհամագործակցության ամենամեծ հաջողությունը՝ Ղազախստան-Չինաստան՝ 50-50 տոկոս մասնաբաժիններով, 2798 կմ. ընդհանուր երկարությամբ նավթամուղի (ՂՉՆ) կառուցումնէ (Բարտեզ-2) [21]: 2008թ. սկսվեց և 2009թ.-ին ավարտվեց Ղազախստան-Չինաստան նավթատարի երկրորդ փուլի շինարարության աշխատանքները, որոնք ընդգրկում են Կենկիյակ-Կումկու 761 կմ հատվածը, ինչով 2005թ. նոյեմբերին շահագործման հանձնված Ատասու-Ալաշանկոու 962.2 կմ. նավթամուղը միացավ Կասպից ծովի ղազախական հատվածի նավթահանցերով հարուստ շրջանին [22, 23]: Դամաձայն ՉԺՀ Ղազախստանի Զիո Զինտաոի 2008թ.-ի օգոստոսին՝ Ղազախստան կատարած այցի ընթացքում ձեռք բերված համաձայնության՝ 2010թ.-ի երկրորդ կեսից, սկսվում է ՂՉՆ-ի երրորդ աստիճանի աշխատանքները, որի ընթացքում 10 նոր պոմպակայանների կառուցմամբ նավթատարի ներկայիս 10 մլն. տ. տարեկան քողովակությունը, կհասցվի 20մլն. տ. [24]: Ղազախստարի մատակարարման հիմնական ադրբյունները կումկու նավթահանցից սպասվող 7 մլն. տ., CNPC AktobeMunaigaz ընկերության տարեկան 5 մլն. տ., ինչպես նաև արևմտյան Ղազախստանի և Կասպից ծովի ղազախական հատվածից արդյունահանվող նավթը է: Դամաձայն ՈԴ և ՂՀ կառավարությունների միջև ձեռք բերված համաձայնության տարեկան ամենաքիչը, 5 մլն. տ. ռուսական նավթ Օմսկ-Պավլոդար-Ակտաու նավթամուղով, առաջընթաց է ՂՉՆ-ով Չինաստան [22]: 2009թ.-ին ՂՉՆ-ով առաքվել է 7.7 մլն. տ. նավթ, որից 1.5 մլն. տ.-ը՝ Ռուսաստանից [25]:

2006թ.-ի հունիսին, ԲԹՁ արևմտյան ուղղությամբ նավթամուղի հետ գրեթե միաժամանակ, կոմերցիոն շահագործման հանձնված Ղազախստան-Չինաստան նավթատարը, սկզբնավորեց արևելյան հիմնական սպառման շուկա՝ Կասպյան շրջանից Էներգակիրների խողովակաշարային տեղափոխումը, միաժամանակ հանդիսանալով նաև արտերկրից Չինաստան մտնող առաջին խողովակաշարը: Ըստ որուած, ի տարբերություն ԲԹՁ-ի, Ռուսաստանն իր պատրաստակամությունն է ցուցաբերել ՂՉՆ-ով համատեղ նավթառաջումների վերաբերյալ: Կասպյան շրջանից արևելյան և արևմտյան սպառման շուկաներ նավթառաջումների վերաբերյալ Ռուսաստանի այս մոտեցումը, հետագայում ամրապնդվելով՝ վերածվում է հիմնարար սկզբունքի՝ տարածաշրջանից Էներգակիրների արտահանման ուղիների նկատմամբ հետագա մոտեցումների ցուցաբերման առումով:

CNPC-ի 2009 թ. ամենախոշոր ՄԶ գործը Կազմուագազ-ի (KMG) հետ 50-50 հարաբերակցությամբ, JSC Mangistaumunaigas ընկերության 100%-ի գնումն էր՝ 3.3 մլրդ. դոլարով [26-29]: Mangistaumunaigas ընկերությունն ունի երկու խոշոր Կալամկաս և Ջինտիրայ նավթահանքեր և 13 փոքր՝ այդ թվում օֆշոր,

Նավթի և բնական գազի հանքերի շահագործման լիցենզիաներ՝ 50.32 մլն. տ. Նավթի, և գազի 41.8 մլրդ. մ3, ընդհանուր պաշարներով[26,27,30]; Mangistausunai gas ընկերության ՄԶ գործարքն իրականացվեց, տնտեսական ծգնաժամի հաղթահարման նպատակով, ԶՃ կողմից Ղազախստանին հատկացված 10 մլրդ. դոլար երկարաժամկետ արտոնյալ պայմաններով վարկի շրջանակներում, որի վերաբերյալ պայմանագիրը ստորագրվեց 2009 թ. ապրիլին՝ ՂՅ Նախագահ և Ղազարքանի ԶՃ աշխատանքային այցի ընթացքում[31]: Մասացման՝ 1.7 մլրդ. դոլարը որպես վարկ, հատկացվել է KMG-ին, իսկ 5 մլրդ. դոլարը տրվել է Ղազախստանի արտահանման Ներմուծման բանկին՝ տնտեսության այլ ճյուղերում օգտագործելու նպատակով*[18,32]:

Առանձնահատուկ Նշանակություն ունի ցինական ընկերությունների՝ մասնավորապես CNPC-ի Ներդրումային քաղաքականության իրականացման այն առանձնահատկությունը, ըստ որի դրանք երրու չեն սահմանափակվում միայն որորտային ընդգրկմամբ և հիմնականում ուղղեցվում են նաև սոցիալական ուղղվածությամբ բաղադրիչներով: Էներգակիրների ոլորտում Ներդրումներին գուգահեռ, CNPC-ին մեծածավալ միջոցներ է հատկացնում՝ տեղի բնակչության կենսամակարդակի բարելավման, նոր աշխատատեղերի ստեղծման, կենսական և գյուղատնտեսական Նշանակության ենթակառուցվածքների ստեղծման, կրթության, և սպորտի ոլորտներին՝ ֆինանսական աջակցության և այլ սոցիալական ուղղվածությամբ ծրագրերի իրականացման նպատակով**[15,16]: ԶՃ ԱՀՀ-երի կողմից մրցույթներում Ներկայացնող՝ սովորաբար լավագույն ֆինանսական առաջարկների համատեղումը սոցիալական ծրագրերի իրականացման փաթեթների հետ, այդ ընկերությունների Ներդրումային ծրագրերը դարձնում են չափազանց գործիչ և մրցունակ: Լման մոտեցումը, եթե նոյնիսկ ոչ հիմնական, բայց և այնպես՝ կարևոր Նշանակություն ունեցող հանգամանք է ցինական արտերկրյա Ներդրումների իրականացման հաջողության ապահովման առումով ընդիանուապես, և Ղազախստանում մասնավորապես:

- *.- Վարկը տրվել է 10-15 տարվա ժամկետով, որից KMG-ին հատկացված 5 մլրդ. դոլար ցածր տոկոսադրույթով: Մասացմ 5 մլրդ. դոլ. Ղատկացվել է շինական ապրանքների Ներմուծման նպատակով Libor + 3.5%, իսկ՝ 1.5 մլրդ. դոլ.-ը Libor + 5.5%-ով[18,32]:
- . Օրինակներ. - 2004թ-ին CNPC-ի Ներդրումամբ՝ Էմրա-Զանազօհի երկարգիծ կառուցումը՝ արդյունաբերական Նշանակությունից բացի շրջանի բնակչության համար ստեղծեց նոր շուկաներ դրա զարու հնարավորություն:
- Զանազօհի- KC13 զագաւարի կառուցման ընթացքում, CNPC-ին լրացուցիչ իրականացրեց կենկիակ շրջանի բնակչության գազամատակարարման աշխատանքները:
- AktobeMunaGas-ում աշխատում է 20,000 մարդ, որը կազմում է բարյարի աշխատումակ բնակչության ընդհանուր թիվ 15%-ը: Ընկերության աշխատողների յուրաքանչյուր 12-ից 11-ը Ղազախստանու բաղադրայիններն են:
- CNPC-ին օճանակվել է 101 հիվանդանուցների և հոսպիտալների շինարարությանը և նվիրել է 81 շուապ-օգնության մեջնա: Բնակչաներ և մերժնաներ է նվիրաբերվել պատերազմի վետերաններին և այլն.
- ՂՅ Նախագահ՝ Ղ. Նազարբաև CNPC-ին որակել է որպես՝ Ղազախստանում լավագույն Ներդրույթյուն[15,16]:

Ընդհանուր առմամբ, CNPC-ի հարածուն ընդգրկվածությունը Ղազախստանի էներգակիրների ոլորտում, համահունչ է երկու երկրների միջև առկա հարաբերությունների ռազմավարական նշանակությանը:

Sinoprec ընկերության մասնակցությունը Ղազախստանի էներգութեալ ոլորտում սահմանափակվում է երկու հիմնական ծրագրերով (Դավթ-1 - Աղյ.-5): 2004 թ-ին ԱՄՆ Առաջին միջազգային նավթային ընկերության (FIOC) գնումով Sinoprec-ը ձեռք բերեց Կասպից ծովին մոտակա հյուախային շրջանում հինգ նավթահանքերի բլոկների հետախուզման և մեկ բլոկի արդյունահանման իրավունք [1,15,33,34]: Դետագայում՝ Ղազախական Big Sky ընկերության գնումով Sinoprec-ի Sheng Li դրաստր ձեռնարկությունն ընդգրկվեց նաև երեք այլ փոքրածավալ նավթահանքերի շահագործման ծրագրերով[35]: Միջազգային համագործակցության ավելի մեծ փորձառություն ձեռք բերող Sinoprec-ը, վերջին երկու տարում ակտիվորեն ներգրավվում է Ղազախստանի նավթավերամշակման և քիմիական արտադրությունների ոլորտում: 2009 թ. հոկտեմբերին Sinoprec-ը հաղթեց Ասիրատի նավթավերամշակման գործարանի նոր մասնաճյուղի կառուցման 1.04 մլրդ. դրլ. ներդրմամբ ծրագիրի մրցույթում: Մասնաճյուղի կառուցմամբ բացվում են 2500 նոր աշխատատեղեր[36,37]: 2010 թ. մարտին, Sinoprec-ը հաղթեց նաև Ղազախստանում պոլիպրոպիլենի արտադրության գործարանի կառուցման 1.26 մլրդ. դրլ. արժողությամբ ծրագրի մրցույթում[39,40]:


CNOOC-ի Ղազախստանինավթա-գազայինոլորտի ծրագրերինմասնակցելու բոլոր փորձերն առայժմ ավարտվել են անհաջողությամբ: Կաշգան խոշորագույն հանքավայրի BG International Limited (BG), ըրիտանական ընկերության 8.33% մասնաբաժնի՝ CNOOC և Sinoprec ընկերությունների կողմից 2003 թ-ին ձեռնարկված 1.23 մլրդ. դրլ. համատեղ գնման փորձը կանխվեց հանքավայրի ֆայարամշիներում գերակա դիրքեր ունեցող արևմտյան ընկերությունների կողմից, որոնք և իրացրեցին ֆայարամշի գնման իրենց առաջնահերթ իրավունքը (տես Գլուխ-3-ի 3.3-ը և [18, 40-42]): CNOOC-ի հաջորդ՝ ավելի նշանակայից փորձը, կանխվեց Ղազախստանում խոշոր մասնաբաժններ ունեցող UNOCAL ընկերության գնման՝ 2005թ.-ի մրցույթի ծախողմամբ:

Ընդհանուր առմամբ, Չինաստանի և Ղազախստանի միջև տնտեսական համագործակցությունում առաջնային նշանակություն ունեցող էներգիայի ոլորտում գործակցությունը հիմնված է փոխահավետության վրա և ընութագրվում է կայուն զարգացմամբ: Էներգիայի ոլորտում երկկողմ համագործակցությունն ընդգրկում է բավականին լայն շրջանակ*, որում այնուամենայիվ կենտրոնականը նավթի և զաղի ծրագրերն են: Ընդ որում, Ղազախստանի նավթա-գազային ոլորտում ընդգրկված են ոչ միայն ՉԺՀ նավթային ընկերությունները, այլև՝ ներդրումային այլ

* - Համագործակցությունն ընդգրկում է նաև՝ էներգորության հիդրո և ասոմային էներգետիկայի ոլորտները, որոնցում իրականացվում են բազմաթիվ կոնվենտ ծրագրեր[43]:

ծեղնարկություններ*: Բոլոր դեպքերում, այս ռազմավարական նշանակությամբ ոլորտում համագործակցության ծավալման հիմնական սուբյեկտները նավթային ընկերություններն են: Ներկայում շինական ընկերությունները՝ հատկապես CNPC-ին, քավականաչափ կայրու և ազդեցիկ դիրքեր ունեն Ղազախստանի էներգոնետիկությունների շահագործման ոլորտում (Նկ.-4.1): 2009 թ-ի դրույթամբ, շինական ԱՆՀ-երի մասնաբաժինը Ղազախստանի նավթի արդյունահանման մեջ, ամերուկ կազմել է 22%, ինչը կպահպանվի նաև 2010 թ-ին:

Նկար-4.1-Ղազախստանի նավթի արդյունահանման Ազգային ընկերությունների մասնաբաժինները (%)



Աղյուրներ- Oil Review- Kazakhstan Oil News- www.oilreview.kz; ՋΥՐНАԼ "НЕФТЬ И ГАЗ КАЗАХСТАНА - <http://www.oilgas.kz/rus/>[25];

*- China International Trust and Investment Company (CITIC Group)-ը 2006թ-ին 1.91 մլրդ. դնելով կամացական Nations Energy Co. ընկերությունը՝ իր հմանական ուժուցվածքով Կարազհանբաս (Karazhanbas) նավթահանքավայրը՝ 46.24 մլն. տ. պաշարով և 2.5 մլն տ-տարեկան նավթահանությունով: Յետազայտ, CITIC Group)-ը 50% մասնաբաժինը գիշեց KMG-ին [44,45]:

- Չինականի բարեկեցուրյան ֆոնդի China Investment Corp (CIC) ընկերությունը 2009 թ-ի սեպտեմբերին, 939 մլն. դրամով լուսողին սակարանում գլուխ KazMunaiGas ընկերության Global Depository Receipts (GDRs) 74 մետրարկության մոտ 11%-ը դրա սեփականատեր Full-bloom Investment ընկերությունից[46]:

*- Ըստ այլ աղյուրների՝ մասնաբաժինը գտնվում է 25-30% սահմաններում: Ղազախստանի նավթի և գազի ոլորտում շինական ընկերությունների ընդգրկվածության, դրանց տնտեսական գործունեության, ներդրումների և առցիալական ծրագրերի վերաբերյալ՝ ՂԴ Սեցիսի պատգամավորական հարցմանը ՂԴ նավթի և գազի նախարարության 2010 թ-ի ապրիլի պատասխանում նշվել է, որ Չին ԱՆՀ-ի կողմից նավթի արդյունահանման ծավալը՝ Ղազախստանում մինչև 2020 թ-ը նվազելու է 20.1%-ով՝ կազմելով 20.074 մլն. տ., 2010 թ-ի 25.135 մլն. տ. համեմատ[48]: 2010 թ-ին ՂԴ-ում սպասվում է 78-80 մլն. տ. նավթի արդյունահանում (տես՝ Նկ.-3.1 և [25]): Այդ դեպքու՝ շինական ընկերությունների նավթի հանույթը 2010 թ-ին ավելի է քան 30%-ը:

Մյուս կողմից, CNPC-ի Mangistaumunaigas ընկերության վերջին ծերպերումը որոշակիորեն նորովի խթանեց շինական ԱՆՀ-երի ընդգրկվածության ծավալան վերաբերյալ, Ղազախստանի որոշ շրջանակներում առկա անհանգստությունը[49,50]: ՉժՇ ԱՆՀ-երի Ղազախստանում ընդգրկվածության մակարդակի օրյեկտիվ գնահատման համար, պետք է ի նկատի ունենալ, որ շինական ընկերությունների ծրագրերը սահմանափակվում են միայն ցամաքային, այն է ոչ ամենախոշոր հանքավայրերով (Յավել.-1-Ալյ.-1,5) Ղինական ԱՆՀ-ի ակտիվները, մինչև այժմ, չեն ընդգրկում Կասպից ծովի ավագանի օֆշորային հանքավայրերը, որտեղ և հիմնականում կենտրոնացված են Ղազախստանի էներգատեսությունների պաշարները: Թեսզիգ և Կաշագան խոշորաշոյն ծրագրերում ընդգրկվելու շինական ԱՆՀ-երի բոլոր փորձները՝ տարբեր պատճառներով, ավարտվել են անարդյունք: Չնայած բարձրաստիճան պաշտոնյանների, ինչպես նաև երկու երկրների բարձրագույն դեկավարների միջև ծեղոք բերված համաձայնությունների, առայժմ արդյունավետ ավարտի չի հասել նաև Ղարկիան խոշորագույն հանքավայրի շուրջ Kaztransgaz(Kaztransgaz)-ի հետ CNPC- CNOOC կողմանցիումի երկարամյա բանակցությունները [51,52]: Յամածայն փորձագիտական գնահատականների բացի թեսզիգից, Ղազախստանի մնացած ցամաքային հանքավայրերի մեծ մասում այդ թվում նաև շինական ԱՆՀ-երի ակտիվներում, նավթահանույթը 2015թ. հասնելու է իր բարձրակետին, որից հետո սկսվելու է հանույթի ծավալների նվազում: 2020 թ-ին թեսզիգ և Կաշագան նավթահանքերի ակտիվ շահագործման փուլում, Ղազախստանում նավթահանույթը կանխատեսվում է հասցնել շուրջ 150 մլn. տ. տարեկան (տես՝ Նկ-3.1): Յամածայն Ղ՝ նավթի և գազի նախարարության տվյալների [47], նոյն ժամանակահատվածում, ՉժՇ ԱՆՀ-ի կողմից նավթի արդյունահանման ծավալը Ղազախստանում կկազմի 20.074 մլn. տ., կամ Ղազախստանում արդյունահանվող նավթի ընդհանուր ծավալի ընդամենը 13.4%-ը՝ ներկայիս 22%-ի փոխարեն[25,48]: Եթե տվյալ ժամանակահատվածում, շինական ընկերությունները չկարողանան ընդարձակել իրենց ակտիվները Ղազախստանում, ապա ներկայիս ռեսուրսների հիմնա վրա, հեռանկարում լուրջ դժվարություններ կարող են առաջանալ նույնիսկ Ղազախստան-Ղինաստան նավթատարի նախագծային հզորությամբ շահագործման առումով, որով անզամ ներկայիս 10 մլn. տ. տարեկան առաջումների համար զգացվում է անհրաժեշտ ռեսուրսների պակաս* [25,53-55]:

Խնդրի մյուս կողմը՝ Ղազախստանից արտահանումների ուղղությունների դիվերսիֆիկացման ծրագրերի իրագործելիության աստիճանի հիմնահարցն է: Ղազախստանից արտահանումների ներկայումս գործող (Ուսաստանով

*- ՂՉՆ-ով առաջին է հետևյալ բանակությամբ նավթ. 2006թ. (հույսից)՝ 1.76 մլn. տ.; 2007թ.-4.77 մլn. տ.; 2008թ.-6.1 մլn. տ., որից՝ 1.04 մլn. տ. Ուսաստանից; 2009թ.-7.73 մլn. տ., որից՝ 1.5 մլn. տ. Ուսաստանից[25, 53-55]: Ուսաստանից նավթը մատակարարում են՝ TNK-BP and Gazprom Neft ընկերությունները[56]:

տարանցվող նավթատարներ) և ծրագրվող (Տրանս-կասպյան համակարգ, Ղազախստան-Իրան) բոլոր Ենթակառուցվածքների շահագործումը, կամ ստեղծման իրագործելիությունը բացի չինական ուղղությունից պայմանավորված է առաջման - սպառման կենտրոնների միջև տնտեսական և քաղաքական գործոնների միջնորդավորված ազդեցությամբ: Ղազախստանից Չինաստան էներգակիրների արտահանումներն իրականացվում են առաջման - սպառման ուղղակի սխեմայի շրջանակներում, որում տնտեսական փոխշահավետության գործոնը դառնում է առաջնային: Նավթի հարածուն պահանջարկը Չինաստանում և դրա արդյունահանման ծավալների սպառվող նշանակայի աճը Ղազախստանում՝ արևմտյան սպառման կենտրոնի՝ նավթաշուկայի արդեն իսկ ձևավորված համակարգային համեմատական կայունության պայմաններում, հիմնավորում են Ղազախստանից Չինաստան նավթառաքումների ծավալների նշանակալից աճի հնարավորությունը հեռանկարում:

ԶՃ ԱՆՀ-ի Ներգրավվումը ՈՒգրեկստանի էներգութեաւումների շահագործման ոլորտում կատարվել է միայն 2006թ-ին: Մինչ այդ՝ սկսած 2003 թ-ից, CNPC-ին իր դրաստր ձեռնարկությունների միջոցով Ուգրեկստանի նավթային ընկերության համար առաջում էր հորատման սարքավորումներ և մատուցում էր դրանց սպասարկման ծառայություններ[15]: Յետազայում, Ուգրեկստանի նավթա-զազային պետական ընկերության (ՈՒՊՆԸ- Uzbekistan National Oil/Gas Group Corporation) հետ ստորագրվեց համաձայնագիր, որով CNPC-ին իրականացնում է 210 մլն. դր. Ներդրում՝ Ուգրեկստանում նավթի և գազի հանքավայրերի որոնումների և հետազոտությունների նպատակով[46]:

2006թ-ի հունիսին Մինգբուլակ (Mingbulak) նավթահանքի 50%-ի ձեռքբերմամբ (Ղավել-1-Այլ.-5) CNPC-ին ընդգրկվեց Ուգրեկստանի նավթի արդյունահանման ծրագրերում[1,15]: CNPC-ի երկրորդ ծրագիրը՝ ՈՒՊՆԸ, Lukoil, Սալահական Petronas և Յ.Վ. Կորեայի KNOC- կոնսորցիոնի շրջանակներում՝ յուրաքանչյուր 20% մասնաբաժնով, Արայ թի ուգրեկստան հատվածի հինգ նավթա-զազային բրոների հետազոտման ծրագիրն է:

ԶՃ ԱՆՀ-ի Ներգրավումը Թուրքմենստանի էներգակիրների հետազոտման և արդյունահանման ծրագրերում, սկսվել է CNPC-ի կողմից Գոմդակ (Gumdak) նավթահանքի 100%-ի հինգ տարով ձեռքբերմամբ՝ 1949 թ-ից շահագործվող հանքավայրում՝ արդյունահանման ծավալների ավելացման նպատակով[1,15] (Ղավել-1 և 2- Այլ.-3-5; և Ջարտեզ- 4): 2005 թ-ին CNPC-ի և Թուրքմենստանի նավթի և հանքարդյունաբերության նախարարության միջն նավթի ոլորտում, իսկ 2006 թ-ին բնական գազի ոլորտում համագործակցության վերաբերյալ ստորագրված պայմանագրերով ձևավորվեց Թուրքմենստանի էներգակիրների հետազոտման և արդյունահանման ծրագրերում CNPC-ի ներգրավման իրավական հիմք[1,15]:

Յետազա երկու-երեք տարիների ընթացքում, CNPC-ին դարձավ

Թուրքմենստանի էներգակիրների՝ հատկապես թնական գազի ոլորտի ամենանշանակալից ներդրող ընկերություններից: 2006թ նոյեմբերից, CNPC-ն հրավիրվեց՝ Հարավային Իոլոտանիա-Օսման հանքավայրի հետազոտական աշխատանքներն իրականացման նպատակով և 2007-2008թթ. ընթացքում կատարեց 12 երկրաբանա-հետախուզական հորատում: Հանքավայրում հետախուզական և զարգացման աշխատանքների հետագա ժամանակաշրջանում՝ 2009թ. հունիսին, CNPC-ն 3 մլրդ. դոլ. վարկ առաջարկեց Թուրքմենստանին: 2009թ-ի դեկտեմբերին՝ CNPC, Հարավ կորեական LG International Corp և Hyundai Engineering Co, Արարական Էմիրաթներից Gulf Oil & Gas Fze և Petrofac International Corp. Ընկերություններից կազմված կոնսորցիոնը՝ 9.7 մլրդ դոլարով, հարեց Հարավային Իոլոտանիա-Օսման հանքավայրի շահագործման և արդյունահանման համար հայտարարված մրցույթը[57,58]:

2007թ-ի հունիսին CNPC-ին ստորագրությամբ Բագտիհառիկ շրջանում Ամու-Դարյա գետի աջ ափի, ըստ պաշտոնական տվյալների՝ 1.3 տրիլ. մ3 պաշարով թնական գազի հանքավայրերի 30 տարով՝ արդյունահանման և համատեղ իրացման պայմանագիր, որը Թուրքմենստանի կառավարության կողմից արտերկրյա ընկերությանը տրված թնական գազի հետազոտման և շահագործման առաջին արտոնագիրն էր[15,59,60]: Սպասվում է, որ հանքավայրից արդյունահանումը կկազմի 2010 թ. 3-5 մլրդ. մ3, իսկ 2012թ-ից սկսած պելի քան 13 մլրդ. մ3: Դա առանձնապես կարևոր նշանակություն ունեցող պայմանագիր է և CNPC-ի Թուրքմենստանում լայնածավալ ընդգրկման, և թե այն առումով, որ Բագտիհառիկ շրջանը հանդիսանալու էր Թուրքմենստան-Չինաստան (Տրանս-Ասիական գազատար՝ SU4*) գազատարի ռեսուրսային մատակարարման հիմնական աղյօտը:

*- Գրականությունում գազատարի անվանման համար օգտագործվում է նաև՝ Միջին Ասիա-Չինաստան, Կենտրոնական Ասիա-Չինաստան, Չինաստան-Միջին Ասիա և այլն: Տրանս-Ասիական գազատար՝ (SU4) անվանումը CNPC-ի կողմից օգտագործվող պաշտոնական անվանումն է (Trans Asia gas pipeline): Մրագիրը իրականացվում է CNPC-ի դուստր ծեռնարկության՝ Trans Asia Gas Pipeline Co. Ltd. (TAGP Co. Ltd.) ընկերությունը:

4.2.- Տրանս-Ասիա Գազատարի* դերը Զինաստանի էներգանվտանգության ապահովման առումով և դրա տարածաշրջանային-աշխարհաքաղաքական նշանակությունը

Միջին Ասիայից թնական գազի ՉԺՀ մատակարարությունների հնարավորությունների վերաբերյալ ըննարկումներն սկսվել են 1992 թ-ից, երբ ճապոնիայի Նախաձեռնությամբ Exxon և Mitsubishi ընկերությունները՝ CNPC-ի հետ համատեղ, Նախնականորեն դիտարկեցին՝ Թուրքմենստան-Զինաստան-Ճապոնիա Էներգետիկ Սետարքի Ճանապարհ անվանումով գազատարի տեխնիկա-տնտեսական հիմնավորվածությունը (SS3)[60]: Ծրագիրը մերժվեց, քանի որ գազատարի Երկարության հետևանքով այն դաշնում էր տնտեսապես անսպատակահարմար[60]: Դեռագայում, դիտարկվեց Ղազախստան- Զինաստան նավթամույշն գույահեռ գազատարի շինարարություն հնարավորությունը: Երկարատև քանակցությունների արդյունքում ՉԺՀ Նախագահ Շու Զինտաոյի 2003 թ-ի Ղազախստան կատարած այցի ընթացքում ստորագրվեց պայմանագիր՝ Ղազախստան-Զինաստան գազատարի կառուցման աշխատանքների արագացման վերաբերյալ[61,62]: Պայմանագրի համաձյան KazMunayGas և CNPC (CNODC) ընկերությունները սկսեցին և 2005թ-ին ավարտեցին, գազատարի SS3 աշխատանքները, որի արդյունքում հիմնավորվեց թնական գազի այլ ռեսուրսների և միջինասիական այլ երկրներից առաքումների ներգրավման անհրաժեշտությունը [60-62]: Թուրքմենստանի հետ գույահեռաբար տարվող քանակցությունների արդյունքում, Թուրքմենստանի նախագահ Ս. Նիշագովի 2006 թ-ի ապրիլին ՉԺՀ այցի ընթացքում, ստորագրվեց Թուրքմենստան-Զինաստան գազատարի կառուցման և Երկարաժամկետ գազամատակարարությունների վերաբերյալ շրջանակային պայմանագիրը, որի իրականացումն արագացնելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց 2007 թ-ի հուլիսին Թուրքմենստանի նոր նախագահ Բերդիմուհամմեդովի ՉԺՀ այցի ընթացքում[60-63]: 2007 թ-ի ապրիլին ՉԺՀ և Ռուսական ստորագրեցին գազատարի ուղեկական հատվածի համատեղ կառուցման և շահագործման վերաբերյալ միջաբետական համաձայնագիր, իսկ 2007 թ-ի հուլիսին Թուրքմենստանը պաշտոնապես հայտարարեց Թուրքմենստանից Զինաստան գազատարը Ղազախստան-Զինաստան խողովակաշարին միացնելու վերաբերյալ իր համաձայնությունը[61,65,66]: 2007 թ-ի հուլիսին Թուրքմենստանի և Զինաստանի միջև ստորագրվեց Էներգետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ, որը բացի արդյունահանման և համատեղ իրացման վերաբերյալ վերոհիշյալ պայմանագիրից, իր մեջ ներառում էր նաև SS3 պայմանագիրը սահմանող խողովակաշարի կառուցման հիմնական պարամետրերի վերաբերյալ Ղամաձայնագիրը, ինչպես նաև գազի վաճառքի և գնման վերաբերյալ Ղամաձայնագիրը, որով սահմանվում է միջազգային շուկայում նավթի գների վրա հիմնված «միջազգային գներին համարելի» գնագոյացման

*- Տես Հավելվածներ-1-ի և 2-ի Աղյուսակ-3-ը; և Բարտեզներ- 3, 4 և 6-ը:

մեխանիզմ: Գազատարի համար, որպես Թուրքմենստանից ռեսուլսային աղբյուրներ, նշվել են արդյունահանման և համատեղ իրացման պայմանագրով ընդգրկված գազահանքերը և գործող Մալայա հանքավայրը, որոնցից համապատասխանաբար կարող են առաքվել 13 մլրդ. մ3 և 17 մլրդ. մ3 ծավալներով բնական գազ: 2007թ-ի նոյեմբերին Աստանայում ստորագրված՝ Ղազախստան-Ղինաստան գազատարի համատեղ կառուցման և շահագործման սկզբունքների վերաբերյալ պայմանագրով ամրողացվեց համաձայնությունների փաստաթղթային փաթեթը, ինչն ընծեռնում էր այս խոշորածավալ ծրագրի իրականացման հնարավորություն: Երկկողմ և բազմակողմ երկարամյա բանակցությունների և գործադրված դիվանագիտական ջանքերի շնորհիվ, կազմավորվեց Թուրքմենստան-ՌԴգրեկստան-Ղազախստան-Ղինաստան գազամուխ կառուցման՝ Կասպյան շրջանից էներգակիրների արտահանման 20-ամյա քննարկումների արդյունքում ծևավորված, առաջմ տնտեսապես ամենահիմնավորված և ամենաարդյունավետ ծրագիրը:

Տրանս-Ասիական գազատարը սկսվում է ՌԴգրեկստանին սահմանակից Թուրքմենստանի Գեղիան շրջանից, որտեղ CNPC-ն միանձնյա տնօրինում է 1.3 տրիլ. մ3. պաշարով զարգահանքի, անցնում է ՌԴգրեկստանով (525կմ) և Ղազախստանով (1293 կմ) ու հատում է ՉժՇ սահմանը՝ Սինծյան նահանգի Յորգոստում: Ներկայում ՏՏԳ-ը գուգահեռ ընթացող երկգծյա խողովակաշար է, յուրաքանչյուրի 1067-մմ. տրամագծով: Գազատարի շինարարության ընդհանուր ներդրումը միջինասիական հատվածում կազմում է 7.31 մլրդ. դրյալը: Ցուրաքանչյուր երկրի տարածքում գազատարի տվյալ հատվածի կառուցումն ու հետագա կառավարումն իրականացվում է՝ տվյալ երկրի նավթա-զազային պետական ընկերության հետ՝ CNPC-ի՝ 50-50 տոկոս հարաբերակցությամբ համատեղ ծեռնարկությունների միջոցով: Ամբողջ ներդրումն երաշխավորվում է շինական կողմը[68,73]:

Կառուցման աշխատանքները սկսվել են 2007թ. կեսերից և վերջնականապես պետք է ավարտվեն 2013-2014թթ.[67,68]: 2009թ. դեկտեմբերի 14-ին, չորս երկրների նախագահների մասնակցությամբ տեղի ունեցավ գազատարի առաջին հերթի բացումը, որով սկսվեց տարեկան 3-5 մլրդ. մ3 գազամատակարարումը[69-72]:

Տրանս-Ասիական գազատարի կառուցման ընթացքում՝ գուգահեռաբար շարունակվող քննարկումների ու բանակցությունների արդյունքում, ինչպես նաև նախկինում ծեռօք թերված պայմանավորվածությունների հստակեցման շնորհիվ միջինասիական բնական գազի Ղինաստան առարումների ընթացիկ ծրագրերը զգայիրեն ընդլայնվեցին: Ըստ 2008 թ. օգոստոսին վերանայված պայմանագրի, գազատարով 30 մլրդ. մ3-ի փոխարեն առաքվելու է 40 մլրդ. մ3 թուրքմենական գազ: Ղինաստանը համաձայնվեց երաշխավորել՝ Ղազախստանի Բեյնեուից սկսվող և Սամսոնովկայում (քնակավայր՝ Շիմկենդիմուտակայրում)ՏՏԳ-ին միացող՝ 1400կմ. երկարությամբ, տարեկան 10-15 մլրդ. մ3 հզրությամբ, գազատարի շինարարության՝ 2.5 մլրդ. դրյ. ֆինանսավորումը՝ կառուցման և հետագա կառավարման նույն 50-50 տոկոս

սկզբունքով[75,76,79]: Գազատարով ՏԱԳ-ի համակարգի օգտագործմամբ, թնական գազ է մատակարարվելու Ղազախստանի հարավային շրջանի թնակավայրերին, ինչպես նաև հետագայում, տարեկան 5 մլրդ. մ³ (հնարավոր է մինչև 10 մլրդ. մ³) թնական գազ է առաքելու ՉԺՀ[75,76]: Բնյանեու-Սամսոնովկա գազատարի Վերաբերյալ վերջնական պայմանագիրը ստորագրվեց 2010թ. հունիսին ՉԺՀ Նախագահի Ղազախստան այցի ընթացքում[75,76]: 2010թ. հունիսին կայացած ՉԺՀ Նախագահի Ուգրեկստան այցի ընթացքում, CNPC-ին և Uzbekneftegaz-ը ստորագրեցին տարեկան 10 մլրդ. մ³ ուգրեկական գազի Ղինաստան մատակարարման պայմանագիր, որի վերաբերյալ ուգրեկական կողմի առաջարկը ըննարկվում էր 2008 թ-ից[77-79]: Այցի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց նաև Ուգրեկստանում գազամատակարարումների համակարգի զարգացման նպատակով 2մլրդ. դր. վարկի տրամադրման, ինչպես նաև ոլորտում ցինական ուղղակի ներդրումների ընդարձակման վերաբերյալ [79]: Վերոշարադրյալ պայմանավորվածությունների արդյունքում, Միջին Ասիայից Ղինաստան ծրագրվող գազամատակարարումների տարեկան ծավալը հասցվեց 55-60 մլրդ. մ³-ի, ինչը ենթադրում է ՏԱԳ-ի գույահեռ ընթացող՝ 1220 մմ. տրամագծով, երրորդ խողովակաշարի կառուցում, որով ՏԱԳ-ի թողունակունությունը կարող է համապատասխանեցվել նշված ծավալներին:

Սուանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Յամաձայնագրերի ծրագրային փաթեթով ամրագրվող պայմանավորվածություններով, աշխարհում ամենաերկար և չորս երկրների սահմանների հատողի խողովակաշարի յիշաբրում, փոխհարաբերությունների մակարդակը հասցվեց համագործակցության «առաջող-սպառող» բանաձևի կիրաօմանը, որով տնտեսական նպատակահարմարության և փոխադարձ շահերով պայմանավորվող գործոնների ազդեցությունը ծրագրում՝ վերածվեց առաջնահերթության: Ծրագրում ընդգրկված միջինասիական երեք երկրներից յուրաքանչյուրն, իրեն համար հասանելի ծավալներով, թնական գազ են առաքելու՝ էներգակիրների սպառման արևելյան հիմնական կենտրոնի՝ Ղինաստանի համար, համեմունք էներգակիրների արտահանումների համար ռազմավարական նշանակություն ունեցող դիվրիսիֆիկացման, միաժամանակ՝ ստանալով իրենց երկրներում տվյալ ոլորտի և գազառաքումների ենթակառուցվածքային համակարգի զարգացման համար նպաստավոր պայմաններ: Երկարամյա բանակցությունների արդյունքում, յուրահատուկ ձևունությամբ ապահովվեց միջինասիական երեք երկրների և Ղինաստանի տնտեսական շահերի գործնական ներդաշնակումը և ծրագրի իրագործելիության առումով քառակողմ շահագրգուվածության առկայությանը: «Մաքրու» տրանզիտային երկրի բացակայությունը մշտապես նշանակալիորեն նվազեցնում է քաղաքական գործոնների ազդեցության աստիճանը մի քանի երկրների տարածքներով անցնող

ցանկացած խողովակաշարի դեպքում:

Թաղաքական-դիվանագիտական առումով՝ SUԳ-ի հիմնական առանձնահատկությունը չորս երկրների բարձրագույն դեկավարների համատեղ ջանքերի կիրառումն է և հանդիսանում է Կասպյան էներգառեսուրսների ոլորտում Ներկա ժամանակաշրջանի համար, բացառիկ ներդաշնակ և սերտ համագործակցության արդյունք: Գազատարը, շոշափելիորեն խթանելով տնտեսական և հատկապես էներգետիկ ոլորտում, ԶԺԴ համագործակցությունը Միջին Ասիայի երկրների հետ միաժամանակ նշանակալիորեն ամրապնդում է Ղազախստանի և Նրա հարևան երկրների հետ Ղինաստանի քաղաքական գործնկերային հարաբերություններն ու փոխադարձ շահերի համակարգման հնարավորությունները: Գազատարը նշանակալիորեն ամրապնդում է Ղինաստանի դիրքերը տարածաշրջանի էներգառեսուրսների և տնտեսության ոլորտներում, ինչը հեռանկարում կարող է հանգեցնել Միջին Ասիայում ԶԺԴ ազդեցության աճին[81-83]: Միաժամանակ նշանակալիորեն աճում է նաև Ղազախստանի դիրքը Ղինաստանի էներգոանվտանգության ապահովման համակարգում, որը վերահսկում է Ղազախստան-Ղինաստան նավթատարը և որի տարածքով է անցնում SUԳ-ի միջինասիական հիմնական հատվածը: Ուգրեկստանի՝ որպես SUԳ-ով արտահանվող գազի ավելի քան 16%-ն առաքող կողմի ներգործավաճությունը որոշակիորեն հաշվեկշռություն է Ղազախստանի հնարավոր ազդեցությունների մակարդակը:

ԶԺԴ էներգոանվտանգության ապահովման առումով՝ բացի էներգակիրների արտերկյա ներկրման աղբյուրների դիվերսիֆիկացման առաջնահերթ նշանակությունից SUԳ-ը հիմնարար նշանակություն ունի նաև Ղինաստանում օգտագործվող էներգառեսուրսների տեսակների տարաբաժանման ներկայիս աննպաստ հարաբերակցության փոփոխման առումով: Ածովսի փոխարինումը շրջակա միջավայրի համար ավելի քիչ վնասակար այլ ռեսուրսներով մասնավորապես քնական գազով, ինչպես նաև խոշորագույն քաղաքների քնակցության համար գազամատակարարման ապահովումը հանդիսանում է ԶԺԴ էներգետիկ ռազմավարության կարևորագույն էլեմենտներից մեկը: Ղինաստանի տարածքում SUԳ-ը միանում է երկրորդ՝ Արևմուտք-Արևելք՝ 20 մլրդ. ԱՄՆ դոլար ընդհանուր ներդրմամբ, և ավելի քան 6800 կմ ընդհանուր երկարությամբ ռազմավարական նշանակությամբ գազատարին, որը սկսվելով՝ Մինձյանի Հորգոս սահմանային քնակավայրից և հատելով Ղինաստանի 14 նահանգներ, ավարտվում է Հոնկոնգում[73]: SUԳ-ի կառուցմանը համապատասխան, երկրորդ՝ Արևմուտք-Արևելք գազատարի առաջն հերթ՝ արևմտյան հատվածը նոյնպես շահագործման հանձնվեց 2009թ. ոեկտեմբերին[74]: Գազատարի արևելյան հատվածը նախատեսվում է շահագործման հանձնել 2011թ.-ին:

2014-2015թ. ընթացքում այս ծրագրի ամբողջացումով, Ղինաստան արտերկրին կապող ամենահզոր խողովակաշարային ենթակառուցվածքը՝

Տրանս-Ասիական գազատարը, վերածվում է գազառաքումների տարածաշրջանային խոշորագույն համակարգի, որի նշանակությունը հեռանկարում կարող է շոշափելիորեն գերազանցել՝ միայն Միջին Ասիայից էներգոդիվերսիֆիկացման անհրաժեշտությամբ պայմանավորվող չափանիշները: Գազատարը, Զինաստանի խողովակաշարային համակարգն ինտեգրում է ոչ միայն ՉԺՀ համար ռազմավարական նշանակություն ունեցող միջին ասիական էներգոհամակարգի, այլև հեռանկարում կարող է հիմնային նշանակություն ունենալ Իրանից և մերձավորարևելյան այլ երկրներից էներգակիրների Զինաստան մատակարարումների համար: **Տարածաշրջանային-աշխարհաքաղաքական այս նշանակության գրունական կիրառելիության համար ոսանելի է Ղազախստանից Զինաստան նավատարի ինտեգրվածությունը Ռուսաստանի խողովակաշարային համակարգին:**

Տարածաշրջանից էներգառեսությունների արտահանման ուղղությունների որոշման ենթատերստում, Տրանս-Ասիա գազատարի կարևորագույն նշանակությունն այն է, որ առաջին անգամ միջինասիական երկրներից՝ հատկապես Թուրքմենստանից, մեծ ծավալներով գազառաքումը շրջանցում է Ռուսաստանը, ինչը փաստացի խաթարելով միջինասիական գազի ոլորտում Գազպրոմի գրեթե լիակատար մոնոպոլիան, շոշափելիորեն նվազեցնում է այդ երկրների կախվածությունն արտահանումների ռուսական ուղղությունը: Սույն հանգամանքով թուլանում է նաև Գազպրոմի բանակցային դիրքերը, ինչպես միջինասիական երկրների հետ, այնպես էլ Զինաստանի հետ Ռուսաստան-Զինաստան գազատարների կառուցման, ընթացիկ բանակցություններում* մրցակցային որոշակի դաշտի ծևավորման հետևանքով[81-85]:

Վերջին խնդիրների ոչ մակերեսային դիտարկումը հնարավորություն է ընծեռում առաջացած իրավիճակին մոտենալ այլ տեսանկյունից: Ճգնաժամի հետևանքով էներգակիրների գների նվազումը միջազգային շուկայում և Եվրոպայում գազի պահանջարկի կարծատ անկումն անգամ վեր հանեց Գազպրոմի իներցիայով ծևավորված մոնոպոլ դիրքերի էկոնոմիկական հիմնավորվածությաբ ամրապնդվածության բացակայությունը և անհեռանկարայնությունը: Գների և ծավալների վերաբերյալ նախկին պայմանավորվածությունների հիման վրա գազի ներմուծումները Թուրքմենստանից Գազպրոմի համար կարող էր վերածվել ֆինանսական զգայի կորուստներով բեռի, հսկ արտահանումների 2009թ-ի Նշանակալի անկումը հանգեցրեց Թուրքմենստանի գազի ոլորտում ծանրագույն կորուստների: Ըստ որում, Գազպրոմն արդեն հսկ հայտարարել է, որ՝ 2010թ-ի համար պայմանավորված 30 մլրդ. մ³-ի փոխարեն, Թուրքմենստանից կարող է ներմուծել ընդամենը՝ 15-17 մլրդ. մ³ [86]: Ինընին հասկանալի է, որ մրցակցային պայմանների ծևավորմանը համընթաց, Գազպրոմի

* 2009 թ. հոկտեմբերին ՌԴ Կարչապետ Վ. Պոտախինի ՉԺՀ այցի ընթացքում, Գազպրոմը և CNPC-ին ստորագրեցին՝ ՌԴ արևմտյան և արևմտյան սիրիյան շրջաններից, երկու գազատարների կառուցմամբ, տարեկան մինչև՝ 70 մլրդ. մ³ թնական գազ ՉԺՀ առքելու հիմնական պայմանների վերաբերյալ շրջանակային պայմանագիրը: Գազի գների ծշոման վերաբերյալ բանակցությունները շարունակվում են[80]:

համար ոչ միայն անհետարին, այլև անհիմաստ կյիներ, մոնոպոլ դիրքի պահպանման ծգություն տարածել Միջին Ասիայից գաղի արտահանումների բոլոր ուղղությունների վրա: Ուսասատանի համար ռազմավարական նշանակություն ունի արտահանումների եվրոպական ուղղությունը և Եվրոպայի քնական գաղի շուկայում գերակա դիրքերի պահպանումը: Այս իմաստով, ՏՏԳ-ն անշուշտ չի արգելակառում արևմտյան ուղղվածությամբ ծրագրերի իրականացումն ինչպես Ենթադրվում է քազմաթիվ հետազոտողների կողմից [87,88]. բայց և այնպես, առաջացնում է գաղի անհրաժեշտ ծավալների արդյունահանման ապահովման ժամանակային տեղաշարժ, ինչպես նաև՝ այլ ծրագրերի համար՝ տնտեսական արդյունավետության ու կայուն շուկայական պահանջարկի առկայության, համեմատական գնահատումների սանդղակային նոր մակարդակ: Միջինասիական երկրների համար, Էներգակիրների արտահանման նոր շուկաներ դուրս գալու ունի կարևորագույն նշանակություն: Վերջին երկու տարիներին ռուսական ուղղությամբ Եվրոպական շուկա արտահանումներում առաջացած իրավիճակը, քնական գաղի Չինաստան առաջումների նշանակությունը Թուրքմենստանի համար, Վերածում է կենսականի: Թուրքմենստանում արդին իսկ հաստատված պաշարների դեպքում անգամ 40 մլրդ.մ³ շինական շուկա արտահանումները չեն կարող էական ազդեցություն ունենալ, Ուսասատանի՝ գաղի ոլորտում միջինասիական հիմնական ծրագրերի՝ մասնավորապես Մերձկասպյան գազատարի իրագործելիության առուածք: Մինչդեռ, ալտերնատիվ և կայուն արտահանումների՝ շինական շուկայի առկայությունը Թուրքմենստանին հնարավորություն է ընծեռում ավելի անշտապ և ծանրակշիռ որոշումներ ընդունել նոր ծրագրերի՝ մասնավորապես, Տրանս-Կասպյան գազատարի իրականացման առուածք, կշռադատելով դրանց տնտեսական նպատակահարմարությունը, իրագործելիության աստիճանը և հնարավոր քաղաքական հետևանքները:

Թուրքմենստանից և միջինասիական մյուս երկրներից գաղի արտահանուը շինական շուկա էականորեն չի սահմանափակում նաև Չինաստանի ընական գաղի շուկայում Ուսասատանի ապագա ներգրավումը [89]: ՏՏԳ-ի՝ նոյնիսկ ամրող հզրությամբ շահագործման դեպքում, միայն որոշ ժամանակահատվածում կարող է ապահովել քնական գաղի ներմուծումների Չինաստանի պահանջարկը (տես. Նկ.-1.16): Չինական շուկան ունի զարգացման հսկայական հեռանկարային ներուժ և ՌԴ-ից քնական գաղի ներմուծումը Չինաստանի համար նույնըան՝ եթե ոչ ավելի, կարևոր է ԶՃՀ համար, որքան՝ միջինասիականը: Դա թելաշրջում է եներգակիրների ներմուծումների դիվերսիֆիկացման տրամաբանությամբ, որի հիմնադրույթը երկրի էներգետիկ անվտանգության համակարգում որևէ ուղղության՝ տվյալ դեպքում միջինասիական, հնարավոր ազդեցությունների սահմանափակումն է: Մյուս կողմից, չնայած ՌԴ-ԶՃՀ էներգոհամագործակցության զարգացման առուածք քաջապարամետր խնդիրների առկայությանը [85,90-93],

այնուամենայնիվ՝ միջազգային պատասխանատվության առավել բարձր մակարդակը, երկու երկրների համագործակցությանը որևէ ոլորտում՝ այդ թվում նաև էներգետիկայի, հաղորդում է կայունության առավել բարձր մակարդակ: Սույն հանգամանքն առանձնակի նշանակություն ունի՝ միջինասիական տարածաշրջանի երկրների միջև բազմաթիվ հիմնախնդիրների[94,95], ինչպես նաև՝ տարածաշրջանի երկրների պետական կառավարման համակարգում՝ անձնական հատկանիշների ազդեցության բարձր մակարդակի առկայության պայմաններում:

4.3. Միջին Ասիայի Էներգակիրների ռազմավարական նշանակությունը ԶԺ՝ Էներգոանվտանգության ապահովման առումով

Էներգետիկ անվտանգության հիմնային նպատակը «Էներգիայի համարժեք և հուսային մատակարարության էնելամիտ գներով և այնպես, որ չվտանգվեն ազգային հիմնական արժեքներն ու նպատակները» [96]: Դա իր մեջ ներառում է երկրի սովետականության և էկոնոմիկայի բնականու գործունեության ապահովումը, ինչով և վերածվում է տնտեսական զարգացման և երկրության ապահովման ռազմավարական գործունիքը: «Պետական կենտրոնացվածությունը, մատակարար կողմից կանխակալությունը, հիմնականում նավթային ուղղվածությունը» [97] էներգիայի անվտանգության առումով ավանդական մտածողությամբ մոտեցումն է, որը միտված է նաև էներգոանվտանգությունը համարժեքավորել սեփական միջոցների քավարարության մակարդակի հետ [97-99]: Էներգոանվտանգությունը, ներկայում արդեն՝ երկողմ և տարածաշրջանային տնտեսական անվտանգության ապահովման կարևորագուն է, և գնալով էներգիայի հիմնախնդիրն ավելի ու ավելի է վերածվում՝ ընդհանրապես միջազգային հարաբերությունների անվտանգության օրակարգի կարևորագույն հիմնահարցի:

Էներգոանվտանգությունը միաժամանակ էկոնոմիկական և քաղաքական բնույթի հիմնախնդիր է: Նավթային անվտանգությունն էներգոանվտանգության կենտրոնական հարցն է և հանդիսանում է միջազգային քաղաքականության բարդագույն հիմնախնդիրներից քանի որ հիմնական էներգոսպառող երկրներու պատմականորեն ձևավորվել է արտաքին աղբյուններից նավթի մատակարարությունը կախվածություն և դրա հետևանքով այս հիմնախնդրում ավանդաբար ներմուծվել են համաշխարհային քաղաքականության բազմաթիվ գործուներ, որոնք դուրս են գտնվում շուկայական և էկոնոմիկական նպատակահարմարությամբ սահմանվող գործուների բազմությունից: Այս իմաստով, հիմնական նավթօգտագործող երկրների, ինչպես նաև գրուազ նավթային անվտանգության խնդիրների լուծումները կարող են փնտրվել միջազգային տնտեսական և քաղաքական համակարգային հարաբերությունների ենթատեքստում: «Նավթամատակարարությունների անվտանգության կայուն, հուսայի և բարձր արդյունավետությամբ մեխանիզմների ստեղծումն անհնար է, եթե չեն օգտագործվում ոյիվանագիտական բոլոր միջոցները և միջազգային համագործակցությանն ու համակարգմանը՝ չի տրվում գերակա նշանակություն» [100]:

Նավթի ներկրություններից կախվածության արագընթաց ամի և իրացյան պատերազմի ազդեցության հետևանքով՝ ԶԺ-ում նախազգուշական ռազմավարության ընդունման և կիրառման շրջանակներում, արդեն իսկ 2000-ականների սկզբներին, նավթառաջումների և էներգոանվտանգության ապահովման ռազմավարության մշակման նպատակով Շինաստանում

կազմակերպվեցին լրջագույն և լայնածավալ ըննարկումներ: Այդ ըննարկումների մասնակիցների շրջանակում ընդգրկված էին ինչպես շահագրգիռ նավթային ընկերություններն (CNPC, Sinopec, CNOOC) ու պետական կառավարման մարմինները (Բարեփոխումների և պլանավորման պետական Կոմիտե, արտգործնախարարությունը, պաշտպանության նախարարություն և այլն), այնպես էլ տնտեսական և արտաքին քաղաքականության գիտահետազոտական ինստիտուտները, ԶՃՀ գիտությունների ակադեմիան և մամուլը[100-108]: Աննարկումներն անշոշտ ընդգրկում էին Էներգոանվտանգության ռազմավարության ողջ բազմապարամետր սպեկտորը, այդ թվում նաև՝ արտաքին աղբյուրների մատչելիության և Էներգակիրների՝ հատկապես նավթի մատակարարումների անվտանգ և կայուն ապահովման հիմնահարցերը: ԶՃՀ Էներգոանվտանգության ռազմավարությունը Ենթադրում է բազմամակարդակ և բազմապարամետր գործնարարությունը՝ համակցությունը, որի հիմնարար տարրերից մեկը՝ արտաքին աղբյուրներից Էներգոանվտանգության մատակարարումն է, որը կամա թե ակամա՝ ընթանում է միջազգային հարաբերությունների և քաղաքականության մակարդակում:

Էներգոանվտանգության արտաքին կախվածության դեպքում, տվյալ երկրի Էներգոանվտանգության մակարդակը սահմանվում է Էներգոանվտանգության առկայության, հասանելիության և մատակարարումների հոսա-լիության** ապահովման գործուներով[99], ինչը վերջ ի վերջո գնահատվում է առանց լորջ տնտեսական և ռազմական հետևանքների, արտաքին աղբյուրներից անհիրաժեշտ քանակությամբ Էներգակիրների կարճաժամկետ և երկարաժամկետ մատակարարման կարողությամբ[98]: Սոարման յուրաքանչյուր աղբյուրի դեպքում առկա է մատակարարումների ժամանակավոր, կամ ընդհանրապես՝ ընդհատման հավանականություն, որը կարող է առաջանալ ընական և տեխնոգեն աղետների հետևանքով, իսկ վատագույն դեպքում, կարող է պայմանավորված լինել քաղաքական պոտենցյալ անկայունության, տնտեսական պարտադրանքի, կամ՝ ռազմական և ահաբեկչական ընույթի գործուներով: Ըստ որում, պեսոք է ի նկատի ունենալ, որ ոչ միայն առաջման աղբյուրը, այլև մատակարարման երթույնը և տեղափոխման միջոցներն էական նշանակություն ունեն Էներգոանվտանգության և հուաայության ապահովման առօնությունը: Այսպիսով, Ներմուծող երկրի համար, Էներգոանվտանգությունը վերածվում է չափազակայի գործող կարգավորիչ մատչելիության ապահովման կարողությունների, այլ որ շատ կարևոր է մատակարարումների անվտանգությունն անհիրաժեշտ աստիճանով երաշխավորող միջոցների տնօրինման, կամ՝ համապատասխան դիվանագիտական միջավայրի ծևավորման հնարավորությունների առկայության հիմնահարցի: Չինաստանում, որտեղ ակնհայտ դարձավ Էներգակիրների ինքնաբավարար ներքին ռեսուրսների առկայության

*- Տես Գլուխ-1-ը և Գլուխ-2-ը:

**- Չինաայիությունը ընդգրկում է նաև միջազգային նավթաշուկայի գործող կարգավորիչ մեխանիզմների և դրանցում հնարավոր ճնշամային իրավիճակների առաջացման իննիները, որոնք դրանք են այստեղ կատարվող հետազոտությունների շրջանակում:

բացակայությունը,և 1993թ. հետո ձևավորվեց հենց «Նավթային կախվածությամբ» էներգոանվտանգության ապահովման հիմնախնդիր, ըստ էության՝ ընդունվում են վերոշարադրյալ հիմնարար մոտեցումներն ու ընուժագրիչները[109-112]:

Չինաստանի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներն ու էներգետիկ ռազմավարությունը բացառում են էներգոռեսուլտսների համար քաղաքական պայքարի օգտագործումը, բայց ենթադրում են՝ համապատասխան դիվանագիտական ջանքերի գործադրման անհրաժեշտությունը: ՉժՀ էներգառեսուլտսների դիվանագիտությունն ունի արտերկրյա էներգակիրների երաշխավորման՝ հետևյալ մասնակցության մակարդակները, արդունահանող և արտահանող երկրների հետ երկկողմ քաղաքական հարաբերությունների սերտացում, երկարաժամկետ բարեկամական և փոխհամագործակցության հարաբերությունների հաստատում արտերկրյա էներգակիրների Չինաստան անվտանգ առարգումների ապահովման առումով անհրաժեշտ դիվանագիտական օժանդակության ցուցաբերում երկկողմ էներգետիկ համագործակցությանը խանգարելու՝ երրորդ երկրի կողմից ծեռարկվող փորձերի և գործադրվող ջանքերի չեղորացում թշնամի երկրների կողմից: Չինաստանի նկատմամբ էներգոռեսուլտսների էմբարգո մտցնելու փորձերի դիվանագիտական ձախողում; էներգոռեսուլտսների ապահովման ուղղությամբ լավագույս դիվանագիտական ջանքերի գործադրում՝ երկրի նախագահի, տարածաշրջանային և քաղաքակողմ, ինչպես նաև՝ ազդեցիկ երկրների՝ մակարդակներում ակտիվ դիվանագիտության կիրառման միջոցով[100]: Չինաստանի նավթի ներմուծումների գրեթե կեսը 1993թ. հետո, միշտ բաժին է ընկել Մերձավոր Արևելքին*: Մինչև 2000-ականների կեսերը՝ Յարավ- Արևելյան Ասիան հանդիսանում էր իր կարևորությամբ երկրորդը, որը հետագայում իր տեղը զիջեց Աֆրիկային: Չնայած ընդհանուր ներմուծումների ծավալում՝ 2009 թ. Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից ներմուծվող նավթի տեսակարար կշիռը 2003թ-ի համեմատ, աճել է ավելի քան երկու անգամ, ներմուծումների ոլորտում կատարվել են նաև որոշակի այլ տեղաշարժեր, այնուամենայնիվ՝ ՉժՀ նավթի ներմուծման աշխարհագրական և հնարավոր հիմնախնդիրների ընդհանուր հատկանիշները չեն կրել նշանակալի որակական փոփոխություններ և ըստ էության գործում են նաև ներկայում:

2009 թ. ՉժՀ նավթի ներմուծումների շուրջ 44.9%-ը ներկրվել է Մերձավոր Արևելքից, 30.9%-ը՝ Աֆրիկայից, 10.6 %-ը՝ ՌԴ և Կենտրոնական Ասիայից, 6.4%-ը՝ Լատինական Ամերիկայից, 3.3 %-ը՝ ՅՎ. Արևելյան Ասիայից (Նկար-2.14): Դա ըստ էության նշանակում է, որ ներմուծվող նավթի ավելի քան 79.1 %-ը Մերձավոր Արևելքից, Աֆրիկայից և ՅՎ. Արևելյան Ասիայից կարող է հրականացվել միայն նավառարումների միջոցով և անպայմանորեն անցնում է Մալակկա և Թայվանի նեղուցներով: 2009 թ. ցամաքային ուղիներով (Ղազախստան-Չինաստան

*- Նկար-2.14- ՉժՀ Նավթի ներկրումն ըստ տարածաշրջանների և Յավթված-1-ի Ալյուսակ-2-ը:

Նավթատարով և երկաթուղային փոխադրումներով) ԶԺԴ է առաքվել՝ Ներմուծվող Նավթի միայն՝ 10.5%-ը:

2009 թ. Զինաստան Նավթ մատակարարող Երկրության պաշտին տասնյակի դիտարկումը նույնպես ցուցադրում է առաջնան աղբյուրների կառուցվածքային միակողմանիությունն ու անվտանգության երաշխավորման ոչ բարձր աստիճանը (Յավել.-1-ի Աղյ.- 2-ը): Այդ Երկրության առաքվում է ԶԺԴ Նավթի Ներմուծման շուրջ 80%-ը, ընդ որում՝ մոտ 45%-ը Մերձավոր Արևելքից և 25%-ը Աֆրիկայից: Չնայած ԶԺԴ պահանջները բավարարող Նավթի անհրաժեշտ քանակության ապահովվածությանը, այնուամենայնիվ՝ այդ իրավիճակը հիմնավորում է մատակարարման աղբյուրների բարձր կենտրոնացվածության առկայությունը՝ հիմնականում ոչ կայուն տարածաշրջաններում գտնվող Երկրներում: Ներմուծման մասն կառուցվածքը և անհաշվեկշռվածությունը մի կողմից ցուցադրում է մատակարարումների դիվերսիֆիկացման անբավարար մակարդակի առկայությունը, մյուս կողմից՝ բարձրացնում է ԶԺԴ Նավթամատակարարումների խոցելիության մակարդակը՝ առաջումների հուսալիությունը կապակցելով փոքրաթիվ Երկրներում արտաքին և ներքին ցանկացածքնույթի հնարավոր ցնումներին, որի տիպական օրինակ է Իրաքի պատերազմի գործած հետևանքները ԶԺԴ Նավթառաքումների վեա: ԶԺԴ Երրորդ Նավթ մատակարարող Երկրի՝ Իրանի շուրջ ընթացող Ներկա զարգացումներն ավելի են ընդգծում Զինաստանի Նավթամատակարարումների խոցելիության բարձր աստիճանը:

Չնայած Նրան, որ Զինաստանը պահպանում է լավ հարաբերություններ այդ Երկրների հետ, այնուամենայնիվ՝ Նավթամատակարարումների հուսալիությունը հեռու է բավարար և երաշխավորված լինելուց: Դա պայմանավորվում է նախ և առաջ մերձավորարևելյան և Արևմտյան Աֆրիկայի տարածաշրջաններում տասնամյակների ընթացքում շարունակվող՝ արտաքին և ներքին անկայունության բարձր ներուժի պահպանմամբ, ահարեւ կշռված և նավուղիների որոշ հատվածներում՝ այդ թվում նաև Մալակկա նեղուցում, ծովահենության տարածման, ինչպես նաև այլ ընդհանուր թնությի հիմնախնդիրների առկայությամբ [99, 113-116]: Ընդհանուր առմամբ, Եթե անկայուն և հակամարտություններով հագեցված տարածաշրջաններից Ներմուծումների կենտրոնացվածություննառաջացնում է մատակարարման աղբյուրների հուսալիության հիմնախնդիր, ապա Նավուղիների և տրանսպորտային միջոցների (տանկերային Նավատորմ) անապահովությունը Զինաստանի համար, առաջացնում է առարումների վերահսկելիության և հուսալիության ապահովման հիմնախնդիր: Ծովային ուղիներով Ներմուծվող Նավթի 80-85%-ը Զինաստան է Ներմուծվում օտարերկրյա տանկերներով, և տրանսպորտային միջոցների Նկատմամբ միայն շուկայական մեխանիզմների միջոցով իրականացվող սահմանափակ վերահսկողությունն անշուշտ բավարար չէ առաջումների հուսալիության երաշխավորման համար: Այդ հիմնախնդիրն ավելի է ընդգծվում առաջումների ծովային Երթուղու մանրամասների դիտարկման դեպքում: Նախ և առաջ, Նեղուցները*, որոնցով անցնում է ԶԺԴ Նավթի Ներմուծման

ծովային տրանսպորտը, ծովահենների հարձակումների հիմնական թիրախներն են** և առկա է ահաբեկչական գործողությունների հրականացման բարձր ռիսկայնություն, ինչով դրանց անվտանգության ապահովման խնդիրն էական Նշանակություն է ծեռօք բերում առաջումների հոսալիության երաշխավորման համար:

Սատուկարարումների հեռանկարային հոսալիության ապահովման և ընդհանրապես՝ միջազգային հարաբերությունների տեսանկյունից՝ Չինաստանի առջև ծառացած անորոշության մյուս կարևորագույն գործոնն այսպես կոչված «ԱՄՆ գործոնն» է***[117,118]: Չինաստանի նավթի առաքման հիմնական մերձավորարևելյան տարածաշրջանը նավառարման ուղղիները և հատկապես նեղուցները, գտնվում են ԱՄՆ գործերի բացարձակ վերահսկողության ներքո, և դրանց անվտանգության ապահովումն, ըստ էլույան, հրականացվումէԱՄՆուազմականնավատորմիկողմից[100,117,120]: Գործնականում, ԱՄՆ-ը կարողացել է հասնել նավթամատակարարումների կենսապահովման ամենաբարձր աստիճանի, շնորհիվ հենց՝ Մերձավոր Արևելքում իր ռազմական ներկայությամբ, և խոշորածավալ ռազմական միավորումների՝ մեծ հեռավորություններով ու արագործն տեղափոխման, աշխարհում առկա ամենաբարձր կարողությամբ[119,121]: Միջազգային կամ երկրում հարաբերություններում որևէ լուրջ ճգնաժամային հրավիճակում ԱՄՆ-ը, որն ունի գերակա ռազմական ներկայություն նաև Հարավ-Արևելյան Սսիայում, լիովին տիրապետում է քազմարիվ երկրների, այդ թվում նաև Չինաստանի, էնորդունիուրանների մատակարման, ինչպես նաև՝ ընդհանրապես միջազգային առևտորի հրականացման հիմնական երթուղիները փակելու

*- Չինաստանի նավթի նավառարումների ուղիները հետևյալն են. Մերձավոր Արևելքից՝ Պարսից ծոց-Քերմուսի, Մայակիկա և Թայվանի նեղուցներ-Չժ՛. Արևմտյան Աֆրիկայից՝ Յունիսային Աֆրիկա-Միջերկրական ծով-Քիրիարեարի նեղուց-Բարեհուա հրվանդան- Մայակիկա և Թայվանի նեղուցներ-Չժ՛. Յարավարևելյան Սսիա՝ Սալակա և Թայվանի նեղուցներ-Չժ՛; Վենետունց՝ Պանամայի նեղուց, Խաղաղ օվկիանոս-Չժ՛: Թայվանի նեղուցով անցնում է հետագայում Ցանցայի գետով Չժ՛ հյուսիսային շրջաններ տեղափոխվող նավեր:

**- Աշխարհում ծովակենուրյան դեպքերի հետևյալ քայլման դեպքում՝ 2006 (239), 2007(263), 2008(293) և 2009(406), շուրջ 40%-ը կատարվում է Հարավարևելյան Սսիայում, որի կեսից ավելին՝ Մայակիկա նեղուցում [104-107]:

***- Երկու երկրների միջև առկա քազմարիվ խնդիրների բվում առանձնապես կարևորվում են Թայվանի հիմնախնդիրը և առևտորական հաշվեկշի անհամամասնությունը(տես՝ Գյուլի-1-ը): Թայվանի հիմնախնդիրը ամենազգայունն ու կենտրոնականն է Չժ՛-ԱՄՆ հարաբերություններում, առանձնապես Թայվանին՝ ԱՄՆ-ի կողմից շարունակվող ռազմական մատակարարումների պայմաններում: «Ասանավերապես, ԱՄՆ-ը շարունակում է գենք վաճառել Թայվանին, խախտելով չին-ամերիկյան երեք համատեղ Յայտարարություններին, ինչպես նաև Թայվանի նեղուցում խաղաղությանն ու կայունությանը»[123,129]

հնարավորություն [100,117,122]: Ավելին, Մերձավոր արևելքից և Աֆրիկայից Ներմուծվող էներգակիրների նավուղիները շրջանցում են նաև Հնդկաստանի հարավային վերջավորությունը՝ դրանց արգելափակման հնարավորությունները ընծեռնելով նաև հնդկական նավատորմի համար[100]:

Տվյալ իրավիճակում, արտերկրյա էներգառեսուրսների անվտանգ մատակարարման հեռանկարային ապահովման առումով Չինաստանի համար կիրառելի են երկու հիմնական հնարավորություններ՝ ծովային երթուղիների առկա մարտահրավերների դիմակայմանը համազոր ռազմածովային նավատորմի ստեղծում և էներգակիրների ցամաքային առաջման ենթակառուցվածքային համակարգի օարգացում:

Չինաստանի ծովային տեղափոխումների և երթուղիների միջանցքների անվտանգության ապահովման, ինչպես նաև դրանց հեռանկարային հոսալիության ու կայունության երաշխավորման առումներով առկա լրջագույն հիմնախնդիրներն ունեն գորալ բնույթ և երկարաժամկետ հեռանկարում դրանց լուծումների փնտրման խնդիրը հանդիսանալու է ԶԺՇ ռազմավարական քննարկումների կենտրոնական հարցերից մենքը: Ներկայում արդեն աշխարհում մեծությամբ երկրորդ և արտահանման ուղղվածությամբ տնտեսություն ունեցող Չինաստանի էկոնոմիկական հետաքրքրություններն ունեն գորալ բնույթ: Ծովային ուղիների անվտանգության ապահովման “Պեկինի երկարաժամկետ ռազմավարական հետաքրքրությունների ոլորտը բնականորեն չի կարող սահմանափակվել տարածաշրջանային պաշտպանության շրջանակներով: ԶԺՇ ժողովրդական Ազատագրական Բանակի (ԺԱԲ) արդյականացման և վերազինման ծրագրերում” մշտապես կարևոր նշանակություն է տրվում նաև ժամանակակից չափանիշներին համապատասխանող ռազմածովային նավատորմի ձևակիրման խնդիրներին”[123-126]: Երկրի պաշտպանության հիմնական խնդրի բազմակողմ ապահովման հետ մեկտեղ, 2008թ. դեկտեմբերին հրապարակված ԶԺՇ պաշտպանության «Սպիտակ թղթերը» ենթադրում են նաև հեռավոր ջրերում «ոչ պատերազմական»՝ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ կարողությունների աստիճանական զարգացումը նավատորմում[123,128]:

- 2008թ. դեկտեմբերին հրապարակված ԶԺՇ պաշտպանության “Սպիտակ թղթերում”, որպես ԶԺՇ ԺԱԲ հեռանկարային զարգացման հիմնական նպատակներ ընդգծվել է՝ “միևնու 2020թ. հիմնականում ավարտին հասցեե բանակի մեխանիզմացիան և զգայի առաջընթաց ապահովել տեղեկատվականացման ասպարեզում” և “ավարտել բանակի արդյականացումը 21-րդ դարի կեսերին”[123,129]:

-- 2006 թ-ի դեկտեմբերին ԶԺՇ Լախազահ Յու Չինաստան ընդգծել է, որ Չինաստանը ծովային տեղություն է և “ԶԺՇ-ը պետք է ծովով ատելի հզոր ազգային նավատորմ, որը կարող է համապատասխանել ներկա դարում և նոր ժամանակաշրջանում իր պատմական առաջնորդացանը” ստանձնելով Չինաստանի “սուվերենության և անկուսանության, ինչպես նաև ծովային հրավիլութերի” պաշտպանության “փառահեղ պատմասխանատվությունը”[127-ի հյուրական 126-ից]:

*** - “Ոչ պատերազմական” գործողությունները հիմնականում ընդգրկում են ահաբեկցության և ծովականության դեմ պարարդ, ինչև արդեն իսկ ներկայում, ոչ մեծ մասշտաբներում, իրականացվում է Չինաստանի նավատորմի կողմից՝ Սոմալիում և Հնդկական օվկիանոսում:

Չինաստանի քանակում ավանդականորեն գերակայում են ցամացային ուժեղը և Ներկայումս նավատորմի զարգացմանն ու ուժեղացմանը նպատակառությած գործընթացը պայմանավորվում է Երկրի համար հիմնարար Նշանակություն ունեցող շահերի ծովային գործոնի հետ կապակցվածության ընկալումով։ Գլոբալացման, էկոնոմիկական հետագա զարգացմանն ու միջազգային ինտեգրման գործընթացների թելադրանքով, ընդհանուր առմամբ, կարող է ենթադրվել ՉԺՀ պաշտպանառության ռազմավարական տեսլականի Նշանակալիորեն փոփոխվելու հնարավորությունը հեռանկարում նավատորմի դերի բարձրացման առումով [124-126]:

Չնայած ձեռնարկվող քայլերին ակնհայտորեն տեսանելի ապագայում, Չինաստանը չի կարող ապահովել Երկրի տնտեսության պահանջարկի աշխարհագրական ընդարձակման արագությանը համապատասխանող ռազմական հասանելիության համրժեց միջոցներ։ Խնդիրն այստեղ պայմանավորված է ոչ միայն ֆինանսական, կամ տեխնոլոգիական միջոցներիապահովման անհրաժեշտություններով, այլ, նախևառաջ՝ հանդիսանում է ՉԺՀ ռազմավարական զարգացման և արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից բխող հետևանք։ Ռազմավարական առումով բարեփոխումների իրականացումը Երկրի էկոնոմիկական զարգացումը և բնակչության կենսամակարդակի բարձրացումը Չինաստանի համար ունեն կանխորոշիչ Նշանակություն։ Ազգային գերակա նպատակի ՉԺՀ խաղաղ զարգացման ռազմավարության կենսագործմանը նպաստող անհրաժեշտ արտաքին նպաստավոր պայմանների ծնավորմանը նպատակառությած համակողմանի և արդյունավետ աջակցության ապահովումը՝ հանդիսանում է ՉԺՀ արտաքին քաղաքականության առաջնային նպատակակետը։ Այլ առաջնայնությունները, այդ թվում նաև էներգոապահովման հիմնախնդիրները, ստորադասվում են ՉԺՀ խաղաղ զարգացման ռազմավարության կենսագործման և Չինաստանի համար համար կանխորոշիչ Նշանակություն ունեցող վերոշարադրյալ սկզբունքներին։ Այս առումով ՉԺՀ քանակի արդիականացման ու վերազինման հիմնային մոտեցումը ոչ թե բյուջետային գերակայությունների փոփոխությունն է, այլ ազգային եկամուտների ածի հետ՝ դրանց համամասնականացումը* [123, 129-130]։ Արտաքին աղբյուրներից ՉԺՀ էներգոռեսուրսների մատակարարման անվտանգության ապահովումը չի հանդիսանում ռազմական երաշխավորման առաջնահերթություն, այլ՝ «ավելի շատ կապված է աշխարհաքաղաքական գործուների և այն Երկրների ազգային քաղաքականության հետ, որոնք ազդում և վերահսկում են էներգիայի զարգացման ու առաջրումների գործընթաղերն՝ ամբողջ աշխարհում» [131]։ Մյուս կողմից, էներգոռեսուրսների արտաքին մատակարարումներից աճող կախվածությունը, պարտադրում է այդ հիմնախնդրի ընդգրկումը Երկրի արմատական առաջնահերթությունների ոլորտում։ «Միջազգային

* Գործում է՝ “发达国家，强大军队-（հարուստ երկիր ուժնոր քանակ）” սկզբունքը։

Էներգիայի ներկրությունը Զինաստանի կախվածությունն արագորեն փոփոխվում է հարաբերականից վերածվելով քացարձակ կախվածության» [124]: Բոլոր դեպքերում աշխարհաքաղաքական, քաղաքական և էկոնոմիկական արդի գործընթացների ենթատերություն և երկրի էներգուանվտանգության նկատառություններով իրատեսորեն լիովին փաստարկվում է ՉԺՀ ռազմական նավատորմի որակական զարգացման անհրաժեշտությունը. քանի որ «յա մեծ տերությունների համար հանդիսանում է միջազգային առևտորի վեճերի լուծման վերջին միջոցը» [132]: Եվ չնայած ՉԺՀ ռազմական նավատորմի զարգացման ռազմավարական նպատակահարմարության հիմնավորվածությանը, ակնհայտ է որ նոյնիսկ այդ գործընթացի սկզբան դեպքում այն կրելու է երկարատև ու դժվարանցանելի ընույթ: Ներկայումս՝ և տեսանելի ապագայում, Զինաստանի ռազմական նավատորմի զարգացման խնդիրը դիտարկվում է զիսավորապես Զինաստանի ծովային հարձակություն պաշտպանության ու տարածաշրջանային ջրերում՝ անվտանգության ապահովման հարթությունում, և ընդհամենց նշվում է «աստիճանաբար դրա ռազմավարական խորության բարելավման» անհրաժեշտությունը [123, 133-134]: Այս իմաստով, էներգաառաջանական երթույնների և նեղուցների վերահսկողությունն ու անվտանգության ապահովումը մնալու է և հիմնականում իրականացվելու է ԱԱԾ կողմից: Տեսանելի հեռանկարում, ՉԺՀ ռազմական նավատորմը չի կարող հանդիսանալ Զինաստանի արտաքին էներգուանվտակարարությունների գլորալ անվտանգության երաշխավարման միջոց:

Զինաստանն իր խաղաղ զարգացման ռազմավարության ենթատերություն մեծագույն ջանքեր է ներդնում գլորալ չափանիշներով ազդեցության կենտրոնների՝ ԱԱԾ, ԵՄ և ՌԴ հետ, հարաբերությունների կարգավորման, զարգացման և սերտացման ուղղությամբ: Դա անշուշտ էականորեն նպաստում է ՉԺՀ էներգուեսուրությունների մատակարարությունների անվտանգության և հոսալիության ապահովմանը: Այնուամենայնիվ, «ԱԱԾ գործոնի» բազմաթիվ պարամետրերից երկու հիմնական էլեմենտները կարող են ազդեցիկ նշանակություն ունենալ ՉԺՀ էներգուանվտանգության հեռանկարային հոսալիության երաշխավորման իմաստով: Բազմաթիվ չին վերլուծաբաններ գտնում են, որ էներգուանվտանգության ապահովման հիմնախնդիրը արդեն իսկ սկզեւ է հարածուն նշանակություն և ազդեցություն ունենալ ՉԺՀ-ԱԱԾ հարաբերություններում, և աշխարհի երկու խոշորագույն էներգոսպառողների հեռանկարային ուղեգիծն ընթանալու է էներգուեսուրությունների համար նրանց միջև մրցակցության ուժեղացման ուղղությամբ**

*-Տարածաշրջանային ծովային տարածքներում Զինաստահեծքափյատարածքը՝ (Ղեղին, Արևելյան և Պարայի-ինսական ծովերի՝ հյուսիսամ՝ ճապոնական և Կորինթական թերակղզուց սկսվելու, և հարավային՝ Մալակական նեղուցով սահմանափակվող շրջանը), որի վերահսկողությունը քացարձակ անհրաժեշտություն է եղին ինչնիշխանության և անվտանգության ապահովման տեսանկյունից: Զինաստանի և մերձակայի մյուս երկրների միջև այս տարածաշրջանառում առկա են ծովային սահմանների ծըրտման վիճակի հարցեր: Տարածաշրջանում ՉԺՀ գլորակայությունն անշուշտ թարլանի հիմնախնդիրն է:

**.- «Տեսանկարում, էներգիան կարող է դառնալ ավելի լուրջ բախումների պատճառ» [136]:

[126, 135-137]: Այս ենթատեքստում, ԶԺԴ էներգոանվտանգության առումով Մալակիա նեղուցի գործոնի* ազդեցությունն ավելի է ընդգծում՝ մատակարարությունների հուալիության երաշխավորման թերությունները:

Չնայած «Թայվանի նեղուցում իրավիճակի զգայի դրական տեղաշարժերին» և ոտղակի շփումների նշանակայի ակտիվացմանը, այնուամենայնիվ՝ Թայվանի հիմնախնդիրը մնում է ԶԺԴ-ԱՄՆ հարաբերությունների կենտրոնական հարցը [123, 129]: Անշուշու հետագայում ևս հիմնախնդիրի լուծման գործընթացում գերակայելու է խաղաղ կարգավորման մոտեցումը: Թայվանի շուրջ որևէ անկանխատեսելի լուրջ կոնֆլիկտային իրավիճակի առաջացման դեպքում ենթադրելի է, ԱՄՆ-ի և Ճապոնիայի կողմից ԶԺԴ էներգուեսուրսների մատակարարությունների շրջափակման հնարավորությունը և ռեսուրսային պատերազմի հավանականության մեծացումը, չնայած նրան, որ իրավիճակի նման զարգացման հետևանքները կարող են չափազանց ծանր լինել նաև ԱՄՆ-ի և Ճապոնիայի համար** [135]: Վերոշարադրյայից բխում է, որ էներգոառաքման ուղիների դիվերսիֆիկացումը և էներգակիրսների ցամաքային առաջման ենթակառուցվածքային համակարգի զարգացումը, կենսական նշանակություն ունի Չինաստանի էներգոանվտանգության հնարավոր մաքսիմում մակարդակով երաշխավորման համար:

Ներկայումս արտօրեկրյա էներգուեսուրսների երաշխավորման ԶԺԴ ռազմավարությունը կարող է բնութագրվել հետևյալ հիմնական մոտեցումներով.

- ապահովել քաջարածիկ ներմուծման աղբյուրներ և վայրեր մաքսիմում հնարավորությամբ ավելացնելով Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից ներմուծումները, համամասնականորեն բարձրացնել Աֆրիկայից և Լատինական Ամերիկայից ներմուծումների ծավալները, դիվերսիֆիկացնել Սերծավոր Արևելյան տարրեր երկրներից ներմուծման աղբյուրները;

- աջակցել և ամրապնդել տարածաշրջանային և երկկողմ էներգոհամագործակցությունը՝ մասնակցելով նաև Էներգիայի Խարտիայի Պայմանագրին;

*- 2003 թ. ԶԺԴ Նախագահ Չու Շինտաուն «ծայրահեռ մտահոգություն» հայտնեց «Մալակիայի Դիմայի» առումով, քանի որ Չինաստանին սպառնում է «ոդմվար իրավիճակ» նեղուցում որևէ մշադրենի և կամ օտարերեկոյ շրջափակման դեպքով [135- հետով՝ 126-ից]: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դեռև չի գրանցվել Չինաստանի էներգուեսուրսների մատակարարման միտումնավոր ընդհանուր որևէ դեպք:

*- «Դեռ է ակնհայտ լինի, որ Չինաստանը փորձ տարածաշրջանային տերություն չի, ինչպիսին են Իրաքը և Յուսիսային Կործան: Եթե ԶԺԴ ստիպված լինի դիմակայել իր էներգետիկ անվտանգության առումով լուրջ սպառնայինների, ապա նա կմորթիզացնի իր ողջ տնտեսական, քաղաքական և ռազմական ներուժը՝ էներգամատակարարությունների անվտանգության ապահովման համար, կամ՝ կմիջամտի ԱՄՆ և նրա դաշխակիցների օրինակ՝ Ճապոնիայի մատակարարությունների ցանցերի գործունեությանը, այդ բնույթ՝ այնպիսի կարևորագույն խաղություններում, ինչպիսին են Հարավ- չինական ծովը. Մալակիա նեղուցը և նովիսկ՝ Թայվանի ծովածցը: Այս հավասարակշռող միջցուներն հիարկ որպես վերջին միջոց [135]:

- «Գնալ դուրս» ռազմավարության շրջանակներում ապահովել և երաշխավորել արտերկրյա էներգոռեսուրսների հասանելիությունը: Արտերկրյա էներգոռեսուրսների երաշխավորման և ծեղբերումների առումով, առանձնահատուկուշադրությանդարձնել՝ Մերձավոր Արևելք-Հյուսիսային Աֆրիկա-Հյուսիսարևելյան Աֆրիկա, Ռուսաստան-Կենտրոնական Ասիա և Լատինական Ամերիկա- Կարիբյան՝ ռազմավարական երեք տարածաշրջաններին[138-141]:

Արտերկրյա էներգոռեսուրսների ներմուծումների և ծեղբերումների երաշխավորման ՉԺԴ ռազմավարության դիվանագիտական ապահովումն ենթադրում է այս տարածաշրջանների և էներգոապահովման առումով հիմնական նշանակություն ունեցող երկրների հետ բարձր մակարդակի և յուրահատուկ երկկողմ հարաբերությունների հաստատում: Այս իմաստով, Չինաստանի էներգետիկ դիվանագիտության ռազմավարական մուտքումը հենվում է՝ «հարակից տարածաշրջանների նշանակությունն կարևորման, Մերձավոր արևելյի ավանդական շրջանի հետ հարաբերությունների պահպանման ու սերտացման և Աֆրիկայի հետ նոր հարաբերությունների զարգացման» հիմնարար սկզբունքների կենսագործման վրա[100,139-141]:

Ի նկատի ունենալով ծովային ուղիների հուսալիության ապահովման խոչընդունելող, Չինաստանին սահմանակից տարածաշրջաններից և երկրներից էներգոռեսուրսների տեղափոխումը վերածվում է՝ ՉԺԴ էներգոանվտանգության ապահովման աշխարհաքաղաքականության հիմնային նշանակության հենակետի: Այս իմաստով, էներգոռեսուրսների խոշոր պաշարների առկայությունը Ռուսաստանում և Կենտրոնական Ասիայում, աշխարհաքաղաքական շոշափելի առավելություններ է ապահովում ՉԺԴ էներգոանվտանգության երաշխավորման առումով և կարող է դառնալ Չինաստանի էներգոանվտանգության ապահովման կարևորագույն գործոն[138-142]: Չինաստանի համար այդ էներգոռեսուրսների նշանակությունն առանձնապես շոշափելի և կենսական է՝ ծովային երթուղիների անվտանգությանն առնչվող ռազմական, կամ որևէ այլ բնույթի կոնֆլիկտային իրավիճակների առաջացման դեպքում, ինչզ կարող է հանգեցնել այդ ուղիների հնարավոր երկարատև շրջափակմանը, որի դեպքում Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից էներգոռեսուրսների առաքումը կարող է վերածվել կենսապահովման միջոցի[100,138-140, 143]:

Կենտրոնական Ասիայի երկրների անկախացումը և էներգոռեսուրսների խոշորածավալ պաշարների առկայության վերաբերյալ տեղեկատվության տարածումը, ժամանակային առումով համընկավ Չինաստանում նավթային կախվածության ծևավորման գործընթացի հետ: Այդ երկրների և ՉԺԴ միջև համապարփակ՝ և մասնավորապես՝ էներգոռեսուրսների ոլորտում, համագործակցության զարգացումը ինքնին բխում է էկոնոմիկական փոխահակետության և տարածաշրջանային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից[143-147]: Շամագործակցության

փոխշահավետությունը բխում է էկոնոմիկական փոխրացման առկայության, ինչպես նաև գլոբալ շուկա դուրս գալու նպատակով՝ միմյանց տրանսպորտային ենթակառուցվածքների օգտագործման նպատակահարմարություններով։ Կենտրոնական Ասիայի երկրների հետ էկոնոմիկական հարաբերությունների զարգացումը Զինաստանի համար ստեղծում է նաև ՉԺՀ «Արևմտյան Շրջանների Զարգացման ռազմավարական ծրագրի»* կենսագործման նպատակով՝ տարածաշրջանի տնտեսական և ռեսուրսային ներուժի օպտիմալ օգտագործման հնարավորություն[148]։ Դա կարևորագրուն նշանակություն ունի ՉԺՀ արևմտյան շրջանների՝ հատկապես միջինասիական երկրների հետ էթնոմշակութային ընդհանրություններ ունեցող Մինձյան Ոլյուրական ավտոնոմ շրջանում (ՍՈՒԱԾ) կայունության և անվտանգության ապահովման առողջության վերաբերյալ նույնականացնելու համար, որի տնտեսության գերակա բաղադրիչը նույնպես էներգուստուրսներն են, և այդ ոլորտի զարգացումը Մինձյանում հանդիսանում է ՉԺՀ էներգետիկ անվտանգության ռազմավարության հիմնարար տարրերից մեկը։

Տարածաշրջանի նկատմամբ Զինաստանի քնականոն հետաքրքրությունների և սահմանակից տարածաշրջանի երկրների հետ բարեկամական հարաբերությունների և սերտ համագործակցության զարգացման առաջնախառնության ՉԺՀ արտաքին քաղաքականության հիմնարար մոտեցումների ենթատեսատում, էներգառեսուրսների ոլորտում փոխշահավետ համագործակցության ձևավորումը միաժամանակ կարող է նաև նշանակալիորեն ամրապնդել տարածաշրջանային անվտանգության ապահովման առումով ստանձնված երկկողմ և բազմակողմ պարտավորությունների պահպանման և փոխադարձ պատասխանատվության մակարդակը։ Ուսաստանի ու Ղազախստանի հետ ռազմավարական հարաբերությունների հաստատումը և Շանհայան Շամագործակցության Կազմակերպության (ՇՀԿ) ստեղծմամբ՝ տարածաշրջանում համագործակցության ինստիտուցիոնալացումը, որի անդամ երկրների համար էներգետիկ ոլորտում համագործակցության ամրապնդման և անվտանգության ապահովման խնդիրներն ի սկզբանե առաջնային են, հիմնարար նշանակություն ունեն ՉԺՀ էներգուանվտանգության հեռանկարային ապահովման համար։

* - «Արևմտյան Շրջանների Զարգացման Ռուագիրի» իրականացումը, որպես Զինաստանի քարտացման ռազմավարության կմնացագործման փուլ, ՉԺՀ կառավարության կողմից պետական պաշտոնական քաղաքականություն, հայտարարվել է 1999 թ. ին։ Մշագրույն նախատեսվում է ՉԺՀ կառավարության առանձնահատումը ուղաղործության և ջանքերի կենսորունացումը՝ Ցուման, Գոփքոո, Միջուան, Շանսի, Գուանսու և Ֆինհայ նահանգների, Ցունգցին քաղաքի, ինչպես նաև Գուանչժու Շենասգ, Նինզայիա Ջուի, Միջանգ (Ֆիբրե), Ներքին Մոնղոլիա և Մինձյան Ոլյուրական ավտոնոմ շրջանի (ՍՈՒԱԾ), տնտեսական զարգացման, ազգային համախմբան և ինտեգրման ուղղությամբ։ Ռուագրի իրականացման համակարգում իրականացվում է ՉԺՀ Վարչապետի կողմից[148]։

Գլուխ 5. Չինաստանի էներգետիկ անվտանգության բաղադրականությունը Կենտրոնական Ասիայում: Էներգետիկ անվտանգության աշխարհագրագիտական և տարածաշրջանային գարգացումների հեռանկար

5.1. Նետ սառչայտերազմյան շրջանի հիմնական աշխարհագրագիտական- տարածաշրջանային զարգացումները և ԶԺԴ արտաքին քաղաքացականության ու ռազմավարության առանձնահատկությունները Կենտրոնական Ասիայում

ԽՄՀՄ փլուզումը և իր սահմանների մոտ նորանկախ երկրների առաջացումն անսպասելի էր Չինաստանի համար: Առաջացածնոր աշխարհագրագիտական իրադրությունը Կենտրոնական Ասիայում պայմանավորեց ԶԺԴ կողմից տարածաշրջանում իր ռազմավարական և արտաքին քաղաքացական նպատակների համակարգային վերանայումը^{*}:

Կենտրոնական Ասիայից Ռուսաստանի «հեռացմամբ» Չինաստանում առաջանում էր հիմնավորված անհանգստություն՝ ոչ միայն արտատարածաշրջանային շահերի ծևավորվման և դրանց հնարավոր քայլումների սկզբնավորման գործնթացի, այլև 1988թ. ԶԺԴ արտգործնախարար Ցիան Ցիչենի Մուսկվա կատարած այցով սկսված չին-ռուսական հարաբերությունների բարեխավման բարենպաստ ընթացքի շարունակման առումով: Աֆղանստանում պահպանվող անկայունությունը, Տաջիկստանում սկսված քաղաքացիական պատերազմը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայում անկայունության առաջացման հնարավորությունների բարձր աստիճանը, Չինաստանում առաջացրեցին ստեղծած իրավիճակի նախ և առաջ տարածաշրջանից ԶԺԴ անվտանգության առումով բխող հավանական վտանգների տեսանկյունից դիտարկման անհրաժեշտություն: ԽՄՀՄ-ի հետ չլուծված հիմնախնդիրների առաջին հերթին սահմանա-տարածքային հիմնահարցերի կամա թե ականա «մեխանիկական» արտացոլումն նորանկախ երկրների հետ սկզբնավորվող հարաբերություններում նույնպես որոշակի զգուշավորություն առաջացրեց նոր իրավիճակի վերաբերյալ ԶԺԴ ընկայուններում: Այս ամենը հանգեցրեց տարածաշրջանային ներքին գործնթացներից տարանջատվելու և միայն առաջնահերթ խնդիրների՝ (դիվանագիտական հարաբերությունների հաստատման, ԽՄՀՄ-ից ժառանգված հիմնախնդիրների լուծման, ուղղութական սեպարատիզմի վերաբերյալ համաձայնեցված մոտեցումների մշակման և իրավա-պայմանագրային բազայի ծևավորման) [1,2] վրա կենտրոնանայու մոտեցմանը, ինչը սկզբնական շրջանում որոշակիորեն խանգարեց Չինաստանին անմիջականորեն և լիարժեք ըմբռնելու կենտրոնական Ասիայի տարածաշրջանի արդի ռազմավարական կշիռը ու իրական նշանակությունը:

*- 1990- ակվաների սկզբում ԶԺԴ առաջնորդ Դես Սյաուայինի կողմից տրվեց Չինաստանի արտաքին և անվտանգության քայլականության ոլորտորի սահմանում, որը հայտնի է՝ “Հելոցովի ֆները առաջավարություն անհամանմը.-“冷靜觀察，站稳脚跟。沉着应付，韬光养晦，善于守拙，绝不当头。”- “Դիտարկել սառչայտութեան, արծագանքի գավառնորութամբ, կամեմեն ամուր, խնդիրները հայթահարեց հանգիստ, թաքցնել տպիական հնարավորությունները և սպասել մեր մամին, միշտ պատրաստ ցնել կատարելու հինգ որ քան և երես չառանձնել առաջնորդությունը”:- Սահմանական դրույթների հիմնական մասն արդիական է նաև ներկայում:

Առաջացած անհանգստությունների ենթատեքստում դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո, միջինասիական երկուների հետ արդյունական հարաբերությունների ձևավորման ակունքներում ԶԺՀ կողմից առաջին հերթին դրվեցին՝ ԽՍՀՄ-ից ժառանգված սահմանային հիմնախնդիրների լուծումների Ռուսաստանի հետ համատեղ փնտրման հարցերը [1-3]: Երկուդմ և բազմակողմ արդյունավետ բանակցությունների շնորհիվ, 30-ամյա սահմանային տարածքային վեճերը հիմնականում լուծվեցին արդեն իսկ 90-ականների կեսերին:

Սյու կողմից Կենտրոնական Ասիայի Նկատմամբ Չինաստանի հետացրությունը նոր չէ և ունի երկարաժամկետ պատմական արմատներ: Չինաստանի և Կենտրոնական Ասիայի երկուների միջև հարաբերությունները պատմականորեն սահմանվում է աշխարհագրական, քաղաքական, տնտեսական և անվտանգության գործոններով, որոնց վրա հենվում է նաև ԶԺՀ կողմից հրականացվող արդյունականությունն այս տարածաշրջանում: Կողմերի միջև ուղղակի հարաբերություններն ընդհատվել են միայն վերջին ավելի քան 100 տարիների ընթացքում, երբ տարածաշրջանը Չինաստանի կողմից դիտարկվել է ցարական Ռուսաստանի և ԽՍՀՄ հետ ընդհանուր հարաբերությունների ենթատեքստում: Դետիչորիդրային շրջանում որոշակի ռիսկերի հետ մենտեր ակնհայտորեն առաջացել էր նաև տարածաշրջանի նորանկախ երկրների հետ որակապես նոր մակարդակի հարաբերությունների գարգաման հնարավորություններ, ինչը խաղաղ գոյակցության սկզբունք* և հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների ձևավորման ԶԺՀ հիմնարար մոտեցման ենթատեքստում**, բնականորեն հանդիսանալու էր Չինաստանի արտաքին քաղաքականության առաջնայնություններից մեկը[4-8]:

Լման բազմաչափ հետաքրքրությունների և փոխազդեցությունների առկայության ենթատեքստում, Չինաստանը նշանակալիորեն ակտիվացնում է միջինասիական ուղղությամբ արտաքին քաղաքականությունը: Դա դիվանագիտական իրականացման հարթությունում արտացոլվում է՝ Չինաստանի և տարածաշրջանի երկրների բարձրագույն ղեկավարների պարբերականի վերածված փոխայցելություններով, որի հիմքը դրվեց՝ ԶԺՀ Վարչապետ Լի Պենգի 1994թ. միջինասիական երկրներ կատարած շրջագայությամբ, որով և սկզբնավորվեց ավելի հետևողական և համաձայնեցված քաղաքականության իրականացումը Կենտրոնական Ասիայում: Դրա շնորհիվ, հետագա տարիներին Կենտրոնական Ասիայում ձևավորվեցին՝ ԶԺՀ մասնակցությամբ տարածաշրջանային և երկուդմ համագործակցության հիմնական մեխանիզմներն ու հաստատությունները, ինչպես նաև նկատելիորեն ընդարձակվեց տարածաշրջանում Չինաստանի տնտեսական ընդգրկվածությունը:

*- Խաղաղ գոյակցության սկզբունքները ձևակերպվել է Դես Սյաուայինի կողմից: Սկզբունքը հենվում է՝ երկուների միջև միմյանց շահերի նկատմամբ փոխադարձ հարգանքի ապահովման, անկախ չափերից և հզորությունից փոխադարձ հարգանքի և հավասարության պահպանման՝ հիմնարույթների վես:

**- Հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների ձևավորման ԶԺՀ հիմնարար մոտեցումը թիւերկ խաղաղ գոյակցության սկզբունքներից և հանդիսանալով ոյս տարածաշրջանային արտացոլումը, ընթառում է՝ «հարևանների հետ բարեկամության», «հարևանների մոտ հանգստ լինելու զգացության ապահովման» և «հարևանների հարստանալու օգնելու» մոտեցումների կենսագործումը հարևան երկրների հետ հարաբերություններում:

Չնայած ԽՄԴՄ փլուզմանը հաջորդող սկզբնական շրջանում քացահայտորեն չեղ վիճարկվում և ընդհանուր առմամբ ընդունվում էր Ո՞ առանձնահատուկ դերը հետխորհրդային տարածքում, այնուամենայնիվ՝ Ռուսաստանի «հեռացմամբ» ստեղծված աշխարհաքաղաքական վակուումով պայմանավորված, սկսվեց արտատարածաշրջանային շահերի ծևավորվման և դրանց հնարավոր բախումների սկզբնավորման գործընթաց։ Դետխորհրդային տարածքում նման գործընթացների ծևավորման տարրերի առաջին դրույտումներից էր Կենտրոնական Եվրասիայում Թուրքիայի ակտիվացման նկատմամբ ծգուումը, ինչը որոշակիորեն ստանում էր նաև ԱՄՆ օժանդակությունը՝ տարածաշրջանի «մուսուլմանական երկրներում Թուրքիայի մոդելի տարածման և այդ երկրների իրական անկախությանը նպաստելու նպատակով»[10]: Մինչեւ, նոր իրադրությունը Թուրքիայի կողմից գնահատվում էր որպես Բալկաններից - Չինաստանի Մինչյան նահանգն ընդգրկող տարածաշրջանի թուրքական աշխարհում իր ռազմավարական ազդեցությունը տարածելու աշխարհաքաղաքական նոր հնարավորություն որի իրականացման գործընթացները միևնույն ժամանակ կարող էին ներկայացվել նաև արևմուտքի կողմից տարածաշրջանում Թուրքիայի միջնորդական դերի ընտրության նպատակահարմարության, երկրի հեղինակության բարձրացման և արևմտյան «ընտանիքին» Թուրքիայի լիարժեք պատկանելության համատեքստում։ 90-ականների կեսերից հետո ԱՄՆ-ի կողմից Թուրքիային որոշակիորեն ներկայացվեց իր անտարերրությունը Կենտրոնական Եվրասիայում նրա փայփայած ներպանքուրքիզմի ծրագրերի, ինչպես նաև դրանց իրագործելիության առումով թուրքիայի ունեցած էկոնոմիկական դժվարությունների նկատմամբ։ Ներքին հիմնախնդիրները, համապատասխան նյութա-տնտեսական ռեսուրսների ու քաղաքական ներուժի բացակայությունը հետագայում սահմանափակեցին տարածաշրջանի թուրքական երկրներում անհրաժեշտ ազդեցության հասնելու Թուրքիայի ծգուումները, ներ-պանթուրքական ծրագրերի իրականացումն այժմեական կիրառական ոլորտից տեղափոխելով ռազմավարական հեռանկարի հարթություն։

Կենտրոնական Եվրասիայում արտատարածաշրջանային շահերի և դրանց բախումների իրական և մասշտարային ծևավորումը սկսվեց էներգութեսուրսների պաշարների և դրանց հետագա վերահսկման առումով՝ դրսնորված հետաքրքրությունների և պայքարի տեսքով՝ «Նոր Մեծ Խաղի» գործընթացների շրջանակներում[11-15]։ 1996 թ. վերջին՝ Հարավային Կովկասը և Կասպյան ավազանը «ԱՄՆ կենսական շահերի ոլորտում» ընդգրկման[10], ինչպես նաև 1997 թ. վերջին միջինասիական տարածաշրջանում ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի առկայության վերաբերյալ[16, 17] կատարված հայտարարությունները, որոնց հիմնավորման հիմքում առաջին հերթին դրվում էր շրջանում էներգառեսուրսների խոշոր պաշարների առկայության գործոնը, որոշակի անալոգիա էր մտցնում՝ Պարսից ծոցում ԱՄՆ նավթային շահերի պաշտպանության Զարտերի Դոկտրինի՝ Կասպյան տարածաշրջանում կիրառելիության հնարավորության առումով[16]։ Կենտրոնական Եվրասիայում արտատարածաշրջանային շահերի և դրանց

*. Զարտերի Դոկտրինը (1980 թ.) ենթադրում է՝ Պարսկական ծոցից նավթառարումների անվտանգության ապահովումն՝ անհրաժեշտ բոլոր միջոցների՝ այդ թվում՝ ռազմական ուժերի կիրառմաբ[16, 17]։

բախումների ձևավորման գործընթացն իր արտացոլման համեմատականորեն ավարտուն պատկերավորումը ստացվ 2001թ. սեպտեմբերի 11-ի հրադարձություններից հետո, որի համար բնութագրական է տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների, այդ թվում՝ Ներգրավված գլոբալ ազդեցիկ ուժերի՝ ԱՄՆ, ՌԴ, ԵՄ և ՉԺՀ էներգետիկ, տարածաշրջանային և միջազգային անվտանգության ոլորտներում հիմնական շահերի սերտ միահյուսվածությունը[18]:

90-ական թվականների ընթացքում կատարված գլոբալ տեղաշարժերին համընթաց ՉԺՀ համար ձևավորվում էր միջազգային և տարածաշրջանային անվտանգության որակապես նոր միջազգայր: Նախ և առաջ սարդ պատերազմի ավարտով, ՉԺՀ համար առաջին անգամ առաջացած պատերազմի անմիջական սպառնալիքի առկայության բացակայության հրավիճակ: Միաժամանակ, նոր հրավիճակում Չինաստանի անվտանգության առումով ձևավորվեցին միջազգային և տարածաշրջանային ընույթի նոր մարտահրավերների[19]: Արևոտքում՝ հատկապես ԱՄՆ-ում, դրսնորովվեցին՝ ՉԺՀ հետ հարաբերություններում «չփումների և զապման» քաղաքականության իրականացման միտումներ», որը հիմնականում հիմնվում էր՝ Չինաստանի հզորացմամբ արևմուտքի համար սպասվող հնարավոր վտանգների և սպառնալիքների առաջացման մեկնաբանությունների վրա[20-22]: Միջազգային հարաբերություններում առաջացած որոշակի անհաշվեկշռվածությանը գուգահեռ, Չինաստանին սահմանակից տարածաշրջաններում հատկապես Կենտրոնական Ասիայում, նոր հրավիճակում առաջացած անկայունության նկատելի դրսնորումներ: Բացի այդ, Չինաստանի համար ռազմավարական մարտահրավեր է նաև երկրի ամբողջականության և միասնականության պահպանումը Տիբեթում և Սինծյանում անջատողական ծգուումների առկայության պայմաններում, ինչը նոր հրավիճակն ընդիմանուր առնամբ, դարձնում էր ավելի փխրուն և քաջանակատկում էր անորոշությունները:

Մինչև 2001թ. սեպտեմբերի 11-ի հրադարձությունները, չնայած ԱՄՆ, ԵՄ, Թուրքիայի և ԱՄՏՇ-ի կողմից ցուցաբերված քազմակերպող ակտուիթյանը՝ ընդհանուր առմամբ՝ Կենտրոնական Եվրասիայի և մասնավորապես Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային անվտանգության ապահովման առումով, առաջին հերթին՝ ՌԴ, ՉԺՀ և ԱՄՆ միջն

* ՉԺՀ հետ դիմանագիտական հարաբերությունների հաստատումից հետո, Բիլ Քիննորուն իր պաշտոնավարման առաջին ժամկետում Չինաստան չափելած ԱՄՆ առաջին նախագահն էր: Սաոց պատերազմի ավարտից և Տյանամենի հրապարակի 1989 թ. հրադարձություններից հետո ՉԺՀ հետ հարաբերությունների ընույթի հարցը դարձավ բրուն ընտակլիւմների առարկա ԱՄՆ-ում: Չիննական մոտեցում՝ այդ ժամանակ նաև Բ. Բինըոնի, հանգում էր նրան, որ ԽՄՀՄ-ի վկացմից հետո, «Չինաստանը ԱՄՆ-ի համար կորցը է իր ռազմավարական նշանակությունը», «ՉԺՀ-ում մարդու իրավունքների խախտումները կրում են մասսայական ընտույք», Վերջիվերջու «Չինաստանը կատացում է սոցիալիզմ» և հետևաբար՝ ՉԺՀ նկատմամբ ԱՄՆ -ը պետք է վարի «կոչու զապման» քաղաքականություն: Դետագայում՝ այդ մոտեցումները վերանայվել են, և 1996թ. վերջին ըստքագրելով ՉԺՀ հետ հետազա հարաբերությունների գիշավոր ռողդվածությունը, ԱՄՆ և Ասիական շեք էր, որ «ԱՄՆ-ը պահպանում է Չինաստանի» որպես 21-րդ դարում ԱՄՆ կոնստրուկտիվ գործնկերոց վրա դրական միջոցներով ագրեսու հնարավորությունները», այդ իմաստով կարևորելով ՉԺՀ հետ քազմաքնության համագործակցություն սկսելու անհրաժեշտությունը: Չինաստանի հետ հարաբերություններում «կոչու զապման» քաղաքականությունից, անցում կատարվեց՝ «չփումների և զապման» քաղաքականության:

ձևավորվել էր որոշակի ուժային հաշվեկշիռ[23-26]: Տարածաշրջանում ռազմաքաղաքան և ռազմական ուղղակիներկայության արտոնությունը իներցիայով պահպանում էր միայն Ռուսաստանը՝ իմանականում տարածաշրջանում առկա ռազմաքաղաքան երի և Կովեկտիվ անվտանգության պայմանագրի (ԿԱՊ) ընծեռած մեխանիզմների շրջանակներում: Այդ աշխարհաքաղաքական հաշվեկշիռ իմանուվեց սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո տարածաշրջանում ԱՄՆ քանակի լայնածավալ ներկայությամբ, որին հաջորդեց նաև ՆԱՏՕ-ի ռազմական հայեցակարգի վերանայումն շնորհիվ, հակասահարեւէչական գործողություններում կազմակերպության դերի որոշումն ուղագնական ներկայությունը Կենտրոնական Ասիայում[27]: “Պատմականորեն Կենտրոնական Ասիայում ռազմական հայեցակարգի վերանայումն շնորհիվ, ռազմական ներկայությունը: Ուղեկաստանում նաև կին խորհրդային ռազմական օդանավակայանում՝ Կարչիում և Ղրղզստանի Սանս օդանավակայանում, ստեղծվեցին ԱՄՆ և ՆԱՏՕ-ի ռազմաօդայինռազմակայաններ, որոնք օդային աջակցություն են ցուցաբերում Աֆղանստանում հակասահարեւէչական գործողություններին:

Վերոշարադրյալ գործոնների ազդեցությամբ իմանական մարտահրավերների և իրավիճակի նման նշանակալից փոփոխությունների արդյունքում Զինաստանում էականորեն փոփոխվեցին նաև երկրի անվտանգության ապահովման հիմնարար շնչտադրումներն ու մոտեցումները[19]: Սառը պատերազմի ժամանակաշրջանում ՉԺՀ անվտանգության առումով հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր քաղաքական և ռազմական քաղաքիչների վրա, իսկ տնտեսական անվտանգությունը գտնվում էր մի տեսակ երկրորդական դերում: ԽՄԴՄ փլուզմանը հաջորդող սկզբնական շրջանում ընթացիկ գործադրությունը ենթատեսատում երկրի անվտավորության համակարգում տնտեսական անվտանգության քաղաքիչի նշանակությունն աստիճանաբար սկսեց աճել ռազմական և քաղաքական քաղաքիչների համեմատ: 1996 թ. հետո Զինաստանում, ըստ էության, ձևավորվեց անվտանգության ապահովման նոր հայեցակարգ, որն ռազմական հերթին հենվում էր փոխհամագործակցության և փոխօգնության սկզբունքների վրա[19,28,29]: Նոր հայեցակարգն ռազմական հայապարակվեց ASEAN-ի 1997 թ. մարտյան համաժողովում՝ իր հետագա զարգացումն ստանալով ռուշինական 1997 թ. ապրիլյան համատեղ Հայտարարությունում նոր քազմակերպությունը աշխարհակարգի ձևավորման գործընթացների առկայության արտացոլմամբ. ինչպես նաև ՄԱԿ-ի գինաթափման 1999 թ. համաժողովում և ՉԺՀ ԿԿ 16-րդ համագումարում ՉԺՀ Նախագահ Ջան Զեմինի ելույթներում[19,30]:

Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացների առկայության տարածաշրջանային լայնածավալ տեղաշարժերի և անվտանգության ապահովման հայեցակարգային մոտեցումների փոփոխությունների ենթատեսատում ՉԺՀ-ում ռազացած վերաբերյալ նաև արտաքին քաղաքականանության նոր վեկտորների ձևավորման անհրաժեշտություն: 90-ականների կեսերից Զինաստանը նկատելիորեն ակտիվացնուած է իր գործունեությունը Կենտրոնական Ասիայի ուղղությամբ, ինչը մեծապես պայմանավորված էր նաև երկրի անվտանգության համակարգային ապահովման նոր մոտեցումներով[3-9]: 90-ականների կեսերից, տարածաշրջանային համագործակցության հաստատությունների ստեղծման և որանց ամրապնդման Զինաստանի գործունեությունը, արդեն չսահմանափակվելով միայն Հարավային և Հարավարևելյան Ասիական տարածաշրջանով, որը

մշտապես գերակա նշանակություն ունի ԶԺԴ համար, տարածվում է նաև ԶԺԴ համար որպես «թիկունքային» բնութագրվող՝ միջինասիհական և Ռուսաստանի ուղղություններով: 1996թ. Հանհայու և 1997թ. Մուսկվայում հինգ երկրների (ՈՂ. ԶԺԴ, Ղազախստան, Տաջիկստան և Ղրղզստան) նախագահները ստորագրեցին ռազմաքաղաքական կարևորագույն նշանակության փաստաթղթեր, որոնք ստեղծած են նախկին ԽՄՀՄ-Չինաստան սահմանի ողջ երկայնքով ռազմական վստահության ռեժիմ: Սահմանային -տարածքային վեճերի հաղթահարման առումով ծեղզ բերված առաջնթացն ու հաջողություններն էապես նպաստեցին Չինաստանի և տարածաշրջանի երկրների միջև որոշակի վստահության մթնոլորտի ձևավորման ու ամրապնդմանը, ինչպես նաև Հանհայան Հնգայակի ծնավորման (1996թ.) ԶԺԴ նախաձեռնության կենսագործմանը, որը հետագայում (2001թ.) ՈՒգրեկստանի միացումով վերափոխվեց Հանհայան Համագործակցության Կազմակերպության (ՀՀԿ)[31]:

Միջինասիհական տարածաշրջանային անվտանգության ոլորտում Չինաստանի հետաքրքրությունների շրջանակը բավականաչափ ընդգրկուն է կրագմարնույթ: Ընդհանուր առմամբ այդ հետաքրքրությունները բխում են ԶԺԴ տնտեսական բարեփոխման ու խաղաղ գարգամման կենսագործման և երկրի անվտանգության ապահովման ու միասնականության պահպանման գերակայություններից: Դրանք ենթադրում են ահարեցչության, իսլամական ծայրահեղականության ու անջատողականության դեմ համատեղ պայքար և հարևան տարածաշրջանում կայունության պահպանման ապահովում սահմանամերձ տարածքների անվտանգության համատեղ ապահովում տարածաշրջանի երկրների հետ բարեկամական փոխվստահության հարաբերությունների ծնավորում, Չինաստանի հակառակորդ կամ մրցակից երկրի կամ երկրների խմբի Կենտրոնական Ասիայում մոնոպոլ վերականգնության հաստատման, ինչպես նաև տարածաշրջանում ԶԺԴ դեմ ուղղված ռազմա-քաղաքական որևէ դաշինքների ծնավորման հնարավորությունների կանխարգելում[32-36]: ԶԺԴ և տարածաշրջանի երկրների միջև անվտանգության ոլորտում փոխհամագործակցությունն ընդգրկում է նաև էթնիկ հանցագործ խմբավորումների, թմրանյութերի իրացման, անօրինական միգրացիայի, բնապահպանական գնածամերի, տեղեկատվական անվտանգության և այլ ոլորտների, որոնք ընդհանուր առմամբ կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանի անվտանգության պահպանման առումով[32-36]:

2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից և ԱՄՆ գլխավորությամբ հակաահարեկայական գործողությունների ծավալումից հետո ԶԺԴ արտաքին քաղաքական մոտեցումները նորից լրցորը վերանայվեցին՝ դառնարկվ ավելի ակտիվ և գործնական: ԱՄՆ-ում ԶԺԴ հետ հարաբերություններում «շփումների և զամբան» քաղաքականության իրականացման միտումների դրսուրուվումների առկայության պայմաններում, ԱՄՆ ուղղակի ներկայությունը միջինասիհական տարածաշրջանում Չինաստանի համար կարող էր վերածվել նոր մարտահրավերների առաջացման և բացասական հեռանկարային գարգացումների աղբյուրի:

Մուսկովումից, միջինասիհական տարածաշրջանային անվտանգության ոլորտում Չինաստանի հետաքրքրությունների շրջանակի համեմատական դիտարկումը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ծնավորված իրադրության ենթատեսատուում, նկատելի է տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների

միջազգային և տարածաշրջանային անվտանգության ոլորտներում ռևեցած հիմնական շահերի հետ ոչ միայն մրցակցային կամ հակադրությունների, այլև ընդհանրությունների առկայությունը^[18,35-36]: Մասնավորապես, տարածաշրջանային և արտատարածաշրջանային երկրների՝ այդ թվում նաև ներգրավված գյորալ ազդեցիկ ուժերի՝ ԱՄՆ, ՌԴ, ԵՄ և ՉԺՀ համար կարևորագույն նշանակություն ունի ահարեւկության, իսլամական ծայրահեղականության ու անջատողականության դեմ համատեղ պայքարի իրականացումը և այդ ոլորտում սերտ համագործակցության պահպանումը: Ակզբունքորեն դա նաև այն հիմնական փաստարկն է, որով և հիմնավորվում է Կենտրոնական Ասիայում ԱՄՆ և ՆԱՏՕ-ի ուժերի ներկայությունը, ինչը խոչընդոտելով միջինասիական տարածք ծայրահեղական իսլամի ներթափանցմանը, ապահովում է տարածաշրջանային երկրների, այդ թվում նաև ՌԴ և ՉԺՀ ազգային շահերի պաշտպանությունը:

ԱՄՆ և ՆԱՏՕ-ի ռազմական ներկայության առումով իրավիճակը նոյնը չէ աշխարհաքաղաքական և ռազմավարական հիմնարար հեռանկարային զարգացումների ենթատեքստում, որտեղ՝ և ՌԴ և ՉԺՀ դեպքում առկա են շահերի ակնհայտ մրցակցային, ինչպես նաև հնարավոր հակադրությունների առաջացման հնարավորություններ, ինչն արդեն իսկ դրսուրվում է այնպիսի կարևորագույն նշանակություն ռևեցող ուղղությամբ, ինչպիսին է էներգոնեստրուտների հասանելիության և անվտանգության ապահովման ոլորտը: Գյորալ և տարածաշրջանային մակարդակներում ԱՄՆ կողմից իրականացվող մարտավարական բնույթի գործընթացների ենթատեքստում ավելի ու ավելի էր ամրապնդվում այն տեսակետը, որ ԱՄՆ-ը կարող է օգտագործել Կենտրոնական Ասիայում իր ռազմական ներկայությունը ռազմավարական և աշխարհաքաղաքական նպատակներով: Դրա հիմնավորումներից մեկն այն էր, որ ԱՄՆ-ը սկսեց ակտիվ ֆինանսատեխնիկական աջակցություն ցուցաբերել ռազմական շինարարությանը ոչ միայն Կենտրոնական Ասիայում, այլև Չարավային Կովկասում հատկապես Վրաստանում և մասնակիորեն Ադրբեյջանում: Սույն հանգամանքը լրջացույն մարտահրավեր էր նախ և առաջ ԱՊՀ տարածքում անվտանգության համակարգի ծևավորման գիխավոր շարժիչ ուժի՝ Ռուսաստանի ազգային շահերի համար, որը ՌԴ և Ասիա Վաղիմիր Պուտինի պաշտոնավարման սկզբից սկսած առաջին քայլերն էր ծեռարկում մեծ տերության իր դերի վերականգնման ուղղությամբ: Ռուսաստանում և ԿԱՊ-ում իրենց անդամակցությունը չկասեցրած ԱՊՀ երկրներում՝ ամրապնդվեց ռազմաքաղաքական ու ռազմական ոլորտներում ՌԴ հետ երկույթ համագործակցության, ինչպես նաև հավաքական ուժային կառույցի շրջանակներում անվտանգության համակարգի ծևավորման և ապահովման անհրաժեշտությունը: 2002 թ. ստեղծվեց Չավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունը (ՀԱՊԿ), որին 2006թ. անդամակցեց նաև Ուզբեկստանը**, որով ՉՀԿ հինգ անդամ երկրները դարձան նաև ՀԱՊԿ անդամներ:

*- Բնույթում, Չայաստան, Ղազախստան, Ղրղզստան և Տաջիկստան:

**- Ուզբեկստանը անդամակցեց ՀԱՊԿ ին ԱՄՆ և ԵՄ կողմից Անդիշանի իրադարձությունների համար ՈՒզբեկստանի իշխանությունների գործողությունների դատապարտման և ասանկցիաների կիրառումից՝ հետո փակելով նաև ԱՄՆ ռազմականը:

Ակզրոնքորեն Կենտրոնական Եվրասիայի՝ Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջաններում, չնայած որոշակի առանձնահատկություններին և անհամասեռությանը, այնուամենայնիվ ձևավորվեց արտատարածաշրջանային դերակատարների և նրանց հիմնական շահերի համեմատականորեն նովսատեսակ և նովսարնույթ բազմություն[26]: Ի տարբերություն Հարավային Կովկասի՝ Կենտրոնական Ասիայում ավելի ու ավելի ակտիվացող Չինաստանն իր առող միջազգային հեղինակությամբ և ամրապնդվող Չանհայան Կազմակերպությունը վերածվում էին տարածաշրջանի կայունության ամրապնդման կարևոր նշանակության գործուների: Մյուս կողմից, եթե Կենտրոնական Ասիայի նկատմամբ ԱՄՆ-ի և ԵՄ մոտեցումներում ծևավորվեցին որոշակի տարբերություններ հատկապես աշխարհաքաղաքական երկարաժամկետ նպատակների ընթացումների համատեքստում, ապա ԱՄՆ, ԵՄ և ՆԱՏՕ-ի շահերը Հարավային Կովկասում՝ հիմնականում համընկում էին [23-25]: Այս իմաստով կենտրոնասահական տարածքում նոր ուժային բայանսի ծևավորումը ֆոնսկցիոնալ կախվածություն ունի հարավիկակասյան ենթատարածաշրջանում աշխարհաքաղաքական և գեղ-ռազմավարական տեղաշարժերի իրականացումից: Ավելին, ԱՄՆ աշխարհաքաղաքական հաջողությունը Կենտրոնական Ասիայում ուղակիրեն կարող է պայմանավորվել «Կասպյան նավթագազային անօրի ըկանցը» անվանվող Հարավային Կովկասի «արևմտականացման» հնարավորությամբ: Կենտրոնական Ասիայում ծևավորված այս կոնֆլիկտացիան, ըստ Էռիքյան որոշ մանրամասների ծևափոփոխություններով պահպանվեց նաև հետագայում:

Նոր իրավիճակում Չինաստանն սկսեց ակտիվորեն զարգացնել Ռուսաստանի և միջինասիական երկրների հետ երկկողմ և քազմակողմ հարաբերությունները օգտագործելով ինչպես այդ երկրների հետ ուղղակի շփոմների, այնպես էլ ՀՀԿ տարածաշրջանային հաստատության ստեղծմամբ ընծեռնած նոր հնարավորությունները ու մեխանիզմները: Զևավորվելով անվտանգության առաջնայնությունների հենքով՝ կազմակերպությունն արագորեն ընդարձակեց իր նպատակների շրջանակը, Վերածվելով՝ բոլոր ոլրուներում տարածաշրջանային և երկկողմ համագործակցության զարգացման կարևորագոյն մեխանիզմի: ՀՀԿ գործառույթների շրջանակի ընդարձակմամբ օրակարգային հարցերի շրջանակներում ընդգրկվեցին ոչ միայն սահմանային կարգավորման խնդիրները, այլև տնտեսական, քաղաքական, մշակութային և անվտանգության ոլրուներում համագործակցության զարգացման և համակարգման հիմնահարցերը[31]: Այնուամենայնիվ, ՀՀԿ ստեղծման մոտիվացիան տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներն են, իսկ հետագ ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխման և զարգացումների գնահատման ամրապնդման հիմքը համընդհանուր չափանիշներով՝ քազմաքրեռ համակարգի ձևավորման անհրաժեշտության դիրքերից հանդես եկող և տարածաշրջանի առումով՝ կազմակերպության երկու առաջատար անդամների Ռուսաստանի և Չինաստանի դիրքորոշումների ընդհանրությունն է: Կենտրոնական Ասիայում ներդրավված արտատարածաշրջանային ուժերի և նրանց շահերի քազմագանությունն առանձնապես ընդգծում է ՀՀԿ ստեղծման կարևորությունը տարածաշրջանային հիմնախնդիրները համագործակցության և դիվանագիտական մեթոդների կիրառման հարթությունում լուծելու հնարավորությունների նշանակալիորեն

մեծացման առումով այդ ժամանակաշրջանում Զինաստանի և Ռուսաստանի հնարավորությունների համեմատական ակնհայտ սահմանափակումների առկայության պայմաններում:

Կենտրոնական Ասիայի երկրների հետ քաղաքական և անվտանգության համագործակցության ծավալմանը գուգահեռ նշանակալիորեն ակտիվացավ նաև ՉԺՀ-ու այդ երկրների միջև առևտրատնտեսական համագործակցությունը: Դա արտացոլվեց ոչ միայն առևտրական համագործակցության ակտիվացման, այլև տարածաշրջանում Զինաստանի կողմից կատարվող ներդրումների իրագործման գործառույթներում: 1997թ. Վերջից սկսված Զինաստանի «Գնայ դուրս» ռազմավարության իրականացումը, և 1999 թ-ից սկսված՝ ՉԺՀ «Արևմտյան Ծրագանների Զարգացման ռազմավարական ծրագրի» կենսագործումն առանձնակի կարևորություն էին հաղորդում Կենտրոնական Ասիայի հետ տնտեսական համագործակցության ծավալման գործնթացին: Դա մի կողմից Կենտրոնական Ասիայում էներգոռեսուրսների ոլորտում ներդրումների իրականացման հնարավորության առկայությունն էր, մյուս կողմից՝ ՉԺՀ արևմտյան շրջանների էկոնոմիկական զարգացման համար տարածաշրջանի տնտեսական և ռեսուրսային ներուժի օպտիմալ օգտագործման հնարավորությունը: Ձևավորվող տնտեսական համագործակցությունում էներգոռեսուրսների ոլորտն ի սկզբանե կենտրոնական նշանակություն ուներ, ինչպես միջինասիական երկրների այնպես էլ Զինաստանի համար: Վերջինիս դեպքում նաև համահունչ էր «Գնայ դուրս» և «Արևմտյան Ծրագանների Զարգացման ծրագրի» ռազմավարությունների հիմնադրույթներին: 2004 թ. հետո «Գնայ դուրս» ռազմավարության կենսագործման շրջանակներում ՉԺՀ-ից արտերկրում կատարվող ներդրումների հոսքը թույշքային զարգացման պայմաններում շոշափելիորեն աճեց նաև Զինաստանի տնտեսական ներկայությունը կենտրոնական Ասիայի երկրների՝ հատկապես Ղազախստանի էներգոռեսուրսների ոլորտում:

ՉԺՀ-ը քարձր մակարդակի ռազմավարական երկողություններ է հաստատել միջազգային և տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական հարաբերություններում հիմնական նշանակություն ունեցող տարածաշրջանի երկրների՝ Ռուսաստանի և Ղազախստանի հետ, ինչև էապես նպաստում է նաև միջինասիական մյուս երկրների հետ համագործակցության զարգացմանը, տարածաշրջանային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև տարածաշրջանային կայունության և անվտանգության ապահովմանը: Զինաստանը մեծածավալ ներդրումներ է իրականացնում տարածաշրջանի երկրների ոչ միայն էներգետիկ և այլ ռեսուրսների, այլև սոցիալական, կապի ու տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտների զարգացման նպատակով: Զգայի միջոցներ է հատկացնում այդ երկրներին նպատակային արտոնյալ վարկերի տրամադրման, ինչպես նաև մեծածավալ տնտեսական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Մյուս կողմից, շնայած էներգոռեսուրսների ոլորտում ներդրումները՝ ֆինանսական, ինչպես նաև շահագործվող էներգակիրների ծավալների առումներով նշանակալիորեն զիջում են այլ երկրների մասնավորապես ԱՄՆ ընկերությունների ներդրումների և ռեսուրսների շահագործման ծավալներին, այնուամենանիկ տարածաշրջանում առաջացան «Հինական սպառնալիքի» հնարավոր ծևավորման ընկալումներ: Ռեսուրսների ոլորտում կատարվող արտաքին ներդրումներին յուրահատուկ ուղեկից զգայական քննության տարրերի առկայության հետ մեկտեղ նման անհանգստությունների

առաջացումն առաջին հերթին պայմանավորված է տարածաշրջանի երկըր-ների և հարևան Չինաստանի՝ ընդհանրական ռեսուրսային գումարային ներուժերի չափազանց բարձր անհամամասնության առկայությամբ, ինչն առանձնապես նշանակալիորեն է արտացոլված ժողովրդագրական իրավիճակների տարրերություններում:

Վերջարադրյալի իմաստով միջազգային տնտեսությունում արագործն ինտերվող Չինաստանի համար կարևորագոյն նշանակություն ծնոք բերեց ինչպես «մեծ տերությունների» հետ հակասությունների հնարավոր առաջացումը կանխելու և խաղաղ գոյակցության բաղադրականության իրականացումը, այնպես էլ «չինական սպառնայիցի» առկայության հնարավորության բացառման առումով վստահության ծևավորումը գորայ և տարածաշրջանային մակարդակներում: Ի հակակշիր «Չինական սպառնայիցի» առկայության պնդումների Չինաստանում մշակվեց և առաջարկվեց «Ներոյաշնակ աշխարհի» կառուցման հայեցակարգը, որն առաջին անգամ՝ ՉԺՀ Նախագահի կողմից շարադրվեց 2005թ. ապրիլին՝ ասիա-աֆրիկան զագացածողովում, այսուհետև՝ ԱՄԿ-ի 60 ամյակին նվիրված ելույթում [37]: Դայեցակարգն, ըստ հույթան, հենվում է.

- Խաղաղ բաղադրական երկխոսության միջոցով փոխըմբռուման ամրապնդման,

- Խաղաղ բաղադրական երկխոսության միջոցով տնտեսական առաջնորդացի և զարգացման ապահովման,

- փոխըմբռուման և տնտեսական զարգացման ապահովմանը նըպաստող՝ մշակության փոխանակումների և փոխլրացման,

- անվտանգության ոլորտում երկխոսության և համագործակցության ամրապնդման,

- քնապահապանական խնդիրների լուծման նպատակով քուրո և առանձնապես հարևան երկրների ջանքերի կենտրոնացման՝ հիմնական բաղադրիչների վրա* [37-42]:

Սիօզգային հարաբերությունների մակարդակում այն ենթադրում է՝ «Ներդաշնակ ասիայի» և «Ներդաշնակ աշխարհի» կառուցման հետևողական ջանքերի կիրառում: Այս ենթատեքստում, ստանձնելով միջազգային և տարածաշրջանային հարաբերություններում առկա հակասությունների նվազեցման և համագործակցության հաստատման ուղղությամբ ջանքերի համակարգման նախաձեռնություն, ՉԺՀ արտաքին քաղաքականության համար այդ հարաբերություններում բարձր պատասխանատվություն ունեցող երկրի, ինչպես նաև ավելի կառուցողական դերի կենսագործումը վերածվում են կարևորագոյն բաղադրիչների:

*- ՉԺՀ քաղաքական և չկոնոմիկական համեմատական վերյածությունների կենտրոնի ղեկավար Yue Keping-ը, որի խորհրդությունը կարևորում է նաև ՉԺՀ Նախագահը, «Ներդաշնակ աշխարհի» հայեցակարգը մեկնաբանել է հետևյալ կերպ՝ «Չինաստանի կողմից առաջարկված Ներդաշնակ աշխարհի զարգացման շատ ընդհանուրություններ ունի աշխարհում տարածված գորայ կառավարման տեսության հետ: Դրանց երկուան է արմատավորված են մարդկության մակարդագիր մտահոգության վրա, երկուսն է հասնեն են գային միավորմանի հիմքում և հեզմենիզմի գմբ, երկուսն է ընդգծում են որևէ երկրի ընդհանրական ընույթի հարցերի լուծում միջազգային կազմակերպությունների միջոցով, երկուան է դեմ են «աշխարհի ԱՄՆ կողմից կառավարմանը» և ընդգծում են ԱՄԿ ի դերի բարձրացումը, երկուան է պնդում են նոր Բանագրատեսական աշխարհակարգի անհրաժեշտությունը....» և գորայ կառավարման շինական տեսակետն է, փոփոխության աշխարհում նոր իրողությունների և միտումների վերաբերյալ Չինաստանի աշխարհընկալումը» [42]:

Ըսդհանուր առմամբ, Կենտրոնական Ասիայում ներկայում ծևավորված ՉԺՀ ռազմավարության հիմքում դրվածեն՝ Զինաստանի արտաքին քաղաքականության խաղաղ գոյակցության՝ հինգ հիմնադրույթները և Երկրի տնտեսական զարգացման և բարեփոխումների համար արտաքին նպաստավոր պայմանների ստեղծման գերակայությունը*:
Այդ գերակայության ու հիմնադրույթների գուգորդումը՝ հարևան Երկրների հետ բարեկամական հարաբերությունների կառուցման մոտեցման հետ, բարիդրացիական հարաբերությունների ծևավորումը և էկոնոմիկական փոխշահավետ համագործակցության կենսագործումը՝ դառնում են Կենտրոնական Ասիայի Երկրների և Ռուսաստանի հետ՝ ՉԺՀ հարաբերությունների կառուցման, բացարձակ առաջնայնություններ**:

Փոխհամագործակցության ու փոխօգնության սկզբունքների վրա հենվող՝ անվտանգության ապահովման ՉԺՀ հայեցակարգի համատեքստում, տարածաշրջանում կայունության ամրապնդման և անվտանգության ապահովման առումներով՝ Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի Երկրների հետ Երկկողմ, ինչպես նաև՝ ՉԺՀ շրջանակներում տարածաշրջանային համագործակցության հետագա զարգացումն ու ամրապնդումը, կենսական նշանակություն ունեն՝ ՉԺՀ անվտանգության ապահովման և էկոնոմիկական զարգացման համար: Զինաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթները, խաղաղ գոյակցության սկզբունքներն ու՝ "Ներդաշնակ աշխարհի" կառուցման հայեցակարգը բացառում են՝ փոխհամագործակցության ու փոխօգնության սկզբունքների վրա հենվող անվտանգության ապահովման ռազմաքաղաքական համագործակցության վերափոխումը՝ ռազմական բլոկային կառուցվածքի, ինչպես նաև՝ դաշնակցային հարաբերությունների ծևավորումը: Միջազգային հեղինակության և ազդեցության անընդհատ աճով, ինքնուրույն՝ խմբակային շահերով չթելադրվող արտաքին քաղաքականություն իրականացնող Զինաստանը, հանդիսանում է՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ միջազգային չափանիշներով հավասարակշռության և կայունության ամրապնդման գործոն:

*- “发展才是硬道理- Միայն զարգացումն ունի իրական իմաստ”- Դեն Սյաուաշինի 1992թ. ասույթը մեծ ազդեցություն ունի ՉԺՀ արտաքին քաղաքականության ծևավորման վրա:

**- “Առանց խաղաղ և կայուն միջավայրի ոչ մի երկիր չի կարող կենտրոնանալ տնտեսության շինարարության վրա ”[19]

5.2. Չինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրներըԿենտրոնական Եվրասիայում, դրանց լուծման ՉԺՀ քաղաքականությունը և դրա նշանակությունը տարածաշրջանում

Չնայած ՉԺՀ խաղաղ զարգացման ռազմավարության և արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքները բացառում են էներգիայի հիմնախնդիրները քաղաքական պայարի և Կասպյան շրջանում ծավալված «Մեծ Խաղին» նմանարանույց գործընթացներում ընդգրկելու հնարավորությունը, այնուամենայնիվ, նշանակալից քանակությամբ էներգութեսությունների առկայությամբ սահմանակից տարածաշրջանի ընտրությունը՝ որպես էներգակիրների մատակարարման աղբյուրի հնարավոր ամենաբարձրական ընտրությունն է Չինաստանի համար[43-47]: Չինաստանի տնտեսության շարունակական ածին և հետագա զարգացման ապահովման համար նպաստավոր արտաքին պայմանների ապահովմանն ուղղված «Գնայ դուրս» ռազմավարության հրականացմանն ու ծավալմանը համընթաց, ըստ էության ՉԺՀ-ում լիովին ծևափորվեցին՝ ընդհանրապես էներգութեսությունների, և մասնավորապես՝ միջնասիական էներգակիրների ների և նշանակության ըմբռնումները երկրի էներգաանվտանգության երաշխափորման առումով: Այս շրջանում նշանակալիորեն ակտիվացան տնտեսական և հատկապես էներգութեսությունների ոլորտներում Կենտրոնական Ասիայի երկրների հետ համագործակցության զարգացմանն ուղղված ՉԺՀ դիվանագիտական ծեռնարկումները, ինչպես երկրում, այնպես էլ ՉԺՀ շրջանակին թույլ է աշխարհացարաքական բնականության, էկոնոմիկական փոխշահականության, ինչպես նաև ՉԺՀ և տարածաշրջանային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից [43-47]:

Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից անմիջապես հետո Չինաստանն ԱՄՆ-ին առաջարկեց և ցուցաբերեց հնարավոր օճանակություն հակա-ահաբեկչական գործողությունների իրականացման ընթացքում: Իրենց հերթին սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո ծևափորված իրողությունները որևէ նոր խոշոնդուտող ազդեցություն չունեցան ՉԺՀ էներգութեսությունների հասանելիության և մատակարարումների հոսանքության ապահովման առումով այդ թվում նաև Կենտրոնական Ասիայում: Սակայն խնդրի ավելի խորքային և հատկապես հեռանկարային դիտարկումը, կարող է հանգեցնել Չինաստանում էներգուանվտանգության առումով անհանգստության ավելացմանը՝ հատկապես մատակարարումների հոսանքության երաշխափորման տեսանկյունից: Կենտրոնական Ասիայում ԱՄՆ ուղղակի ներկայությամբ ՉԺՀ էներգութեսությունների մատակարարման ծովային ուժիների՝ ԱՄՆ կողմից գրեթե լիակատար վերահսկողությունն ամբողջանում է լրացվելով ցամաքային ուղիների նկատմամբ վերահսկողության հաստատման հեռանկարային հնարավորությամբ:

Ըստ որում,

«- Ինչպես նշում է ՉԺՀ Պետխորհրդի Զարգացման հետազոտությունների կենտրոնից Qin Xuanren-ը՝ Կենտրոնական Ասիա ներքանացմամբ ԱՄՆ-ը «մեկ կրակոցով սպանել է երեք թույլու»՝ ապահովելով Կենտրոնական Ասիայի ռազմավարական տարածքի վերահսկողությունը, ՈՇ, ՉԺՀ և Իրանի գաղումը, ինչպես նաև Կասպից ծովի շրջանի նավթի և գազի պաշարների վերահսկողությանը[48,49]:

Կենտրոնական Ասիայից և Ռուսաստանից էներգոենտրոպիաների տեղափոխման ցամացային ներակառուցվածքների զարգացման միջոցով ծովային երթուղիների և Սալակվա Նեղուցով էներգակիրների առաջումների ծավալների նվազեցման շնորհիվ մատակարարումների հոսանքության երաշխավորումը ԶԺԴ էներգոանվտանգության ապահովման ռազմավարության կարևորագույն տարրերից է: Եվ այս իմաստով նաև այլ գործոնների հետ զուգորդված ԱՄՆ ռազմական ներկայության ամրապնդումն ու երկարաժամկետ ներկայությունը Կենտրոնական Ասիայում ընդունելի չի կարող լինել Չինաստանի համար:

Արտաքին ադրբյուներից և մասնավորապես Կենտրոնական Ասիայից ԶԺԴ էներգակիրների մատակարարուման հոսանքության և անվտանգության հիմնախնդիրների ավելի ամբողջական ընթանման առօնուկ հատկապես ԶԺԴ-ԱՄՆ հարաբերությունների ենթատեքստում անհրաժեշտ է հաջի առնել նաև մի շարք այլ գործոններ: Էներգոենտրոպիաների հիմնախնդիրները երկու երկրների ընդհանրական հարաբերությունների որակարգային կարևոր, բայց և այնպիս ընդհամենը հարցերից մեկն է: Չնայած դրան՝ այն ունի գորայ ընույթ և առնչվում է էներգակիրների միջազգային շուկային, աշխարհում էներգոենտրոպիան բոլոր տարածաշրջաններին և այս կամ այն չափով, նաև գործք բոլոր երկրներին: Նման ընդգրկումության պայմաններում, ընականարար, քաղաքական և աշխարհաքաղաքական գործոնները մշտապես թողնելու են իրենց ազդեցությունը ոլորտում երկու երկրների հարաբերությունների ծևակվորման վրա առնվազն միջազգային շուկայի վրա դրանց ազդեցության մակարդակով և չեն կարող անտեսվել:

Էներգոենտրոպիաների միջազգային շուկայում և գորայ տնտեսությունում ԶԺԴ ընդգրկվածության մակարդակն այնպիսին է, որ համագործակցության ցանկացած լրցագոյն խաթարում հանգեցնելու է ծանր ֆինանսատնտեսական հետևանքների, ինչպես միջազգային շուկայում և էներգակիրներ արտահանող երկրներում, այնպիս է ոլորտում ներդրումներ իրականացրած ընկերությունների համար, որունցում հիմնական մասնաբաժինները պատկանում են ԱՄՆ և արևմտյանայի կորուրացիաներին: Արյունքում, ուս կարող է լրցագոյն խնդիրներ հարուցել հետո ԱՄՆ էներգակիրների մատակարարումների առօնուկը [50, 51]: Էներգոենտրոպիաների մատակարարման ընդհատման հետևանքով, «աշխարհի ֆարիկա» ֆենոմենով և արտահանման ու ներկրման ահուելի ծավալներով Չինաստանի տնտեսության լորջ խաթարման հետևանքով առաջացած շրջայական ռեսակցիան կարող է հանգեցնել գորայ մասշտաբներով ֆինանսատնտեսական ծանրագույն ճգնաժամի: Նման ճգնաժամի հետևանքների հիմնական կրողներից մեկը հանդիսանալու է ԱՄՆ տնտեսությունը, որն ակնհայտորեն ամենամեծ ազդեցությունն ունեցող հետևաբարնական փոխազդեցության կրող միավորն է միջազգային շուկայական և ֆինանսատնտեսական մեխանիզմների ու դրանց գործառույթներում հիմնական կանոնների ծևակվորման, դրանց պահպանման, կիրառման ու կառավարման առումներով:

Իր հերթին, ԶԺԴ-ից ամենախոշոր ներմուծող և ԶԺԴ-ում խոշորածավալ արտաքին ներդրումներ իրականացող ԱՄՆ-ի հետ համագործակցության անխաթար զարգացումը ակնհայտորեն հիմնարար և կենտրոնական նշանակություն ունի արտահանման կրողմտուշմամբ ու արտաքին ֆինանսատնիկական և տեխնոլոգիական ներդրումների ներգրավման առաջնայնություններով Չինաստանի տնտեսության համար»:

Ընդհանրական ծևակերպան դեպքում երկու երկրների էկոնոմիկական, այդ

թվում, նաև էներգիայի ոլորտում հարաբերությունների համար բնութագրական են փոխախկապվածությունն ու փոխկախվածությունը[50-53]: Եվ չնայած երկու երկների հարաբերություններում երկկողմ և գորալ բնույթի հիմնախնդիրների հակասությունների և տարըմբընամերի առկայության՝ անընդհատ խորացող էլեկտրոմիկական համագործակցությունն ու փոխախկապվածությունը ՉԺՀ - ԱՄՆ հարաբերություններում առաջացող հնարավոր ճգնաժամերի խորացումը մշտապես սահմանափակող գործուներ են: Պարզապես մի կողմից առկա է ՉԺՀ տնտեսական հարածուն զարգացումը, որն ամրապնդված է աշխարհի ամենամեծարանակ մարդկային ռեսուրսներով, ինչն հանգեցրել համաշխարհային տնտեսությունն և առևտուրական փոխանակումներում Չինաստանի դերի և ներդրումների աննախադեպ աճի: Մյուս կողմից, առկա է աշխարհում առաջատար տերության իր ներկային դիրքերի պահպանման ԱՄՆ քնականուն ծգումը: Տեսաների ապագայում երկու երկների տնտեսական՝ այդ թվում նաև էներգակիրների առումով մրցակցային գործնքացները կորոշվեն և կմնան այս երկու երևույթների և մոտեցումների դիալեկտիկական համակցության ոլորտում: Այդ գործնքացները տեսաների ապագայում չեն կարող հանգեցնել միջազգային հարաբերություններում բարձր պատաժանատվություն ունեցող երկների ՉԺՀ-ԱՄՆ հարաբերություններում այնպիսի ճգնաժամի, որը կարող է վերածվել հակամարտության, որի դեպքում ոչ միայն ծովային երթուղիները, այլև ցամաքային խողովակաշարերը ռազմական միջոցների կիրառման դեպքում նոյնքան, եթե ոչ ավելի, խոցելի են: Վերջարարովածի հիմաստով անհրաժեշտ է ընդգծել՝ որ մինչև այժմ դեռևս չի գրանցվել Չինաստայի արտաքին էներգոռեսուրսների մատակարարումների խաթարման որևէ թիվ թե շատ՝ լուրջ դեպք: Ավելին, ծովային երթուղիների գորայ պաշտպանության ներքանեսություն հենց ԱՄՆ-ն է իրականացնում նաև Չինաստանի արտաքին առևտուրի և ռեսուրսների մատակարարման նավուղիների պաշտպանությունը: Աֆղանստանում հակամարելեական գործողությունների իրականացում արգելափակում է Կենտրոնական Ավստրալիա լորա լայն ներթափականցմանը, ինչը նաև բարձրացնում է այս երկներում ներդրությունների տեղափոխման ներակառուցվածքների անվտանգության մակարդակը:

Կենտրոնական Ասիայից Չինաստանի էներգակիրների մատակարարման երկու հիմնական ուժիների խողովակաշարերի անվտանգության ապահովման աստիճանը համարելի է միջնասիական տարածաշրջանի կայունության ապահովման մակարդակին և առկա ու պոտենցիալ բոլոր մարտահրավերները (միջերևիկական հնարավոր բախումներ, խալամական երսրտեմիզմի, ահաբեկչության վտանգ և այլն) կարող են ունենալ իրենց որոշակի ազդեցությունն ու հետևանքները խողովակաշարերի անվտանգության առումով, ինչպես միջնասիական, այնպես էլ ՉԺՀ Սինճյան Ոյգուրական ավտոնոմ շրջանում (ՍՈՒԱԾ):[54-60]:

ՍՈՒԱԾի տարածքը կազմում է ՉԺՀ ավելի քան 1/6 (1.66 մլն. մ²) մասը՝ հանդիսանալով ՉԺՀ ամենախոշոր նահանգը: ՉԺՀ-ը ութ երկների հետ (Մոնղոլիա, Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Աֆղանստան,

*- ՉԺՀ Նախագահ Ջին Չեմինի 90-ականների կետերին կատարված ծևակերպմամբ՝ ԱՄՆ-ի հետ ՉԺՀ հարաբերությունները հանդիսանում են՝ “(zhong zhong zhi zhong 重中之中)”: «կենտրոնական» կենտրոնականներից»: [Այս և ՉԺՀ արտաքին քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ այլ կարևոր դարձվածքներ կարելի է գտնել՝ Pang Xingchen, 2004, pp. 783-ում]

Հնդկաստան և Պակիստան) սահմանակցում է ՍՈՒԱԾ-ի հետ շորջ 5600 կմ. սահմանով: ՉժՇ վիճակագրական վարչության տվյալներով՝ 2008 թ. վերջին շրջանի ընակցությունը կազմել է 21.31 մլն.: ՍՈՒԱԾ-ում ապրում են 47 ազգություններ, որից 46%-ը ույգուրներ, 34%-ը՝ հան, 7.5%-ը՝ դազախներ, 2.7% -ը՝ դունգան: Նահանգում ապրում են միջինասիական բոլոր ազգությունների էթնիկական խմբերը բացառությամբ թուրքմենների: Նահանգի ընակցության մեծամասնությունը դավանում է իսլամ: Ույգուրներն ու 10-ից ավելի այլ ազգություններ ունեն թուրքական էթնո-մշակութային և լեզվական ընդհանուր արմատներ (ավելի քան 60%)[61-64]: Ույգուրները ընակվում են նաև Ղազախստանում՝ 185 հազար (այլ տվյալներով մինչև՝ 300 հազար), Ղրղզստանում և Ուզբեկստանում՝ 35-50 հազար յուրաքանչյուրում, Ռուսաստանում և Աֆղանստանում՝ ավելի քան 2-3 հազար յուրաքանչյուրում: Նահանգում առկա նման էթնիկ-քաղաքակրթական բազմազանությունը, տողիայ-տնտեսակ զարգացման անհամաշակությունները, ահարթելության տարածման համար նպաստավոր տարածաշրջանային քաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումներն ու այլ գործոնները բարենպաստ մքննուրու են ձևավորել միջէթնիկական խնդիրների առաջացման և ծայրահեղականության տարածման համար[65-70]:

Միջէթնիկական խնդիրներն ընդհանուր առմամբ և ույգուրական անջատողականությունը մասնավորապես պայմանավորված են բազմաթիվ և բազմաթիվ գործոններով. որոնց ամբողջական ռատումնային հիմնախնդիրներից է. բայց ունի առանձին հետազոտական նշանակություն: Այստեղ դիտարկվող հարցերի շրջանակներում կարևորվում է Ղինաստանի համար ույգուրական անջատողականության քաղաքական հիմնական նշանակությունը, ինչն առաջին հերթին երկրի անվտանգության ու ամրողականության պահպանում է և տարածաշրջանային կայունության ապահովումը[72,73]: 2008 թ. ղեկտեմբերին հարապարակված 1998 թ. հետո թվով վեցերորդ ՉժՇ պաշտպանության ամրապնդման և ռազմավարության վերաբերյալ «Սպահակ թղթեր»-ում ընդգծվում է. «Ղինաստանը ղեւան շարունակում է դիմակայել անվտանգության՝ երկարատև՝ բարդ և բազմաթիվ սպառնալիքների և մարտահրավերների»՝ որպես հիմնական վլունգներ թվարկելով «Թայվանի անկախության», «Արևելյան Թուրքիաստանի անկախության» և «Տիրեթի անկախության» անջատողական ուժերին [72,73]:

Ույգուրական անջատողականության ակտիվ և բարձրածայնվող դրսերումները Սինծյանում առաջացման հետխորհրդային շրջանում Կենտրոնական Ասիայում ազգային պետությունների առաջացմամբ ձևավորված տրամադրությունների ենթատերստուում: Սինծյանում գործող շորջի հիմնը տասնյակ կրոնական կազմակերպությունների հետ մեկտեղ ձևավորվեցին նաև մի քանի անթեգալ իսլամական և ազգայնական կազմակերպություններ, որոնցից ամենահայտնին՝ «Արևելյան Թուրքիաստանի իսլամական շարժում»՝ ույգուրական ծայրահեղական կազմակերպությունն է: Իր հերթին 90-ականների սկզբներին Ղազախստանում և Ղրղզստանում սկսվեցին ակտիվանալ ույգուրական ազգայնական այնպիսի կազմակերպությունները, ինչպիսին են «Թուրքիաստանի ազգատագրման միջազգային կոմիտեն» (Խախինում՝ «Արևելյան Թուրքիաստանի ազգային ծակատ», որն ստեղծվել էր ԽՍՀՄ կողմից հարաբերությունների վատքարացման շրջանում ՉժՇ ղեմ պայքարելու նպատակով), «Թուրքիաստանի

ազատագրման կազմակերպությունը» և «ՈՒյգուրների միավորյալ ընկերակցությունը», որոնք սկսեցին օգնություն ցուցաբերել Սինժյանում իրենց հայրենակիցներին անկախ «ՈՒյգուրստանի» ստեղծման նպատակով[74]:

ԽՄՀ-ի փլուզման աշխարհաքաղաքական հաջողության ոգևորության պարագայում արևմտաքոմ չեղ կարող աննկատ մնալ ՉԺՀ դեմ «ույգուրական խնդրի» օգտագործման հնարավորությունը՝ ույգուրական նախագծի տեսքով: Դետխորիրդային շրջանի սկզբում ԱՄՆ եվրոպական հասարակական կազմակերպությունների հետմեծկտեղ Կենտրոնական Ասիայում «հատկացված» դերակատարության ենթատերստում Թուրքիայում դրսուրվեց առանձնահատուկ ակտիվություն միջինասիական կազմակերպությունների միջոցով «ույգուրական անջատողականության» օժանդակության առումով: «1992 թ. սկսած այդ կազմակերպությունների միջոցով սկսվեց Սաույան Արարիայի և Թուրքիայից գաղափարայիստական գրականության և ֆինանսական միջոցների մատակարարումը Սինժյան....Այն քանից հետո, եթե Ստամբուլում 1992 թ. դեկտեմբերին կայացած Ույգուրական Դամաշխարհային Կոնգրեսը (ՈՒԴԿ) որոշեց անցնել «ազատության» համար գինված պայքարի մեթոդների կիրառմանը, սկսվեց նաև զենքի մատակարարումները ՍՈՒԱԾ»[74]: Սինժյանում և Պեկինում պայթեցումների, հրկիցումների, ոստիկանության հետ գինված ընդահարումների և այլ ահարենքական մեթոդների կիրառմը վերածվեց ույգուրական ազգայնականների պայքարի հիմնական միջոցի: Դետագյում Կենտրոնական Ասիայում Թուրքիայի դերակատարության նվազեցմանը համընթաց չափավորվեց նաև «ույգուրական խնդրի» նկատմամբ, թուրքական մոտեցումների տեսանելի դրսուրումների մակարդակը, հատկապես ՉԺՀ հետ փոխադարձարար քրողական և ույգուրական շարժումների ահարենքական բնույթի ճանաչումից հետո[75]: Թուրքիայում ստեղծված ույգուրական ազգայնական հասարակական կազմակերպությունները նույնիսկ ցուցադրաբար տեղափոխեցին իրենց տեղակայման վայրը՝ ԱՄՆ և Գերմանիա[75]:

2001թ.-ից հետո 90-ականներին ծնավորված ամոր կապերի հենքով սկսվեց միջինասիական և Սինժյանի ծայրահեղական ուժերի, ինչպես նաև միջազգային ահարենքական կազմակերպությունների ավելի ակտիվ և ակնհայտ սերտաճման գործընթաց: 2002թ. ՉԺՀ-ը կարողացավ հանել ԱՄՆ և ՄԱԿ-ի համաձայնությանը՝ «Արևելյան Թուրքեստանի իսլամական շարժման» միջազգային ահարենքական կազմակերպությունների ցուցակում ընդգրկման, ինչպես նաև «Թուրքիայի, Եգիպտոսի և Սաույան Արարիայի մեղադրմանը՝ ույգուրական անջատողականությանը և պանթուրքական պետության» ստեղծմանն աջակցելու» համար [75]: Միջազգային ահարենքական կազմակերպությունների հետ ույգուրական ազգայնական կազմակերպությունների սերտաճման և համակարգված գործունեության իրական մասշտաբների վերաբերյալ թիվ թե շատ իրական պատկերացում կարելի է կազմել, 2009թ. սկզբին հրապարակված ՉԺՀ

*-Աղբեջանի ԱՊՍ տեղեկատվական գործակապության և Շարջ թերթին 2009 թ. հրայիսն տրված հարցարկուցում ՀՄԴԿ պետքելիստ Շարժից Գայդին ասել է: «Ես կուտեսայի, որ դուր օգնեց մեզ... Մեր հոլորը՝ Արևելյան Թուրքեստանը, բոլոր թուրքերի հայելելիքն է աղոքեցանցիների, դաշտայինների, թուրքմենների, որողների և մյուսների: Արևելյան Թուրքեստանը թուրքական մշակույթի օրինան է: Եթե այս օրինանը կրոցվի, ապա թուրքերը կըորդին իրենց հայրենիքը: ... Մենք հիասքափած ենք իսլամական աշխարհի ողբրորոշումից: Միայն Թուրքիան ճայ հանեց»[76]

պաշտոնական տվյալներից, ըստ որի՝ 2008 թ. ընթացքում ծերբակալվել են «իսլամական տարբեր ծայրահեղական կազմակերպությունների 1300» անդամներ, ոչնչացվել է 40 վարժական ծամբարներ[67-74]:

Եթե ընդհանրապես գնահատվի «ույգուրական նախագծին» արևմտյան ուղղության մասնակցության աստիճանը, ապա պետք է նշել, որ նախագծի զարգացմամբ չնայած արտաքնապես դրա դրսնորումների նվազեցմանը, իրականում ուղղակիորեն գրադաւում է միայն Թուրքիան [75,77]: Արևմտյան մինչև 2000-ականների կեսերը հիմնականում բավարարվում էին Amnesty International (AI) և Unrepresented Nations and People's Organization (UNPO) տիկի կազմակերպությունների միջազգային գործունեությունում ույգուրական գործոնի ընդգրկմամբ[75]: 2000-ականների կեսերից հետո «ույգուրական նախագիծը» և նրա իրագործելիության աշխարհաքաղաքական նպատակահարմարության ու մերողների հարցերն ընդգրկվեցին ԱՄՆ-ի, Բրիտանիայի և Կորպատիկ անալիտիկ հետազոտությունների հետաքրքրությունների ոլորտում[75]: Մշակված ընդհանուր մոտեցումները, որոնք կիրառվում են նաև ներկայում, ենթադրում են տիբեթական անջատողական շարժման արտերկրում գործող կառուցվածքային անալոգիայի կիրառման նպատակահարմարությունը «ույգուրական նախագծի» դեպքում[75]: Ըստ էտյան, նույնատիպ մոտեցում է ցուցաբերվում նաև Եվրոպական կառուցների կողմից, ինչպես նաև նման հենքով մարտավարություն է կիրառվում նաև ՀՇՈՒ պրեզիդենտի կողմից: Անհրաժեշտ է ընդգծել, որ արևմտյան կողմից, «ույգուրական խնդրի» մարդու իրավունքների ուղղութ տեղափոխման ձգուումը ակնհայտորեն չի փոխելու ույգուրական շարժման ահարեւկչական բնույթը և չի նշանակելու ահարեւկչական մերողների կիրառման բացառում ույգուրական ծայրահեղական կազմակերպությունների կողմից:

«Ույգուրական խնդրում» արևմտյան ուղղության ուղղակի մասնակցությունը շարունակվելու է իրականացվել Թուրքիայի կողմից հատկապես վերջին շրջանում այդ երկրի քաղաքականության ինքնուրույնության դրսնորման փորձերի համատեքստում: Այդ մասնակցության ակնհայտ արտացոլումը 2009 թ. հովհայան դեպքերի ընթացքում**, որպես միակ երկրի Թուրքիայի կողմից պետական մակարդակով ցուցաբերված ռեակցիան է***[78-82]:

Սինծյանն արտերկրի հետ կապված է 105 միջազգային նշանակության ավտոճանապարհներով: Ուսումչ-Ալաշանկոու երկարուղով, որն անվանվում է նաև «Եվրասիական մայրցամաքային կամուրջ», Զինաստանի երկարուղային ցանցը

*- Ուսումչի հովհայան իրավաբուժությունների վերաբերյալ Եվրոպական մարդու իրավունքների կոմիտեում 2009 թ. սեպտեմբերին ՀՇՈՒ պրեզիդենտ Ռաֆիկ Գաղիմին այդ դեպքերի ընտափումների ընթացքում բազմից օգտագործել է Տիբեթի հետ համեմատությունները: Արևմտյան տեղեկատվական միջոցների ցանքը նույնակ որոշակ տրամարածական կազ ծևակրթության 2008 թ. մարդիկ Տիբեթում և 2009 հովհայան դեպքերի միջև՝ չնայած Տիբեթում գիշեված մերողների կիրառումը՝ զարդարապահուսական հետք չէ[75]:

**- Ըստ պաշտոնական տվյալների՝ այդ իրավաբուժությունների ընթացքում 198 մարդ գրիվ է և ավելի քան 1700-ը վիրաբերվել: Տվյալներում ընդգրկված են 2ՇՀ բոլոր ազգությունների քաղաքացիներն ու ուսինառաջարկած և բանականացնալու հետամասները:

***- Թուրքիայի վարչական այդ իրավաբուժությունների ընդուրացնեց որպես գենոցիո: Թուրքիայի քոյլու հայտարարվեց շինական ասցրամական անունների: Թուրքիան միակ երկիրն է, որը դիմեց ԱՄԿ-ին Ուսումչի դեպքերի ընտափումը հարցով [78-82]:

միացված է Ղազախստանի և դրա միջոցով Եվրասիայի երկաթուղային ցանցի հետ: Ղահանգով է անցնում Զինաստան-Կենտրոնական Ասիա առևտուրական փոխանակումների շորջ 80%-ը: Սինծյանով են անցնում նաև Ղազախստան-Զինաստան նավթատարը և Թուրքմենստանից Զինաստան Տրանս-Ասիական գազատարը: **ՍՈՒԱԾ-Ի ռազմավարական Նշանակությունը ԶԺԴ էներգոապահովման առումով պայմանավորված է ոչ միայն միջինասիական էներգալիքների առաջումներով, այլև այն հանգամանքով, որ Սինծյանում են կենտրոնացված Զինաստանի ցամաքային նավթային պաշարների 30%-ը և բնական գազի պաշարների ավելի քան 34%-ը[67,68]:**

Ղահանգի ռազմավարական դիրքը ու նշանակությունը շրջանի տնտեսական զարգացումն ու կայունության ապահովումը դարձնում են կարևորագոյն խնդիր ԶԺԴ կառավարության համար: Զինաստանն ակնհայտորեն չի սահմանափակվում Սինծյանում արմատական ահարեւկության դեմ միայն ուժային մեթոդներով պայքարելու միջոցով լուծելու նահանգում առկա հիմնախնդիրները: Չատ ավելի խոստումնայից են նահանգի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ ԶԺԴ կողմից գործադրույն ջանքերը: Ղահանգը ընդգրկվածէ «Արևմտյան շրջանների հարգացման» ռազմավարական ծրագրում, որը նախատեսում է ոչ միայն էկոնոմիկական և սոցիալական զարգացում, այլև հիմնականում կենտրոնական և արևմտյան շրջաններում բնակվող Զինաստանի ազգային փոքրամասնությունների հավասարագոր ինտեգրում պետության և հասարական կյանքում*: Կենտրոնական Ասիայի երկրների հետ առևտուրատնտեսական և էներգուեսուրաների ոլորտում համագործակցության ծավալումը, ինչպես նաև Սինծյանի էներգետիկ ոլորտում կատարվող լայնածավալը ներդրումներն ու տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը կարող են հապես բարելավել նահանգում սոցիալ տնտեսական հրավիճակը:

Ղահանգի բազմերնիկ կազմը և միջինասիական տարածաշրջանի հետ նրանց մեծամասնության էթնումշակութային և կրոնական ընդհանուրությունները ավելացնում են տարածաշրջանային չափանիշներով անկայունության հնարավոր դրսերումների Միջին Ասիայից Սինծյան ներթափանցելու հնարավորությունները: Ուղղութական ազգայինականների կողմից կրոնական-էթնումշակութային բաղադրիչների հենքով նահանգում հրահրվող երկարամյա անջատողական զգուրումները ինչն ուղեկցվում է ԶԺԴ հեմգինվածահարեւկական մեթոդների կիրառմամբ և ամրապնդվում է «անկախ Արևմյան Թուրքիստանի» կառուցման նկրուումներով, չափազանց բարվող բարոյահոգեթանական, էթնո-կրոնական և քաղաքակրթական միջավայր է մնավորում այդ վտանգների ԶԺԴ ներթափանցման համար: Իր հերթին, Սինծյանում երթեմն բռնկվող արյունայի բախումները՝ ինչպես 2009թ. հովսին, կարող են լուրջ հետևանքներ առաջացնել հարևան երկրներում բնակվող ոսկուրների շրջանում վերածվելով իսլամական ծայրահեղական կազմակերպությունների ակտիվացման աճի առիթի[67-71]: Այս հմաստով ոսկուրական անջատողականությունն իր հերթին հանդիսանում է տարածաշրջանային անկայունության առաջացման կարևոր բաղադրիչներից մեկը:

*- Պետության և հասարական կյանքում Զինաստանի ազգային փոքրամասնությունների հավասարագոր ինտեցրման հիմքում դրվագ էներգետիկ ուղղությունները՝ միասնական ազգային գաղափար, միացյալ ինտեցրված տնտեսություն և ընդհանուր քաղաքական մշակութ:

Սույն մոտեցման համատեքստում, արդեն իսկ 90-ականների կեսերից Կենտրոնական Ասիայի երկրների և ՉԺՀ ու ՌԴ միջև «ուղղութական խնդրի» վերաբերյալ ծևավորվեց որոշակի ընդհանուր մոտեցում: 1996թ. ՉԺՀ Նախաձեռնությամբ և ՌԴ համաձայնությամբ, «ուղղութական խնդրի» հարցի քննարկումը մտցվեց Չանհայան Հնգակի օրակարգ. որում ընդունվեց անջատողականության ցանկացած դրստրման նկատմամբ կողմերի անհանդուրժողականության և իրենց երկրներում անջատողական գործունեության արգելման վերաբերյալ փաստաթութերը, որը հետագայում հաստատվեց 1998թ. հույսին կայացած՝ Ալմաթայի ԾՐԿ գագաթաժողովում[84, 85]:

Չարադրյալից բխում է՝ միջինասիական տարածաշրջանի և ՉԺՀ հյուսիսարևմտյան շրջանների անվտանգության և կայունության ապահովման, ինչպես նաև Էկոնոմիկական զարգացման խնդիրների փոխկապվածությունը, ինչը հիմնավորում է Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային անվտանգության առաջնահերթ և ռազմավարական նշանակությունը Չինաստանի համար: Միաժամանակ, նման փոխկապվածությունից ինքնին բխում է՝ փոխհամագործակցության ու փոխօգնության սկզբունքների վրա հենվող երկկողմ, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության, հետագա զարգացման ու ամրապնդման կենսական նշանակությունը ՉԺՀ-ում և Կենտրոնական Ասիայում անվտանգության ապահովման և կայունության ամրապնդման առումներով:

Կենտրոնական Ասիայում անվտանգության ապահովման և կայունության ամրապնդման, ինչպես նաև ընդհանրապես զարգացման հաջողությունը մեծապես պայմանավորվում է միջազգային փոխազդեցությունների գործընթացներով, որում կարևորագույն նշանակություն ունեն ՉԺՀ-ՌԴ հարաբերությունների զարգացման միտումները: Դամբնեհանուր չափանիշներով բազմաթերթ համակարգի ծևավորման անհրաժեշտության վերաբերյալ ՌԴ և ՉԺՀ դիրքորոշումների ընդունումը վերջին ավելի քան երկու տասնամյակների ընթացքում, երկու երկրների հարաբերությունների զարգացման դրական դիմաց մակարդական անշուշտ տալիս են հեռանկարային լավատեսության հիմք: Այս կողմից, Ռուսաստանի և Չինաստանի հարաբերությունների օրակարգն ընդգրկում է միջազգային և տարածաշրջանային զարգացումներով ծևավորվող հիմնախնդիրների գործե ողջ սպեկտրը և դրանց հեռանկարային զարգացումը պայմանավորվում է քազմաքիչ և քազմաքույթ գործուների գուգորդմամբ: Այդ իմաստով, ՌԴ-ՉԺՀ միջև և այլ համաշխարհային դերակատարների (ԱՄՆ, ԵՄ և ճապոնիա) հետ, այս երկու երկրների հարաբերությունների կազմավորման գործուների քազմություններն ունեն կառուցվածքային հետևաբար նաև հեռանկարում հարաբերությունների ընույթի ծևավորման շատ ընդհանրություններ: Հարաբերությունների նման քազմավեկտոր և քազմապարամետր ոչ գծայնությունն իր մեջ պարունակում է ինչպես ռազմավարական համագործակցության, այնպես էլ մրցակցության հնարավորություններ և ներուժ, որոնց այս կամ այն աստիճանով արտացոլվում են նաև տարածաշրջանային համագործակցության մակարդակում: Ներկայում Չինաստանի գլոբալ ակտիվությունը հիմնականում ծավալվում է տնտեսական ոլորտում, ինչի հետևանքով հենց էկոնոմիկական հարաբերություններում է ավելի արտացոլվում մրցակցային ներուժի առկայությունը:

Տարածաշրջանային մակարդակում երկու երկրների համագործակցության կարևորագույն ուղղությունները տեսանելի հեռանկարում Կենտրոնական Ասիա և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններն են, որոնցից վերջինը շարունակելու է պահպանելի իր առաջնային նշանակությունը Չինաստանի համար:

Կենտրոնական Ասիայի երկրների հետ տնտեսական համագործակցության՝ (ՌԴ քավականացակի հիմնախիվ և ՉԺՀ դիմամիկ և արագընթաց) վերջին տարիների զարգացման պայմաններում սկզբունքորեն ձևավորվել է՝ տարածաշրջանում երկու երկրների տնտեսական ներգրավվածության գրեթեհամարժեմակարդակ[86,87]: ՉԺՀ տնտեսական համագործակցության ակնհայր գերազանցությունը հեռանկարում կարող է հանգեցնել քանակական հաշվեկշռային փոփոխության: Որակական կողմը շատ քանով կախված կիյին՝ տարածաշրջանի երկրների հետ տնտեսական համագործակցության ոլորտային կառուցվածքի ընդայնման և այդ երկրների արդյունաբերական զարգացման ուղղությունն իրենց էկոնոմիկական համագործակցության դաշտում ընդգրկելու՝ ՉԺՀ և ՌԴ մոտեցումներից և պատրաստակամությունից: Ներկայումս, տարածաշրջանի երկրների հետ Ռուսաստանի և Չինաստանի համագործակցությունում գերակայում է ռեսուրսային ուղղվածությունը, որում ավելի ցայտունորեն է արտահայտվում չերգութեալուների ոլորտը:

Չնայած Կենտրոնական Ասիայի հերգութեալուների պաշարների նկատմամբ հետաքրքրությունների առկայության ընդհանրությանը, ի տարրերություն այս ոլորտի առումով ՉԺՀ-ԱՄՆ փոխհարաբերությունների, Չինաստանի և Ռուսաստանի էներգութեալուների հարաբերություններում ընդհանրական գերակայությունը և հիմնայինը եղել և մնալու է արտադրող-սպառող համատեքստը: Ղազախստան-Չինաստան նավատարով ՉԺՀ առաջընում է նաև ռուսաստանյան նավթ[88,89]: Մրցակցային որոշակի տարրերի առաջացումը Կենտրոնական Ասիայի քանական գազի ռեսուրսների ոլորտում, հատկապես՝ Տրանս-Ասիական գազատարի կառուցմամբ, չի կարող հիմնովին փոխել այս երկրների փոխհարաբերությունների ընույթը չերգութեալուների ոլորտում[90]: Ավելին, տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման մակարդակի և Կենտրոնական Ասիայի Չինաստանի էներգակիրների մատակարարման երկու հիմնական ուղիների՝ խողովակաշարերի անվտանգության ապահովման աստիճանների համադրելիությունն՝ էականորեն կարող է խթանել տարածաշրջանային անվտանգության համակարգում ՉԺՀ դերի և պատասխանատվության մակարդակի բարձրացմանը:

Կենտրոնական Ասիայում և նրա շորջ ընթացող գործընթացների դիմամիկ զարգացումներն անշուշտ պայմանավորում են ՉԺՀ կողմից տարածաշրջանային անվտանգության և հնարավոր վտանգների զնահատման չափանիշները. ինչպես նաև դրանց արձագանքման միջոցների ու այլորիթմների համագործ փոփոխման անհրաժեշտությունը: Միաժամանակ, Պեկինի կողմից որոշակիորեն սահմանված են տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման ՉԺՀ՝

* ՌԴ կառավարության կողմից 2009թ. նոյեմբերին հաստատված՝ «Ռուսաստանի չերգութիկ ռազմավարությունը՝ մինչև 2030թ.» նախատեսում է արագացնել նայօթ և գազի ՌԴ արևելյան շրջաններ մատակարարումների ապահովումը՝ Ասիայի տարածաշրջան արտահանումների նախակալով: Նախատեսված է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան նաև առողականում՝ ՌԴ-ից ըստանելով արտահանության 2008թ. 8%-ի փոխարժեն հասցեն՝ 14-15%-ի մինչև 2020-22թթ. 22-25% մինչև 2030թ.: Տարածաշրջան ընական գազի արտահանության 2008թ. գոյոյ փոխարժեն՝ հասցեն՝ 16-17%-ի մինչև 2020-22թթ., 19-20% մինչև 2030թ.: Այդ հերգակիրների հիմնական սպառողն ակնհայտորեն լինելու է Չինաստանը[91]:

ռազմավարության հայեցակարգային հիմնային բաղադրիչները: Ըստ որում, ԶԺԴ տարածաշրջանային ռազմավարության սկզբունքային նշանակություն ունեցող բաղադրիչներից մեկը Ռուսաստանի հետ սերտ փոխգործակցությունն է, ինչի ապահովման դեպքում միայն՝ հենվելով նաև ՀՀԿ և միջինասիական երկրների հետ ամուր համագործակցության գարգացման վրա, հնարավոր կինի հասնել տարածաշրջանային անվտանգության ապահովման համալիր լուծումների:

Երկու երկրների անվտանգության ապահովման առումով Կենտրոնական Ասիայի անվտանգության և կայունության պահպանման նշանակությունը, տարածաշրջանում առկա հիմնախնդիրների և տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխման և զարգացումների գնահատման՝ Ռուսաստանի և Չինաստանի դիրքորոշումների ընդհանրությունը մասնավորապես տարածաշրջանում ԱՄՆ ներկայության հետագա ամրապնդման անընդունելիության վերաբերյալ, տարածաշրջանային անվտանգության ոլորտում ՈԴ և ԶԺԴ միջև՝ ներկայիս և հեօնանկարությին համագործակցության ամրապնդման առանցքային գործոններ են: Աֆղանստանում և շրջակա երկրներում, ինչպես նաև դեկավարների անձնական հատկանիշներից կախվածության բարձր աստիճանով ու կոնֆիդենտային մեծ ներդրում միջինասիական երկրներում, կայունության պահպանման և անվտանգության ապահովման հնարավորությունը տեսանելի հեօնանկարությունը չի կարող հասնել կանխատեսելիության մակարդակի, առավել ևս՝ ԱՄՆ և կոայիցիոն գործերի տարածաշրջանից դրվագ թերման դեպքում: Տեսանելի հեօնանկարություն, Կենտրոնական Ասիայում և Նորա շուրջ գործընթացների ցանկացած ուղղությամբ զարգացումների դեպքում, առանց տարածաշրջանի երկրների և ՈԴ ու ԶԺԴ միջև երկկողմ և բազմակողմ համագործակցության, հնարավոր չի լինի որոշակի խելամիտ անհրաժեշտության սահմաններում, իրականացնել տարածաշրջանային անվտանգության ապահովումը:

Անվտանգության ապահովման ԶԺԴ հայեցակարգի ենթատեստում, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ ներդաշնակ և կայուն համագործակցության իրականացման արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում՝ Հանհայան Յամագործակցության Կազմակերպությունը (ՀՅԿ): Էներգետիկ ոլորտում համագործակցության ամրապնդման և անվտանգության ապահովման խնդիրները ի սկզբանե առաջնային են կազմակերպության անդամ երկրների համար: Չնայած ՀՅԿ-ը ուղամական կազմակերպություն չ' և ամենայն հավանականության այդպիսին չի դառնա նաև ապագայում, այնուամենանիվ այն ունի անհրաժեշտ ներուժ քաղաքական և դիվանա-գիտական միջոցներով կանխելու տարածաշրջանում ուժային հաշվեկշոր հնարավոր փոփոխություն, ինչպես նաև կարող է հասնել տարածաշրջանային անվտանգության ապահովման անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը, ինչը ոչ Ռուսաստանի ռազմական հզորությունը և ոչ է Չինաստանի էկոնոմիկական կարողությունները չին կարող ապահովել առանձին-առանձին վերցրած[92]:

Տարածաշրջանային անվտանգության ապահովման ռազմական մեխանիզմների կիրառման հնարավորություններ նախատեսող, ներկայում գործող միակ միավորը Յավագական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունն (ՀԱՊԿ) է, ինչը կարող է ենթադրել նաև անկայունության լրջագույն վտանգների դեպքում ՀՅԿ և ՀԱՊԿ համագործակցության ապահովման անհրաժեշտություն[54, 55, 93-95]:

Տարածաշրջանի անվտանգության առումով երկու կազմակերպությունների հետաքրքրությունների ոլորտային ընդհանրությունները, ինչն երկուների անդամակցությունը միաժամանակ երկու կազմակերպություններին ստեղծում են ՀԱՊԿ և ԾՀԿ միջև համագործակցության խթանման կայուն և անհրաժեշտ, բայց ոչ բավարար հիմք:

ՀԱՊԿ-ն որպես ռազմաքաղաքական կազմակերպություն՝ Ռուաստանի դերի անվիճելի առաջնայնությամբ և ընդհանուր ռազմական ավանդություններու ունեցող երկուների անվտանգության ապահովման մեխանիզմ է, որն ընթանում է ընդհանուր ռազմական միավորների և փոխադարձ պաշտպանության ավելի գործուն մեխանիզմների ստեղծման ուղիու։ Չնայած, այն դեռևս հեռու է անվտանգության ապահովման իրական և գործուն համակարգ լինելուց, այսուամենայնիվ՝ այս առումով էապես ավելի արդյունավետ է, քան ԾՀԿ-ը, որում բացակայում է համատեղ պաշտպանության ապահովման ռազմական կայուն մեխանիզմների ստեղծման հնարավորությունը[96-98]:

2003 թ. Շինաստանը հանդես եկավ երկու կազմակերպությունների միջև փոխադակցության վերաբերյալ առաջարկով[98,99]: «Պահանջվեց քանակցությունների չորսամյա ընթացք, որպեսզի 2007 թ. հոկտեմբերին ստորագրվի երկու կազմակերպությունների միջև համագործակցության վերաբերյալ «Արծանագրություն»[98, 100,101]: Յամածայն «Արծանագրության» երկու կազմակերպությունների միջև համագործակցությունը կիրագործվի՝ տարածաշրջանային և միջազգային անվտանգության և կայունության ապահովման և ահարեցնությանը հակադրման, թմրամիջոցների դեմ պայքարի, գենքի անօրինական շրջանառության, միջազգային կազմակերպաված հանցագործության դեմ պայքարի և այլ ընդհանուր հետաքրքրություն ունեցող ոլորտներում[98, 100-101]: Ներկայում, ՀԱՊԿ և ԾՀԿ ներկայացուցիչները հյուրի կարգավիճակով, փոխադարձար մասնակցում են միմյանց միջոցառումներին, անցկացվում են համատեղ խաղաղապահ գորավարժություններ, դիտորդի կարգավիճակով մասնակցում են միմյանց գորավարժություններին և այլն: Բայց և այսպես՝ կազմակերպությունների միջև համագործակցությունը դեռևս հեռու է նույնիսկ՝ «Արծանագրությամբ» նախատեսվող ոլորտների և ծավալների լիարժեք կենսագործումից:

Բացի նրանից, որ ԾՀԿ հետաքրքրությունների շրջանակն ավելի լայն է և ընդունելի է նաև համարժեք Նշանակության այլ խնդիրներ՝ որպիսին են էլեկտրոնային հիմնախնդիրները, կազմակերպություններու երկու հիմնական և առաջատար դերակատարների ԶՃ և ՈԴ ներկայությունը, նվազեցնում է որոշական ընդունման և դրանց կենսագործման արագությունը: ԾՀԿ մեջ չափուող, բայց՝ ՀԱՊԿ անդամ երկուների (Հայաստան, Թեղոսու), ինչպես նաև ԾՀԿ-ում դիտորդ երկուների (Իրան, Հնդկաստան, Մոնղոլիա, Պակիստան) անվտանգության հիմնահարցերի օրակարգային առաջնայնությունների տարբերությունները, լրացույցի դմվարություններ են առաջացնում, կազմակերպությունների միջև համագործակցության արագությաց զարգացմանը: Չնայած ՀԱՊԿ և ԾՀԿ միջև լայն համագործակցության ծավալում ուղղեցվում է մի շարք հիմնախնդիրներով, այսուամենայնիվ, դրա զարգացման և սերտացման հաջողությունը հեռանկարում մեծապես կախված կլինիկ տարածաշրջանում ՈԴ և ԶՃ միջև մրցակցային ազդեցությունների նվազեցման, փոխականական մթնոլորտի ամրապնդման, հարաբերությունների ներդաշնակեցման և համարժեք պատասխանատվությունների ստանձնման կարողություններից:

5.3.- Խողովակաշարային աշխարհաքաղաքական մրցակցությունը Կասպյան ավագանում և Կենտրոնական Եվրասիայից ԶԺԴ Էներգոռեսուրսների արտահանումների հեռանկարի ներկայացման փորձ՝ եզրակացությունների փոխարեն

Կենտրոնական Եվրասիայի էներգոռեսուրսների սպառման ծևավորված երկու գլխավոր կենտրոնների՝ արևմտյան (հիմնականում՝ ԵՄ) և արևելյան (հիմնականում Չինաստան) առկայությամբ և էներգակիրների՝ հատկապես արևմտյան ուղղությամբ տարանցման գերակա դիրքերի պահպանման ուղղված Ռուսաստանի ռազմավարական մոտեցմամբ առաջացող մրցակցությունը ու հակասությունները պայմանավորում են՝ էներգոռեսուրսների շահագրძման առումով օպտիմալ լուծումների հասնելու բարդությունը։ Տարածաշրջանում ստեղծված իրավիճակը ընդությունում է նրանով, որ տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների շահերը էներգիայի և միջազգային անվտանգության առանցքային նշանակություն ունեցողուրությունը սերտորեն միահյուսված են։ Այս հիմնախնդիրների փոխադրկապահությունը գլոբալ և տարածաշրջանային ուժային կենտրոնների միմյանց հակառող, կամ ավելորդ փոխլրացմամբ աշխարհաքաղաքական հետաքրքրություններին և դրանց գուգորդվածությունը տարածաշրջանում առկա ներքին մրցակցության, հակասությունների և հակադրությունների հետ, էներգոռեսուրսների օպտիմալ շահագրძման խնդիրների լուծումների փնտրման հարցը տեղափոխում են քաղաքական և աշխարհաքաղաքական հնարավորությունների հարթություն։

Մյուս կողմից, այն իրավիճակում, երբ տարածաշրջանի էներգոարտադրող երկրների համար միջազգային ասպարեզում իրենց համեմատական ինքնուրույնության և նշանակության դրսնորման հիմնական միջոցը էներգակիրների արտահանման ուղղությունների վերաբերյալ որոշումների ընդունման գործնացներին մասնակցությունն է, էներգոռեսուրսների և դրանց առաջման երթուղիների վերահսկողությունն ընձեռնում է տարածաշրջանում իրավիճակի վերահսկման հնարավորություն։ Դա ցայտունորեն արտացոլում է այն ընթացքն ան կենսունակությունը՝ ըստ որի, հատկապես էներգոռաջանական ուղիները, ինչպես ոչ մի այլ բան, հեռանկարում հստակեցնելու են հնարավոր տարածաշրջանային դաշինքների ձևավորումը և աշխարհաքաղաքական իրադրությունը կենտրոնական Եվրասիայում [54, 103-104]։

Էներգակիրներ արդյունահանող երկրների և սպառման շուկաների համար էներգակիրների արտահանման և ներկրման ծրագրերում ընդունելի լուծումների հասնելու և դրանց իրագործելիության հնարավորությունների առումով հիմնարար նշանակության ունեն առարման առկա համակարգերի, ինչպես նաև նոր ենթակառուցվածքների ուղղությունների այդառում նաև տարանցվող երկրների ագրեցությամբ պայմանավորված գործունեությունը։ Արևմտյան սպառման կենտրոնի ծրագրային հիմնադրությը Ռուսաստանով տարանցման նվազեցումն է, ինչն իրանու ուղղությամբ արտահանման սահմանափակումների հետևանքով ենթադրում է հարավկովկասյան տրանսպորտային միջանցքի ձևավորումը, որով էներգակիրների տարանցումը հիմնականում իրականացվում է Թուրքիայի տարածքով։ Դա ակնհայտ ռազմավարական նշանակության առավելություններ է բերում Թուրքիային՝ բարձրացնելով նրա տարածաշրջանային և աշխարհաքաղաքական նշանակությունը, ինչի

հետևանքով այդ երկիրը դառնում է արևմտյան ուղղությամբ էներգակիրների տեղափոխման ամենաշահագրգիտ կողմը. որը «Նոր Մեծ Խաղում» ներդնելով «զրո գումար» ստանում է հնարավոր առավելագույնը: Խողովակաշարային կապակցվածությունը Թուրքիայի, Ադրբեյջանի և միջինասիական երկրների միջև էթո-Մշակութային ընդհանուրությունների ըմբռնումներն ամրապնդրած է փոխադարձ շահերի շաղկապվածության և փոխարարերությունների որոշակի մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ, որոնք սահմաններ հատող էներգատարերի գործունեության ապահովման համար հանդիսանում են ուղեկից պարտադիր պայմաններ: Ադրբեյջանից-Թուրքիա էներգակիրների առաջման տևականացման ամենահիմնավորված իրանյան ուղղությունը՝ ԱԱՀ կողմից, ընտրված վրաստանյան ուղղությունը համեմատ տևականացման հիմնավորվածության շոշափելիութեն ավելի քարձու աստիճան ունեցող հայաստանյան ուղղությունը բացառության բացառության Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից, նշանակալիութեն ամրապնդեցին էներգատարերի տեղափոխությունների արևմտյան ծրագրերում քաղաքական շեշտադրությունների առաջնայնության և ՌԴ-ի շրջանցման հիմնադրույթով պայմանավորված աշխարհաքաղաքական բաղադրիչների առկայությունը:

Արևելյան սպառման հիմնական կենտրոնի՝ Զինաստանի էներգակիրների տեղափոխման ծրագրերի հիմնավորելիությունը պայմանավորվում է առաջող-սպառող հարաբերությունների համատեքստով: Նովիսկ չորս երկրների սահմաններն հատող Տրանս-Ասիական գազատարի դեպքում միջինասիական երեքերկուներն է՝ Թուրքիանստան, Ուգրեկստան և Ղազախստան, հանդիսանում են ոչ միայն տարանցման, այլև միակ սպառման կենտրոն՝ Զինաստան էներգակիր առարող երկրներ: Դա քաղաքական բաղադրիչների ազդեցությունը հասցնում է հնարավոր մինչմուտի, որոնք այս դեպքում արտացոլվում են միայն չորս հարևան երկրների միջև համագործակցության պահպանման և զարգացման դիվանագիտական հարաբերությունների և տարածաշրջանային ընդհանուր հետաքրքրությունների ոլորտում: Աշխարհաքաղաքական գործուների ազդեցությունն արևելյան սպառման հիմնական կենտրոնի՝ Զինաստանի համար առաջնայն և պայմանավորվում է գլոբալ տեղաշարժերի համատեքստով միջինասիական երկրների քաղաքական կողմնորոշումների և տարածաշրջանում մյուս շահագրգիտ գլոբալ ուժային կենտրոնների ներգրավվածության մակարդակի հնարավոր փոփոխություններով, որի վատագով տարբերակներով է արևմտյան ազդեցության ամենամեծ իրականացումը տարածաշրջանում Թուրքիայի դերի քարձորացման միջնորդավորմամբ և կամ գուգորդմամբ: Վերջինս, պայմանավորվում է ՉժՇ Մինճանի ավտոնում շրջանի բազմներկ կազմով և միջինասիական տարածաշրջանի հետ նրանց մեծամասնության էթոնմշակութային ու կրոնական ընդհանրություններով, ինչպես նաև «ուլգույան նախագծում» Թուրքիայի առանձնահատուկ դերակատարումով: Ներքին հիմնախնդիրների առկայությունը, համապատասխան նյութատևական ռեսուրսների ու քաղաքական ներուժի բացակայությունը տարածաշրջանի թուրքական երկրներում անհրաժեշտ ազդեցության հասնելու Թուրքիայի ձգումների իրագործելիությունը տեսանելի հեռանկարում պայմանավորվելու է միայն արևմտյան լիարժեք աջակցության առկայությամբ, ինչի բացակայությունը՝ ներ-պանթուրքական ծրագրերի կենսագործման գործընթացը՝ այժմեական կիրառական ոլորտից տեղափոխում է ուղարկան հեռանկարային

հնարավորությունների հարթություն: Նեռևս 90-ականների վերջերից նեռպանթուրքական ծրագրերի առումով ԱՄՆ կողմից ցուցաբերվող զսպողական մոտեցման պայմաններում [64] էներգակիրների ծրագրերը մնացել են Կենտրոնական Եվրասիայում Թուրքիայի ազդեցության հնարավոր տարածման հիմնական գործուն բաղադրիչը:

